Յակոբ Օշականյան

ԾԱՄԱՐ ԼՈՒՅՍ

Լևոն Այրապետյան

ԾԱՂԻՐ ԼՈՒՅՍ

Պատմվածքներ

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1987

ԳՄԴ 84 Հ 7—4
Ս 550

Սիրադեղյան Վ. Ս.

Ս 550 Ծանր լույս։ Պատմվածքներ/Վանո Սիրադեղյան.— Եր.։ Սովետ. գրող, 1987.—224 էջ։

Անձնական երջանկության, անձնական ճշմարտության եզրերը հասարակական կյանքի հետ զուգահեռվում ու նաև ունենում են բախումներ։

Մարդկային ճակատագրի համար մեծ նշանակություն են ձեռք բերում երբեմն երկրորդական թվացող փաստերն ու դեպքերը, և գոյության իրարամերժ ընթացքի մեջ առաջնայինը մնում է սպրածի իմաստավորումը, պարտքի զգացումը հասարակության, նաև իր իսկ խղճի առջև։

Ս $\frac{4702080200\ (209)}{705\ (01)\ 87}$—87 «Տ» ԳՄԴ 84 Հ 7—4

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1987

Աղաչեմ... սխալանացն անմեղադիր լինել, զի թէպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռ էր և տունս նեմ:

ՄՈՄԻԿ

ԱՆԱՆՁՐԵՎ ՀՈՒԼԻՍ

Սուրճի դառնությունը պետք չի, որ շեղի. շաքարավազ բեր, լցրու կես գդալ՝ քաղցրությունը թող չշեղի, և խառնիր զգույշ, հանկարծ գդալը գավաթի պատին աղմուկով չառնի,— եթե աչքերդ սառել են առավոտ կանուխ, ուրեմն հայացքդ անցնելիք ճանապարհ ունի, այս վաղ ժամին հյուր չեն գալիս։ Մոխրամանդ փոխիր, թող թվա, թե անցած օրը իր աղբն ու հետքը տարել է հետը, այսօր էլ ապրիր երեխայի պես՝ օրը սկսիր որպես նոր կյանք։ Հագնվիր այնպես, որպես թե ամենից դուրս ես գալիս, ճանապարհի շորերդ հագիր։ Այս առավոտ վեր ես կացել՝ օրը գտել ես քեզ բաղկապանակ. թուղթը՝ աջիդ տակ, ծխախոտն ու սուրճը՝ ձախիդ, պատը՝ դեմդ,— քո կախարդական հայելին է, ասուված օգնական՝ հիմա կտեսնես քեզ այն օրվա մեջ։

Ահա քանի օր դու արթնանում ու տեսնում ես՝ երկու կես ես։ Մի կեսդ այստեղ՝ ութսուներկու թվականի հուլիսի վերջին օրերի մեջ կիսով քնում — կիսով զարթնում է, ոչ քնելուց է բան հասկանում, ոչ արթնությունից և արյունը՝ ջուր, հոդերը՝ թույլ, բերանի մեջ՝ անհամություն — օրը տանում է որպես իշու բեռ, իսկ կեսդ այնտեղ՝ քսանհինգ տարվա ճա-

նապարհ հեռու, ամառվա մի օր իմաստալից մի քայլ անելու ջանքով է լեցուն, բայց հավասարակշռություն չկա կեսի մեջ։ Բույրի զառամյալ հիշողությունը բերում-տանում է սեխի խաբուսիկ ծաղկահոտը, ձմերուկի խակահոտը, արև առած բաղալտ քարի մետաղահոտը, բազալտին կառչած վայրի թզենու կծվահոտը, բեռնավտոյից խանութ կրվող հացի բուրմունքը... Բայց բույլի մեջ չեն ամբողջանում հոտ ու բուրմունք, բայց գույները լավ չեն կպչում հոտ ու բուրմունքին, բայց ծղրիդների ձայնը բնապատկերի վրա չի կախվում անլռելի, և պատկերը ջուրը ընկղմած ջրանկար է՝ երանգները հեղհեղուկ են, և տեսիլքը չի բևեռվում վայրկյանից ավելի և այդ շոգ օրը հա՛ լուծվում է ինքը իր մեջ։

Ծխախոտ ճարի, ծխախոտի պակասությունը չարժե, որ շեղի։ Մեծ բան չի մեր ուղածը, գրողը տանի. մեր ինքնաքամ պրկանքի դիմաց՝ մեզ՝ ծխախոտի ու սուրճի փող, աշխատունակ լինելու համար՝ նաև հացի, մեր կանանց մե՛ծ համբերություն, երեխաներին՝ առողջություն, իսկ երջանկություն միգուցե ինքը աստված մեզ տա։

...Ինչ լավ է, որ գոնե մանրուքում բախտդ բերում է։ Խանութը բաց էր, ծխախոտ կար։ Արվարձանային անձուկ խանութ, վաճառողուհին՝ տնեցիներով շրջապատված, տնավարի էլ քեզ խաբում են մի շնչին առևտրի մեջ, բայց տալիս ես չհասկանալու, որովհետև եթե աչքերդ սառել են առավոտ կանուխ, չի կարելի կոպիտ բաների վրա սևեռվել, չի կարելի զոացող գույների նայել, չի կարելի ընծա օրը քոռուփուշ անել... գերեզմանների սակավամարդ ճամփով տուն դարձ։ Գերեզմանոցի կողքին ապրելուց օգուտդ քաղի։ Ոչինչ, որ արդեն երրորդ գերեզմանոցի կողքին ես ապրում, նոր բնավորվողին չեն նստեցնում գլխների վրա, եկվորի տեղը մեռյալների ու ապրողների արանքում է նախ։ Ոչինչ, ապրում ես լռության ու կանաչի մեջ, երեխաներդ քրդի կաթից հայի մերած մածուն են ուտում, Ապարանի ջուր են խմում, քաղաք ուղելիս ասում են՝ գնանք Երևան։

Հիմա կինդ գյուղում հայրական տանը արթնացել, ափսեն ձեռին ման է գալիս չորս տարեկան տղայի ետքից ու եթե երեք րոպեն մեկ անգամ հաջողացրեց գդալը խցկել խուփ բերանը՝ երջանիկ է։ «Եթե չուտես, հայրիկը չի գա»։ Այնինչ

գլխում բարձից պոկած կպչուն միտքն է, թե դու, ով գիտի, այս առավոտ որ մի ամուրի ընկերուդ տանը արթնացար. մենա՞կ արդյոք, խմբովի՞ն արդյոք... Բայց կնոջ միտքը ինքնասիրությանը անձեռնտու թեման մերժում, պակաս ցավոտ հարցի է անցնում. տեսնես հոնորարը ստացավ՝ խմե՞ց, թե նոր պիտի ստանա-խմի, տեսնես տան վարձը կտա՞— կխմի մնացածը, թե խմելունը կսկսի խմել ու քամուն կտա եղած-չեղածը... Որդիդ, սակայն, հասկացողի կպչուն միտք չունի և հոր կարոտը համատեղում է որսորդական իր կրքի հետ. գդալը ձեռին բախտավորվող-հուսահատվող մորը պապի տան շուրջ բոլորը քարշ է տալիս, մինչև որ բլոճ կամ որդ չգտնեն՝ գդալը բերան չի առնի։ Սովերի միջով դարավերջին հասած պապը հետևում է ամենօրյա այդ պայքարին ամենօրյա տարակուսանքով՝ «Երկրի վրա ախորժակը էս ո՞նց պակասեց»։ Այդ անախորժակ կամակորին մեծ քույրիկը պատրաստ է լավ դաս տալու, բայց ինքը պապանց տանն է վաղուց, իսկ ախպերիկը նոր է հյուր եկել, կարելի է մի քանի օր դեռ համբերել։ Պապը կով չունի, պապը ձի չունի, ոչխար, այծ, խոզ, նույնիսկ էշ չունի, մնում է, որ անցած տարվա անտուն շունը գա ցախատանը լակոտներ բերի, բայց անցած տարի պապը թուլերին պարկը գցեց, տարավ անտառ ու ետ եկավ դատարկ պարկով (ախպերիկը հարց է տալիս. «Շան ձագերը անտառում գա՞յլ են դառնալու»), ու այս տարի շունն էլ չի գալիս, և մեծ քույրիկը, հարկադրված, եղբոր համար քար է շուռ տալիս, անձրևաորդ ու միջատ է պեղում։ Բայց կամակորի զանցանքները մեկառմեկ մտապահում է, մեղադրականը անգիր է արել, մնում է հայրը շեմից ներս մտնի։ Այնինչ, հայրիկը այս շաբաթվա վերջին էլ չեկավ։ Շաբաթ օրը գյուղ բարձրացող առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ ավտոբուսով, ոչ մի բանով հայրիկը չեկավ, երեկոյան հիշեց, որ չեկավ, կիրակին անցավ՝ չեկավ հայրիկը, քեռիները եկան-գնացին, ուրիշները եկան-գնացին, գյուղը խաղաղվեց, մայրիկը մթնեց, ինքը տխուր է, լացը գալիս է, բայց հայրիկին կպաշտպանի. ախր, հայրիկը, եթե մնալու

պատճառ չունենար, հաստատ կգար, հայրիկը ուրիշ ի՞նչ պիտի աներ գալուց բացի։

Լույսի նման քո դստրիկը իրիկվանից քաշվել է իր մեջ, մորից, բոլորից մնում է հեռու, որպեսզի մայրը, առավել ևս ուրիշ մեկը, իր նեղսրտությանը հոր աղջկան մասնակից չանի։ Իր տխրությունը իրեն հերիք է։ Նա հիմա փոքրիկ գաղան է կտրել, նրա սերը հոգսից ազատ է և իր հայրիկին կպաշտպանի։ Քանի դեռ փոքր է՝ կպաշտպանի։

Իրիկնաժամին այս նկարը շուռ տուր պատին՝ շրջած էլ քոնն է ու շահածդ մենակությանը տեր կանգնիր տղամարդու պես — ամբողջ տարին մտածել ես այս ամսվա մասին։ Չէ, շնագայլի կյանք չէ ուզածդ, պարզապես քո մենակությունը քո հանգիստն ու ազատությունն է։ Համենայնդեպս՝ քեզ մատչելի միակ հանգիստն է։ Այս տարիքում, այս վիճակում ազատությանդ միակ ձևն է։

Մենակությունը քեզ համար այս սեղանը բացեց. գլուխ սոխ ու աղի ձվածեղ, սառնարանից երեք շաբաթ չհանած պանիր, մի կտոր հաց՝ երեք օրվա, մի կտոր լավաշ՝ ժանգը կերած փշրվող թիթեղ.— էլ ինչո՞ւ է մենակությունդ աչքի փուշ։ Քո կծուլեղու ներկայությունը նրանց հանգիստը թունավորում է, որովհետև ամեն մեկը հացի հարց ունի, որ լուծում է կակազելով, գիրկապ անելով, նաև համբությամբ՝ ամեն օր ու ամեն ժամ, բայց առավել անտանելին քո հեգնաժպիտ ներկայությունն է, նույնն է թե՝ առանձնությունդ։ Իրենք՝ նախիրով, իրենք սհմակով լինելով՝ էլի անապահով են, դու, ախր, դու էդ ինչի՞ տեր ես, որ ինքդ քեզ այդքան հերիք ես...

Մի կյանք տնած վերջին չորս-հինգ տարիներին քո գրասեղան-ուղղանկյունին չորս պատ անելու ամենօրյա ջանք ես թափել գործատեղիդ՝ պարապությունից զազրախոսող, պարապությունից գռեհկացող, պարապությունից անառակացող մթնոլորտում, իսկ մտնող-ելնող հարկ է համարել ձեռադիրդ գնահատել տարօրինակ։ Դու տխմարի պես ժպտացել ես, որպեսզի նրանք չմտածեն, թե խանգարում են, որպեսզի ներեն,

որ իրենց հետ չես, իսկ անպատկառ հայացքները սահմանապահ լուսարձակների անողոքությամբ բևեռել են քո տեսական անզորությունն ու ինքնագոհության սակավ պահերը, ու քո հոգու մերկությունից սարսռացել ես, անակնկալի բերված մերկանդամ կնոջ նման ծալծլվել ու կծիկ ես դառել, մեկ էլ լրբի-հուսահատվածի կեցվածք ես բռնել՝ էհ, տեսածդ կեր, ձեռ տվածդ կեր...

Իսկ նրանք անցել-դարձել-անցել են՝

— Ստեղծագործում ենք, ասել կուզի...

— Լավ է, լավ...

«Ձե՞նք ստեղծագործում, իշի զավակներ,— մղկտացել ես քո ապուշ ժպիտից դենը, որովհետև այդ բառից գլխիդ որդերը ժաժ են գալիս,— չենք ստեղծագործում, մեր երեխեքին զրկում ենք հացից... Չենք ստեղծագործում, եղի նման ջլատվում ենք, ուզում ենք տեսնենք՝ պարտադի՞ր է, որ մարդ գրելիս սուտը ասի, իմանանք, տեսնենք՝ դա գրելո՞ւց է, ապուշությունի՞ց, դժվա՞ր կյանքից, թե՞ հեշտ կյանքից, սովորական գրչակ լինելո՞ւց, թե տոհմական տականք ծնվելուց... Հետո ինչ, որ իմացածս ինձ պետք չի գալու. անդրշիրիմի սպասավորներն ինձ չեն քննելու, իրենց չիմացած բաներն ինձնից չեն սովորելու, բայց ես պիտի իմացած գնամ։

Ինձ համար այսպես իմանամ ու գնամ։

Ծխախոտի նոր բացված տուփը խոստանում է մի քանի ծամվա ապահովություն։ Ծխախոտը՝ քեզ, ածխի փոշին վնասակար է ածխահատին, բարձրությունը՝ օդաշուին, խորությունը՝ սուզանավորդին, քսաներորդ դարը՝ բոլորիս — գործիդ մնա, հետն էլ ականջիդ օղ արա, տղա՛, կյանքդ քո կամքով չի եղել, որ կարճելն ու երկարացնելը քո կամքով լինի... Երկարացնես էլ՝ կբարակի։

Սովոր իրերը քեզ չեն շեղի։ Ծխախոտը, լուցկին, սուրճը ձախիդ տակ են, թուղթը՝ աջիդ, առօրյայիդ հետ լեղու զտիր, կորուստներիդ հետ հաշտվիր նորից, ծրագրերդ համարիր շեղյալ, մտահոգություններդ խորը ներս գցիր,— ստոր մարդիկ իրենց արժանի մահ կգտնեն, առաքինի հոգիները մի բանով, էլի, կմխիթարվեն (շատ որ չեղավ՝ կմեռնեն թեթև), ծախ-

վածները կարժանանան զավակների արհամարհանքին, ճշմարիտ խոսքը սիրո նման նույնիսկ քար սիրտը թեկուզ մեկ անգամ թունդ կհանի — համարիր, որ այդպես կլինի, խելքդ տուն կանչիր, հայացքդ շուռ տուր դեպի ներս, աստված մեծ է՝ պիտի որ տեսնես քեզ այն օրվա մեջ։

Մտքիդ ընթացքին մի բռնանա, ինչի որ տեր ես, թող հայացքիդ առջևով անցնի, պատկանելությունը հաստատի՝ գնա։ Այս թոռցիկ զորատեսը միգուցե քեզ ուժ ու կորով տա։ Այս պատկերի առաջ էլ կանգ առ, մանրամասները մտապահելու նման նայիր ու շուռ տուր պատին՝ շրջած էլ քոնն է. մի ջահել աղջիկ քո կյանքը մտավ երկուշաբթի օրվա նման անկասելի, քո կողքին, նաև՝ ընտանիքիդ, կանգնեց շիտակ, անավելորդ՝ վերջին պահին շնչասպառ-ցնծուն տեղ հասած, ընտանեկան լուսանկարը ամբողջացնող դեմք, որպես թե՝ հեռու քաղաքից տարեմուտին հասած լինի սիրելի դուստրդ, որպես թե՝ կինդ իր հարկի տակ իրեն նման — իրենից ջահել քույր ունենա, որին մի թեթև խանդելու է ամուսնու հանդեպ,— այսպես նա կա՝ շունչը թեթև և ճակատագրիդ գծի բեկվելը մի քիչ էլ պիտի նրա թափանցիկ ափին երևա... Ոչ, ճակատագրապաշտ երբեք չես լինի, դա մի անհամ փափկություն ունի, զրանով արագ հափշտակվում են ու վերակերպվում հեզ արվամոլի... Բայց այսպես եղավ, այս ուշ տարիքում մետակ շորով գարնան առաջին, սառը անձրևի տակ մնացիր, անծանոթ մեկին ներսդ առար վերջին շնչի պես անբռնելի, ու քանի նա կա շունչը թեթև, պահ է գալիս՝ թվում է քեզ, թե գերեզմանից ետ շտապող հուղարկավորներիդ կտաս կանցնես՝ գլխարկդ կիպ աչքիդ քաշելով։

...Բայց սիրո մասին՝ զգույշ, տղա. երեխաներդ հասնում են սիրո տարիքին։ Եվ մահվան մասին կամաց խոսիր, որ մորդ գյուղում գեշ երազ չգա — տարին բոլորեց, չտեսար նրան։ Այսպես չտեսար, չտեսար հորդ և կանուխ մի զանգ քեզ որբերի շարքերն անցկացրեց։ Զանգը կանուխ էր քաղաքի համար, գյուղում վերջին աքլորականչից վաղուց անց էր։ Ժամեր առաջ, կեսգիշերին, եղբայրներդ՝ երկու հասուն որբ, դուրսը՝ գերանի երկու ծայրին երեսները իրարից շրջած սպասելու էին լուսաբացին և փոքրի կարիքը ամեն պահ փղձկալու

աստիճան զգալու էին, որովհետև իրենք որբ էին ու գիտեին, դու որբ էիր, բայց չգիտեիր, քո չիմանալով մահն անհեթեթ էր, քո իմանալն էլ ժամանակի մեջ երկրորդ մահ էր։ Որովհետև իրենք մեծ էին, որբությունը քեզ էր հասնում ամենից առաջ։

Եվ երկու պարթև տղամարդիկ, երեսները իրարից շրջած, դերանի երկու ծայրին նստած, քթերը վեր քաշելով սպասում էին, որ քաղաքում փոքրն արթնանա։

Հետո մայրդ ողբով կասի... «Էսքան մոտիկ եկար անցար, բա քո սիրտը քեզ բան չասե՞ց...»։

...Աղջիկների հետ ծածուկ սիրային զրոսանք էր՝ հայրենիքդ ցույց էիր տալիս։ Գյուղից կողքով գիշերով անցար, ասիր՝ «Է՞ն սարի ետևն եմ ծնվել»։ «Օ՜, ինչ մութ է»... «Բա քո սիրտը քեզ բան չասե՞ց»։

Տղամարդու թալուկ սիրտը գելուգազանի բաժին է, մայրիկ, մի կշտամբիր։ Համ էլ կյանքը մեր ուզածով չեղավ։ Ուզում էինք գանք, բայց չէր ստացվում։ Ուզում էինք գանք լիքն ու բարով, որ անհոգ մնաք, ջահել մնաք։ Ուշացումով եկանք, որ լավ գանք, չեկանք, որ լավ գանք... Մեկ էլ տեսանք, որ ապրում ենք առանց ծնողի... է, ապրվում է, ապրում ենք, էլի, կյանք է, հո որբանոց չի... Հետո, ախր, կյանքը մեր ուզածով չեղավ և առուփախի հրապարակում ապշած մնացինք։ Հետո ցավից երկու տակ եղանք, հետո քունքներս ճերմակեցին մի գիշերվա մեջ, բերաններս դառն իմաստնությամբ ծամածռվեցին, ընդոստ շտկվեցինք, որ չտրորեն,— այսպես դարձանք հուսահատության քարե արձան. իրանը՝ ձիգ, գլուխը՝ բարձր, ձեռքերը՝ ծոցը, որ մաքուր մնան։

...Խաղը պառավեց։ Կախարդական հայելին ճաքեց գիշերվա կեսին, մասերը տարանջատվեցին, մոխրամանը աղբաման դարձավ, լուցկու տուփը հանգավ հատ-հատ, ծխախոտի ծուխը՝ ամպերին, սուրճի մրուրը շուրթերիդ հասավ,— ամբողջականության հույսը ցնդեց։ Հրաշք չի լինի։ Տարիների պատն անթափանց է, կուրացնող է մանկությունից եկող լույսը, հիշողության ճանապարհը լի է փորձանքով՝ դարանակալ տարիների հոգսով, կորուստով, սիրով, ցավով... Եվ միայն բույրի հիշողությունն է մտակորույսի ցանցառությամբ

բերում-տանում բույրի ծվեններ, և կայծկլտում են աղոտ պատկերներ, բայց ոչ մի բույր չի բռնում գույնը, բայց ոչ մի ձայն տեղը չի գնում բնապատկերը, և պապանձված է ամռան օրը, և իմաստալից քայլ անելու ջանքն է ապարդյուն, որովհետև հավասարակշռություն չկա կեսի մեջ։

ԳԱՌ-ԱԽՊԵՐԻԿ

Ցերեկը՝ էլի ոչինչ, ցերեկը իրենն առնում էր։ Թեև տունը կարեկցանքով մեկուսացված էր գյուղի գործնական անցուդարձից, կյանքի աղմուկն իր գործն անում էր. աքլորները բացում էին վերահաս օրվա ձայների դուռը, շները զարթնում էին վաղորդայնի անչար հաչոցով, նախիր քշվող անասունը մոնգում էր քնատ ձագերին ականջալուր, հայրիկը ամեն օրվա պես հայհոյում էր անհասկացող անասունին, հաշտի դուռը ճռնչում էր առօրեական, քույրիկները ինչքան էլ հուշիկ քայլեին՝ ման-չամանը զրնգում էր, դաշտից դարձած հոտի ու նախրի բերածը կաթից շատ իրարանցում էր... Բայց գիշերը անտանելի էր։ Տունը սուզված էր վշտի հատակը, և քնելն ինչ է՝ շնչել չէր լինում։

Տղան գիշերը արթնանում էր զարհուրելի լռությունից։ Տատը չէր տնքում քնածի սրտանց տնքոցով, հայրիկը չէր խոմփացնում ուրախ օրերի խոմփոցով, քույրիկները չէին բլբլացնում երազի մեջ, մայրիկը անակնկալ հեծկլտոցը կանխել էր՝ վերմակը գլխին քաշելով,— ամեն մեկը խնայում էր մյուսների քունը, բայց հարկի տակից քունը փախել էր։

Իսկ ընդամենը մի շաբաթ առաջ գիշերը տունը շնչում էր կյանքով։ Քույրիկները շարունակում էին ցերեկվա լեզվակռիվը, տատը թախտի չորության հետ էր կռիվ տալիս, հայրիկի զորեղ շնչառությունից մկները պապանձվում էին, օրորոցը թկթկում էր քնած մայրիկի արթուն ձեռքի տակ, հաշ-

տում դրած գիշերանոթի մոտից անկողին դարձող տղան այդ ձայները լսում էր կարծես երազում և քուն էր մտնում՝ կոպերը երանելիորեն լրիվ չբացած։

Արթուն ժամանակ ավելի հեշտ էր. գիտակցության մեջ չկա-ն կար հաստատ, և կսկիծը անակնկալի չէր բերում նրան։ Միգուցե տղան քնած ժամանակ զգոնությունը չկորցներ, եթե երազը չխաբեր նրան։ Բայց գիտակցության մեջ կորուստը այնքան տեղ չէր արել, որ երազում եթե տեսներ, ասեր՝ երազ է։ Կորուստը նոր էր և երազով միամտանում, արթնանալով՝ դիվոտում էր։ Եվ քնելուց սարսափում էր։ Բայց հոգնությունը ծանր նստում էր կոպերի վրա, և երբ քնած լինելու վախից վեր էր թռչում, ուշ էր լինում։

Մայրիկը ընտանիքին խորթացել էր։ Կիթ էր անում, ճաշ էր եփում, սեղան էր դնում, անկողին գցում, բայց՝ հարբանի կնոջ նման — արագ անի՝ թողնի գնա։ Բայց քանի որ անում-չէր գնում, տան շունչը տասնապատիկ ծանրանում էր։

Հետո մայրիկի կրծքերը ուռան։ Կաթը չէր կտրում։ Մայրիկի վիշտը կաթի ակունքին լուր չէր տանում, կաթը գալիս ու երեխային չէր գտնում կյանքում։ Պիտի որ այդպես չլիներ, եթե կաթին սպասող չկար, կաթը պիտի իր ակունքը ինքը կապեր։ Բայց մի մեծ անհամաձայնություն կար կյանքի ու մահվան միջև, կսկիծ բերող ընդվզում կար կաթի հոսքի մեջ, և մայրիկը ցավից մղկտում, վշտից մեռնում էր։

Քանի՞ օր էր մայրիկը ցավն իր ներսում պահել, ոչ ոք չգիտեր։ Ցավը վիշտը վարկաբեկում էր, նաև՝ սուրբ հիշատակի դեմ պղծություն էր տնեցիներին վշտից շեղելը, և մայրիկը ոտքի վրա ձեռից գնում էր։

Երեխաների զպրոցում եղած ժամանակ հայրիկը տուն էր բերել գյուղ հարս եկած բուժակուհուն։ Սրա ձեռքին նշտարը թպրտացել էր, հայրիկն ասում էր, գլխից բռնած ձկան նման։ Բուժակուհուն պաղ ջուր էին տվել, նա խնդրել էր ևս մի բաժակ, հետո յողով ախտահանել էր հատելու դաշտը, խաչաձև երկու խաղ քաշել՝ թողել փախել էր։

Նույն իրիկուն հայրիկը նստած էր վառարանի մոտ, կողքն էր դրել բամբակ ու օղի, սրոցաքարով հեսանում էր իր զբրպանի սուրշեղը դանակը և ծխախոտի թանձր ծուխը նրան

պարուրել՝ զբաղմունքին չարագուշակ կախարդության տեսք էր տվել... Այստեղ ներս մտավ հորեղբայրը և բաճկոնի փեշի տակից սև տոտիկներով մի ճերմակ գառնուկ դուրս բերեց։ Ինքն էլ նստեց վառարանի մոտ, գառնուկին սրունքների արանքը առավ, ծխախոտ վառեց, երեխաները աշխուժացան, բայց հայրիկը ուշադրություն չէր դարձրել գառան վրա՝ նրանք սառան։ Գառը՝ նորածին, անհաստատ ոտիկները հավասարակշռության համար չուած՝ երերում էր, դունչը մեկնում էր վառարանին՝ տաքը ռունգերին դուր էր գալիս, բայց հորեղբոր ափն էր զտնում... Մայրիկը նորահարսի անմոունչությամբ ցավը քաշում էր ոտքի վրա, տատը դանթում էր՝ կարկատվող զուլպան ծնկներին դրած, հայրիկը ծխախոտը մոխրացնում էր այնպիսի ջանադրությամբ, ասես մայրիկի ցավի ճարը դրա վերջին էր։

Հայրիկը, հաստատ, դանակի վրա հույս չէր դնում։ Երկար-բարակ քսում էր սրոցաքարին, օդիով ախտահանում էր, փորձում էր բթի կոշտուկի վրա, նորից էր քսում... սպասում էր, ասես, հրաշքի։ Ինչի՞, որ վերքը ներսի՞ց պայթի, որ բուժակուհու մակերեսային կտրվածքը խո՞ր գնա... Այնինչ հորեղբոր անհանգիստ մտքում վճռական բան կար։ Նրա դեմքը իր իսկ մտքերից վառվում-մարում էր, թաքուն հայրիկի հայացքն էր փնտրում, բայց հայրիկը, իբր թե, տարված էր գործով։ Հետո, գառնուկի անօգնականությունը հիշեցնում էր... Ո՞վ սիրտ ուներ նրանով զբաղվելու։ Հորեղբայրը այդ էլ էր զգում, բայց ի՞նչ աներ խեղճ հորեղբայրը։ Եվ թողեց, որ գառան դնչիկը մի քիչ առնի վառարանին։ Առաջին ցավից գառնուկը շշմեց-մայեց և հայրիկի սիրտը շարժվեց.

— Զգույշ, այ ախպեր...

Հորեղբայրը, գլուխը կախ, քրթմնջալով վրա բերեց.

— Գառը թող... ծծի... մեր լունի...

Մայրիկը պահարանի մոտից շուտ եկավ, երեխաները ականջները խլշեցին, հայրիկը նայեց եղբորը՝ խոսքի իմաստը նրան չէր հասել։

— Համ գառը կապրի, համ... կլավանա,— այս անգամ հորեղբայրը նայեց հայրիկին։

Հասկանալով՝ հայրիկը նայեց մայրիկին, մայրիկը հեծկըլտաց՝ կրծքերը բռնած, դանթող տատը շտկվեց տեղում...

Երեխաները հիացմունքով նայում էին հորեղբորը, հայրիկին, գառանը, լացող մայրիկին...

Հետո մայրիկը շուռ էր եկել պատի կողմը, հայրիկը գառանն առել էր մի թևի տակ, մյուսով գրկել էր մայրիկի ուսը, խրախուսում էր մեկ գառանը, երկու՝ մայրիկին, մայրիկը անզուսպ լալիս էր, տատը վառարանին ջուր էր դնում համենայնդեպս, հորեղբայրը դրսում ծխում էր, երեխաները զմայլված էին հայրիկի անութի տակ խլրտացող գառան պչով։

Հետո գործը առաջ գնաց առանց հայրիկի։ Երեխաները հավաքվում էին մայրիկի շուրջը և գառը կուրծքը առնում էր։

Մայրիկի արտասվելը կարծես ցավից էր։ Ցավը, ոնց որ, շատ երկարեց։ Ոնց որ՝ գառը փրկություն չէր։ Բայց մայրիկը կամաց-կամաց երեխաների ուրախությանը տեղի տվեց։ Պատահում էր, որ ժպտում էլ էր, երբ գառը կուրծքը դնչահարում էր։

Գառը մայրիկին սգից հանեց։ Մայրիկը՝ ջրի, գառը ետևից կըտկըտ գնում էր, մայրիկը՝ խանութ, գառը վաճառասեղանի առաջ կանգնած էր, մայրիկը հաց էր թխում, գառը թոնրատան ծխից խեղդվում, բայց չէր հեռանում, երեկոյան հա՛ պտտվում էր մայրիկի շուրջը և քուն էր մտնում մայրիկի մահճակալի մոտ, գլխակողմը։

Մայրիկը տղայի հետ գառները բակից դուրս էր անում, հարմար մի տեղ ձեռնասունին խաբս էր տալիս, դառնում էր տուն, գառը դես ու դեն էր նետվում, խրտնչում էր խոտի սուր հոտից, վերջը՝ գառների օրինակով, արածում էր, բայց՝ չմակեր երեխայի պես։ Համենայն դեպս, տղան տան ճանապարհը կտրած էր լինում։

«Ախպերիկ ջան,— տղան գառանը գիրկն էր առնում, պչում էր դունչը, նայում էր աչքերի մեջ,— ախպերիկ ջան, չմեծանաս»։

Այնինչ գառան պստլիկ գլխին կոտոշ էր ծլում։ Վիզը պնդվում էր, ոտքերը ուժով էին լցվում, մայրիկը ժպտում էր թեև, բայց չէր դիմանում դնչահարելուն և որոշեցին կրծքից կտրեն փորձված միջոցով՝ աղուպղպեղով։ Երեք-չորս օրից կրծքից կտրվեց, բայց մայրիկից չհեռացավ։ Պատահում էր, մոռանում գառը փորձը, դունչը մեկնում էր ակնկալիքով,

մայրիկը մատների ծայրով դնչին խփում էր՝ գառը հիշում էր։ Հետո փորձն էլ, կուրծքն էլ մոռացավ, բայց մեծանում էր մայրիկի կողքին։ Արդեն խոյ էր՝ կպած էր մայրիկի փեշից։

Խոյը կամ մատաղացու է, կամ մսացու, եթե չի պահվել հոտի համար։ Բայց հայրիկի ձեռքը չէր գնա գառան վրա, մայրիկը դեմ էր մինչև անգամ վաճառելուն, իսկ ձեռնասունը աշնան վրա անհանգիստ էր, տակնուվրա էր անում տունը և հովիվը համաձայնեց երկու օրով թողնել աշնան արոտի ելած ոչխարի մեջ։

Մշուշը իջավ սահուն ու արագ, հոտը սեղմվեց, մեկ էլ պատռվեց մշուշի փեշը՝ ոհմակը խփեց։ Խոյը՝ ձեռնասուն, խոյը՝ ջահել, մեղկացել էր կիտված էգերի տաք շնչի մեջ, ուշքի չէր եկել, դիրք չէր բռնել՝ ոչխարը ցրվեց ոսպի նման և նա մնաց անակնկալ երախի դեմ։

— Էս էլ էսպե՞ս,— լուրը առնելով հառաչեց հայրիկը։

Մայրիկը լուռ էր։ Նա իրեն այնպես էր պահում, ասես սկզբից վախճանը գիտեր։

Խոտանոցում աղան լալիս էր։ Այդ օրը նա վերջապես մտաբերել էր եղբոր դեմքը։ Երեք օրից մոռանալու էր հավիտյանս։

ՇԱԲԱԹՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻՆ

Այդ երեխան բաց դռների գիժ է։ Նա ամբողջ օրը սենյակի դուռը թակում է ներսից։ Ծնողները տանը լինելիս դուռը ներսից են փակում, միջանցք ելնելիս դրսից են փակում։ Նրանք այնպես միանգամից են գյուղից քաղաք ընկել, որ քաղաք ասելով՝ փակ դուռ են հասկանում։ (Նրանք օրինավոր կենվորներ են։ Երբ վաղը տանտեր դառնան, նրանց կենվորներն էլ են երեխաներին սենյակում փակելու։ Նրանց նմանները երեք սենյակից մեկը տալիս են վարձով և կյանքում այդպես մնում են կենվոր՝ ուրիշի, ապա սեփական տանը)։

Ու այդ երեխան, երկու տարեկան այդ հրեշտակը առանց հոգնելու, առանց լացի դուռը օրնիբուն թակում է ներսից։

Մայրը այսօր անփույթ եղավ ու այդ երեխան գտավ իմ դուռը։ Ինչո՞ւ նոր գտավ իմ անփակ դուռը։ Ես տանը կանուխ եղած կա՞մ — կամ նա ուրիշ անգամ միջանցք եկած կա՞,— անշուշտ եկած կա, իմ դռան տեղը չգիտե՞ր—գիտեր, խաղալիքների տեղը հո՝ վաղուց գիտեր, ուրեմն ինչու հենց այսօր գտավ իմ անփակ դուռը... Ես եմ երեխայի դեմ փակ եղել։ Խղդությունն իմ մեջ է եղել, և երկու տարեկան մանուկը դա զգացել է։

Իսկ երբ երեխաներիս կարոտը հանկարծ լցվեց աչքերս, երբ կոտրն ընկա ու հայացքս փափկեց, այդ երեխան հրեց դուռս, տանու կատվի պես սլկաց ներս, մահճակալի տակից դուրս քաշեց խաղալիքների թեթև արկղը, պարունակությունը ցփնեց հատակին և ամիս ի վեր ամայի տունս տան նման եղավ։ Եվ ես հասկացա, որ երեքշաբթին աշխատանքային օր չէ ինձ համար։

Է, առավոտվա սուրճս այնտեղ չէ՝ տանը կխմեմ, ամենօրյա սուրճի սեղանի խոսքուզրույցին այսօր էլ չեմ մասնակցի, հակառակ դեպքում՝ խոսք կբանամ երկրորդ, երրորդ բաժակի ժամին... Երրորդին որ՝ կհասցնեմ։ Միևնույն է՝ գնալ պետք է։ Հետո ինչ, որ գործատեղը անելիք չկա։ Հո չի կարելի մարդկանց թողնել ինքնահոսի։ Հարկավոր է, որ առավոտները միասնաբար հանվեն տներից, իրիկունները արձակվեն ի բաց... Թող աղջիկներն ու տղաները կինո գնան, կանայք թող խանութների ցուցափեղկերը երկրպագեն, տղամարդիկ խորտկարաններով տրանզիտ գնան, թող երևակայեն, թե ազատ են ուղածն անելու, թող աքլորանան,— վերջը գիտակից ամոլի նման իրենք իրենց ականջը բռնած, քաշվելու են ընտանեկան սովոր լծի տակ։ Գիտակցությունն էլ եթե չօգնեց, մեկ է՝ սերը, քաղցը, քունը, պարպված գրպանը տղամարդկանց տուն է տանելու։

Ասում եմ՝ «Բալիկ, աշխատանքից ուշանում եմ»։ Ինձ համար այնպես ասում եմ։ Ես նստած եմ բազկաթոռին, նա խաղալիքները թողել, եկել կանգնել է թիկունքիս ու թիկնակի միջև, մի ձեռքին որդուս դեղնափոր ձուկն է, մյուսը անկշիռ դրել է ուսիս, պատուհանից երևացող ծիրանի ճյուղին սար-

դը այս գիշեր ոստայն է կապել՝ արևելքի մանուկ շողերը թելերը դարձրել են ոսկի, ոստայնի միջով երևացող աշխարհը երևի թե նման է այս երեխային ամեն ակնթարթ պատկերվող աշխարհ-հեքիաթին, և ես կապ չունեմ այդ աշխարհի հետ, ես չեմ տեսել, համենայնդեպս՝ չեմ հիշում այդպիսի աշխարհ, մի ինչ-որ երեսուն տարում ես վերածվել եմ կույր, հիվանդոտ անասունի, իմ աչքերը աշխարհի դեմ այսպես բացվում են տարին մեկ-երկու անգամ, արևելքի այս զվարթ ժամին, ես այս երեխայի աշխարհից չեմ, նրա ցեղից չեմ, ես ինձ զգում եմ հոգնած ու մեծահոգի շուն, որ թույլ է տալիս երեխաներն իրեն հեծնեն և ծուլորեն երջանիկ է և ծուլորեն էլ անչար է, անչարությունն էլ կգնահատի երկու տարեկան երեխան միայն և որը երբեք ուժ չեն ունենա գնահատելու մեծացած թուլքը նրա, ինչքան էլ սիրեն նրան, որովհետև նրանք երազել են ու երազում են բարեհոգի քոստի տեղ մի ժանիքավոր, մի գայլակերպ, պատառի համար կռիվ անող, սարսափ տարածող հայր ունենալ։

...Լսիր, ասում եմ, իմ ականջին ասելու նման փափուկ ասում եմ՝ քեզ մի ձաղկիր այս պայծառ ժամին, օրն սկսեցիր քեզ ձաղկելով՝ օրվա վերջին ոտի տակ կտան։ Շուն մի հաչեցրու, վեր կաց գնա աշխատանքի։ Քանի տանտիրոջդ գործի գնալու ժամը չի հասել, վեր կաց գնա վերին կանգառ, նա նստում է վարի կանգառից։ Հանդիպես էլ, նա քեզանից վարձ չի ուզելու (այդքան չի իջնի քո մակարդակին), միայն քթի տակ կբարևի, մեկ էլ՝ եթե հեռախոսի մոտ կանչող լինի, կասի՝ տանը չի։

...Այս էլ երկու տարի եղավ, որ մտմտացիր-մտմտացիր, բայց չբարձրացար մի օր, ասես՝ հարգելիներս, դուք Ստենդալ, Բալզակ, Օ'Հենրի կարդացած մարդ եք, հիշեք, որ... ես ձեզ խնդրում եմ... ես ձեզանից քիչ բան եմ ուզում. ուզում եմ, որ մեր առևտուրը աղնիվ լինի։ Ես ձեր ճորտը չեմ։ Ես աշխատավարձիս վաթսուն տոկոսը տալիս եմ ձեզ առանց չարության, դուք իմ փողն ինձնից առնում եք ու բարևում եք կիսաբերան... Չեղավ, չէ՞, չեղավ։

Չէ, հարմարը կենվորների համքարություն ստեղծելն է, կամ՝ տանտերերին չափի բերող ահաբեկչական խումբ, կամ... Ամենաճիշտն այն կլինի, որ չկարդաս դրսի գրողի, հին գրո-

գի... «Ես տանտիրուհու դուստրն եմ, պարոն, դուք այս գիշեր վատ քնեցիք, կուզե՞ք թեյը ոսոմով մատուցեմ»... «Երիտասարդ բարեկամս, խավարում մի՛ կարդացեք, լամպը վառեք, անհոգ կացեք»։ Հիմարությունները գլուխդ լցրել, եկել լովել ես քսաներորդ դարավերջում, Արևելքի ու Արևմուտքի ոտքի տակ ընկած Հայաստանում՝ ի՞նչ ես երազում...

Հոգս չունենայիր, մի քիչ էլ լինեիր դատարկ՝ միտքդ զբաղվեր հոգեվերարտնակությունն-սփոփանքով. հետևյալ անգամ ի՞նչ կերպարանքով այս աշխարհ գաս, որ ազատ լինես սենյակի վարձից, աշխատավարձից, որևէ վարձից։ Տեսնես հոգիդ ի՞նչ անասունի մեջ է մտնելու։ Արդյո՞ք կովի... Հետաքրքիր է, սեռը փոխել կա՞ — պետք է հարց տրվի գիտուն տղերքին։ Այսինքն, դա էական չէ։ Կարևորն այն է, որ ընտանի կենդանիներով ես բավարարվելու (վայրին արագ վերանում է), եթե, իհարկե, վոազուկ ծնունդ եղար։ Իսկ եթե չեղար, անտուն հոգիդ, ա՜խ, անմարմին մորմոքով թափառելու է ոլորտներում ու ձե՛ն է տալու, տենչալու է մի որդ, մի ճիճու, որ թեկուզ այդ կերպարանքով մեկ էլ աշխարհ գա։

Տիեզերական թախիծդ թո՛ղ։ Ասում եմ՝ թախիծդ թող օրագիր պահող օրիորդներին, վեր կաց գնա սենյակ ճարի, երեխաները լավ չէ մեծանան դառը շնչի տակ. ոսկրախտ կունենան, կտառապեն հողացավով, մաղձով կլցվեն, անլիարժեքության զգացումից ծուռվիզ կմնան, թաղում ծեծ կուտեն թուրքի գյուղ մտածի նման։

...Թա՜ղ եմ ասել... Ութ տարեկան աղջիկները հայհոյում են տղաների պես, իսկ տարեկից տղաները ուշունցի պատանի աստվածներ են։

— Բոշե՜ք,— մեկ էլ պայթում է կովազան մի ճիչ, և երեխաների երկսեռ հրոսակը բոշեքին հալածում է կեռուծուռ փողոցներով։ Հալածվողները հասնում են եկեղեցուն, դիրք են բռնում շիրմաքարերը, և սկսվում է քարկոծումը։ Փոքրաթիվ պաշտպանվողները նեղվում են, սեղմվում են զսպանակի պես և համալրում ստանալով՝ անցնում են հակահարձակման։ Հետապնդումը փոխում է ուղղությունը։ Կիսամերկ, թուխ, փնթի սելավը հորդում է փողոցներով և այնպիսի հայհոյանք է օդը բռնում, որ եկեղեցու խունացած խաչը կշտամբանքով ճոճվում է շիրմաքարին թարխուն ծախող կնոջ աչքին։

— Ձեր խե՜ր թաղեմ,— երկյուղածորեն դրստում է լավաշի դարսը լավաշ ծախողը։ Քարերից մեկի վրա տղամարդիկ թուղթ են խաղում։ Ցածրիկ, փոքր մի ուրիշ քարի նարդի է դրված, իսկ խաղացողները նստած են պուճուր քարը ծնողաբար մեջտեղը առած երկու հավասար բարձր քարերին... Բայց հին գերեզմանոցի շիրմաքարերն ավելի հարմար են գալիս լավաշի դարսին — ոչ բարձր են, ոչ՝ ցածր, մեջքները՝ հարթ ու իսկը լավաշի բոյին։ Ծիշտ է, քիչ նեղ են, բայց լայները հեռու են հրապարակի անցուդարձից։

Ամառվա իրիկնաժամին, երբ շները ելած են լինում հեղձուկ բներից ու ծածկերի տակից, կին ու աղջիկ տներից դուրս են թափվում, նստոտում անմայթ փողոցների վրա բացվող դռների շեմին, փեշները վեր են քաշում, արևածաղկի սերմ են շրթում ու թքում մեքենաների դողերի տակ։

Լեռն ու լույս տվող ծնկներից, ասֆալտի տապից, արևառած ամեն, ամեն ինչից մի գոլ ծուլություն, մի ծույլ հեշտանք է կախվում օդում և օրը գայթակղելով՝ քարշ տալիս դեպի զով կեսգիշեր։ Իսկ նրանք, որ դեռ երեկ հայհոյում էին տարեկից տղաներից էլ կատաղի, հիմա, ամռան իրիկվա այս փափուկ ժամին, հաստասրունք ու կրակված աչքերով, զույգերով, խումբ-խումբ ճեմում են ուշունցի աստվածների սևեռուն հայացքների տակ։ Երբ մութը ընկնի, եկեղեցու հրապարակից ու փողոցներից նրանք կլքանան և եղբևանու թփերի մեջ, փայտաշեն զուգարանների անլույս արահետներին կհամբուրվեն հևիհև, թաց ու ահով։

Այս հին, հովվերգական Քանաքեռում առավոտ է։ Արևի շողն առած սարդոստայնը աչքերիդ փառ է կապել և ապագայի մասին մտածում ես ինչպես հայը՝ կիրակնօրյա խաշի։

Երեսունդ անց է՝ ուժդ տեղը, երեխաներ ունես՝ մանկապարտեզ են գնում, կինդ բնակարանի հերթում կա՝ կստանար, աշխատավարձ ես ստանում՝ միջին միութենական, տանտերդ սենյակ գտնելու համար ժամանակ է տվել մի ամբողջ ամիս, դու էլ ահա փնտրում ես։ Մի ամսում կարելի է առանձնատուն կառուցել, ինչ մնաց սենյակ չճարես, այն էլ Երևանում։ Նայիր հանդիպածդ երկհարկանի տան առաջին կամ գետնահարկի պատուհաններին՝ եթե վարագույր չկա — աղատ

է, եթե երեխաներ ունենալդ տանտիրոջ դուրը եկավ, գինը՝ քո, մտիր ու ապրիր։ Քանի դեռ օրդերի գերին չես դառել, ծտի պես ապրիր ուզածդ թաղում — ընկերոջը ինքներս ենք ընտրում, հարևանին մեզ քաղսովետն է տալիս։

Տեղդ նեղ չէ, որ պատահած ծակուռի մեջ ստիպվես ապրել, անկախ, բծախնդրորեն տներին նայում, անցնում ես առաջ, հինգից մեկի դեմ կանգնում, հարցնում ես՝ ունե՞ք-չունե՞ք-ի՞նչ արժե... Կիրակի օրով հենց այնպես շուկա մտածի նման, երբ որևէ բանի սուր կարիք չունես և շուրջդ նայում ես իրրև գեղագետ, երբեմն էլ ցրված, հարցնում ես՝ ինչ արժե, գուցե թե մի բան, այնուամենայնիվ, առնես։

Ուրեմն, այսպես քայլում էիր՝ երեքշաբթին կիրակի արած, սենյակ էիր փնտրում՝ ձեռքերդ դարսած մեջքիդ, ծխախոտը բերանիդ մեջ խաղացնելով... Այստեղ ցից քիթդ մի գարշահոտ բանի առավ։ Այստեղ եռանից լենքին խփեցին ծնկածալերիդ։ Այստեղ շուռ եկան ու թքեցին քո լավատեսլեն ճակատին։

Առերևույթ բան չպատահեց։ Հերթական տունն էր, որի առաջ շահագրգռված հապաղեցի։ Շենքի տեսքը ասում էր, որ բաղնիք, զուգարան, ջեռուցում կա, բարձր պարիսպն ու փակ դարպասը երաշխիք էին էներգոցանցի տեսուչի ներխուժման դեմ,— ուրեմն լույսը գողանում են, հետևաբար գիշերները դիրք կարդալուս ծուռ չեն նայի... Թակեցի կանաչ դարպասը։ Ներսից հաչոցով պատասխանեցին։ Լավ նշան չէր, բայց տրամադրությունս շատ էր բարձր նշաններից։ Դարպասը բացեց տարիքոտ մի կին, լսեց, ասաց՝ «տեսնեմ ամուսինս տա՞նն է» ու դարպասը երեսիս ծածկեց։ Ես ժըպտացի կանաչ դարպասի ու իր ապրանքը թանկի տվող տանտիրոջ վրա։ Եկավ, ասաց՝ «Տանը չի, բայց սենյակը տես» և շանը սաստեց, ինձ բակով տարավ։

Տանտիրուհու հետ մտանք սենյակ և զույգ փոքր պատուհաններից հավեր դուրս թռան։

Դարպասից դուրս գալուց հետո մտածում էի, թե առաջին պահ ես պիտի որ ցնցված լինեմ։ Սենյակ կոչվածը մառանահարկի ձախ թևն էր։ Աջ թևը, դատելով դռնից, կողպեքից, բուն մառանն էր։ Մառանահարկին հասնելու համար մենք անցել էինք երկրորդ հարկի այն կեսի տակով, որ հանգչում էր սյուների վրա և արևելքից լույսը փակում էր։ Հարավ կող-

մից խուլ հիմնապատ էր, արևմուտքից նույն պատից էր, լույսը ընկնում էր հյուսիս կողմի քառորդ չափի պատուհաններից, որից դենը հավանոցն էր։ Հավանոցը երեք կողմից ցանցապատված էր, չորրորդ կողմ ունենալով շենքի պատը, այսինքն՝ այդ սենյակի միակ պատը, որի վրա լուսամուտ կար։ Եվ հավանոցի գարշահոտը սենյակի մեջ էր։ Եվ ամեն ինչից երևում էր, որ այստեղ առաջ մարդիկ են ապրել։

Մի պահ սիտի որ նայած լինեմ այդ կնոջ դեմքին։ Համենայն դեպս, անվրդով մի դեմք եմ հիշում։ Այստեղ մնացի հաղիվ մեկ րոպե։ Մտածում էի՝ դեռ մի քանի տեղ կհասցնեմ նայել, բայց դուրս գալուն պես կարծես ետևից ծնկածալերիս լենքին խփեցին։ Այսօր այսքանը բավական է։ Եվ, առհասարակ, եղածն ինձ մի քանի շաբաթ բավական է։

Իմ հարաճուն զայրույթի մեջ ես մտածում էի այդ կնոջ մասին՝ գոնե չիմանար երեխաներ ունենալու։ Առաջին խոսքով հարցրած չլիներ ու մտածեր՝ գյուղացի, հավուճիվի սովոր տղա է, տուն է գալու քնելու համար, դուրս է գալու թառաժաժից առաջ, տվածն ինչ է՝ քառասուն ռուբլի...

Իմ անտուն կյանքում շատ բան եմ տեսել։ Պատահել է, մի սենյակ են առաջարկել, որում լույսի միակ աղբյուրը էլեկտրական մերկ լամպն է եղել։ Խնդացել, թողել հեռացել եմ։ Բայց այստեղ ես պապանձվեցի։ Փողոցում միտս էի բերում այդ կնոջ դեմքը... Ճիվաղի բնավ նման չէր, նույնիսկ վանող բան չկար վրան, մի կին էր հորաքրոջս ու քրոջս նման, որը, թվում էր, հիմա կասի՝ «սոված կլինես, մի բան կեր՝ գնա»։ Համոզված էի, որ սիրասուն մայր ու տատ է, որ երեխա եղած տունը չի մտնի առանց գրպանը մի անուշ բան դնելու... Կարող է մի քիչ ժլատ լինել, կարող է լավ էլ ընչաքաղց լինել, բայց որ ինձ՝ անծանոթիս, առաջին անգամ տեսած մարդուն, մարդ չի համարի, դա իմ ըմբռնողությունից վեր բան էր։

Այնուամենայնիվ, ես ուզում էի հասկանալ նրան։ Իմ՝ շուկայի օրենքն հարդողիս, իրապաշտիս, պատրանքներից վաղ թոթափվածիս ամբողջ սթափությամբ ջանացի հասկանալ նրանց, բայց ուղեղս շիկացավ բռնությունից, սմքեց, քար կտրեց, հրաժարվեց աշխատելուց՝ ի՞նչը հասկանալ։

Ես զգում էի, որ ուռչում եմ՝ թարախի պալար, դառնում

եմ ազդիս թշնամի, երկրիս համար վտանգավոր, վերածվում եմ ծայրահեղական սինլքորի, ինձ չէր կարելի փողոցում քայլել, չէր կարելի մարդկանց մեջ լինել, որովհետև այդ վիճակում զինվորագրվում են ջարդարարական հարյուրյակներին, լավագույն դեպքում ձայն են տալիս հանուն որևէ գույնի տեսորի։

ԵԿՎՈՐԻ ԲԱԽՏԸ

1.

Մեր երկնքում ցոլացող օդանավերից անմատույց էին մեր կողքով անցնող գնացքները։ Օդանավերից որ՝ հաստատ ահարկու էին։ Հեռվից նայելիս՝ էլի ոչինչ, սողում գնում էին իրենց համար, այնինչ մոտիկից՝ սլանում էին դժոխաձայն, մամլող ու թշնամի թափով, որպես ականջիդ տակով թռչող պարսատիկի քար, որպես, երևի, գնդակ կամ նետ, որի անցնելուց հետո հազիվ շունչդ ետ ես բերում՝ այս անգամ էլ մահից պրծանք։

Մեր առաջի հորթերը չափ էին ընկնում քարափներն ի վեր, մեր գառները խճճվում էին մոշուտներում, ձկները ծնվում էին գետի հատակին և մեր կարթի որդերին ջուրն էր մաշում։

Մեր անզորության գիտակցության այդ պահերին գետի մեր ափից գնացքի վագոնները կապում էինք քարկոծի և մտքներովս չէր անցնում, որ դրանց մեջ կլինեն, է՛լի, մեղ նման մարդիկ։ Կարեկցանքի արժանի բան չէինք տեսնում դրանց ամեհի թափի մեջ։

Ուրիշ էին հետագայում գիծ մտած «բանվորական» գնացքները, անզուգարան, անջուր, ամեն կարգի մարդ ներս առնող, ամեն տնակի առաջ կանգ առնող մեր եռավագոն ձեռնասուններին։ Դրանք գրաստի հեղությամբ սպասում էին բարձվելուն, շարժվում էին հարյուր անգամ զգուշացնելուց հետո ու դեռ թափ չառած՝ հասած էին լինում հաջորդ կայա-

բան։ Ավելի շատ կանգնած էին լինում, քան ընթացքի մեջ։

«Բանվորական» հորջորջումը պատվանուն էր դրանց համար, ավելի շուտ՝ շուկայական գնացքներ էին և Վրաստանի բանջարաշատ հարավը կապում էին Հայաստանի արդյունաբերական հյուսիսի շուկաների հետ։ Շուկան Հայաստանինն էր, ապրանքը՝ Վրաստանից, ապրանքատերը՝ ադրբեջանցի, գնացքը՝ համապետական, ուղեկցողները՝ վրացահայ, տոմսը՝ ջրի գին, ընթացքը՝ հանդարտ։

Բայց մատչելիությունը վարկաբեկեց գնացք նստելու նախկին իմաստը։ Հիմա կարող էր գնացք բարձրանալ, վագոնից-վագոն անցնել, սանդուղքներին կանգնել, ընթացքից ցատկել դասից փախած ամեն լածիրակ։ Ձրի ճամփորդելը շատ էր հեշտացել։

Իսկ մի ժամանակ դրա համար մեծ սիրտ ու ճարպկություն էր պետք։ Եվ նրանք, որ այդ սրտի տերն էին, ում թափին նեղ էր գալիս իր բակն ու շենը, նրանք օրերն անց էին կացնում ճեպընթացների տանիքներին զբոսնելով։

Այդ տարիներին սանահնեցիք գծի Կիրովական—Թիֆլիս հատվածը պահում էին իրենց ձեռքի տակ։ Դեպո ունեցող հանգուցային այդ կայարանի տղերքը գնացքների հետ վարվում էին ինչպես տանու անասունի և նրանք էին լինելու Լոռվա ձորով անցնող երկաթուղու տերը։

Բայց ձորի երկու լանջերի գյուղերը կամաց-կամաց թշվառությունից աչք էին բացում, նոր-նոր տղերք էին ձոր իջնում, և սանահնեցիք ստիպված էին գնացքների տանիքներին տեղ տալ գյուղերից իջած սրտոտներին... Բայց այստեղ երկաթուղու էլեկտրիֆիկացումը տղերքին հնձեց գնացքների վրայից։ Եվ սանահնեցիների բարձր պատիվը փրկվեց կառամատույցին հավասարվելուց։

Իսկ վագոնների ներսը նեղ եկավ նրանց ու պատերազմից հետո զորացող միլիցիայի համար, տղերքը մեկ-մեկ իջան վագոններից՝ վարորդության գնացին, խանութ բացեցին, պահեստներ մտան, մարզական խմբեր հիմնելով՝ շրջանների մարզական կյանքի ղեկավարներ դարձան, ընկան ղեկավարելու համին, գնացին առաջ, ավելի ու ավելի առաջ՝ ամենքը ըստ գնացքի տանիքին հավասարակշռությունը պահպանելու կարողության։

Եվ երկաթուղին մնաց դասից փախածներիս, որովհետև «բանվորական» եռավագոնը գիծ մտավ, ու ամեն տնակի մոտ կիսակայարան սահմանեցին։

Այս անփառունակ ժամանակներում էր, որ Շենը իր կիսակայարանով կցվեց աշխարհի մեծ ընթացքին և ոտքի տակ գնաց։

2.

Ճակատագրական գնացքներ էին մեր մոտով անցնող գնացքները, նրանցից օտար մարդ չէր իջնում (տասը վայրկյան կանգնող գնացքից ո՞վ պիտի իջնի), իսկ եթե մեկնումեկն իջնում էր, մի բան փոխվում էր մեր կյանքում, մեր անջատ, հանդարտ, մեծ ճանապարհի տակն ընկած կյանքում։

Մեր հայրերը ամենքն էլ եկվոր էին և նահապետական գյուղին հատուկ օտարելու բնազդ շենցին չուներ (գրեթե չուներ), բայց փոքրերիս համար սա մեր հայրենիքն էր և մեր հայրենիք ոտք դրած ամեն օտարական, հակառակ մեր մոլեգին հետաքրքրասիրությանը, մեր թշնամին էր նախ և առաջ։

Տարանցիկ էր Շենը աշխարհին կապող ճանապարհը, կարելի էր մտնել անմիջապես Վրաստանից, կարելի էր մտնել գետի հետ Հայաստանից դուրս գալիս։ Ընդամենը երկու դուռ ուներ Շենը, և ոչ մի օտար մարդ չէր վրիպում դաշտերում վխտացող գայլաձագերիս աչքերից։

Օտարը մի ուրիշ քայլվածքով է բնակավայր մտնում։ Թեկուզ խաղաղ լինի ժամանակը, թեկուզ քրիստոնյա լինի ժողովուրդը, մտնում է օտարաբար։ Ուրիշ վտանգ որ չլինի, հնարավոր է, որ այդտեղի մարդիկ շները կապելու սովորություն չունենան։

Բայց շները զատ էին նրանց համեմատ, ովքեր այս կողմերում ապրում էին ժամանակավոր ու իրենց կամքին հակառակ։ Մայրաքաղաքից ամենահեռավոր կետը լինելով՝ Շենը ապաստան էր քաղաքներից վտարվածներին։ Հասկանալի է, որ Վրաստանն էլ իր ծայրամասերն էր ուղարկում իր անաղուհաց զավակներին։ Այսպես է վարվում ամեն հանրապետու-

թյուն, նահանգ ու երկիր և սահմանային գոտիներում քրեական այնպիսի լիցք է կուտակվում, որ հաղիվ թե նպաստ բերի բարիդրացիության գործին։

Ուրեմն, Շենը թեկուզև ոչ մեկի հայրենիքը չէր երեխաներից բացի, եկվորի համար պահած վտանգներ ուներ։

Բայց Բենոն այնպես մտավ Շեն, ասես այստեղ էին իր պորտը կտրել, կարծես այդ մենք էինք, որ երեկ նրան ճանապարհեցինք բանուկ ու հիմա կարոտով սպասում ենք դարձին։ Այդ հետո է պարզվելու, որ Բենոյի վստահությունը բախտախնդիր ոգու կորովից չէր, այլ պարզասրտությունից անհավակնոտ մեկի, որին ամեն տեղ ընդունում են եթե ոչ սիրով, գոնե՝ առանց թշնամանքի։

Այսպես, մի աշնան հետմիջօրե նա Շեն մտավ ահռելի ճամպրուկը ձեռքին, ճամպրուկը գրեթե դատարկ էր ու իր չափսի թեթևությամբ՝ անհեթեթ, ինքը նավաստու շորերով էր, նավաստու կամ բաղերի քելքով, շեկ էր, կարճահասակ, պինդ, մշտապես ժպտացող մի տղա,— երևի դուրն էր եկել նոյեմբերին դեռ տերևաթափ չեղած մեր հովիտը և գնացքից իջել էր այստեղ մեռնելու վճռականությամբ։

Ահա նա անցավ ջրհան կայանը, դեմ առավ դոմերի վերելքին ու թափը կոտրեց։ Վերից նայողներ կային և բացի այն, որ իրենք տեղացի էին, նա՝ եկվոր, դիրքի առավելություն էլ ունեին։ Վարից ելնող Բենոյի վիճակը վիճակ չէր, կարծես վերինները դիրք մտած սպասում էին, ինքը հարձակվում կամ սպիտակ դրոշով էր գնում։ Երկու դեպքում էլ անդուր է վիճակը։ Բայց Շենը նավաստի չէր տեսել և այս հանգամանքը նրա օգտին եղավ. արջ պարացնողի կեսի չափ ընդունելություն գտնելու էր։

Բորչալվեցի պառավները, որ ամեն տեղ տուն են դնում ու հեշտուհանգիստ դարձնում հայրենիք, բարձրաձայն խոսում էին եկվորի ով լինելու, այստեղ ինչ կորցրած լինելու մասին։ Բենոն գիտեր այդ լեզուն, բայց չիմանալու տվեց։ Նա դրասենյակի ուղղությունը կռահել էր ճիշտ. փողոցի երկու կողմի սոճիների շարքերը գնալով թավանում, ձգվում էին վեր, ապա նորից նվազում, զորշանում էին։ Այո, կենտրոնում ջրի գործը լավ էր դրված։

Եվս տասը քայլ անելով, Բենոն ասաց.

— Բարև։— Կարծել էր հայի հանդիպեց։

— Բարև,— պատասխանեց տեղացին, բայց առոգանությունը հայի չէր։ «Հույն է»— հասկացավ Բենոն։

Գորիկը կանգնել էր ճանապարհի մեջտեղը և նման էր զույլով բենզին մուրացող վարորդի, բայց ծխախոտ էր ուզելու։ Բենոն պատրաստակամ հանեց «Բելամորը»։

Ամիսներ անց կալանատանը նա երանի է տալու այդ մի հատիկին։ Հատկապես այդ մեկին, որովհետև Գորիկն էլ է նստած լինելու և հիշեցնելու է Շենում իր առաջին հյուրասիրությունը։ Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ ծխելը ակամա թողած է լինելու, հիշելու է այդ գլանակը, որովհետև Բենոյին կալանած են լինելու Գորիկի ամբաստանությամբ։

...Մինչ այդ Գորիկը հյուրին ուղեկցեց գրասենյակ։ Բարձրացան չորս մատ ունեցող փայտե սանդուղքով, որի տակ կոշիկներից քերած ցեխը չոր դեզ էր կապել, ճաղապատ պատշգամբը կտրեցին, պատվո տախտակին դեմ առնելով՝ աջի վրա դուռ գտան, մտան մի փոքր սենյակ թե նախասենյակ, և Գորիկը մի դուռ հրեց։

— Ծա՛ծկի, ա՛յ տղա,— որոտացին ներսից։

— Էս-տեղ մարդ կա... Նոր մարդ եմ բերել,— դռան նեղ արանքից զեկուցեց Գորիկը։

— Քո բեռածը ի՞նչ պիտի լինի։ Սպասեք։

Գորիկը դուռը դրեց ու նայեց Բենոյին։ Նորեկը վիրավորանքը վրան չէր առել։ Ցտեսած մարդուն հո չեն կարող վիրավորել։ Բայց հասկացավ, որ Գորիկին չպիտի հանդիպած լիներ։ Նա մատների մեջ խաղացնում էր չկպցրած գլանակն ու իր հիմար վիճակի վրա հիմարաբար ժպտում։ «Դեմ առա՞նք,— մոտավորապես մտածում էր։— Հա, էլի, դեմ առանք»։ Շփոթմունքը, սակայն, արագ անցավ։ Հետևյալ պահին առկայծեց օգնական միտքը, թե՝ «աշխարհը էստեղով չի վերջանում»։ Այնպես որ, երբ թույլատրեցին ներկայանալ, Բենոն ներս մտավ դիրեկտորի ողջությունը հարցնողի, խնդիրք չունեցողի անխռովությամբ։

Դիրեկտորը Բենոյի բարևը չէր առել, գուցե, հաշվելով, որ Գորիկին սաստելը բարևի տեղ անցած կլինի, կամ թե՝ նորեկին երես չտալու համար։ Բենոն չէր վիրավորվել. բանակում

էր նույնն էր, միայն մանր պետերն են բարև բռնելուդ նույնով պատասխանում, խոշորները միայն գլխով են անում՝ տեսանք, հասկացանք։ Հետո այն էլ կար, որ Բենոն հիացած մնաց դիրեկտորի տեսքից։ Շենում Բենոյի տեսած առաջին տղամարդը ժժդահա Գորիկն էր, երկրորդը՝ դիրեկտորը, և սա նրան գերազանցում էր ամեն ինչով։ Ավանը հիմնված էր անմարդաբնակ տեղում և այստեղ եկած առաջին տղամարդիկ նրանցից էին, ում ոտքերը խելքից հաստատ առաջ են ընկնում։

Եթե դիրեկտորը կանգնած լիներ, գլուխը վեր էր կանգնելու թիկունքի կողմը դրած պահարանից, բայց թիկունքի լայնքը ահագին զիջում էր պահարանի լայնքին։ Այդ պահարանը սարքված էր շռայլ ու կոպիտ ձեռքով և պարզությունը զորանոցային զենքի պահարանի էր։ Մի խոսքով, դաղաղի լավ նյութ էր։

— Միլիցիայում կաշխատե՞ս,— առանց այլևայլի հարցրեց դիրեկտորը և այդ ձայնը այնպես էր բռնում տիրոջն ու պահարանին, որ Բենոն չէր կարող մտածած չլինել, որ կյանքը իսկապես նման է բանակին. ինչքան մարդուս աստիճանը բարձրանում է, ձայնը այնքան թնդանում է։ Տեսնված չի մի գնդապետ, որ գոռ կոկորդ չունենա։ Բարակ ձայնով մեկը դիրքի չի հասել, բացառությամբ, գուցե, ներքինիների դասի։

— Ինչո՞ւ ես ատամներդ բացել, շրջանից կաղր են ուզում։

— Չէ-է՛,— ասաց Բենոն։ Այն ժամանակները միլիցիա մտնելը համարվում էր հետին անճարակի բան։ Դասակարգային պայքարը վերջացել էր, օտար թշնամին ջախջախված էր, երեսուն տարում երեք հարյուր տարվա գործ էր արված և անլուրջ բան էր թվում դեղձի գողով զբաղվելը։ Եվ ուրեմն, ազգուտակ ունեցողը ինքնագլուխ չէր կարող համազգեստ հագնել, ինչպես և ծաղրածու կամ գերեզմանափոր դառնալ։

Բայց Բենոյին վիճակված էր համազգեստ հագնել։ Իսկ մինչ այդ նա տեղավորվեց ռեգիոնալ գյուղատեխնիկումից ամառները գործնականի եկող ուսանողների երեք սենյակներից մեկում, բահը արժանապատվորեն առավ ձեռը, մտավ այգիները աշնանափորի, ձմեռը հանեց, հասավ գարնան ծաղկունքին՝ այստեղ այգամիջյան ճանապարհին դիակ գտան։ Այդ կողմերում սա առաջին սպանությունն էր և լակոտների

խումբը շենից դուրս թռավ դին տեսնելու։ Երեք կիլոմետրը անցանք վազքով, բայց ուշացանք։ Դիակի տեղը բարդու մեծ շիվ էր դրված և շուրջը ոչ ոք չկար։ Եվ սպանության այդ ամայի դաշտում ոչ ոք սիրտ չարավ շիվը շարժի, հակառակ զոնե տեղը տեսնելու մեր տենչին։

Մյուս օրը կնոջ ահազանգով Գորիկին տարան։

Այդ զույգը տեսնելու բան էր։ Անիկը, ասում էր, հայ է, ու կազմվածքով տասներեք տարեկան աղջկանից ավելի ոչինչ չուներ։ Միայն բերանում ցոլացող ոսկե ատամներն էին վկայում, որ նա կյանքում ահագին բան տեսել է։ Առանձին լինելիս էլի մարդանման էր (նրա նման շատ կին կար հետպատերազմյան պակաս տարիներին), բայց հակառակի պես սիրում էր ամուսնու կողքին կենալ։ Հավանաբար այդպիսի ապրանքի տեր լինելով՝ կարող ես անգամ ոչնչությունդ չըզգալ, կամ կարող ես, գուցեև, զգալով է՞լ ապրել... Ով գիտի։ Մի ինչ-որ մութ տեղ, ինչ-ինչ մութ հանգամանքներում նա տղի պես կպել էր այդ ածդահա ու անխելք տղին ու պոկ չէր գալիս, չնայած քայլում, ժպտում, աշխատում, ապրում էր՝ երեսը կապտուկներով պատված։ Ինչ որ՝ տարիքով մեծ էր նրանից։ Ինչ որ՝ սիրում էր։ Իսկ հարևանները ենթադրում էին, որ մի օր նա շունչը Գորիկի ձեռքի տակ է փչելու, մանավանդ որ Գորիկի սիրած խոսքն էր.

— Կրսպանե՜մ։

Ջարաբաստիկ այդ օրը նրա ուղեղը պայծառացած էր եղել այնքան, որ այլաբանել էր։

— Էն մեռելի օրը կգցեմ, հա՜,— ասել էր։

Այդ սահմռկելի օրվա գիշերը անդեմ կսպանեմից այդքան որոշակի սպառնալիքին անցնելը Անիկին շարագույժ էր թվացել և առավոտյան գրասենյակից զանգել էր կենտրոն։ Իրենց կողքին մարդասպանի գոյությունից պապանձված գրասենյակայինները այդպես էլ նստած մնացել էին մինչև միլիցիայի գալը։

Գորիկը մի քանի շրխկան, ցավոտ հարցերից հետո հանցանքը «խոստովանել» էր։ Ավելի անհամբեր էր եղել հանցակից ունենալու հարցին պատասխանելիս և երկու ժամ հետո Բենոյին էլ տարան։ Շենում այդ պահին ամենաանտե-

ը Բենոն էր և եթե Գորիկը ստիպված էր մի անուն տալ, նրանից հարմարը չկար։

Բենոյին պահեցին երկու ամիս։ Երբ նա եկավ, թշերը լցվել էին, բայց մի տեսակ գլուխն էլ ուռած էր։ Սա էլ իր հերթին էր մեղքը հանձն առել։ Առնելը առնել, բայց հանցանշաններ չկային, մեռյալի ինքնությունն էլ չպարզվեց և երկուսին էլ թողեցին։

Բայց Գորիկի կյանքը արդեն Բունավորված էր։

— Մարդասպա՜ն,— գոռում էին լակոտները նեռից։ Շուռ էր գալիս՝ մարդ չէր տեսնում, շարժվում էր՝ գոռում էին. — Մարդասպա՜ն...

Եվ գլուխն առավ գնաց մեր շենից։

Բենոյին այդ «պատվին» էլ չարժանացրին։ Նույնիսկ երեխաները չհավատացին, որ նա մարդ սպանելու ընդունակ է։ Նա նույնիսկ հաշիվ չպահանջից Գորիկից (երևում էր՝ քաշածից լրիվ քուրջ էր դարձել), և մարդկանց աչքից վերջնականապես ընկավ։

Դասը այն եղավ, որ Բենոն միլիցիա մտավ։ Գերադասեց այնտեղ լինել իր կամքով, քան ամեն պահ տանելու ենթակա։ Եվ դարձավ երեք ավանի լիազորը։

Միլիցիան մոտորացվում էր և Բենոյին եռանիվ մոտոցիկլետ տվին։ Այդ եռանիվով էլ նա կին բերեց տուն։ Համազգեստն ու եռանիվը Բենոյի տեսադաշտը ընդլայնել էին։ Հայաստանի հյուսիսային վերջին կայարանից Վրաստանի հարավային առաջին կայարանը ընկած տարածությունը իրենն էր։ Այսինքն՝ այնքանը, որ թույլ էին տալիս նրան մնա գնացքի տանիքներից վերջերս իջած, հիմա էլ ցամաքը նվաճող տղերքը։ Եվ սլաքավարի տնից բերած աղջիկը պիտի որ նրանց թերմացքը լիներ։ Բայց երկու տարի Շենում հարսից վատ բան չտեսան։ Միայն երեխա չէր բերում։ Բենոն մտածում էր՝ նավաստորմում ծառայելուց է։ Օֆիկը նրա կասկածը չէր փարատում և ապրում էին սիրով։ Օֆիկը մի տղամարդով կյանքի համին ընկավ։ Մի ուրիշ քաղցրություն ունի մարդկային կապվածությունը, ու երևում էր՝ նա երդվել էր ամուսնուն հավատարիմ գերեզման իջնել... Բայց խոզի երդումը, ասում են, մինչև լավ ցեխ տեսնելն է լինում։

Եվ դա եղավ ջրահեղձին ափ հանելու օրը։

Գետահովտի ժողովրդի համար արտակարգ մի բան չէր ջրահեղձ տեսնելը. գետի ամեն վարարումին վերին հոստանքներից եկած մարդիկ էին որ մռայլ, մոլոր հածում էին այս ու այն ափերին... Բայց այս մեկը անտեր էր։ Մի տեսակ շատանում էին անտեր մեռելները։ Քանի շեները բարգավաճում էին, քանի ճանապարհները դառնում էին բանուկ, անտեր մեռելները այնքան շատանում էին։ Ժողովրդի շատանալով՝ տիրավորները պակասում էին։ Բայց մեռելի թամաշի եկող միշտ է լինում։

3.

— Դե, մի ցրվեք։ Դե, մի ձեր գործին գնացեք։ Ռադ եղեք, ի՞նչ եք լեշակերի նման վրա տվել... Ռադ օլուն։ Ռադի...— Բենոն այսպես եկավ, անբանների պատը ճեղքեց և իշխանության անունից տեր կանգնեց ջրահեղձին։ Նա չէր սպասում, որ այդքան հեշտ կանցնի ամբոխի պատը և անակնկալ հայտնվելով ջրահեղձի գլխավերևը, սարսեց ու մի քայլ ետ գնաց։

— Թող օդ խաղա,— հրահանգեց նա։

Ժողովուրդը կես քայլ ետ գնաց ու քիչ հանդարտվեց։ Մինչ Բենոյի գալը անապահովությունը կամ նման մի զգացում ճնշում էր մարդկանց, հիմա կարծես մի բան տեղն ընկավ. մեռելը, ճիշտ է, կա, բայց իշխանություն էլ կա... Իրենք էլ այդ արանքում դեռ ապրում են։ Այդպիսի դեպքերում նրանց ընկճված հոգուն մի կարգի հրավիրող, սաստող, արձանագրող ուժ է հարկավոր։ Բենոն զգաց ժողովրդի ապավինող տրամադրությունը և ուզեց մի իմաստուն, նուրբ, իշխանության անունը փառավորող հարց տալ, բայց առաջ ընկավ սերտածը.

— Ո՞վ առաջինը տեսավ։

Քար լռության վրայով գետը շառաչեց գնաց։

— Առաջինը ո՞վ տեսավ, ձեզ եմ հարցնում։— Եվ խոժոռության չվարժվող հայացքը պտտեց օղակի ներսում։ Լռու-

Թյունը ասում էր, որ առաջին տեսնողը ներկաների մեջ է, բայց՝ թող ինքն ասի։

Բոլորն էլ հայերեն այդքանը հասկանում էին, բայց իրավաբանորեն ճիշտ էր, որ հարցը թարգմանվի կամ կրկնվի վրացերեն, ռուսերեն, աղրբեջաներեն... ասորերեն, գերմաներեն՝ Բենոն չգիտեր։

— Նու կտո՞...

Սա արդեն կենտրոնական իշխանության անունից էր, բայց դա էլ չանցավ։

— Լավ...— Բենոն մտմտում էր անելիքը։

— Ե՛ս,— ձայն տվեց տասնչորս-տասնհինգ տարեկան մի երեխա։

— Դու՝ հեչ,— սրտնեղեց Բենոն։

Այդպես էլ գիտեր։ Էլ ո՞վ պիտի առաջինը տեսած լիներ, եթե ոչ հրշեջի այդ լակոտը, որ ամբողջ օրը գորտի նման ջրի մեջ ու ջրի ափին է։ Ամեն բան առաջինը նա է տեսնում ու տուն բերում. առաջին ձնծաղիկը, առաջին ծաղկած սինձը, մայիսի առաջին կեռասը, առաջին հասած խաղողի ողկույզը՝ հուլիսին, առաջին բուռ ձյունը՝ Պապաքարի կատարից... Հիմա էլ՝ ահա։

— Ուրիշ,— ասաց Բենոն,— հարցաքննության ենթակա մարդ։

Փաստորեն նա հիմա երկրորդ տեսնողին էր ուզում։ Եվ զգաց, որ հարցաքննություն բառով խրտնեցրեց բոլորին։

— Դեղձի գողերը առաջ գան,— ջղային հրամայեց և որոշ տրամաբանություն կար նրա պահանջի մեջ. գիշերը դեղձի գողերն են արթուն մնում։ Բայց մեռյալի ջնջված դեմքին աչք գցելով,— Լավ,— ասաց, կարծես մեկ հաշվին՝ կամավորների շարքը քայլ էր գցելու առաջ։— Լավ,— բացատրեց,— ձեր հարցով հետո կզբաղվեմ... Դու առաջ արի։

Տղան շրջանի ներսից մարդկանց պատին քսվելով, ջրահեղձին շրջանցելով եկավ մոտեցավ։

— Փողքերդ իջեցրու,— հրամայեց Բենոն, ինքը ծխախոտ վառեց։ Տղամարդիկ սթափվեցին ու ձեռքները տարան գրպանները։

Տղան ծալած փողը իջեցրեց սապոգի վրա, ճակատին կպած թաց մազափունջը ափով ետ տարավ ու ձիգ կանգնեց։ Բայց անշարժությունը կարճ տևեց. երևում էր, զրահատակի մոտ բոպեից ավելի կանգնած չկա։

— Ո՞նց տեսար,— հայրաբար հարցրեց Բենոն։

— Դե, ջուրը պղտորվել էր, ափին ման էի գալիս... Ձուկը քոռեքոռ իրեն ափին է տալիս, չէ՞... Մեկ էլ ոտը տեսա։

— Հետո՞... Ցուցմունք տվողից հեռու կացեք։

Ամբոխը հետաքրքրասիրությունից տղային սեղմում էր դեպի ջրահեղձը, տղան մեջքը դեմ տված՝ ընդդիմանում էր։

— Հետո կեռ գտա... Չէ, շինեցի... Ոտից քաշեցի... Սըլլալեն ջրից դուրս եկավ։

— Տո՛ լակոտ, կեռով մարդ քարշ կտա՞ն,— գոռաց մեկը։

— Ձե՛նդ,— սաստեց Բենոն։— Հետո՞։ Դու նրան ականջ մի դիր։

— Ո՞նց չդնի, ես հրոխպերն եմ, իրավունք ունեմ,— չվախեցավ մարդը։— Լակոտի մինը, բա կեռով մարդ քարշ կտա՞ն։

— Բա ինչո՞վ,— զարմացավ տղան։

— Եսիմ ինչով... Քո ի՞նչ գործն էր... Թաց թող՝ ոտդ լինի, սուտ-մուտ խոսում է, էշ քեռուն է քաշել։

— Սուտ չեմ ասում։ Կեռն էլ հրես։

Կեռը, իրոք, ընկած էր մարդկանց ոտքերի տակ։ Ժողովուրդը խուճապով ետ քաշվեց և մի օղակ էլ կեռի շուրջը գոյացավ։

— Լավ, լավ,— ժողովրդին կարգի հրավիրեց Բենոն։— Հետո՞։ Մինչև էստեղ քարշ ես տվել բերե՞լ։

— Չէ, է՛,— նեղացավ տղան։— Հետո ավանային սովետը եկավ (սովետ ասելով նկատի ուներ սովետի նախագահին), գիֆտ գտանք, վրեն դրինք, քաշելով բերինք։

Մեռյալի տակ իսկապես դիֆտ կար։ Բենոն հայացքով փնտրեց նախագահին։

— Գնաց զանգի,— ասացին։

— Այ տղա, թոի փոստ, ասա չանջատեն՝ գալիս եմ։— Արձակեց տղային ու անձրևանոցի կնգուղը քաշեց գլխին։ Անձրևը վերսկսում էր։

4.

Անձրևը արդեն անցավ չափ ու սահման։ Եվ այդ մի շաբաթում մարդկանց բնույթը լրիվ ցեխ սարքեց։ Չնայած անակնկալ չպիտի լիներ թացն ու թոնը՝ հոկտեմբերի վերջն էր... Սպասելի էր, բայց էլի նրանք, ովքեր ամառվանից են մտածում ցրտերի մասին, էլի այդ խեղճերը անակնկալի եկան։ Եվ հերվա ճաքավոր կոշիկները հանվեցին, վերաղննվեցին, վերագնահատվեցին, յուղվեցին-փափկեցին և կոշկակար Հակոբի մուրճը առավոտից իրիկուն թրխկում էր շենցու խափանված ջղերին։

Հինգերորդ օրն էր տղամարդիկ ճաշարանից դուրս չէին գալիս։ Առավոտից կեսգիշեր։ Նստելուց ընդարմացած, խմելուց զզված էին, բայց գարեջրի տակառը մեջներն առել ու ժամ չէին գալիս։ Ո՞ւր գնային, անձրևը մարդուս մաշում էր ոտքի վրա։ Արահետ ու ճամփա հեղեղի տակ էր, փոս ու փոսորակ ջրով էր լցված, ցեխը ոտքերի հետ եկել հասել էր երկրորդ հարկերի պատշգամբներին, ցեխը հունցելուց ձանձրացած երեխաները կատաղել էին չորս պատերի մեջ, իսկ անձրևի սկսվելու օրվանից չչորացող լվացքը կարծես փռած լիներ մարդուս հոգու վրա։

Ճաշարանում առատ թեփ էր շաղ տված, կարելի էր ներս մտնել առանց տանիքի կաթիլքի տակ սապոգ քերելու, կարելի էր խմել ապառիկ՝ մինչև նահանջող աշխատավարձի օրը։ Աղ դրած ձկան տակառը դրված էր գարեջրի ցմփորի կողքին, փլավքամիչով դուրս տրվող ձուկը կոպեկ արժեր՝ գարեջրից զատ չէր հաշվվում, գարեջրի գործարանից բեռնատարը դարձյալ դուրս էր եկել, տակառները Այրում, Քարհանք, Ջրհան կայան բաժանելով մոտենում էր Շենի սահմանին և կամքից ուժեղները գլուխ պահելով՝ սպասում էին թարմ գարեջրին։ Հինը չէր կոտրում ձկան հարուցած ծով ծարավը։

...Եթե հեղեղը Այրումի կամուրջը ծածկած չլինի, եթե վարորդը շան ծիծ կերած Սուրիկը չլինի, որ հեղեղը տակառին կապի, եթե, վերջապես, բեռնատարը քարհանքի դարձի վրա Դեբեդը չընկնի,— աղ դրած ձուկը կուլ է գնալու Լոռվա աղբյուրների ջրով պանծալի թարմ գարեջրին։

Ձկան պահածո, աղ դրած ձուկ, աղած ձկնով պինդ ձվածեղ՝ վրան Ալավերդու գարեջուր, ու դուրսը՝ անձրև, երկինքը՝ մթնած, երկիրը՝ սառծու կույր հայացքի տակ ինքնահոսի... Մերկացած այգիները հովիտը պանկեպոռնիկ լցրել են թաց համբուրյամբ, գետը հոսում է թանձր ու պղտոր, ահազնանում է աշնան չարագույժ ջրառատությամբ, սարսռեցնում է պրղտոր պաղությամբ,— տեղ չի թողնվում հույսի նշույլի, թե դուրսը, գուցե, մի խոտի ցողուն, մանր մի տերև, ճարպիկ մի զեռուն թացությունից խուսափած լինի։ Եվ արեգակի շող չի երևում վերահաս ձմռան օրերի տակից... Կար-չկար այս-պիսի աշխարհ. խոտը կանաչ էր, արևը՝ կիզիչ, ավազը՝ շոր, երեխան՝ տկլոր և վերը՝ երկինք, հորիզոնը՝ բաց, հորիզոնից այն կողմ՝ ենթադրվող էլի աշխարհ, որ հիմա չկա, ենթադրությունն իսկ գոյություն չունի, ուղեղները վերածվել են ջրիկ ցեխի, կյանքն ամփոփվել է ճաշարանի վառարանի շուրջ, հուր ու կրակ մեծ աշխարհից մնացել է այս վառարանը, որը պետք է բորբոք պահվի։ Եվ եկողներից ով հիշել է՝ բաճկոնի տակից ճոճն է հանում գցում պակասող վառելիքի կույտի վրա։ Եվ տղամարդկանց բազմալեզու համբարությունը օրնիբուն խմում է մոայլ, տուրուդմփոցի սահմանի վրա չանա ծեծելով ու ձանձրույթով լի։

Այդ ուշ աշնան ցեխ ու ջրի մեջ, սառը-բարակ անձրևի տակ, երբ ծոծրակիդ ընկած կաթիլը կյանքի իմաստը կտրուկ հավասարեցնում է ցեխի, այդ շնչահեղձ անելու չափ իջած աներևույթ երկնքի տակ ծաղկել էր Օֆոն և գլուխը բաց գնում էր խանութ՝ հացի... Մարդիկ սիրտ չունեին անգամ լուսամուտներից դուրս նայելու, դրսում եղողները հայացքները չէին բարձրացնում կոշիկների ծայրից, այնինչ Օֆիկը, որպես գետնասունկ, որպես չքնաղ մի անձրևաորդ, գլուխը բաց ու բարձր, խանգարվածի ժպիտը դեմքին՝ երբորդ օրն է ճեմաքայլ գնում է խանութ՝ հացի։

Հացը ամեն անգամվա պես ուշացել է, և Օֆիկը մտնում է ճաշարան։ Եկվոր Բենոն նրանց մեջ ազգական ու կարգին ընկեր չունի և տղամարդիկ աչքերով ուտում են կնոջը։

— Բենոն մրսել է,— բուֆետապանուհուն ասում է Օֆիկը, երեքլիտրանոցով գարեջուրը գնում է պայուսակի մեջ և հանգիստ դուրս է գալիս՝ ետքից տանելով տղամարդկանց՝

մրսածությունն ու գարեջուրն իրար կապել չկարողանալուց ապուշ կտրած հայացքները։

— Ցնդել է շան աղջիկը,— քրթմնջում է մեկը, և նա մոտ է ճշմարտության։ Օֆիկի աչքերին մի այնպիսի փայլ է իջել, որ պարզ է՝ նա դուրս է այն ոլորտից, որտեղ մարդկանց հոգին էլ է ջուր քաշում հին սապոգի նման, որտեղ փետրավորներն իսկ խեղդվելու վախից կռուցները թաքցնում են կրծքի փետուրների մեջ և շունչները պահած՝ նեխում հեռագրալարերին թառած։

Օֆիկը ամայի փողոցով տուն է դառնում նույն քելթով և եթե որևէ պատուհանից նայող կա, եթե նայողը երևակայության տեր է, պիտի հաստատ տեսնի, որ նրա ներսը այրվում է ու սառը անձրևի տակ վրայից գոլորշի է բարձրանում։ Իսկ եթե նայողը կրոնախև Գևոն է, կտեսնի, որ գոլորշին նրա գլխի շուրջը պսակ է կապել և անձրևի ջուրը ցած է հոսում բոլորքով։

5.

...երջանկության հոտը առաջինը հարևանուհին առավ։ Նա ուշ գիշերին անկողնուց ելավ, դուրս եկավ հաշտը, դույլից ջուր խմեց, չստերը քստքստացնելով ետ եկավ, զարթուցիչը պահեց մթնած պատուհանի դեմ, նայեց, նայե՞ց... Ամուսինը քնի մեջ լենություն զգաց և առոք-փառոք մեկնվեց մեկուկես տեղանոց մահճակալին։ Բայց անսովոր արձակությունից, այնուամենայնիվ, կիսով արթնացավ, մտածեց՝ կարևորություն տա՞ թե չտա այդ վիճակին... Դե, որ միտքը սկսել էր գործել, ուրեմն արթնանալու վրա էր։ Մի թեթև ճիգով էլ կոպերը իրարից պոկեց և հասկացավ, որ կնոջ քստքստոցից են ջղերը լարվել։

Դա առաջին գիշերն էր, երբ Օֆիկի սերը դեռ ողջախոհ էր։

Բան չկասկածելով՝ ամուսինը աչքերը փակեց։

— Սիրտս դեղձ ուզեց,— ասաց կինը։

— Կարող է՞ դեղձի չիր,— քրթմնջաց ամուսինը։

— Չէ, դեղձ։

Կինը տրամեց, որ ամուսինը բան չի հիշում... Դեղձի բույրով էր բռնված աշխարհը այն առաջին անկրկնելի օրը և մի միջատ էր վազվզում հողին դրած իր ականջի տակ։ Ծառերի տակ արած առուն կողքից էր անցնում, իր ձեռքի մատները առվի մեջ էին ու թվում էր ինչ որ իրեն է անցնում, անցնում է ջրից ու հողից։ Ինքը փափկել, բացվել էր ջուր ծծող հողի նման։ Մի մեծ գոհություն էր աշխարհը պատել. հողը ջրից էր գոհ, ծառը՝ հողից, պտուղը՝ ծառից և բոլորը միասին, ինքն էլ հետները՝ արև աստծուց, որ վերից այդպես ամեն ինչին ու ամենքին շարժման, աճի, պտղակալման, սիրո կախարդանքի մեջ էր քաշում... Երգելը դալիս էր, բայց տղամարդու շունչը խանգարում էր։ Հետո մտածեց, որ ճիշտը այդ է, իր ձայնը ներդաշնակ չի լինի լռությամբ ջուր ծծող հողին, լռությամբ աճող ծառին, լռությամբ կարմրող պտղին, լռությամբ ամեն բան շարժման մեջ գնող արևի լույսին... Հետո, անսովոր ու պոռթկուն էր ցանկությունը՝ անսովորությունից ամաչեց... Հետո վերզգաց միջատի գոյությունը ականջի տակ։ «Եթե թունավոր է, հիմիկվանից լավ պահ չկա, թող սպանի»— մտածեց։

— Երգում են,— երկրորդ դիշերը ամուսնուն ըրթեց կինը։

— Ի՞նչ,— ընդոստ վրա նստեց ամուսինը։

— Երգում են։— Հմայվածի նման կինը առաստաղին էր նայում։

— Դիվահար ե՞ս, կնիկ։

Բայց երգում էին։ Բառերը չէին լսվում, բայց խնդագին երգեցողություն էր։ Դա նման էր մոր հետ խաղացող, սիրվելուց նվազող, կուշտ ու գոհ երեխայի հրճվանքին, բայց ձայնը մեծի էր։ Տղամարդու իր փորձը ականջ դնողին բան չէր ասում կնոջ երգող տեսակի մասին և կանացի զունդունոցը դիշերվա կեսին, իրոք, դիվահար լինելու էր։ Այստեղ անձրևը վարարեց և այր ու կին խլացած քուն մտան։

Իսկ առավոտյան ձվածեղը կինը լիմոնի աղով էր արել։

— Թո՜ւ,— թքեց ամուսինը ու գնաց ճաշարան։ Ութերորդ բաժակի վրա հիշեց, որ պատմել են երգող կանանց մասին և կռահման ժպիտը անթրաշ դեմքը բացեց մինչև ականջները։ Հաջորդ պահին խղճաց տղամարդու իր փորձը ու խմեց գավաթ գավաթի վրա։

Մինչև տասնհինգ գավաթը դիմացավ։ Տասնվեցերորդի վրա, երբ թվում էր փորձությունն անցել է և ուրիշ բան է մնալու, բերանը բացեց ու լեղուն դուրս տվեց մտքում փայփայած կշտամբանքը.

— Մի շաբաթ է լակում եք, իսկ Շենի պատվի հետ հրեն էնտեղ խաղում են։

Եվ իսկույն էլ զղջաց։ Ախր, զգացել էր, որ գնալով չի դիմանում զարմացնելու, ցնցելու, պարզապես իմացածը ուրիշին հայտնելու քաղցր մղումին։ Զգում էր, որ թուլանում է, բայց հույսը դրեց իր փակբերանության վրա։ Վստահ էր, որ վերջին պահին տղամարդկային իր բնույթը ինքնին կգործի ու արգելք կլինի շանտաժությանը։ Եվ բերանն էլ բացել էր անձրևից-բանից խոսելու համար, բայց թուլացած լեղուն գնաց շաղ եկավ լրբի լեզվի նման։

Այդ միակ անհասցե նախադասությունից հետո նա լրիվ դատարկվեց ու դարձավ նույն ուրբաթախոսը, բայց կասկածը միանգամից կապվեց Օֆիկի արտառոց կերպարանափոխության հետ։

Նախ զանգեցին Բենոյին։ Ավանից ասացին՝ շրջկենտրոնում կլինի, շրջկենտրոն զանգեցին՝ այսօր չի եկել, Ավանում կլինի։ Երբ գտան, ջղայնացավ.

— Ի՞նչ է, է՛, էլի պատահել։

— Պատահել է,— ասին բազմանշանակ։

— Գողություն է՞, թե...,— խնդաց Բենոն։

Սրանք ցավակցաբար լռեցին։

— Լավ, մեռելը տեղաց անեմ, գամ։

Բայց ջրահեղձի դին ճանաչելի գարաժում փակեց ու քշեց կայարան, աներոջ տուն։

Բենոն զոր ուներ։ Եթե տուն գնալու մտադրություն ունեցած էլ լիներ, զանգից հետո չէր գնա։ Եղածը իրեն հերիք էր։ Թող Շենը հիմնիվեր վառվի, թող իրար կոտորեն-թալանեն՝ իր գործը չի։ Ձեռի տակ մեռել կա, հազար կտոր չի լինելու... Այսօր մեռելը, երեկ Ավանի տուրուզմփոցը, անցյալ օրը՝ պահեստը... Տեսնես ինչո՞ւ են աննավարկելի գետերի աննավահանգիստ այս երկրում պահեստները տանում գնում գետերի ափին, մտածեց Բենոն։ Այսպես, ուրեմն, համազգայնորեն, շոնդալեն, ռադիոյով-բանով բերքը հավաքում,

բարիքն ստեղծում, տանում դնում են ջրի բերանին, կրակի մատույցներում, հետն էլ պահ տալիս դնացքից վերջերս իջած երեր տղերքին։

...Առավոտվա վեցը կլիներ՝ գետը հեղեղեց շինանյութերի պահեստը։ Կեսօրին ճանրաժնի բուլդոզերը բերին ավազ դամբը տեղը բերելու։ Բուլդոզերի բերածը մինչ հաջորդ բերան բերելը ջուրը հալեցնում էր շաքարի նման։ Կարծր բան էր պետք և բուլդոզերը մի ապառած առաջն առավ, ու շարժիչի վայնասունը ձորը բռնեց։ Քարը շարժվեց տեղից, շարժվեց, տրակտորը պրկվեց, ցնցվեց, զնգզնգալեն ձիգ տվեց, առաջ գնաց... անսպասելի քարի տակից ավազը փախավ, քարը գահավիժեց, տրակտորը՝ ետևից։ Բուլդոզերը իրենով փակեց ջրի դեմը, բայց վարողը հորձանքի մեջ էր։ Մինչ նայողները ուշքի կգային, տղան ափ եկավ ճաշարանի ուղիղ դիմաց և արար աշխարհը ուշունցի կապած ու սրթսրթալով վազեց ճաշարան։ Բենոն միաժամանակ մնաց ջրասույզ բուլդոզերի մոտ, որի միջով ջուրն էլի հոսում էր պահեստի վրա ու գնաց ճաշարան։ Երբ ներս մտավ, բուֆետապանը երկրորդ շիշն էր բացում։ Բուլդոզերավարը թաց շորերը նետել էր հատակին, փաթաթվել էր պահակի՝ հավասարապես վրան ու տակը գցելու վերարկուի մեջ, բոբիկ ոտքերը դեմ էր արել ինքնաշեն էլեկտրասալին և օղի էր խմում բուֆետապանի ու պահեստապետի հետ։ Նա ծիծակով հաց էր ուտում ու հաճույքից թառանչում։ Այդպիսի ախորժակ հաղարից մեկ է բռնում նույնիսկ լավ ուտող-խմողին։

— Տրակտորը չի քշի՞,— մի բան ասած լինելու համար հարցրեց Բենոն։

— Տրակտոր սարքողի հերն էլ։

— Բա պահե՞ստը։

— Մեջը բա՞ն է եղել որ,— խնդաց բուֆետապանը ավագակախմբի անդամի լպիրշությամբ։

— Մեծ վնասի տակ ընկանք,— լսելու տվեց պահեստապետը։ Նրա արտաքինը չէր բռնում պահեստապետի կովկասյան տիպին. անբեղ, սիրունադեմ, ցորնագույն մազերը մազաբաժանով սանրած, կապտաչ տղամարդ էր։ Բենոն ուշադիր նայեց նրան և վշտացածությունից բացի այլ արտահայտություն չտեսավ դեմքին։

Այդ գիշեր էլ հենց Բենոն մրսեց։ Գարաժի պահակի հետ որոշեցին կրակ անեն, բայց անձրև էր շաղում, փայտն էլ խոնավ էր։ Եվ երբ գիշերվա երեքն անց էր, երբ պատահաբար արթուն, տուն գնալիս ձեռքի հետ մի բան թոցնողները վաղուց քնած էին, Բենոն քշեց աներոջ տուն։ Լուրջ գողերը նոր էին արթնանում, բայց դրանց դեմ առնել, մեկ է, չի լինի. տեղամասային տեսուչի լիազորություններից նրանք դուրս էին կանգնած։ Մեկ էլ կկանչեն ու կասեն՝ «Դու միլիցիա մտնել չէիր ուզում, չէ՞։ Այս գործի վրա զոռով չենք պահում»։ Կամ՝ «Դեղձի գողերին թողած ի՞նչ ես...»։ Նախադասությունը չի շարունակի ու ինչ ուզում ես արա։ Կուզես հասկացի, կուզես մի հասկացի։ Կուզես հող տուր գլխովդ։ Նա իր նախադասությունը ավարտած է համարում։ Կարող էր չխոսել, չէ՞, բայց շնորհ արել՝ այսքան բառ ասել է... Դեղձի գողերից էլ իրենը նրանք են, ովքեր բեռը տանում են շալակով։ «Թե չէ,— մի օր ասաց ավտոյով տանողը,— քոնը երեք ակնանի է, մերը՝ չորս։ Ճիշտ է, քոնը թեթև ու անբեռ է, բայց դա իր վատ կողմն էլ ունի. կարող է էդպես թեթև ու թափով մեր ծանրին կպչի։ Մենակ տղա ես, ով պիտի ասի՝ բա իմ ախպերը երեկ կար—էսօր խի՞ չկա»։

Սլաքավար աները Բենոյին սալորի օղու կապեց, քենին՝ մոռով թեյի։ Դեռ նոյեմբերին մոշի փոխարեն մոռի մուրաբա բացելը փեսային վայել պատիվ համարեց Բենոն, բայց մըրսածությունն էր, թերևս, լուրջ։

Քենին Օրենբուրգից բերած խալաթն էր հագել։ Քենին՝ մարդաթող, օրերս էր եկել։ Հետը մաքուր բրդից փափուկ ջեմպր էր բերել գուցե հոր, գուցե ապագայի համար, բայց քեռայրի թել-թել թրջված շորերը տեսնելով, գնաց ճամպրուկից հանեց բերեց՝ «Բարով մաշես»։ Բենոն հագավ ու թախծեց՝ եթե երեկ կամ այսօր մեռած լիներ, այդպես էլ չէր իմանալու, որ այս թեթևությամբ տաք բաներ կան աշխարհում։

Տղերքը խոպանում քենուն լավ էին նայել, բայց այն մեկը, ում հետ իրը ամուսնացել գնացել էր, տականք դուրս եկավ։ Առաջին տարին լավ էր. կինը բոլորի համար եփում-թափում էր, իր հասանելիքը ստանում էր ու ապրում էին ամուսինների պես։ Բայց շունը երկրորդ տարին առաջարկեց

վիճակ զցել։ Պարզվեց, որ կնոջը իր կինը չի համարում։ Պարզվեց, ըստ բրիգադների կանոնի, տղամարդկանցից մեկնումեկը վիճակով (եթե կամավոր չկա) պիտի զբաղվի խոհարարությամբ։ Մաքրության համար։ Մնացածները ազատ են ծտի պես։ Եվ այս տարի ոչ բարով ամուսինը մտածել էր, թե ինքը մեջների էշը չի, որ երկու տարի իրար վրա կապեն մի խորոմ փշի վրա, թե կինը բոլորովին էլ իր կինը չի, այնպես որ այս տարի պիտի վիճակ զցվի։ Տղերքը անկեղծորեն մի տեսակ են եղել։ Հետո թե՝ մի բան պիտի արվի։ Վիճակ չէ, բայց մի բան պիտի... Դե, որ ամուսիններ չեն... եթե զազսի-բանի հարց չկա մեջը... Բայց մինչև հիմա վերաբերվել են որպես ընկերոջ կնոջ, որպես իրենց քրոջ... Ուրիշ բան, եթե մեջներից մեկը...

«Ինձ ոչ մեկդ էլ պետք չեք,— ասել է քենին,— ձեր լափը կեփեմ, տակներդ կքերեմ»։ Քենին նեղանում էր, որ բրիգադը չի սպանում նամարդին։

«Բա մեր քույրն ես, քեզ ո՞նց թողնենք առանց...»,— կրմկրմացել են։

«Ձեր բանը ձեր աչքում կենա»,— ասել է քենին, մնացել է վեց ամիս, ոչ մեկի երեսին չի նայել և նրանց աչքը հանելու համար օդակայան է գնացել մի շեկ ջահելի մոտոցիկլով։

— Հո դալու է ո՞տս ընկնի էդ շունը... Բայց վերջ։ Էլ գնացող չկա։ Բուֆետ կընդունեմ, կաշխատեմ։

Բենոն հիացած էր երեկվա երեխայի աչքաբացությունով։ Ճիշտ է, քենու վերադառնալով մի մեծ գլխացավանք էր սկսվում Բենոյի համար՝ որպես տեսուչի ու որպես փեսայի։ Որպես տեսուչ՝ թրած ուներ, ձորը այդ տեսակի պակաս չուներ, բայց որպես փեսա... Որպես փեսա էլ անդոր էր դեմն առնել։ Ուրեմն՝ էլի թրած։ Ասելու են՝ Բենոյի քենին, Բենոյի քենու, Բենոյի քենուն — ոչինչ։ Քենին այնքան թափ ունի, որ շուտով իր անունով հայտնի կդառնա և Բենոյի անունը կընկնի վրայից։ Մանավանդ, եթե բուֆետապան դարձավ։

Բայց... այնուամենայնիվ... Ախր... Հարցն այն է, որ քույրերը նման են իրար, կշփոթի վարորդների անառակ դասը։ Սրան կտեսնի՝ նրան կհիշի, սրան արածը կվերագրի... Չէ, նախանձելի չէր Բենոյի վիճակը։ Բայց այս հեղեղից, դիակից հետո, ցուրտը միջից դուրս քշելու քրտնաթոր գործի վրա,

սալորի օղու կապտավուն շշի միջից ամեն բան երևում էր ուրիշ կերպ։ Նա համոզված էր, որ իրեն ետ են բերել այն աշխարհից, իսկ այն աշխարհից ետ եկածի համար ծիծաղելի են այս աշխարհի կարգն ու կապերը։

Քենին իր անկեղծ պատմությունը պատմել, իր բերած ջեմպրը հագցրել էր փեսային և աշխարհ տեսա՞ծ, փափուկ ժպտում էր հիվանդին։ Նա չքնաղ էր այդքան երիտասարդ հասակում տղամարդու ցավը հոգալու իր կարողությամբ։ Եվ այն, որ ամեն անգամ թեյի բաժակը դնելուց առաջ սրբիչը քսում էր դնելիք տեղին, և որ՝ դնալ-գալիս, երբ կոնքը սեղանի անկյունին էր առնում, «օֆ» քաշելու տեղ «օ՜յ» էր ծորում, և այն, որ օծանելիքը անծանոթ ծաղկի բույր էր տալիս,— այդ ամենից բարեկեցիկ աշխարհի հեշտագին շորշոփն էր գալիս։

Բենոն մրսած էր և նրա գերակշիռ զգացումը երախտագիտությունն էր։ «Հերը որ մեռավ, կտանեմ մոտս կպահեմ»,— մտածեց Բենոն՝ որպես երեկվա երեխայի մասին կմտածեր։ Բայց քենին այն չէր, երեկվա այծոտիկ աղջնակը երկու տարում կին էր դառել։ Բոլորովին էլ բանն այն չէր, որ նա լցվել էր այն ամենով, ինչը պետք է կնոջը՝ տղամարդկանց բերանբաց թողնելու համար։ Նա ամբողջովին կերպարանափոխվել էր։ Կամ ուրիշ մարդ էր դառել։ Կամ կարծես սեռը փոխել էր։ Կամ սեռի տեր էր դարձել։ Մի ինչ-որ միջանկյալ սեռից անցել էր արբշիռ էգության և այդ փոխակերպումից էր Բենոն ցնցված։ Եվ քենու նոր կերպարանքը չէր կապվում այդ թշվառ տան հետ, հետևաբար, ազգակցական կապ չէր հուշում։

Բենոն օղուց, թեյից, վառարանի թեժությունից, աթոռների թիկնակներին դցած շորերի չորանալու հեռանկարից, մեծ աշխարհի հետ կապ ունեցող այդ կնոջ մատչելիությունից, դրսի անձրևի տակ չլինելու գիտակցությունից՝ վերջին հաշվով, մեղկացել էր։ Տղամարդու նրա բիրտ կյանքում չէր եղել այսպիսի երանելի վիճակ։ Մարմինը խստառ ընդարմացած էր։ Ջիղ ու հոդ անկարացնող ջերմը տեղ չէր թողնում սևեռվելու մի բանի վրա և վայելքը զուտ սրտինն ու աչքերինն էր։

Ականջները մեղեդու հանգի ձայն էին տալիս, առարկա ու շարժում լողում էին ձայների ծփանքի վրա, Բենոն ուզում էր

անուն տա այդ բանին, ուզում էր մի բռնող խոսքով տեղը դնի զմայլելի այդ վիճակը, բայց ստացվում էր անդեմ-նվաղուն՝ «ցա՜վը տանեմ»։

Նրա հայացքը քենին իր վրա էր առնում տաք շալը սրբսրփուն հաճույքով ուսերին գցելու նման։ Տղամարդկանց երախտամոռության թթուն կերած կնոջ համար Բենոյի՝ թրջված շան հայացքը սրտին յուղ էր կապել։

Քանի դեռ սլաքավարը հերթապահությունից չէր եկել, Բենոն կամքի գերագույն լարումով աչքերը բաց էր պահում այդ հեքիաթի վրա։ Անհրաժեշտ պես քնեց և նրա բերանի անկյունին կնքված ժպիտը շատ էր նման կուշտ ծիծ կերած երեխայի բերանից ծորած կաթի ծրի։

Արթնացավ Մոսկվա—Երևան ճեպընթացի ցլականչից։ Ճեպընթացը տալու-անցնելու էր առանց թափը կոտրելու, երևալու էր բոպեից էլ պակաս, բայց այդքանն էլ հերիք էր, որ կայարանը կաթվածահար անի վերահաս ու կողքից անցած աղետի սարսափից։ Հետո վերջին վագոնի մարող թմբկահարության տակից իր ձայնը վերագտավ վարար գետը։ Գետի շառաչը առաջ բերեց կիսամերկ նստած օղի խմող բուլդոզերավարի պատկերը։ Կողքը նստեց պահեստապետը՝ տաք շարֆը վզին, օձիքը՝ բաց։ Եվ Բենոյի առաջին միտքը եղավ՝ առիթ սարքի, մի՜-հա՜տ հասցնի պահեստապետի անվրդով ոեխին։ Այդ տասը-քսան հաղարի վնասի դիմաց թող ոսկե ատամներից երկուսն էլ տա։

6.

— Ջրից մարդ են հանել,— ներս գալով, աչքալուսանքի նման ասաց քենին։ Նա էլի այն նույն երեխան էր լուրը հաղորդելիս, և Բենոն ժպտաց չգիտես կյանք տեսած այդ կնոջ երեխայությա՞ն, թե ոսկե ատամները կուլ տված պահեստապետի՝ ատամներին սպասելու համբերության վրա։

Բենոն կարծեց տրակտորիստի ջուրն ընկնելու լուրը քենին նոր է առել։ Նայեց ժամացույցին՝ տասներկուսն անց էր, և հիշեց, որ երեկ պատմել է մանրամասն։ Մանրամասն, որովհետև խոսել էր ուզում, իսկ քենու հետ մարդ ինչի՞ց պիտի

խոսի, բացի երեխաներից ու աղետից։ «Դիակ են հանել»,— գլխի ընկավ Բենոն ու զգաց, որ երեկվա օրը իրենից փախչում է։ «Զարմանալի կլիներ, որ զարթնեի ու՝ ճիշտ լիներ»,— իր բախտը հիշեց Բենոն։ «Թե ինչի՞ են հանել»,— նեղացավ Բենոն, ուզեց երեկվա մանրամասները մտաբերելով՝ մեջը պահի գլխավորը, բայց սրտին ցավ տվեց։ Երեկն ու այսօրը պառակտվում էին և ճողվածքը անցնում էր սրտի միջով։ «Ինքն իրեն ներքևներում մի տեղ դուրս կգար, էլի»,— մտածեց։ Թեյը երեկվանի թերմացքը թվաց։ Երկու կում արեց ու վաղ ժամանակների պես, երբ քենին դեռ երեխա էր, մեծավարի ասաց՝

— Ապրես։

Քենին թթու ժպտաց։ Բենոն չտեսավ այդ ժպիտը կամ տեսավ ու երեխայի խոովածության նշան համարեց, բայց երբ ջրահեղձի դին զարաժում փակեց ու վերադարձավ աներոջ տուն, թողածը չգտավ, եղած խմորի պես դնդվելու հակված կնոջ փոխարեն նա տեսավ մի սառը, դոռոզ, անսեռ գոյություն։

Ծանոթ դիմակ էր. այդպես կքայլի մայրապետի վսեմ քայլվածքով, երկրի առաջին քրմուհու նման, չի նայի ոչ ոտքերի տակ, ոչ դիմացինին, կքշի վրադ՝ երեխա լինես, կին, թե տղամարդ... Կարծես անդունդի նայելիս լինի՝ նայվածքը պարապ ու պաղ է, շրջապատում բան չի գտնում, որին հինգ զգայարաններից զոնե մեկը արձագանքի, այդպես՝ անհաղորդ, անմատչելի կանցնի, կգնա՝ գոյությունդ չնկատելով, բայց քիչ առաջ է մի զառամյալի անկողնուց ելել, առնելիքն առել, գնում է այնտեղ, որտեղ երկու դավաճանություն իրագործվում է մի անկողնում, գուցե այնտեղ, ուր մեկի առաջ ծնկի է գալու, այնտեղ գուցե, որտեղ սերը ընդունված չի առանց ծեծի, և դեռ վստահ է, որ ինքը շատ է ընտանեկան կյանքի համար և լիուլի հերիք կանի նրան, ով ճաշի կարիք ունի, նրան, ով սիրո հարգը գիտի, նաև նրան, ով ապրանքին գին է տալիս,— բայց այնտեղ, որտեղ իրեն չգիտեն, մարդիկ իր երկրացին չեն, այդտեղ իրեն կարող է այնպես երևցնել, իբր ոչ միայն արգելված պտղի համը չի տեսել, անգամ ձեռքում բռնած չկա, կարող է նույնիսկ ֆանտաստիկ ֆիլմի

այլերկրացի կանանց տեղ անցնել, ովքեր սերը վայելում են ոտքի եղունգը տղամարդու ոտքի եղունգին քսելով գոհ...

Բենոն մտածեց՝ գնա ավազակ պահնոտապետից քսան հազարից երկուսը առնի, երեք օրով թռչի մի տեղ, հյուրանոցում լյուրս համար վարձի, հազարուկեսը ննջարանի զարդասեղանի գզրոցը դնի, կիսաբաց թողնի, լույսը չմարի՝ տեսնի ո՞նց են շորերը հանում — դիմակը թողնում, եթե հանում են, դուրս դնալիս ո՞նց են դնում. տեսնի դարակը փակել կտա՞ն, թե՞ կմնան մինչև պարպի։

Ափսոս չի՞ կայարանի բուֆետի Նանոն... «Ձեզ համար եմ, շան համար չեմ, բայց էսօր՝ չէ... Ի՜հ, թաղեմ ձեզ, չունենամ ձեզ, էն աշխարհում եմ կուշտ քնելու»... Այսպես կլինեն։ Թե չէ մարդ գլուխ չի հանում ով ինչ գործի է, ով ինչ ձևով է իր փողն աշխատում, ով է ում ձեռքին նայում, որի փեշը որի տակն է... և այս պղտոր-գոլ ջրերում դող ու ալոնիկ ջրահարսի ձևեր առել՝ լող են տալիս։

7.

Տղամարդիկ շենում ծխում ու սպասում էին։ Նրանք այնպես էին կանգնել, որ Բենոյի տան դուռն ու լուսամուտները աչառաջ պահեն։ Մթնում էր։ Քանի մութը թանձրանում էր, նրանք մոտենում էին։ Այդպես շուրջանակի կանգնած, խեցգետնի պես միաժամանակ թիկունքով-դեմքով-կողքանց, բազմատոտ ու բազմակողմ մոտենում էին։ Սպասում էին Բենոյին։ Սպասում էին սիրեկանի ծլկելու պահին։

Հարևանուհին վատ բանի հոտ էր առել և նրա անհանգիստ հայացքի տակ ամուսինը իրիկնահացը չվերջացրած՝ ելավ։ Կինը ամուսնու ետևից պատշգամբ ելավ, նայեց մթան մեջ կծիկ տված տղամարդկանց, տեսավ՝ ամուսինը միացավ նրանց, ինքը մտավ տուն։ Հետո նավթամանը առած դուրս եկավ, ականջ դրեց ձայներին, նայեց մթությանը և նավթ շփեց փայտաշեն խոհանոցի դռան վրա։ Նավթամանի բուկը նեղ էր, լավ չէր շփում, նաև թվաց՝ բարձր է բլթբլթում։ Նա մտավ տուն, դուրս եկավ հաղարից մեկ հյուր եկող թոռան գիշերանոթը ձեռին, նավթ լցրեց ու լիաձեռ շփեց տախտակ

պատերին։ Երկու ամսան էլ շփեց, ապա նավթամանը ներս տարավ, դուրս եկավ դույլով ու բաժակով և ջուր շփեց սենյակի դռանը։ Հետո դրանք էլ ներս տարավ, դուրս եկավ, կանգնեց, նայեց մթությանը, ականջ դրեց ձայներին... Արագ ներս մտավ, ավելը բերեց, վրան շփեց գիշերանոթի մեջ թողած նավթը, ավելը խցկեց խոհանոցի դռան տակ ու լուցկին կպցրեց։

Անձրևն ու հրդեհը այնքան չէին բռնում իրար, որ տղամարդիկ, բոցը տեսնելով, քարացան։ Հաջորդ պահին թոան շինվածքը ավերելու Երկու շաբաթ հոգեմաշ անձրևի տակ անցկացրած կյանքում դա մեծ իրադարձություն էր, և երեխաները դուրս թոան նայելու Կանայք ձայները գլուխները դցած զնգացրին դույլերը։ Անգործությունից արդեն բթացող տղամարդիկ թափով գործի կպան, և կրակը շուտով շիջեց։ Երբ այլևս ծուխը ավելի շատ էր, քան բոցը, տղամարդիկ իրար անցած կանանց մեջ տեսան դույլերը ձեռքին կանգնած Օֆիկին։ Առաջին տեսնողի ձեռքերը թուլացան։ Մյուսները համայվածի նման նայեցին նրա հայացքի ուղղությամբ և հասկացան, որ իրենց ապուշի տեղ են դրել։ Որսը ձեռից փախել էր։ Նրանք այդպես ցանուցիր կանգնած էին և երես չունեին իրար դալու, իրենց հիմար վիճակը խտացնելու ցանկություն չունեին։ Եվ այդպես էլ ճաշարան չվերադարձան։

Իսկ կանանց մի մասը հավաքվեց տուժողի տանը։ Սկզբում կարծես գերեզմանատնից մեռելատուն դարձած լինեին՝ մի քանի բոպե զսպեցին լեզուները։ Բայց երբ տանտիրուհին թեյնիկը դրեց վառարանին, կանայք աշխույժի եկան և իրար հերթ չտալով՝ սկսեցին պատմել կատարվածը, և դուրս եկավ մի ահռելի հրդեհ ու կես օրվա հանգցնելու գործ։

Օֆոն բաժակներն ու ափսեներն էր սեղանին դնում։ Երևում էր, նա այդ տանը մեկ-երկու անգամից ավելի չի եղել, բայց իրեն պահում էր զժբախտության մեջ ընկածի հոգատար, բանիմաց, նուանդուն հարևանուհու նման։

— Բենոյին կասեմ մի ավտո տախտակ կբերի,— շաբարի տեղը ցույց տալու եկած հարևանուհու ականջին ասաց Օֆիկը։

— Բա որ թաց լիներ՝ չվառվեր, աղջի...

— Եսի՞մ,— ասաց Օֆիկը։

Հետո Օֆիկն էլ սեղան նստեց։

«Բա որ Բենոն իմանար»,— հարցրեց հարևանուհու հայացքը։

«Նսի՞մ»,— ուսերը վեր քաշեց Օֆիկը։

«Բա որ սպաներ»,— մտահոգվեց հարևանուհին։

«Բենո՞ս»,— քնքշանքով հիշեց Օֆոն։

«Իմը ինձ կսպաներ,— հարևանուհու աչքերը երազուն սառան։— Գաղան է՝ կսպաներ,— փայլեցին աչքերը,— թող սպաներ»,— երանելիորեն կիսախուփ եղան աչքերը։

Օֆոն քնքշորեն նրա ուսը բռնեց։ Հետո նրա բաժակի մեջ շաքար գցեց, իր գդալով խառնեց։

ՄԻ ՃԱՄՊՐՈՒԿ ՓՈՂ

Երբ Սուրոյի երազելու հերթն էր գալիս, կարճ էր կապում։

— Մի ճամփով մթնով գնալիս լինեմ, ուս մի բանի առնի՝ տեսնեմ մի չամաղան, մեջը լիքը փո՛ղ...

— Թո՛ւ,— հիասթափված վրա էր նստում մեր միջի բանաստեղծը։

Մենք պառկած էինք լինում խաղողի այգիներին մոտիկ մի տեղ, խոտի վրա կամ սալ քարին, նայում էինք աստղերին, երազում ու սպասում պահակի քնելուն։ Խաղողը մեզ համար՝ եղած-չեղած, բայց մեր ծնողների քնելու ժամին մեր վրա նոր եռանդ էր գալիս։ Աշնանամուտի երկար օրը՝ բերքահավաքով, լողով, խաղով — չէր ջարդում մեր կորովը, նաև՝ մերթող լինելու մեր ժամանակն էր։ Մեզ տուն կանչում էին մանքենայորեն, քնելուց առաջ հորանջելու նման։ Եթե մոտերքում էինք լինում, ասում էինք՝ գալիս ենք, որ հնչում էր որպես բարի գիշեր։

Զնհալից մինչև ձյուն դալը տունը մեզ համար պայմանական օթևան էր, մեր տունը այն էր, ինչ ընկած էր երկնքի տակ, բոլորեքյան կանգնած լեռների դողի մեջ. քարափն էր,

այդին էր, բանջարանոցն էր... Մենք այդտեղ էինք մեծացել օձի ու հավքի, ձկան ու անասունի հետ և մեր ծնողները վտանգ չէին տեսնում մեր կյանքի համար։

Վտանգը այն էր, որ այդպես պառկած, երկնքին նայող երազող կմնանք... Չէ, կյանքը չէր թողնի։ Կյանքի քերանքից մի կերպ գնդած Սուրոն չէր թողնում։

Նա ամեն անգամ այսպես ջուր էր մաղում մեր անշահ, սանձարձակ երևակայության վրա։ Եվ ամեն անգամ Սուրոյին թքել-մրելուց հետո այդ մի ճամպրուկ փողը, այնուամենայնիվ, քաշում էինք մեր երազների ոլորտը՝ ծառայեցնելու մեր նպատակներին։ Բայց ոտքի տակ ընկած այդ իրը կռացնում էր մեզ, նսեմացնում էր մեր երազանքը, խճճում էր առօրյա պետքերի, խանութում տեսած հնոտիների ոստայնով,— այնինչ մեր հագինը, երկնքին նայելիս, արքայազնի հանդերձ էր, որ խանութում չի լինում, մեր տակինը հրեղեն ձի էր, որ փողով չեն առնում, այլ մի առավոտ ջրերից ելնում, դոփում է մեր շեմին ու մեզ դուրս կանչում... Մեր երազած աղջիկն էլ ձիու հետքերով էր գալու, սնվելու էր առավոտվա ցողով, հագնելու էր ծովի փրփուր, ծա՜խս չէր պահանջելու։

Մենք անփող ապրելակերպին հավատում էինք—մինչև դարավերջ մնում էր մի ինչ-որ երեսուն տարի։ Եթե ապրել լինում էր դրեթե առանց փողի, ինչո՞ւ պիտի չապրվեր բոլորովին անփող։ Նրա՜նք պիտի չհավատային, ովքեր փող ունեին ու զորությունը գիտեին, իսկ Սուրոյի նմանը պիտի հավատար, երազեր ու տենչար անփող հասարակարգ։ Բայց չէր հավատում։ Երևում էր, նրանք այնքա՜ն չէին ունեցել, չունենալը այնպե՜ս էր հիվանդացրել նրանց, որ փողի վերանալը նրանց համար կյանքից վերանալ կնշանակեր։ Այդքան չունենալուց հետո մի օր ունենալու հրաշքին հավատալուց նրանք իրենց զրկել չէին կարող։

Երբ շատ էինք պարսավում Սուրոյի գետնաբարշությունը, երբ մեր իմացած արդար-հավասար կյանքի պատկերն էինք գծում նրա աչքի առաջ, մարդը տեղի էր տալիս.

— Մի անգամ դռնեմ ու վերջ,— ասում էր։

Սուրոն ութից դպրոցը թողեց, վարորդության գնաց։ Բանակից եկավ՝ «Գազ-51» էր քշում։ Մեզնից մի քանիսը քաղաքներում սովորում, նկուղներում գարեջուր էին խմում,—

նա արդեն տուն էր պահում։ Հայրը մեռել էր, քույրը ամուսնացել էր անօժիտ, հինգ երեխա էլ դեռ նրա ձեռքին էին նայում... Երևում էր, մի տղամարդու կյանքը քիչ էր այդ ընտանիքի հոգսին։

Բեռնատարը փող բերում էր, բայց Սուրոն փողի հետ վարվել չգիտեր։ Պիտի այլը տեսած լիներ, որ հետը վարվեր որպես ինքնին լինելիք բանի, պիտի դրպանում ունեցած լիներ՝ թաշկինակի նման կամ ծոցատետրի, որի գոյությունը զգար անհրաժեշտության դեպքում միայն։ Չէ, նա շատ դառնություն էր քաշել դրա երեսից, որպեսզի հիմա ոսկը չհաներ։ Եվ ծախսում էր կատաղի։ Գրաստի նման աշխատում էր՝ ծախսում էր պորտաբույծի պես։ Տնեցիներին հագցնում, կերցնում, մնացածը տալիս էր քամուն։

Ամռանը արձակուրդ գնացած ընկերների համար մեկ-երկու անգամ խնջույք էր սարքում գետափին։ Մեկի համար ավազ կրած էր լինում, կամ անտառից փայտ բերած էր լինում, կամ քոչը սար տարած էր լինում՝ մի գառ, մի ուլ թափքը գցած բերում էր։ Ամեն անգամ օրը մթնելու վրա էր լինում։ Տասնհինգ բոպեում միս էր անում ու նստում էինք ջրի մոտ։ Սուրոն միշտ ջարդված, փշոտ, մրոտ էր լինում։ Երբ էլ խնջույքը վերջանար, նա ծեզը-ծեգին գործի էր։ Իսկ մրգահասի օրերին նրան տեսնել չէր լինում, մեր այգիների ու Թբիլիսիի օդանավակայանի արանքում էր։

Այդտեղից էլ մի անգամ գառան հետ, երկու աղջիկ բերեց։

— Ջրից չեն դուրս եկել,— ասաց,— բայց պարզ սրտով աղջկերք են, տղերք։

Հետո, երբ լվացվել ու մի բաժակ թնդով հոգնությունը ջարդել էր, ասաց՝

— Էս գառն էլ ձեր թույլտվությամբ պիտի աղջիկների ոտի տակ մորթենք։

Եվ ասածը արեց։ Եվ երբ արդեն կենաց ասելու էն թունդ ժամանակն էր, աղջիկների ոտքի տակ գառ մորթելը մեկնեց.

— Տունուտեղից կտրված երեխեք են, գելուգազանի բաժին գառ են, սիրո սոված, սեր մուրացող որբ են, ով գիտի մի պատառ տալիս ու ծեծում են... Էսօր ջահել են, վաղը կդառնան ճամփի կողքին ընկած փալաս. սերը կքշանա, ծեծը կշա-

տանա, ցավը կավելանա, հաճույքը կպակասի, սրտերը կմեռնի համփերին թափառելուց... Մեզ նման կյանքերը համփերին մթնեցնող խեղճ են, մեզ նման՝ բենզինի ու յուղի մեջ կորած, մեզ նման անբուն, մեզ նման ձեռնաբաց, մեր ախպերն են, ախպորից էլ լավն են... Ես ձեր ցավը տանեմ,— դարձավ նրանց,— զուր շոֆերների համփի աստվածն եք, հիվանդությունից, փորձանքից մեզ հեռու պահեք...

Աղջիկներից թմբլիկը ծիծաղում, նիհարը հեկեկում էր։

Եղբայրները մեծանում էին՝ կյանքը թանկանում, և Սուրոն իր 51-ը փոխեց «Զիլ» ինքնաթափով։ Ժամանակ անց իմացանք՝ ամուսնացել է։ Մեր ընկերությունը անկատելի ցնդում էր ժամանակի մեջ։ Մենք արդեն կտրվում էինք մեր ծննդավայրից, արդեն կապվում էինք մեր երեխաների ծնունդավայրին։

Այդ ժամանակ էր, որ նա քաղաք մեզ հյուր եկավ մի նոր, ահռելի բեռնատարով։

— Ինչ էլ քշում ես էդ հրեշին,— զարմացանք։

— Դեռ հարց է՝ ով ում է քշում,— ասաց։

Մենք նստած էինք գետափի մի խորտկարանում, ուռենու տակ։ Մենք՝ երկու քաղաքաբնակ ընկեր, մեզ պարտ էինք համարել Սուրոյի պատվին գետ գտնել ցամաք Արարատյան դաշտում և մի բանով հատուցել ուսանողական մեր այն լավ օրերի դիմաց։

Նա առավոտ վաղ գնաց։ Այդ տարի էլ մեռավ։ Ճանապարհին մի տեղ վատ էր զգացել, կանգնեցրել էր այդ հրեշ մեքենան ու գետի վրա էլ հանգել էր քառասուներկու տարեկան մեր հոգնած ախպերը։

ԱՄԵՆ ՏԱՐՎԱ ԳՈՃԻՆ

Պետեմբերի վերջին տասնօրյակին Սաթենիկ տատը աչքաթող է անում հավերին, շանը, ոչխարներին, անգամ կովին և զբաղվում է Մաշո խոզով։ Սաթենիկ տատը նույն անունն է տալիս ամեն տարվա գոճուն։ Ամեն տարի նրա Դավիթ որդին անտառապահ Սիմոնի մերունի տակից կորում բերում է

մեկ ամսեկան գոճուն, և Սաթենիկ տատը անցած տարվա նման, նախանցած տարվա նման անունը դնում է Մաշու։ Թվում է, արդեն քսան տարի Սիմոնը նույն մերուն է պահում, Դավիթը քսան տարի նույն գոճին է բերում։

Երբեք չի պատահել, որ Դավիթը աշխատանքից գալիս ձեռքի հետ բերի գոճին, ինչպես գյուղի ճաշարանից միս է բերում։ Չի եղել, որ մտնի տուն ու ասի. «Գոճին բերել եմ, գնացեք տեսեք»։ Այդ բանին պատրաստվում են նախօրոք։ Ապրիլի սկզբներից տնեցիները՝ մեծ ու փոքր, արդեն գիտեն, որ իրենց Մաշոն, այսինքն, ոչ թե Մաշոն, այլ Սիմոնի մերունի ութ, ինը կամ տասը խոճկորներից մեկը, դեռևս անանուն ու մյուսներից չջոկվող, մոր կուրծքը դնչահարելով մեծանում է։ Մաշոն մեծանում է իր նմանների մեջ, վաղօրոք կնքած անունով, անունն ու ինքը ապրում են առանձին, քանի դեռ անտառապահ Սիմոնը չի բռնել նրա հետին ոտքերից՝ Դավթի պահած պարկը գցելու համար։ Ութ, ինը կամ տասը խոճկորներից մեկը սպրդում է անտառապահ Սիմոնի ձեռքից, և Մաշու անունը ընկնում է այդ մեկի վրայից։ Ուրեմն, կարելի է ասել, որ ութ, ինը կամ տասը Մաշու մոր կրծքերը դնչահարելով մեծանում են, և հենց որ անտառապահ Սիմոնը բռնեց մեկի հետին ոտքերից, մնացած բոլորի վրայից անունը ընկնում և կպչում է այդ մեկին։

Մաշու գոճին, մորական կաթի համն ու հոտը ռունգերին, դեգերում է անծանոթ բակում, շուլալվում է երեխաների ոտքերին, դունչը քսմսում է ամեն փափուկ բանի, մինչև որ սովորում է գարու ալյուրի շիլային, ապա և գարուն, ոտքերը քիչ-քիչ պնդանում են, խելքը գլուխն է գալիս և սկսում է դնչով հողը փորել։

Բակում վխտացող կենդանական աշխարհից միայն Մաշոն է, որ չի վախենում շղթայակապ շնից։ Բայց նրա խիզախությունը գնահատող չկա, նրա խիզախությունը իզուր է անցնում, որովհետև Սևուկ շունը բացահայտ արհամարհում է նրան, չի հաշում վրան կերամանին մոտենալիս, անգամ չի գոմռում ոսկոր կրծելիս, այլ միայն, խրատելու պես, թաթով հասցնում է համառ ու երկար դնչին՝ հասկացնելու համար,

որ ոսկորը նրա ցեղի կերակուրը չի, թող գնա իր ուտելիքը ճարի։

Առհասարակ, բակում ամեն կենդանի արարած կամ զվարճանում է Մաշոյի հիմարությունների վրա, կամ արհամարհում։ Միայն Սաթենիկ տատն է, որ սիրում է նրան։ Եվ Մաշոն հասկանում է դա։ Ամեն տարի, ամեն նոր Մաշո հասկանում է։

Մաշոն հասկանում ու արդեն պոկ չի գալիս Սաթենիկ տատից։ Սաթենիկ տատը լեզու է սովորեցնում նրան։ Ասում է. «Մաշո, ժամանակ չունեմ, գնա քո բանին», և Մաշոն գնում է իր բանին։ «Մաշո, գնանք մի քիչ էլ կանաչ արածի», և Մաշոն պոչը ոլորելով ընկնում է առաջ։ Պառկիր՝ պառկում է, վեր կաց՝ վեր է կենում...

Սաթենիկ տատի փեշերից կաթի բույր է գալիս, եգիպտացորենի, գարու գժվելու բույր է գալիս։ Բույրերը առած ռունգերին՝ Մաշոն քայլում է տատի կողքով, գնում է կանաչ արոտի։ «Մաշո ջան, արի Լուսերի դռնով գնանք»,— ասում է Սաթենիկ տատը ու թեքվում գնում են Լուսերի դռնով անցնելու։

Լուսերը անատամ նայում է Մաշոյին և ասում է.

— Երկու ամիս էլ որ պահեք, երկու փութ մաքուր միս կունենա։

— Կունենա։— Ամեն անգամ խոսքը անպատասխան չթողնելու համար ասում է Սաթենիկ տատը։ Ամեն անգամ ասում է վախով, թե Մաշոն հանկարծ կհասկանա։

«Մաշո ջան,— գոռու հետ խոսում է Սաթենիկ տատը,— չգիտես, որ ծնվածդ օրից մարդիկ քեզ շամփուրի վրա են տեսնում, քո մեծանալը շամփուրներով են չափում։ Թե իմանայիր, կթքեիր նրանց տված կերի վրա, որ վերջում քթիցդ են բերելու։ Ի՞նչ լավ է չգիտես, Մաշո ջան»։

Նոր տարու նախորդող կիրակի օրը խոզերի կոտորած է սկսվում գյուղում։ Ում կերը վերջանում է, չի էլ սպասում կիրակուն։ Եվ դեկտեմբերի սառնաշունչ օդը թրատվում է այս ու այնտեղից լսվող օրհասական ճղղոցներից։

Այդ օրերին, առավոտ շուտ, քանի դեռ չեն արթնացել դանակավոր մարդիկ, քանի դեռ Մաշոյի հերթը չի հասել, Սաթենիկ տատը գոճուն առնում դուրս է գալիս գյուղից։ Սաթենիկ տատը չի ուզում, որ Մաշոն այդ աղմուկի ամբողջ սարսափը հասկանա։ Սաթենիկ տատը գյուղից դուրս շրջում է Մաշոյի հետ, և խոսում է հետը. «Մաշո ջան, համբերի, համբերի, գոճի ջան։ Եկող տարի քեզ լավ կպահեմ, օրումեջ կլոզացնեմ-կբերեմ, ալյուրը կմաղեմ ճաշդ եփելուց առաջ, ամեն օր արոտի կբերեմ, ամենալավ պատառը քեզ կտամ... Համբերի, գոճի ջան։ Համբերի մինչև եկող տարի»։

ԼՈՒՍՆԱԼՈՒՅՍ

Գետը ոչ սկիզբ ուներ, ոչ վերջ։ Ակունքը սկիզբ չէր, գետաբերանն էլ վերջը չէր։ Եթե սկիզբ կար՝ սկիզբը լեռան խորքում էր։ Ո՞ր մի լեռան — տղան չգիտեր... Արդյո՞ք լեռներից յուրաքանչյուրի... Բայց դա արդեն սկիզբ չի լինի... Սկիզբը ձյունն է — գտավ տղան... Ձյունը, սակայն համատարած է — կորցրեց տղան... Գետի սկիզբը ամենուրեք է կամ հենց իր մեջ է, որոշեց նա։ Ուրեմն գետը չի վերջանում։ Գիշերով գետը նույնիսկ չի հոսում։ Նա մի վիթխարի արարած է՝ գլուխը ծովում, պոչը ձյուներում, կամ՝ հենց իր իսկ պոչը երախում, որը քնի մեջ շնչում է հանդարտ և կամ մատատանջ, հունը նրան հարմար չի գալիս՝ շուռ է գալիս մի կողքի վրա, հետո՝ մյուս կողքի, մերթ քրթմնջում է, մերթ էլ հառաչում... ու երևի թե խոր քուն է մտնում լուսադեմին։

Տղան թիկունքից ապահով էր։ Այնտեղ ավանն էր, որ խաղով ընկած երեխայի չկամությամբ քուն էր մտնում։ Այնտեղ իր տունն էր, իր անկողինը, մոր հայացքը՝ անկողնու նման տաք ու փափուկ, հոր ձեռքերը՝ ծնկների վրա հանգիստ

առնող, մեծ ախպերը՝ լայն ուսերով տունը լցնող, պուճուր ախպերը՝ զանգակի լեզվակ, և քույրիկները՝ կատուների պես մի-մի անկյունում, իսկ դեմը՝ գետը, շուրջը՝ գիշերը, նաև՝ աշխարհը։

Լիալուսնի՞ց էր, թե՞ ջրերի խորությունից, գույն ձկների համբույրյունից էր, ինչից էլ լիներ՝ օդը, ջուրը, տարածությունը և ժամանակը, և գիտակցության մատույցներում հածող ու անուն չունեցող, ձև չգտնող ուրիշ բաներ շարվում էին մի թելի վրա, հագնում իրար սաթի շպոցով, և ամեն ինչում մի թանկ իմաստ կար, որ ահա-ահա շոշափվելու էր, բայց խույս էր տալիս, խոհեմորեն խուսափում էր կոպիտ շփումից և ինքը ճիշտ էր։

Տղան որոշեց ջուրը մտնի։ Փողքերը քշտեց, կոշիկները հանեց դրեց ավազի վրա, և կոշիկներն էլ լուսնալուսոտ թաց ավազին հարմար եկան որպես գետաքար, որպես հոսանքի քշած բերած ոստ։ Նա մտավ ջուրը՝ ջուրը սառն էր։ Ինքն իրեն առաջ տարավ, մտավ ծնկահար, փողքերը քաշեց ծընկներից էլ վեր... բայց գետը մութ էր։ Ոչ սկիզբ ուներ, ոչ էլ վերջ ուներ։ Գետը լուր ուներ օվկիանոսների խորությունների, և տղայի սիրտը ահ ընկավ։

Վախը, քաղցը, ցուրտը, ցավը շեղում են մարդուն։ Տղան դուրս եկավ՝ ավազը պաղ էր, մի քայլ ետ դնաց՝ դեռ խոնավ էր, երկու քայլ արավ՝ ավազը չզգաց... այդպես լավ էր։ Ուրիշ ժամանակ դա սոսկ ավազ էր. տաք էր կամ հով էր, մանր էր կամ խոշոր, հաճելի էր կամ հաճելի չէր, այնինչ հիմա բոբիկ ոտքերը ամփոփում էր իրեն չմատնող, չպարտադրող մի քնքշությամբ, և ջրի բերած, ջրի տանելիք այն ավազը չէր, և ջուրն էլ ջուր չէր, որ հոսում է հոգնեցնելու չափ նույն ուղղությամբ, որ զբաղվում է տիղմ ու ավազ բերել-տանելով, գետաքարերը ողողելով կամ արևի բուրային տալով... Եվ քարն էլ քար չէր՝ այսօր ջրերի թուրումուրն ուտող, վաղը՝ հոսանքի բերանը ընկած։ Եվ խավարը ահի երախ չէր։ Եվ երկինքը այնքան հեռու չէր։

Ժամանակ անց նա անդրադարձավ, որ այդ միջոցին ինքը ապրում է, հավանաբար, քրոջ նոր քայլող տղայի նման։ Տարուկեսկան այդ երեխան ի՞նչ է զգում, ի՞նչ է մտածում։ Առհասարակ, նա մտածո՞ւմ է։ Ըստ երևույթին այդ տարի-

քում (պինգվինի նման տոտիկ անելիս, կամ մոր գրկի մեջ՝ զրոսնելիս, կամ պատուհանից դուրս նայելիս) չափած աչքերով նա ըմբռնում-սովորում է կաթի հաստատուն ճերմակությունը, ծնողների դիմագծերի արտահայտության միությունը, դռան վիճակի երկվությունը, ճանապարհների ձգվածությունը, բուսականության վերձիգությունը, սագի փետուրի ջրհոսությունը, կրակի նենգ հմայությունը, համի ու հոտի մի ձևի մեջ ամբողջանալու համառությունը... Հետո արդեն նա չէր մտածում։ Եթե ավազը մտածում էր, եթե ջուրը, եթե քարը, օդը, կամ մութը մտածում էին, նա էլ՝ այդպես։ Քարը փափուկ էր, ավազը՝ հոսուն, ջրի զանգվածը մերթ կաթիլների բազմություն էր, մերթ օդի նման անշոշափելի, մերթ էլ հոսում էր քարի կարծրությամբ, և տղան չկար։ Նրա միտքը առաջ էր գնում պատկերներով, նա մնում էր օդի, ջրի, ավազի, քարի, լուսնալույսի և ժամանակի միաձույլ հոսքի կամ ընդարմության խուլ ընդերքում... Երբ հենց պատկերի նման անաղմուկ նրան հասավ եղբոր ձայնը։ Կանչը կրկնվեց։ Երրորդ կանչին տղան ուզում էր արձագանքել՝ զոնե չորրորդը կանխելու համար, բայց նա ձայն չուներ։ Կարծես երբեք չէր էլ ունեցել։ Կարծես կարիքը չէր էլ եղել։ Ու լավը այդ էր։ Որովհետև եղբոր ձայնը քանի գնաց, այնքան փափկեց, սաթի շպպոցով հագավ նույն թևին, նույնն է թե՝ մարեց։

Եղել, չէր եղել։

ՇԱՏ ՉՀԱՄԱՐՎԻ

Խողը մորթեցին առանց միջնեկի։ Նա շաբաթ իրիկունը չեկավ, գիշերը չեկավ, չեկավ առավոտը — ստիպված խողը մորթեցին։ Քանի դեռ ջուրը տաքանում էր, քանի դեռ խողը խանձվում էր կրակին, մայրը հույս ուներ, թե վերջին պահին միջնեկը կհասցնի կգա։ Մեծ որդին, որ գյուղում էր ապրում և փոքրը, որ քաղաքից եկավ — մինչև այն պահը, երբ արդեն ուշ կլիներ մսացուն մշակելը, եղբորը սպասեցին։

Ուրեմն, խոզը մորթեցին, կրակին խանձեցին, տաք ու պաղ ջրով շփեցին-քերեցին, կարպետով ծածկեցին հինգ բոպե (մեկն առաջարկեց՝ տասը բոպե) և արին մնացած բաները։

Մայրը երկու օր ոտքի վրա էր։ Հանգստի հնարավորություն որ չկար, հոգնելու ժամանակ չուներ։ Տավարի միսը կրակին էր, հավերը՝ չաղլիկ, բուլղարական, խաշվում էին գաղջախին, հացի վերջին կողը թոնրի մեջ էր՝ հարսը սպասում էր հանելուն և անձրև եկավ, ձնաշունչ, ձյունի վերածող անձրև։ Ապրիլին այդպիսի անձրևը ազեռ էր։ Ծառերը փարթամ բողբոջով էին, ծառերը՝ մերկ, ծառերը՝ փափկած, գնում էին ամառվան հարս, և նրանց գլխին ձյուն էր մաղվելու։ Սարերում, հաստատ, ձյուն էր եկել, գիշերը ձյուն կղներ բողբոջին, ծաղկին... Գյուղում այդ մի ծառն էր ծաղկել՝ ամուսնու տնկած մի հատ նշենին — այգու ծայրին, գյուղի ծայրին, անջատ, մենակ, սիրուն, և նրա վրա ձնաշունչ անձրև էր գալիս։

Մայրը ոտաձեռ ընկած՝ հրահանգներ էր տալիս, հարսի հրահանգները ինքն էր կատարում, աչքը հորիզոնի բացվելու վրա սառավ և ականջը առավոտից ձայնի էր։ Մեծ որդին բեռնատարով գարեջրի գնաց՝ երևի հասավ Կիրովական, թոռները Ղազախի շուկայից չվերադարձան, աղջիկները գալու էին մեկ, երկու, երեք, չորս գյուղից, օրը մթնում էր, եղանակը՝ փչանում, իսկ միջնեկը չեկավ Երևանից։

Թոռան ընկերները սեղան էին սարքում, թեփ էին շաղ տալիս դրսում ու ներսում, քամին սաստկանում էր, անձրևը փոխվում էր ձյունի և ձիգ պատշգամբը, որ գլխավոր սեղանատունն էր լինելու, բրեզենտով մի կերպ փակեցին։

Դրացի աղջիկները սեղան էին ծածկում, զնգզնգում էր աման ու չաման, նեղվածք էր, աղմկոտ, ուրախ, հյուրերը արդեն հավաքվում էին, կհավաքվեն, այսպես, երկու հարյուր հոգի, իսկ փոքր որդին՝ գրող ու խմող, Սևանից խոստացած ձուկը չբերեց։

Այդ շնորհքը նրան ասված չտվեց։ Ով գնաց՝ քաղաքում տունուտեղ դրեց, աշխատանք ու ապրուստ ունեցավ, իսկ նա՝ դեռ վարձով, տարին՝ մի աշխատանք, տասը տարում միայն այն արավ, որ համալսարան ավարտեց, երկու կին, չորս երեխա ունեցավ... Աստված՝ պահի։ Աստված թող պահի,

որովհետև իրենից հույս չկա։ Անբախտ լակոտ դուրս եկավ։ Անբախտ ու սիրուն։ Հոր կտորը։ Քայլելը՝ հերը, կանգնելը՝ հերը, ծխելը, չխոսելը, խոսելը՝ հերը։ Հոր տնկած նշի ծառի նման՝ շատ շուտ կծաղկի ու ամեն ցրտի, ամեն փորձանքի բերանը կընկնի, կմնա մենակ... Պատերազմի հինգ տարիների կարոտի ծնունդ, մոր մի փոր զույգից առաջինը եղավ, քրոջից երեք ժամ շուտ աշխարհ եկավ, ուշ ոտքի կանգնեց, երեք տարեկանում նոր լեզուն բացվեց և ուտելը՝ պատիժ, սովորելը՝ պատիժ, աշխատելը՝ պատիժ, ձեռից մի բան է գալիս՝ գրելը... Գրելով երեխա՞ կպահվի։

Վերջապես եկան։ Բոլորը եկան։ Տասը զավակները, տասնհինգ թոռները՝ քսաներեքից... տասնհինգն՝ այստեղ, երկուսը՝ բանակ, վեցը՝ տնապահ իրենց տներին... էլի ոչինչ։

Հյուրերը լցվեցին պատշգամբը, կահկարասուց ազատված մեծ սենյակը, կանայք տեղավորվեցին վերջին սենյակում ու դեռ դալիս են։ Զինակոչիկի հրաժեշտի խնջույքին հրավեր չկա, տանտիրոջ սրտի չափով են դալիս, իսկ եղանակը (փչանաս, երկինք) էլի մարդու սրտով չգնաց։

Ծիսակարգ չկար, խնջույքն սկսվեց տարերայնորեն։ Տարիքավոր տղամարդիկ, որ զբաղեցրել էին գլխավոր սեղանի մեկ երրորդը, սեղանը կենաց ճառերի կարգը քաշելու, չափի բերելու փորձեր արեցին, բայց երգ-նվագից, աղմուկ-ծիծաղից մի անհամբեր լսողության պատառ կորզելու փորձերից հոգնած՝ տեղի տվեցին, և հախուռն, ջահել քեֆը սանձերը թողեց։

Զինակոչիկ թոռան կամքն էր, որ գերդաստանում ընդունված կարգով, առաջին պարը սկսեն տասը զավակներով։ Հետո պարի մեջ պիտի մտնեն պարի ընդունակ բոլոր թոռները (ամեն անգամ թոռներից մեկ-երկուսը պարի համար հասունացած՝ անսպասելի խառնվում են պարողներին), վերջում (որպեսզի շատ չհոգնի), պարի մեջ կքաշեն Մորը։ Եվ ամեն անգամ նա կպարի շիկնած ու շփոթ՝ կարծես հարսի պար պարելիս լինի։

Պարում էին։ Մայրը նայում էր՝ թիկունքը պատին և աչքերի շուրջ, և բերանի անկյուններում խնդության ծալքեր կային։ Զսպված խնդության ծալքեր էին՝ «Աստված, էսքանը

շատ չհամարեա»։ Շատ չհամարեա, որովհետև քիչ է պատահում, որ բոլորով մի տեղ հավաքվեն։ Քանի աճում են, դրժվարանում է։ Հազար ու մի հոգս՝ մեկը մյուսից մանր ու դատարկ, բայց մանր-մանր կուտակվում ու արգելք են դառնում... Նույնիսկ չստացվեց, որ բոլորով լուսանկարվեն։ Մի լուսանկարում տասներկու հոգի են՝ փոքրը չէր ծնվել, փոքրը ծնվեց՝ էլի տասներկու—առաջներկը բանակում էր, մյուսում՝ տասներեք՝ հարսն էր գումարվել, վերջում... տան գլուխը չկար...

Թոռները խմբով, թափով, ցնծությամբ պարի մեջ մտան։ Այդ թափի մեջ առանց այդ էլ բերանբաց նայող համագյուղացիներին շշմեցնելու ցանկություն կար և նրանք հասան նպատակներին։ Մայրը ինքն իր հետ խաղի մեջ մտավ. աչքը որ թոռան վրա կանգ առներ, անունը պիտի տար միանգամից... մեկը, երկուսը, երեքը, չորսը... ութերորդի վրա սխալվեց, սկսեց նորից, բայց անդրանիկ թոռան վրա միտքը շեղվեց՝ ահա գիծը։ Պապի գիծը։ Այդ գծի վրա փոքր որդին է, անդրանիկ թոռը... բայց թոռը, ափսոս, պարել չգիտի։ Մի քիչ էլ ճակատը լայն չի... Մի քիչ էլ մեջքը ծիգ չի... Իսկական գիծը, ուրեմն, դա չի։ Մորական ցեղի խեղճ արյունը ծռել է երեխի մեջքը։ Ամենափոքր թո՞ռը։ Իհարկե։ Նա՝ հոր կտորը։ Ոտքերի տակ նայել չգիտի, բայց գայթած չունի, ինչը ծամելու հոգս է պատճառում, բերան չի առնի, ուրիշի ձեռքից բան չի վերցնի, մանկապարտեզի դաստիարակչուհու հարցին պատասխանեց ութերորդ ամսում... Գոնե հոր բախտից չունենա։

Փոքր որդուն հոգնել չկար։ Պարի գլուխ էր։ Պարողների հանդստանալը պարեղանակից պարեղանակ էր՝ հանդարտ ու թափով, թափով ու հանդարտ, իսկ դհոլը արդեն ընկնում էր դհոլչու ձեռքից, ծունկը դողում էր աթոռի վրա, զուռնաչին քանիերորդ անգամ փոխել էր պարեղանակը, երկու կողմի շապիկները կպել էին թիկունքներին, պարի մեջ մտան արդեն հարսները, պարողների թիվը անցավ երեսունից... վաղը էլի շաղ են գալու Հայաստանով մեկ, ասված, մոր էս մի գիշերը շատ չհամարեա։

ՈՍԿԻ ՄԱՐԴԸ

Տարվա այդ եղանակին, երբ վաղուց տապալված էր տան պատերի տակ ու գոմի կտուրին աճող մարդահասակ եղինջը, շորացել կամ անասունի կեր էր դարձել պատշգամբին խճճվող ծաղկալորին, երբ ծերունական կմախքի ողջ անճոռնիությամբ բակում տարածվել էր հսկա ընկուզենին,—ոչինչ չկար, որ քողարկեր գորշ մանրաքարով շարված պատերը, մառանահարկի վրա կախ ընկած, լողակագույն ներկաթծերով պատշգամբը և պատշգամբ տանող սանդուղքի ոստոտ-անտաշ բաղրիքը, որը մետաղալարով պատշգամբի սյունին կապած հացենու մի ձող էր։

Այդ խեղճության կնճռոտ ճակատին այս առավոտ դրոշմվել էր նաև անտերության կնիքը։

Կողապատի ներկաթափ շրջանակով քառակուսի պատուհանից կանացի մարմանդ լացի ձայն էր գալիս։ Ողբը կրցկրտուր էր, ամեն ներս մտնողի հետ սաստկանում-մարում էր և ողբերգական բան չկար մեջը։ Ծերունիները, որոնց ծանրացած ականջները արտակարգ սուր են ընկալում մահվան ձայնը, այս տան առաջին այցելուներն էին։ Նրանք մեկիկ-մեկիկ բացում էին ցանկապատի դուռը, անձայն բարևում էին կանուխ եկողներին, սգավոր-դանդաղ բարձրանում էին նընջեցյալի մոտ, կանգնում սգացող կանանց մեջ ըստ պատշաճի, ապա նույնքան անշտապ իջնում էին ճռնչացող սանդուղքով, նույն միանշանակ հոգոցով տեղավորվում հաճարենու գերանին, որի վրա դրացու ձեռնահաս հարսը թաղիք ու կարպետ էր փռել։

Զմռան ճնճուղների նման գերանին շարված, թիկունքները հորիզոնից չբարձրացող ուշ աշնան արևին հարմարեցնելով, ծերերը պատրաստվում էին տեղին ու իրավիճակին վայել զրույցի։

— Թանդ ձմեռ կլինի։

— Հաա՜, գարունքը կուշանա...

Կցկտուր բառերը լողում էին մակերեսին, իսկ խորքում ամեն մեկը իր մտքերի հետ էր, իր հիվանդության ու առողջության, իր ապրած կյանքի հետ էր։ Նրանցից ո՞վ կարժանանա գարնան արևկողի բախտին, ձմեռը ո՞ւմ կտանի, Վարոսից հետո հաջորդը ո՞վ է լինելու... Քրքրում էին հիշողությունները, քննում տոհմագրությունները, տալիս-առնում... Այ, այսինչը արդեն հոտաղ էր, իսկ ինքը վարտիքով էր ման գալիս։ Այնինչին ինքն է ձի նստել սովորեցրել, ջահել է, բայց նրանց ցեղում երկար ապրող չի եղել։ Այս մեկն էլ հարյուրի մոտ է, բայց դա ոչ մի նշանակություն չունի, նրա հայրն էլ ու պապն էլ հարյուրից ավելի ապրեցին... Ուրեմն, հաջորդը ո՞վ է լինելու։ Այսինքն, ի՞նչ նշանակություն ունի, մի տարի ուշ, մի տարի շուտ՝ բոլորն էլ հերթով գնալու են... Բայց գտնում էին։ Այնուամենայնիվ, ամենքը մեկին գտնում, իրենից առաջ էր գցում և հաջորդը չլինելու հույսից ուշ աշնան արևը դիպչում էր նրանց թիկունքին։ Եվ յուրաքանչյուրի հույսը մահվան գատավճիռ էր ինչ-որ մեկի համար։

Ողբը նախկին հանգով ելևէջում էր, սանդուղքը յուրովի ցավով ճռնչում էր ելումուտ անողների ոտքերի տակ, տարեցները գանգատվում էին անքուն անցկացրած գիշերից, սրունքների, կոնքի, հազար ու մի ցավից, խոսում էին ճակատագրի կամ աստծու քմահաճություններից... Բայց տանը ննջեցյալ կար՝ պիտի ննջեցյալի մասին խոսեին։

Արտեմը՝ տարեցներից ուսյալն ու հարգվածը, առաջին ձայնի իրավունքով, այդ իրավունքով դատապարտվածի կնիքը դեմքին, հազաց, կոկորդը մաքրեց ու թիկունքը շտկել ջանալով՝ սկսեց ծխամորճը լցնել։ Մյուսները դեմքներին ծանր լռության արտահայտություն տվեցին և Արտեմը ասաց.

— Ոսկի մարդ էր ողորմած հոգին։

«Հա, հրմ»,— պատրաստակամ քրթմնջացին ունկնդիրները, բայց նա չշարունակեց։ Պատշաճ դադարի վայրկյանները անցան, լռությունը սաստկանում էր, այնինչ Արտեմը մտախոհ ծխում էր ու մտածում, որ պատշգամբի սյունն ի վար կախած տաքդեղի շարոցը ցուրտը կտանի։

Անհարմար լռությունը լցնելու համար մեկը սկսում է մի միջադեպ պատմել իր ու Վարոսի մանկությունից. ինչ-որ էշի,

էշի պոչից գերան կապելու, զառիթափից էշի գլորվելու մասին պատմություն, բայց սաստող հայացքների տակ անպատեհ պատմությունը ընդհատում է։

— Խոտհարքի էինք, Միջահանդում,— վերջապես Արտեմը բան է մտաբերում։— Հունիսն էր, շո՜գ, քրտինքը փոզքներից կաթում էր։ Ողորմած հոգին, մեկ էլ տեսնենք, կուլեն առած՝ աղբյուրից բարձրանում է։ Ձեն տվինք՝ Վա՛րոս, Վա՛րոս, Վա՛-րոս, ծարավ ենք, ծարա՜վ... Ողորմած հոգին ճամփեն ծռեց, եկավ կուլեն դրեց գերանդիների առաջ, թե՝ խմեք...

«Հա, հըմ»— արեցին լսողները ու սրանեղությունից սկսեցին անհանգիստ շուռումուռ գալ, ձեռքները ծխախոտին գցել... Մեծացան, գլխներին խելք չմնաց։ Հանդուցյալը տանը դրած, իրենք նրա կյանքից մի լավ բան չունեն հիշելու։ Մի կյանք նույն գյուղում են ապրել ու հիշելու բան չունեն։ Գյուղն էլ գյուղ լինի՝ ութսուն-իննսուն տուն, կարելի է ասել՝ դուռ-դռան են ապրել։

Խեթ հայացքները ծակծկում էին Վարոսի դրկից Ասատուրին — խոսել չի՞ ուզում։ Թշնամություն-բան չեն ունեցել, ինչո՞ւ չպիտի խոսի։ Հիսուն տարվա հարևան են եղել, ասելու բան կունենա։ Անկապ բաներ էին ասում ու խեթում Ասատուրին, հազում՝ խեթում էին, տնքում՝ խեթում էին, ծածուկ հայացքները բացվում, դառնում էին համառ, դառնում էին պահանջկոտ-աղալական, իսկ Ասատուրը նստած տեղը երկտակվել, «տեր-ողորմյան» խոթել էր աչքերը, նեղ ճակատից քունքերով քթարմատները իջնող կնճիռները մտքի լարումից սեղմվել, պաշարել էին ջրակալած աչքերը։ Այդ տամուկ աչքերի մեջ անցյալի հեղհեղուկ պատկերներ էին լողում, կայծկըլտում-մարում էին տպավորիչ օրերի, տպավորիչ պահերի ուրվագծերը և հանկարծ հստակ դեմքեր էին ցոլանում... Բայց այդ դեմքերի մեջ չկար Վարոսի դեմքը։

Այդպես էլ երկտակված, անտեղի բան ասելը գիտակցողի խոնարհությամբ Ասատուրը սկսեց.

— Միտներդ է՞, մի տարի ուժեղ սելավ արավ,— ու քանի որ ասելիքը դատարկ բան էր, դադար չտվեց, որ հաստատեն,— ուրեմն, էդ սելավը սրբեց տարավ մեր ներքի արտը։ Սելավը Վարոսի տան պատն էլ քանդեց... Հրեն էդ պատը։—

Ու մինչ ցավակից հայացքները թափառում էին նորոգված պատին, Ասատուրն ամփոփեց։— Ի՞նչ տանջանք քաշեց ողորմած հոգին էդ պատի վրա...

Կեսօրն անց էր, երբ չներկած, թարմ սոճու բույրով դագաղը բակ բերին։ Կափարիչը հենեցին լուսամուտի տակի պատին և պատի տակ պպզած ջահելները խուճապահար երամով վեր թռան։ Ինչ-որ մեկը հիշեց մայրաքաղաքում վախճանված համագյուղացու դագաղը՝ սեփ-սև լաքապատ, կարմիր շերտերով, կափարիչին՝ դեղին ժապավենից հսկայական վարդ, իսկ բռնակները՝ ողորկ ու փայլուն, որ դագաղը իջեցնելիս պտտելով հանեցին, ոչ թե սրա նման, որ քարով ջարդեցին։

Դեռ, որ անցողաց մասին խոսք գնաց, խոսեցին տարիներ առաջ մեռածներից, նրանց կենսագրության մեջ սխրալի էջեր գտան, մարդասիրությո՞ւն, մեծահոգությո՞ւն, նեղ օրին հասնելու շնորհք ու սիրտ... Միայն թե հանգուցյալը կողքներին էր և գեղումները կարճ կապեցին...

Լեռնապարի ատամնաշարին քսվելով՝ արևը մոտենում էր մայրամուտին։ Արևի սփրթնած սիավառակից ցուրտ էր փչում։ Ցուրտը խաղում էր փչված ոսկորների մեջ, հաճարենու գերանից մեկ-մեկ պոկում էր կորամեջք կերպարանքները և քշում գյուղի փողոցներով դեպի վառարանների տաքությունը՝ փափուկ անկողինների ու կոշտ անքնության խոստումով։

Տաքդեղի շարքը խշխշում էր մայրամուտի շնչից։

Իսկ բառակուսի պատուհանից լսվում էր ողբասացի խրոպոտած ձայնը.

— Տան հացը պակաս չես արել, Վարոս ջան... Կրակը թեժ ես պահել, Վարոս ջան... Կտուրը չի կաթել, Վարոս ջան...

Հանգուցյալի կինը կարճ դաղարներ էր տալիս և փոքրաթիվ կանանց խումբը չոր, համառոտ հեկեկոցով հավաստում էր հանգուցյալի առաքինությունները։

ՊԱՐՏՈՒՍԻ ԳԵՐԻՆ

Թեև Հենդոն երկու տարի էլ նստի նույն դասարանում, համադասարանցիներին հորեղբայր կգա։ Հիմա էլ գալիս է, բայց՝ կրտսեր հորեղբայր։ Այնպես որ, պարտուսը Հենդոյից սարքել է վեցերորդցու կենդանի հուշարձան։

Երբ ժողկրթբաժնից գալիս են դասալսման, Հենդոյին քշում են դպրոցի այգի՝ ծառ էտելու, ձյուն կուտակելու, ոռոգելու... Նայած քառորդին։ Հենդոյի գոյությունը գաղտնիք չէ շրջկենտրոնի համար, բայց դպրոցի ղեկավարությունը տեսուչների հետ Հենդոյի հանդիպումը համարում է անցանկալի։ Մի փոքրիկ դասասենյակում երկու անգործ մարդու գոյությունը շատից է ավելի։ Եվ, իսկապես, դասարան մտած միամիտ մեկը առաջին պահ Հենդոյին դաս լսող կկարծի. նստում է վերջին նստարանին, պատուհանի մոտ, երեխաներից մի գլուխ բարձր ու ձանձրույթով լի։

...Ահա թիթեռը վայրէջքի գնաց, և երփներանգ այդ շարժումը թարմություն էր ձանձրույթի գորշ ֆոնի վրա։ Թիթեռը իջավ ծաղկաթերթի ուղիղ եզրին, թևերը ծալելու էր՝ թերթիկը հակվեց։ Թիթեռը թևին տվեց ելավ, իջավ նորից, թերթիկը հակվեց, թիթեռը ելավ... Թիթեռի հիմար համառությունը Հենդոյին կալավ։ Իսկ դասասենյակի պատուհանները դարձան դեմ փակ են։ Ապակուց դենը երևացող թիթեռի ջանքը թվաց անիրական։ Ինչ որ իմաստ կար այդ խաղի մեջ, որ չէր թափանցում ապակուց։

Ուժեղ բութ մատով Հենդոն առանցքի վրա պտտեց փեղկի վրա ծռած տասանոց մեխը և (իհարկե, փեղկը լրիվ հագած չէր շրջանակին) չորս մատով քաշեց տակից։ Անմեղ հայացքը պրատախտակին հառած՝ Հենդոն ուժ տվեց դաստակին (նա ուժեղ էր և դիմադրերը կարող էին չմասնակցել մարմնի ջանքին), ու այն պահին, երբ անճոռնի փեղկը ճռնչալու էր, ազատ ձեռքով կավիճի պստլիկ մի կտոր շպրտեց երկրորդ նստարանին նստած տղայի ծոծրակին։ Անակնկալից տղան

ճչաց, աղմուկով վեր թռավ տեղից... Այդ աղմուկի տակ Հենդոն լուսամուտի ծածկող փեղկը մյուսից անջատեց։ Տղան, անշուշտ, զգաց Հենդոյի ուժը, բայց մեկ որ վեր էր թռել՝ կպավ ետևը նստածին։ Հենդոն քիչ-քիչ բացում էր լուսամուտը։ Նրա թոքերը թարմ օդի համին ընկան և Հենդոն ակամա չափը անցկացրեց։ Ուսուցչուհին դրատախտակից շուռ եկել, սաստել էր դասարանը, բայց չէր կենտրոնանում, էլի ինչ-որ բան տեղը չէր։ Մեկ էլ զգաց, որ դրսի շունչը խուժել է դասասենյակ։

— Ծածկիր, այ տղա։

Հենդոն ծածկում է դժկամությամբ և երկու բոպե նստում է հուսահատ-զգաստ։ Իսկ շրթունքները շարժվում են, հայացքը սահում է դասարանով մեկ։ Հենդոն համրում է 22 համադասարանցիներին։ Այդ կենտրոնացած տեսքով նա նման է արտեզրին կանգնած պատանի հորթարածի։ Նա այս տարվա հորթերի հետ կզբաղվի այնքան ժամանակ, մինչև սրանք փոխադրվեն հաջորդ դասարան, հետո կընդունի հինգերորդից եկած կաթնակերներին։

Այսպես, Հենդոն, ծնողները, ուսուցիչները, ժողկրթաժինը, լուսավորության մինիստրությունը վերջապես՝ սպասում են, որ Հենդոյի պարտադիր ուսուցման տարիքը անցնի։ Իսկ մինչ այդ Հենդոն կնստի-կլսի—չի լսի՝ կընդարմանա։ Եթե եղանակը անծրևային է, զլուխը բռունցքներին դրած ննջում է քնաբեր դասաժամերի տակ (զիվոտում է միայն ուսուցչի գոռոցից), եթե արև է կամ պարզկա ցուրտ է, հինգ-տասը բոպեն մեկ ոտքի է կանգնում ճմլկտալու և զորեղ հողերը ճարճատում են... Կանայք ապշանքով կամ զզվանքով մտքներում հաշվում են հողերի համազարկը, աղամարդիկ պարզապես հրավիրում են դուրս։ Հենդոն զանից դուրս է գալիս, կանգնում է պատուհանի տակ և դա նշանակում է, որ ուսումնառությունն այսօր ավարտվեց, պայուսակը պիտի նետվի դուրս։ Հորթերը իրար են անցնում։ Թե՛ վախենում են ուսուցչի զայրալից ուշադրությունից, թե՛ ուրախ են, որ զորձ բացվեց և պահը որսում, պայուսակը նետում են դուրս։ Այդ պայուսակից երեք հատ լիներ, կարելի կլիներ. «Պարտուսը Հայաստանում» թանգարանի հիմքը դնել։ Հենդոն օդում չան-

չում է պայուսակը, ինչ մեջը մնաց՝ դրա տերն է և ծանրումեծ գնում է դպրոցի բակով։ Պայուսակը՝ երախը բաց, կախած ունի միջնամատի ծայրագույն հոդից, իբր՝ հետս է, բայց իմը չէ, իբր՝ զզվում ենք սատկած կատվից, բայց աղջիկ չենք, որ չկարենանք պոչը բռնած տանենք թաղենք... Վերջին հաշվով՝ կրում եմ մորս խաթեր։

— Հենրիխ, եկ գրատախտակի մոտ։

Հաղվագեպ կանչ է։ Սա նշանակում է, որ հայկական դրպրոցի ռուսերենի գերմանուհի ուսուցչուհին էլի տխուր է, ընկրճվածությունից նրան դուցե Հենդոյի անբիծ ուղեղը հանի։ Հենդոն ռանդած, լաքած տախտակ է, դու կավիճով վրան գրում անցնում ես առաջ, այնտեղ տառերը փոշիանում թափվում են ցած։ Ոչ գիր, ոչ էլ միտք է հանդուրժում... Իսկ դուցեև կավի՞ճն է, պարզապես, հում կիր, որովհետև ահա Հենդոն տեղից ժպտալով եկավ կանգնեց և նրա ժպիտը բթամիտի չէ, այլ բացահայտ քամահրական։ Նա այնպես վերջնական է արհամարհում գիտելիքը, ասես մի անգամ արդեն տիրապետել է։

Հենրիխ անունը Հենդոյի վրա մոգական ազդեցություն ունի, այլապես նա մեկ անգամ ասելով չէր դա կանգնի. կճրմրկտար, ձեռքը թափ կտար, չլսելու կտար... Բայց Հենրիխը նրան կտրում է դասարանից ու առանձնացնում մի բոլորովին ուրիշ, ոչ ամենքին հայտնի կողմից։ Բացի այդ, սիրում է ուսուցչուհու առոգանությունը, թերաթուխ լավաշի գույնի մաշկը, աղջնակի քիթուբերանը, տիկնիկի ծամերի նման փափուկ ծամերը։

— Հենրիխ, ասա rողերը։

— Հաջա՞ն...

— Բողերը, խնտրեմ։

Դասարանը թամաշի ակնկալիքով սսկվում է։ Հենդոն իբր մտասուզվեց։ Զախ ձեռը կանթեց գոտկատեղին, աջ ափը խփեց ճակատին ու այդպես պահեց։ Գործողությունը լրիվացնելու համար մնում էր ափը զգույշ շուռ տար, տեսներ ճանճին կպա՞վ թե չէ։ Ուսուցչուհին մտացրիվ նայում է նրան և Հենդոն դասարանին նայելու փոխարեն նայում է առաստաղին։ Առաստաղին նայելով՝ դուցե թե մի բան սովորես եկեղեցում, բայց Հենդոյի կանգնած տեղից հարյուր կիլոմետր

շառավղով չկա մի եկեղեցի, նույնիսկ հասարակ մատուռ չկա, որի որմին հայերեն մի տառ մնացած լինի։ Ինչը չեն ավերել թշնամիները, խնամքով քերել են «բարեկամները»։

Դասարանից մի օգնական շշուկ է գալիս, որից Հենդոն մի բառ է որսում.

— Սրեդնի,— ու շիտակ նայում է ուսուցչուհուն։

— Եառ՞...

— Սրեդնիիիի...

— Նու չառ՝ սրեդնի,— ջղայնությունը սիրում է ջղային լեզու։

— Սրեդնի Ադիա...

— Վա՛խ,— նվաղեց դասարանի գերազանցիկը և դասարանը ձեռից գնաց։ Ինքնատիրապետման ջանքից ուսուցչուհու բերանը ծամածռվեց, դեմքը կարմրեց, պարանոցի երակները ուռան ու... նա էլ պայթեց։ Դասարանը կապը կտրեց։ Խոխոռում են, վրնջում են, բառաչում են, զոփզոփում են, գալարվում են, առիթ էր եկել՝ մեկը հասցրեց մյուսի ծոծրակին, մեկը կողքինի թանաքամանի մեջ գրպանից հանած ավազ լցրեց, ոտքի վրա հոհոացողի տակը ինչ-որ սուր բան դրին, սա նստեց ու ոռնոցով թռավ, իսկ ուսուցչուհու ծիծաղը վերածվել էր հիստերիայի։

— Նստե՞մ,— անմեղ հարցրեց Հենդոն։

Չասացին՝ նստի։ Հենդոն նստելուց կշտացած էր ու այնքան էլ դեմ չէր կանգնելուն, բայց դասարանը ձեռից գնում էր։ Եվ Հենդոյի դեմքը խոժոռվեց։ Հետո սպառնաց՝ ափի կողով կոկորդը սղոցելով։ Նրա վիզը կտրելու բան էր և այդ շարժումը տպավորություն թողեց։

Դասարանը տաշտը լցրած ջրի նման ճողփալով հանդարտվում էր։

— Օ՜յ, նե մագու,— ուսուցչուհին վերադարձել էր խոսելու ընդունակությունը։

Ուրեմն նրան դաս են հարցնում՝ խնդալով լիցքաթափվելու, բռռալով հանդարտվելու կամ դասաժամը ձգելու համար և ապերախտներից մեկնումեկի մտքով չի անցնում հատուցել զոնե «միջակով»։ Քառորդը փակվում է, և դասղեկը անարտահայտիչ կարդում է.

— Սեյրանյան Հենրիկ. հայոց լեզու՝ երկու, հայ գրականություն՝ երկու, հանրահաշիվ՝ երկու... աշխարհագրություն՝ երկու... վարք՝ երկու...

Տանը նույն ոգով կարդում է հայրը, և մայրը արձագանքում է ամեն առարկային.

— Երկրաչափություն՝ երկու...

— Վա՜շ։

— Պատմություն...

— Վա՜խ։

— Ռուսաց լեզու...

— Վա՜շ, անլեզու տղես։

— Բուսաբանություն...

— Վա՜խ, բանվոր տղես։

— Անգլերեն...

— Վա՜շ, ռանչպար տղես...

— Աշխատանք՝ հինգ։

— Ա՜խ, մեռնեմ տուն պահող տղիս։

Հենդոն իրոք ոսկի ձեռքեր ունի։ Անհնար է մարվելով ու վարժելով այդպիսի ձեռքեր ունենալ, անհնար է նման ձեռք ստանալ որևէ եղանակով, դա, ոսկու նման, պիտի լինի ու գտնվի բնության մեջ։

Հենդոյին տեսնել է պետք փայտի գործ անելիս։ Իր գընդլիկ մատներով մանր-մանր, ճշգրիտ, կլանված աշխատում է դպրոցի արհեստանոցում, և փայտերը կցմցելով զանգին սպասող ու իր դանդաղկոտությունը ծաղրող փիննաչիներին մի պատասխան ունի.

— Իմս մեկ է, հրմը բեկ է։

Զգում ես, որ մարդը հյուսն է ծնվել, որ փայտի զգացողությունը հետն է աշխարհ բերել։

Հենդոն շինում է աթոռը և փորձել-ցուցադրելու մի եղանակ ունի. աթոռը դնում է հատակին, ինքը դաղգահից ցատկում է վրան։ Եվ միայն հատակի տախտակներն են իրար գալիս։ Իսկ իր գնահատանքին ներկայացրած աթոռները փորձարկում է անհամեմատ ներողամիտ՝ բռունցքով իջնում է նստատեղին — դիմացավ՝ լավ, չդիմացավ՝ սարքի նորից։

Ժամանակը եկավ և Հենդոյի կարիքը զգացին։ Դպրոցի

կահույքը շերտ-շերտ ներկի տակ փտել էր։ Մատակարարները առաջարկել էին՝ կամ մեկ-երրորդով պատրաստի գույք, կամ լրիվի հաշվով՝ փայտանյութ։ Անտառից հեռու, աչքից հեռու տեղ՝ ամենքն էլ փայտեղենի կարիք ունեին ու որոշվեց՝ տախտակ ու գերան։ Կկցմցեն ներքին ուժերով։ Իհարկե, նկատի ունեին նաև Հենդոյին։ Հենդոն ոգևորությամբ հանձն առավ դասասենյակում արվելիք գործը։ Դասերից հետո մնում, աշխատում էր։ Եվ ամեն առավոտ կաթնակերներից մեկը իր ճոճվող նստարանի կայունությունը զգալով, իր փեղկի բացվել-փակվելը տեսնելով՝ զժժում էր հրճվանքից։ Հենդոյի համար այդ անասնական հրճվանքն էլ մեծ պարգև էր, բայց գործի դիմաց, համենայն դեպս, նստարանի տիրոջ ճակատին մի կենտ կտոց էր տրաքացնում։

— Որ ձրիակերությունից հանկարծ չուռեք,— բացատրում էր։

Այդ շարաբաստիկ քառորդը արագ անցավ։ Դասղեկը ըստ ցուցակի կարդաց Հենդոյի անունը։ Հենդոն, կիսանստած, խուլ ականջ էր դնում միապաղաղ «երկու»-ներին, մեկ էլ...

— Ի՞նչ,— հարցրեց Հենդոն։

— Աշխատանք՝ երկու,— մեքենայորեն կարդաց դասղեկը։

— Ո՞նց թե,— չհասկացավ Հենդոն։

Դասղեկը բարձրացրեց գլուխը, հետո նայեց թերթիկին, կասկածեց, բայց սաստող ձայնով կրկնեց՝

— Երկու։

Դասարանը ապշած էր։

— Հա-ա՞,— անարդարությունը Հենդոյին թաղել էր։— Ուրեմն՝ երկու...— Եվ անդյուրաշարժ, բարեհոգի, ժպտերես Հենդոն այլայլված դուրս թռավ տեղից՝ ձեռքի հետ փեղկը պոկելով, հետո մյուս ձեռքով պոկեց մյուս փեղկը, միասին խփեց հատակին,— առեք ձեզ՝ երկու,— առաջ գնաց, աքացիով տեղահան արեց երկու նստարան (երեխաները ճղճղացին), երկու շարքի փեղկերը պոկոտելով գնաց դեպի ուսուցչուհին, ուսուցչուհին վեր թռավ տեղից։ Հենդոն իր նորոգած աթոռը փշրեց հատակին,— առեք ձեզ՝ երկու,— նայեց շուրջը՝ ջարդելու էլի բաներ կային, բայց արհամարհական ձեռքը թափ տվեց, դռան մոտ էր, բայց իր արարքին վճռական

իմաստ տալու համար գնաց դեպի լուսամուտը, մի վերջին անգամ կտացրեց դասարանի գերազանցիկի շեկլիկ գլխին ու դուրս թռավ պատուհանից։ Պայուսակը նրա ետևից նետող չեղավ։ Նա չսպասեց էլ։

ԳԵՂԵՑԻԿ ԿՆՈՋ ԿԱՂԱՊԱՐԸ

Կանգառներում կամ փողոցի ուղածդ կետում ազատ մեքենա սպասողներից իր ուղևորին Հարությը շուտ ջոկում է։ Նրանք, ովքեր ուղիների գլխի վրայով սևեռուն նայում են հեռուն, սպասում են «24»-ի, տարեց կանայք կանգնեցնում են միայն տաքսի, աղջիկների հետ կանգնած տղերքը մագնիտաֆոնով ավտոմեքենան զգում են հեռվից, աղջիկներն ու ջահել կանայք «Զապորոժեց» չեն նստում առհասարակ, հեռու ճանապարհ գնացողը, ջղագարը, ծաղիկը ձեռքին սպասողը, թատրոն ու հյուր գնացողը «Զապո» չի նստի, — մնում են նրանք, ովքեր ապահովությունը գերադասում են արագությունից, ավելորդ ռուբլին իրենց պահելը՝ շքեղությունից (կտան իրենց ուղած գինը), նաև շուկայից, խանութից եկած տարեց մարդիկ, և բարեհոգի հարբեցողները, մեկ էլ նրանք, ովքեր այսօր էլ մի ռուբլով պրծան կանգառում սրտաճաք մահից։

Շատ չէ, քիչ էլ չէ։ Այսքանի համար նա բզզացող իր բլոճը բանթողից հետո քշում է ուղիղ քաղաքի սիրտը։ Հարությը լավ է հասկանում, որ այդպիսի մի մեքենայով վաստակելու ամենահարմար ժամանակը կեսգիշերն է, բայց փողը նրան հետաքրքրում է այն պայմանով, որ հանգիստը չխանգարի։ Եվ եթե օրը հաջող չստացվեց, չի էլ զոռի։ Կրշի տուն։ Իսկ եթե, այնուամենայնիվ, պատահեց, որ փողի այնքան կարիք ունեցավ, որ ոչ մի բանով չի փոխարինվի, եթե, մանավանդ, փողը պետք է մեքենան սարքին պահելուն, այդ դեպքի համար նա ամենալավ ժամերը գիտի՝ առավոտյան 3—5-ը։ Այդ

մեղքի ժամին տղամարդիկ սիրուհիների անկողիններից դուրս են գալիս ծիրան-ծիրան, նրանք իրենցով տեսնում են փողոցը լցված, օրվա 24 ժամից դուրս եղող այդ ժամերին նրանք շռայլ են չունեցողի պես, մեկի փոխարեն տալիս են երեք և շտապելուց չեն նայում մեքենայի լավին ու վատին։

Իսկ սովորաբար Հարութը իր արտաժամը վերջացնում է յոթին-ութին։

Մեքենան քշում է բակ, մորն ու քրոջը վաղվա հացի փող է տալիս, սեղան է նստում, հետո սեղանից տեղափոխվում է թթի ծառի տակ, քույրը բերում է գարեջրի քրտնած շշեր, հետո՝ սուրճը, հետո՝ էլի սուրճ, Հարութը խմում, ծխում է՝ մոծակներին մարմնի վրա անչար ծեփելով, իսկ հարևանի 12—13 տարեկան տղաները եռանդով լվանում են նրա մեքենան։ Նրանք այդ գործը կանեն հենց այնպես, հաճույքի համար, բայց Հարութը արտաժամի վաստակից նրանց մեկերկու ռուբլի է տալիս՝ ցուցում տալով.

— Պաղպաղակ կերեք, տեսրակ առեք։

Օգոստոսին գեղեցիկ կին, գեղեցիկ աղջիկ քաղաքում չկա. կամ ծովափին են, կամ լեռներում։ Բայց այդ բանը նկատվում է սեպտեմբերին, երբ արևառած վտառները խուժում են քաղաք։ Իսկ օգոստոսը քաղաքում մնացածների միջից ջոկում, առաջ է քաշում ժամանակավոր գեղուհիների։ Շոգ ու կրակ է։ Աղջիկների շորերը կարճ են միջօրեի ստվերի նման։ Շորերը ծածկում են այնքանը միայն, որ գաղտնիք մնա։ Լավ մերկությունը այն է, որ մերկանալու էլի տեղ ունի։ Կանգառներում մարդիկ կպել են ծառերի բնին, քայլողները իծաշարուկ գնում են պատերի տակով, ստվերից դժկամ դուրս են գալիս՝ համառներին ճամփա տալու, որպեսզի հաջորդ կես քայլին էլի նեռվեն ստվերի արահետի մեջ։ Մեքենաներում նստածները անզգուշաբար թևերը դնելով դռան մեռադին՝ ետ են քաշում կրակից վառված նման։ Մեկը ստվերից ստվեր ցատկելուց հուսահատված՝ ընկել է մայթի մեջտեղը ու գնում է՝ ճաղատը, կյանքը Արև ասածուն զոհաբերելով։

Հարութը քշում է առավելագույնս աջը պահած, այսինքն՝ դանդաղ. հանկարծ ու կանգնեցնելու որևէ ակնարկ, մտա-

դրություն, թեկուզ երկմտանք աշքաթող չանի։ Երկմտանքը վճռի կփոխվի, հենց մարդու կողքին արգելակեցիր։ Ուրեմն, այդպես, ողջակիզվող այդ ճաղատը նշանի առած՝ Հարութը մոտենում էր, երբ տեսավ ՆՐԱՆ։

Նա մայթ խուժեց մոտիկ նրբանցքից, ըստ երևույթին՝ գործից ելնող մարդկանց հոսքի հետ։ Երևում էր դեռ թիկունքից։ Նրա քայլվածքը այն քայլվածքն է, որ չեն սովորում։ Այն նազանքը չէ, որ սովորեցնում են ձեավոր ձիավարության երիվարներին, և որը կանայք հրամցնում են տղամարդկանց հայացքներին։ Դա անպատշաճ տրտինգի տարիքը անցած զամբիկի ձիգ, անկաշկանդ քելք էր։ Այդ քայլվածքը ունեցողի դեմքը պիտի որ նույնքան դեղեցիկ լինի։ Դա այն կինը չէ, որը դեմքով տկար լինելով՝ հույսը գնում է իր ակնառու բաների վրա։

Հարութը առաջ անցավ՝ չէր սխալվել։ Քիչ ետ մնաց, քշեց կողքից։ Աղջիկը տաբատի տակ քիչ փոր ուներ և դա էլ նրան դեղեցկացնում էր։ Այդպիսի բանի կողքից անցնելիս ձեռքդ կամքիցդ հա փախս է տալիս, այնպես, ինչպես փափուկ մազերով սիրուն երեխու կողքով անցնելիս։ Հարութը նայեց ժամացույցին՝ 5-ն անց էր 30 րոպե։ Նույն պահին աղջիկը դեպի մայթեզը եկավ, ձեռքը բարձրացրեց՝ նստեց տաքսի։

Մի ուրիշ օր նույն ժամին նա էլի քշեց մայթի եզրով, արգելակեց այն տեղը, որտեղից նա տաքսի էր նստել։ Ապակու միջով ետ նայեց։ Աղջիկը նրան չհասած՝ կանգնեցրեց ինչ-որ «ժիգուլի»։ Հետագա մի քանի օրը Հարութը մեքենան լվացող երեխաներին ողևորում էր ինչով կարող էր, պատվում էր նրանց շուրջը, փայլ էր տալիս մի բուռ մետաղին, քշում էր էլի նույն մայթի կողքով, ընթացքի լեզվով առաջարկում էր իր մեքենան, բայց աղջիկը նրա մեքենան չէր նկատում։ Նրա համար, ըստ երևույթին, մեքենայի այդ տեսակը գոյություն չուներ։

Սեպտեմբերին նա այդ փողոցում հայտնվեց «ժիգուլի»-ով։ Աղջիկը չկար։ Մի օր էլ՝ տեսավ։ Աղջիկը տաբատով չէր, և արևառած նրա ոտքերը Հարութի սիրտը մկրատելով փերթ-փերթ արին։ Հարութը քշեց նրա կողքով։ Աղջիկը անցավ «իր» կանգառից, գնաց, գնաց, աջ փողոց մտավ, մտավ խանութ, դուրս եկավ, Հարութը պոկվեց մոտեցավ, դուռն էր բացում՝

նրա թիկունքից մի թանկ մեքենա անցավ առաջ, աղջկան առավ ու տարավ։

Աղջիկը ծովափից գալով՝ նստում էր միայն «24»։ Հարութն ստուգեց՝ դրանք տարբեր, պատահական մեքենաներ էին։

Հարութը գնաց դպրոցական ընկերոջն ասաց.

— Երկու օրով... Այ, ըսենց պետք է...

Եվ փողոց մտավ «24»-ով։ Այդ քայլվածքը նա ճանաչում էր շատ հեռվից։ Քշեց հասավ, քշեց կողքից, հետո նրան քիչ առաջ թողեց, այն հաշվով, որ հենց որ շուռ գա դեպի փողոց, «24»-ը դեմը հանի։ Մինչև իրեն ու աղջկան հայտնի տեղը դեռ ճանապարհ կար և Հարութը, այն է, ուզում էր շրջանցի դեմը կանգնած մեքենան, երբ աղջիկը արագ դեպի փողոց եկավ, այդ մեքենայի դուռը բացվեց, աղջիկը սուզվեց... Հարութը չէր հասցնելու արգելակել, բայց մեքենան թռավ դեմից։ Հարութը ուշացումով արգելակեց ու ականջներում երկար ժամանակ այդ մեքենայի հզոր ու զնգուն ձայնն էր։ Աչքի առաջ ՆՐԱ մարմնի ճկուն ու վստահ կողմնորոշումն էր։ Ոչ մի մեքենա, բացի այդ մեկից, այնպես չէր սարքված, որ այդ մարմնի հմայքը այդպես երևան հաներ։ Նա գտավ իր մեքենան, հավեց լցվեց իր կաղապարը... Ի՜նչ շուտ գըտավ... Ի՜նչ շուտ սովորեց...

Հետո Հարութը նստած էր իր ծառի տակ։ Դեմը օդի էր, դարեջուր էր, կանաչի, պանիր, վարունգ, լոլիկ, ապխտած ձուկ... Իսկ մեքենան բրեզենտե ծածկի տակ էր։ Եվ բրեզենտի գորշ ֆոնի վրա մեքենան լվացող տղաներից երկուսը ակորդեոնով ու դհոլով նրա վիշտը ամոթում էին։ Ակորդեոնիստը լենթուշ տղա էր, դհոլչին՝ ավելի նվազ, տարիքով փոքր, սպիտակ վերնաշապիկի թևքերը քշտած ուներ, տարատը լավ արդուկած էր, կոշիկները սուրբիթ ու լաքապատ էին (երևում էր դհոլչու տղան), նրա փողքերը վարպետավարի վեր էին քաշված, սև փողքերին ու սև կոշիկներին վառ կարմիր գուլպաները իսկն էին, նա տղայական քաղցր ձայնով սըրտանց ձգում էր.

Գետակի ալիքները գնում են խայտալով,
Սիրահարի սրտիցը արտասուք բամելով...

Տղաներից ամենամեծը Հարութի բազկին ասեղով մեծ սիրտ էր ծեծել՝ աշխատում էր նետի վրա։ Երբ վերջացրեց, Հարութը թեյի բաժակով օդի խմեց, տակը թողածը շփեց բազկին՝ օ՜օ՜ֆ արեց, և աչքերը արցունքոտվեցին...

Արդյոք ով է դուռը թակում, ախ, սիրտս կդողա՜ա՜ա՜...

Տղայի ձայնը դուրս թռավ բակի դարպասից, փողոցի ժխորին առավ ու լռվեց, դարձավ տարածվեց միհարկանի տների տանիքներին, աղավնիներին ճախրանքի տարավ, ապա դարձդարձվեց բարձրահարկերի մակերեսներից, ճանապարհ գտավ՝ դիլ ձգվեց մթնող մայրուղու լուսածիրով, և երամակի հզորությամբ մեքենայի հուժկու վնգոցը տղայի ձայնը իր մեջ առած՝ տարավ թաղելու քաղաքից դուրս։

ՍԻՐԵԼՈՒ ՏԱՐԻՔ

Տղան գիտեր, որ դժվարը կռվին նախորդող բոպեներն են։ Սաստկացող թշնամանքի մթնոլորտին նրա սիրտը չէր ընտելանում։ Թշնամանքի թույնը կաթում էր անբեն սրտի նուրբ թաղանթին և սրտխփոցը դղրդում էր ականջներում։ Բայց դա անցնում էր առաջին, երկրորդ հարվածից հետո. ստանալուց կամ հասցնելուց։

Նա քաջ գիտեր առաջին զարկի առավելությունը, բայց չէր կարող առանց ուղեղի մթագնումի մարդու աչքերին նայել ու խփել և, որպես կանոն, առաջինը խփում էին իրեն։ Դա այնքան էլ սարսափելի չէր։ Վատը կռվից մնացող քենն էր։ Այդ ոիսակալ անվստահության տեղությանը նրա սիրտը չէր դիմանում։ Ելքը այն էր, որ հակակշիռ թշնամանքով մտաստեղներ, թշնամանքի օգով սնվելով՝ իր կորովը տեղը պահեր... Բայց դա ի՞նչ կյանք էր։ Շուրջբոլորը այնքա՜ն ներդաշնակ ու կոպտությունից շեղող բան կար, աղայի միտքը հափշտակող այնքա՜ն գաղտնիք կար ծալ-ծալ բացվող աշ-

խարհի վրա, և նա այնքան ցրված էր լինում, այնքան անպատրաստ, զգոնությունը կորցրած այնքան, որ այս անգամ էլ առաջինը խփում էին իրեն։ Եվ շատ դեպքերում պատասխան չէին ստանում։

Հիմա այդ կյանքը անցած շրջան էր։ Եթե առաջ կարելի էր անձնական վիրավորվածությանը կարևորություն այնքան էլ չտալ, կարելի էր մի բան էլ կուլ տալ,— հիմա ուրիշ էր։ Իր արժանապատվությունը այսուհետև իրենից բացի վերաբերելու է նաև մեկին։ Հարաբերությունները պարզելու համար ընդամենը երեք-չորս օր ժամանակ կար։ Օր կորցնել չէր կարելի։ Մինչև իր աղջկա գալը ինքը պիտի Մեծառեխին կա՛մ ծեծած լինի, կա՛մ աչքի փուշը կոտրած լինի։ Իր աղջկան շենում ծուռ նայող չպիտի լինի։ Իր աղջկա ներկայությամբ իրեն բան ասող չպիտի լինի։

«Վերջ,— ասաց տղան՝ հայելու առաջ աջ դաստակը վիրակապով փաթաթելիս,— խելոք ենք եղել, ծեծ ենք կերել, ծաղր ենք հանդուրժել — անցած լինի։ Ձեր արածը ձեզ հալալ լինի — այսօրվանից՝ վերջ։ Բանաստեղծություն-բան գրելը հետաձգվում է անորոշ ժամանակով»։

Նա դժվար հասավ այս որոշմանը։ Երբ մտածում էր աղջկա մասին, համակվում էր վճռականությամբ, բայց վճռականությունից բան չէր մնում աղջիկը մտքում չեղած ժամանակ։ Իսկ երբ վերստին մտաբերում էր, հարկ էր լինում ոգու կորովը շնչի բերել մեռյալ կետից։ Բայց ամառային արձակուրդները մոտենում էին, ամեն ամառ հովեկ աղջիկը արդեն մտքում կար անբացակա և մտադրությունը դարձավ վճիռ։

Այնինչ մարմնով պատրաստվում էր գարնան սկզբից։ Ակումբի բակից տուն էր քարշ տվել երկու փթանոց գիրերից մեկը ու կպել դրան... Նրա մարզվելը սկզբում, իրոք, նման էր կպչել-մնալու։ Մետաղը հաստատ ըմբիշի նման իրար չէր գալիս, տղան թպրտում ու պարում էր դրա շուրջը, երկաթը տղային ծալում-ծալծլում-հակում էր հողին, ասես ուզում էր կլանել իր պաղ, հոծ ընդերքը։ Տղան գալարվում, բայց պոկ չէր գալիս։ Երկու ելք կար. կամ պիտի ինքը երկաթին հլու՝ գետինը մտներ, կամ՝ երկաթը գետնից կտրեր։ Երրորդը չկար։ Թողնել գնալը բացառված էր։ Տղան ասում էր ինքն իրեն.

«Ես՝ չէ, երկաթն է ձեռս բռնել, մինչև գետնից չկտրվի՝ բաց չի թողնելու։ Պիտի կտրվի»։

Նա շատ լավ գիտեր, որ մնացած մի քանի ամսում ինքը ուժից չի տրաքվելու, բայց որ երկաթը գլխից վեր հանելու ձևը պիտի գտնվի՝ դա անկասկած էր։ Այն օրը, երբ ծանրությունը գլխից վեր հանեց, իր գործելու ժամն է լինելու։ Ծրագրված էր երկու կռիվ։ Նույնիսկ երեքը։ Քանիսը որ անհրաժեշտ եղավ։

Հիմա կանգնած է զգեստապահարանի հայելու առաջ, հագած ունի անթև շապիկ, բազուկների մկանունքը նորվա ջանքից դեռ փրված են, դաստակը՝ պնդված, և կենտրոնացած պատրաստվում է կռվի գնալու մի ոհմակի դեմ և հետը գնացող մեկը չունի՝ թիկունքին կանգնի։ Եղբայրը մեծ է, ընկերների ոչ բարով թիկունքը ինքն է,— այսպես անթիկունք գնալու է նրանց թաղը, ովքեր կռվում են միշտ ոհմակով, միշտ՝ թաղովի, միշտ՝ գեղովի — նույնիսկ մեկի դեմ։

Տղան անուշ մի թախիծով խղճում էր իրեն։ Կռվի մասին մտածում էր արդեն որպես եղած բանի, իրեն տեսնում էր կարգին ջարդված, բայց աղջկա աչքերի մեջ շիտակ նայելիս։

«Կինո մի սարքի»— ասաց տղան, դուրս եկավ տնից և հանգիստ էր։ Կամ վճռական էր։ Կամ արդարությունը իր կողմն էր։ Նա փորձով գիտեր. երբ մեղավոր է, ինքը թույլ է, նույնիսկ վախկոտ է և թեն է թալուկ, երբ մեղավոր է։ Արդարության մի զորեղ բնազդ նրան կյանքի այս կռվի մեջ դարձնում է երիցս անպետք։ Բայց այսօր իրեն ուժեղ էր զգում։

Լավ կլիներ Մեծաբերանի արբանյակները լրիվ կազմով հետը լինեին։ Կտեսնեին՝ դաս կառնեին և այս մի կռվով գուցե թե բանը վերջանար։ Նրանք ուժից վախեցող են։ Շուն կրռվացնողների նրանց ցեղը մեկի դեմ գնում է երեք հոգով, բայց երկուսի դեմ չորսով չեն գնա, երեքի դեմ տասից պակաս եղան՝ չեն գնա... Թող բոլորով հավաքված լինեն, միայն թե երեք հոգուց ավելի վրա չգան, միայն թե իրենց սաղական վարքով թիկունքից քարով չխփեն... ժամանակից շուտ չխրփեն։

Կովի պատրվակ սարքել պետք չէր, իր ներկայությունն իսկ պատրվակ էր։ Հարկավոր էր միայն սպասել։ Բայց անկամ, անշարժ սպասելուց վճռականությունը կորցնելու վախ կար։ Չէ, տնից առած թափը կոտրելու կարիք չկար։

Տղան նայեց կոխ բռնողներին և անփույթ թքեց։ Ոչ թե ոտի տակ, որպեսզի չընկնի մեկնումեկի՝ իր շուրջը գծած ինքնասիրության շրջանի մեջ (ուժեղինն՝ արձակ, թույլինը՝ նեղ), այլ հենց այդպես՝ հեռու և անփույթ։ Սա արդեն վերաբերմունք էր նրանց հանդեպ, բայց պակաս թվաց, և տղան կոխի կպածներից մեկի գլխարկը ոտի թաթով թոցրեց օդ։ Արարքը այնքան արտառոց էր, որ կոխի մեջ տաքացածներն իսկ նկատեցին։ Եվ իսկույնևեթ կոխը թողին։

Գլխարկի տերը հեռվով նայեց տղային, նայեց իր ընկեր Մեծաբերանին՝ սա ժպտում էր քաջալերիչ։ Գլխարկի տերը սպասում էր շունչը տեղը գա, և միջոցը մեր օգտին եղավ։ Նրա վրա ուժեր վատնելը անիմաստ էր։ Լավ է ուժեղը դեմդ լինի, քան թիկունքիդ, շուրջբոլորդ մի տեղ հածելիս։ Հետո, թիկունքը առավել ապահով կլինի, եթե նրանք վստահ լինեն, որ վերջիվերջո ջարդ են տալու։

— Ինչի՞ ես բերանդ ծռել,— տղան կանչեց գլխարկի տիրոջ վրա քշելը։

— Ե՞ս,— ապուշ կտրեց Մեծաբերանը։

— Չէ, մոքիրդ,— նրանց հանգով ասաց տղան։

— Դե տեղդ կանգնի...

Կովելը նրա համար խաղուպար էր, նա ուրախ էր, որ առանց ջանքի գործ է բացվել, բայց մի տեսակ շփոթված էր կամ վիրավորված, որ մարտահրավերի մենաշնորհը խլված է ձեռքից։

Տղայի սիրտը մի պահ նվաղեց, հետո թունդ առավ, նախահարձակման անձանոթ մի կիրք համակեց նրան։ Առաջին անգամ նա իր կամքով կռիվ էր անում և առավելությունը իսկույն զգաց... Ձախ արմունկով հարվածը առավ ու աջով խփեց, պատասխանը ստացավ կողին, բայց թույլ հարված էր։ Թափից հասկացվեց, որ խփողը աչքի առաջ հատուցում ունի, և դա նրա ուժը կիսել է։ Նա միշտ խփել է խաղալու նման՝ անփույթ թափով։ Հիմա այդպես չկարողացավ։

Հակառակորդի թափը կոտրելը տղային գրեթե բավարա-

ռում էր, մնում էր առանց ծեծ ուտելու կռիվը դեպի վախճան տանի։

Տղան իրենց օղակողների թիկունքում տեսավ ընկերոջը ու սրտապնդվեց՝ համենայն դեպս կարեկից ունի, նույն պահին էլ մտահոգվեց՝ ընկերոջ դեմ ծեծվել չէր ուզում. առանց վկայի կերած ծեծը շուտ է մոռացվում։ Օգնություն էլ՝ չէր սպասում։ Ընկերը նույնիսկ կռիվը թափել չէր համարձակվի, նրա ընչին շարժումը անգամ դիտվելու էր պաշտպան կանգնել և ոհմակը վրա էր տալու։ Ընկերը դա հասկանում էր։ Ոհմակին պատրվակ էր պետք։ Նրանց առայժմ ետ էր պահում պարագլխի գերազանցության համոզմունքը, այլապես նրանց ինչի՞ն էր պետք պատրվակի պես դատարկ բանը... Այնուամենայիվ, սառնասրտությունը չէր խանգարի։

Տղայի գործը դժվարացավ։ Խնդիրը այն էր, որ շան ծեծ շուտեր և ընկերոջը չմղեր հուսահատ քայլի։ Իսկ թե կարենար հավասար կռվել, այդ դեպքում էլ պիտի այնպես գործը տաներ, որ հակառակորդի գերազանցության պատրանքը մնար, և պիտի զգույշ, աստիճանաբար կռվելու նրա կամքը մեռցներ։

Տղան հարվածներ էր բաց թողնում ուսերին, կրծքին, ինքն էլ խփում կրծքին, ուսերին, վրան իջել էր մի հաշվենկատ թեթևություն, ճշգրիտ զգում էր հարվածի պահը, հարվածից հաջող խուսափում էր, իսկ հակառակորդը անակնկալից կորցրել էր իրեն, ձեռքերը թափահարում էր թարս ու շիտակ և տղան հանկարծ դլխի ընկավ. նա հավասար կռվի համար պիտանի չէ, նրա ոգին ոհմակի մեջ է, նրա կորովը արթնանում է հակառակորդի քնած ժամին... Տղան զգաց, որ ուզած պահի կարող է չոքեցնել նրան։ Մի կարճ ժամանակ կռվի տարերքը նրան կալավ, հաշտվեց ջարդված քիթուբերանով աղջկա առաջ երևալու հետ, մտահան արավ ընկերոջը, մի լիասիրտ հարվածի տենչով սիրտը ծուլ ելավ և անպաշտպան դեմքի վրա խոյացող ձեռքը փոքրոգաբա՞ր, ընկերո՞ջ համար, թե՞ հայի խղճով՝ վերջին պահին իր թափը կոտրեց ինչ-որ հրաշքով... Անճիշտ հարվածից սաստիկ ցավ զգաց և այստեղ կերավ աչքի տակին։ Ուշ բնազդով տղան ափը տարավ աչքին ու ետ ցատկեց գոտեմարտելու նեռված դեմքինից... Հակառակորդը երևելի գոտեմարտող էր, եթե բռներ մեջքը կամ ոտքը՝ ինքը կորած էր, անպատիվ ծեծից փրկություն չկար։

Աչքի տակին ստանալով՝ տղան կորցրեց հակառակորդին տարածության վրա պահելու զգոնությունը և երբ դեմինը երկրորդ անգամ վրա թռավ մեջքը բռնելու, ելք չտեսնելով՝ տղան բռունցքով, կարճ, դիմահար խփեց ճակատին։ Նետվողը չոքեց, զկոտոցի նման ձայն հանեց, տղան վախից մի պահ քար կտրեց՝ այդ պահին էլ ծոծրակին տվին, և այդ հարվածը նրան ազատեց հոգին կեղեքող կապանքներից։ Եվ մինչ վուրհայով վրա կտային, մինչ կովի քաշված ինքն ու ընկերը կտրորվեին ոտքերի տակ, տղան մի քանի պտույտ արեց օդակի ներսում և մի քանիսը վայնասունով մեր քաշեցին։

ՏՂԱՄԱՐԴԻԿ

Բանակից գալով՝ Հարութի առաջին գործը հոր շիրիմին քար քաշելը եղավ։ Հետո ամուսնացավ։ Թե՞ ամուսնացավ, հետո քար քաշեց... Ըստ երևույթին այդ երկու գործը տարավ զուգահեռ. մեկը մյուսին չխանգարող, ավելին՝ իրար լրացնող բաներ էին։

Հաղար ռուբլով կամ պիտի քար քաշես հանդուցյալիդ վրա, կամ հարսանիք անես՝ թեթև, և Հարութը հարսանիք չարավ։ Պատճառը, սակայն, շինդումարտակում վաստակած հաղարի քլութիյունը չէր սոսկ. ամուսնության կարգով ընթացքը խնամախոսությունից մինչև հարսանիք կտևեր երկար, գուցե և տարի տևեր, այնինչ ժամանակ արդեն չկար, բանակի տարիների տեղը հարկավոր էր հանել։

Տապանագիրը ստորագրեց՝ ոդիներից։ Երկմտանք չունեցավ։ Եղբորից նեղացած էր գերեզմանը անքար թողնելու համար, բայց գիտեր՝ նեղսրտությունը օրերինն է, գիրը՝ դարերինը։

Քարը ավանդական սեղան էր, երիզները ժապավեն հանած, ուղիղ տատ ու պապի շիրմաքարերի չափսին։ Դա նրա

առաջին իսկական գործն էր։ Որբացած տղամարդու առաջին գործը դա պիտի լիներ։

Տանը գառ մորթեց օգնական տղերքի համար, օղորմաթասն առավ ու խոսեց, խոսեց այն հանգով, որով հայրը կխոսեր, խմեց հոր կենացը, բոլոր անցողաց կենացը և խմելու անսովոր էր՝ հարբեց։ Հարբեց ու արտասվեց տղամարդավարի կարճ ու խոշոր արցունքներով։

Առավոտը սիրտը թեթև ու հպարտ էր հոգին։ Գալիքը պարզ էր ձեռքի հինգ մատերի նման. տուն էր շինելու, խաղողի ու խնձորի այգի էր դցելու, տարին մեկ մատաղ էր անելու գավակների անփորձանք կյանքի համար, նրանց ուսումի ու արհեստի էր տալու, պսակելու՝ հարսանիքներին պարելու էր հայրական ծանրումեծ պարով, թոռներ էր տեսնելու, զուցեև՝ ծոռներ և գնալու պառկելու էր նախնիների կողքին, կանաչ լանջի տակ, սնձի ծառից մարդարոյ հեռու։

Մինչդեռ հետը զորացրված տղերքը խնջույքների մեջ էին (այցելում էին հարազատներին, ընդունում էին հարազատներին, գյուղի հանդերում աղբյուր չմնաց, որի վրա գառ չմորթեն), այդ ընթացքում ոչ մի բանից ետ չմնալով՝ Հարությը հայրական տան տանիքը նորոգեց, և հարսնացուն արդեն աչքի առաջ ուներ։

Աղջիկը ոտքից թեթև էր, հասակը տեղը, ծամերը՝ փափուկ, ճակատը՝ մաքուր, աչքերը... Աչքերը արժեն, որ դրանց մասին հատուկ խոսվի։ Այդ ճակատի տակ (եթե միայն ճակատն ես տեսել) դժվար է ենթադրել ուրիշ աչքեր։ Բաց ու բարձր, քիչ ետ գնացող այդ ճակատին եթե չհարեն մոխրագույն ու խոշոր աչքեր, ճակատը կդիտվի կնոջն անհարիր ճաղատի սկիզբ, և դիմագծերի դաշնությունը չի կայանա։ Ինչքան էլ խոշոր՝ այդ աչքերը դեմքի վրա գերիշխող չեն։ Դրանք չեն սառում մտասևեռ, չեն բոցկլտում հանկարծակի բռնկումով, այլ ամոթխածորեն խուսափուկ են։ Նման աչքերը իրենց հոգուց զաղտնիք չունեն, և կոպերը կարծես իջնում են հոգու վրա։ Իջնում են այնպես, որ հոգու բիբը մերկ չմնա։

Եվ տղամարդկանց սրտին են խփում։

Հին, անողորմ ժամանակներում այդպիսի կանանց պահում էին գնդան-ննջարաններում, եթե յոթ փակին չէին վրս-

տահում, պահ էին տալիս սրտները մեռած ներքինիներին, սիրեկանները խողխողում էին նրանց տարաբախտ ամուսիններին, ամուսինները մեղքի մեջ ծաղկած նրանց մարմինը լոզացնում էին սիրեկանների խիզախ արյան մեջ, նրանց պատճառով պատանիները վերջ էին տալիս իրենց կյանքին — հարուստները թույն էին ընդունում, աղքատները մահ էին որոնում՝ որը պատահի, որովհետև նրանց սերը սնունդ է առնում ինքը իրենից, չի տեղավորվում ամուսնական սուղ մահիճում, մահացու շատ է մահկանացու մեկ տղամարդուն։

Ճակատագրական այդ էակներից մի ընտանիքում չորսը կային. չորս փորձություն դրացի տղերքի համար, ծնողների գլխին չորս փորձանք, որոնց շատապ հարկավոր էր ամուսնական լծի տակ քաշել։ Բայց աղքատ տան հարսնաբարին մամուռն է նստում։ Ու թեպետև աղջիկներից յուրաքանչյուրի գեղեցկությունը չորս հարսնացուի օժիտ արժեր՝ իրենք էլ վրան, մոտ ապրողները աղբի մեջ ծլած սունկերի նման շողշողացող գեղեցկուհիներից թունավորի հոտ էին առնում, համենայն դեպս՝ նրանց պնչերին նախ խփում էր աղբի հոտը։ Եվ այն էլ կար, որ աղջիկների մոր երիտասարդությունը ոչ ոք չգիտեր, նա հարս էր եկել ուշ տարիքում, հեռու տեղից, եկել էր գիշերը նստած — առավոտը հայտնաբերված ձյան նման, որ մինչև կեսօր պիտի տրորվեր գյուղի՝ ցեխ սարքող անցուդարձից, բայց մինչ գյուղի ցեխից լվվելը նա չորս ճերմակ ուլեր էր ծնել, խառնել գյուղի քոսոտ հոտին, տենչացել ու չէր կարողացել ամուսնու հլու խառնվածքից իր ընդերքում հոգի տալ ու աշխարհ բերել մի կապուտաչյա, չճաքող մաշկով, ձիգ մի տղա՝ այս գյուղին նախագահացու, մեծ ժողովների պատգամավոր, գյուղի անլվա դեմքը պարզ անող ներկայացուցիչ,— չէր կարողացել ամուսնուց քամել նման ապագա առաջնորդի, իսկ ծուռվիզ տղա չէր կամեցել, աշխարհ էր բերել չորս սպիտակամաշկ աղջիկների, որոնք գյուղի գորշ առօրյայում անմարդկայնորեն աչք էին ծակում. ուտում էին ամենքի նման, բայց լցվում էին ձեռնասուն որպես, քայլում էին նույն արևի տակ, զարկվում էին նույն քամիներից, քաղհանում էին՝ մորը օգնելով, հող էին փորում՝ հորը օգնելով, պտղի էին գնում, թութուն էին շարում, աշխատում

էին աշխարհ չնկած երեսփոխան եղբոր տեղ էլ,— բայց նրանց մաշկը սիրո գույն ուներ, նրանց արյունը երևի թե շրջանառվում էր երիցս արագ՝ ներսից լվալով դրսի կեղտը ու նրանց վերքը լավանում էր մի գիշերում, սպին չբվում էր շարաթը չանցած և երբ շորսով մի տեղ էին լինում, գյուղին հասնող աստծու լույսը բևեռվում էր մի կետի վրա, երբ հանդերում ցրված էին լինում, խոտ ու թփերում առկայծում էին՝ խաշխաշի ծաղիկ, իսկ գյուղի տրտում փողոցներում նրանց դեմքերը շողք էին արձակում և պատուհաններին ճերմակ վարագույր ունեցող կանայք լվացքի տաշտում տրորում էին տղամարդկանց անմաքուր, փոթի ձեռքերով դաջված կտավ ու մետաքս, ամուսնացած տղամարդիկ թթվում էին ախտավոր բիձեքի նման, նշանվածները առիթ էին փնտրում միությունը լուծարքելու, պատանիները դիվոտում էին ամռան կեսօրվա բերանը ընկած մողիների պես,— և գյուղի զորեղ, իգական կեսի չկամությունը ծանրանում էր աղջիկների թեթև շնչին, նրանց զատում էր գյուղի տոհմիկ ազգակցությունից, կարծես լինեին այլազավան, որոնց գալու հարս էին տանելու այլ մոլորակից, և նրանց մայրը, որ կռահում էր տղամարդկանց թունդ կրքերի ու կանանց աճող թշնամանքի թունավոր դաշտում փթթող իր սիրունների բախտի խեղումը, ինքը տքնելով՝ փորձեց, ջանաց, կաշվից դուրս եկավ, որ աղջիկներին ուսումի կապի, ուղարկի քաղաք, որ նրանք այնտեղ, անցյալ չունեցող հավասարների մայրաքաղաքում բախտի տիրանան, բայց աղջիկները գրի, գիտության իմաստը չհասկացան, գրքերի վրա կենտրոնանալ չկարողացան, որովհետև եթե տնից դուրս չթռչեին առիթ-անառիթ, հավքի նրանց սիրտը կպայթեր, եթե նստեին գրքերի առաջ, գյուղի լույսը կպակասեր, համատարած գորշությունից տղամարդկանց աչքի լույսը կխավարեր,— համենայն դեպս, տանը նստել չի կարող նա, ով դուրսը մեկ, երեք, տասը սպասող ունի, ով ստեղծված է ժողովրդի աչքի համար և ուրեմն կնոջը շեղող սատանան, որ համայնական սիրո, կրքի բևեռումն է մի կետի վրա, չէր թողնելու, որ աղջիկների տհաս միտքն ու հուժկու բնազդը նվիրվածորեն կենտրոնանա սիրո միակ, սրտառուչ հնչող լարի վրա։

Այնինչ նրանց հայրը կարծում էր՝ աղջիկները դեռ երեխա են։ Կարծում էր, թե մանկական խաղի շարունակությունն է տղերքի հետ իր աղջիկների աչքունքի խաղը։ Եվ երբ մեծին գազամուղի վարորդը տարավ, երբ ամիս չանցած՝ միջնեկը փախավ, հայրը հա քշում էր, որ միլիցիա գնա։

Մայրը ասաց.

— Իզուր մի գնա։

— Երեխաներին տարել ով գիտի...

— Նրանք արդեն երեխաներ չեն,— լացեց մայրը։

Հայրը ուզում էր քսան տարի կոկորդում մնացած հարցը տա կնոջ անցյալի վերաբերյալ, բայց զգաց, որ չիմանալը իրեն կփրկի։ Եվ հոր խոովված հոգուն մեծ սփոփանք էր խնամախոսների այցելությունը երրորդի համար։

Երրորդի, բայց որի՞ համար էր եկել, խնամախոսը չէր հասկանում։ Հարությը ասել էր՝ մեկը տասնութ, մյուսը կլինի տասնյոթ տարեկան։ Մեջների սիրունին — ասել էր։ Բայց երկուսն էլ գեղեցկուհի էին և տարիքով անջոկելի։ Նաև հայրն ասաց՝ «Տասնութ տարեկանին տվինք՝ տարան» և սա առիթ էր խնամախոսությունը հիշ անելու, որովհետև դուրս էր գալիս, որ մնացել են տասնյոթամյան ու անչափահասը։ Հորեղբայրը ուզում էր, որ խնամախոսությունը չկայանա, սպասեն տեսնեն գնացածները ինչ են դառնում, և խոսքը այնպես էր տանում, որ գործը ինքնին փչանա, բայց աղնիվ, սրտից թույլ մարդ էր, եղբոր որդու վստահությունից խեղճացած էր, իր հերթին աղջկա հայրը, աչքը վախեցած, համաձայն էր տալ նույնիսկ փոքրին, միայն թե մեկը մյուսի ետևից չփախչեն գնան, միայն թե այս մի թագ ու պսակով մեծերի արարքը ծածկի։ Հետո, նա անսպասելի էր իրեն աղջկա տեր զգացել, մերժելու ձևը չգիտեր, եթե ուզենար անգամ։ Նաև մայրն էր մեծերի մեղքի տակ մայրաբար սսկված։ Աղջիկներն էլ կարող էին բորբոքված լինել մեծ քույրերի արկածախնդիր քայլով, այնպես որ ամեն բան նպաստավոր էր Հարությի ամուսնության համար։ Եվ չձգձգեցին։ Միայն, ձևի համար, ասացին՝ վաղը եկեք։ Թեկուզ այդ աղքատ տան համար, թեկուզ այդ նեղ վիճակում պատշաճ չէր որ առաջին եկածի առաջին ուզելով՝ աղջկան ձեռքը տան։

Եկան մյուս օրը։ Իհարկե, հայրը համաձայն չէր, որ սու-

սուփուս տանեն. էլի դառնում էր մեծերի փախուստի նման։ Ուզում էր գնոլ-գուռնա, պար, գյուղի ականջը գցելու կամ իրեն խլացնելու բան։ Երկու կողմից գիշելով-գիշելով եկան ու կանգ առան Հարութի ընկերների ակորդեոն-գնոլի վրա։ Մի թեթև սեղան աղջկա տանը գցեցին, մի թեթև սեղան՝ Հարութի։ Բայց Հարութի ընկերների ուրախությունը տևեց մինչև լուսաբաց և ստացվեց համարյա հարսանիք։

Այսպես, հարսին ետ տանելը հետաձգվեց մի գիշերով։ Մյուս օրը, երբ պինդ մութն ընկավ, երբ ժողովուրդը ոտը տուն քաշեց և դրսում մարդու հանդիպելու վտանգ չկար, Հարութը նորահարսին ետ տարավ հոր տուն։ Հայրը մեռած էր — թաղած չէր։ Բայց օգնական մի միտք եկավ՝ թե ջահել են՝ չեն հասկանում, հասկացնող էլ չի եղել, որ պատշաճ չէ, կասկածելի է, որ հարսանիքի հաջորդ օրը աղջիկը հերանց վերադառնա։ Այս հույսով ասաց՝ հաց դրեք։

Իսկ մոր ոտքերը գազօջախի մոտ տակը ծալվում էին։ Սպասում էր մեծերի ետ գալուն — այս երեխուն ետ բերին։ Միտք էր անում՝ ե՞րբ, որտե՞ղ կարող էր երեխան իր հսկող աչքից փախած լինել, ո՞ր շան որդին կարող էր... Ուղեղը քար էր կտրել։ Բայց աչքերի դեմ եկավ ու մնաց աշխարհագրության դասատուի լպիրշ նայվածքը։ Եվ մոխրագույն այդ աչքերը պսպղում էին պատշգամբի ամեն անկյունից։ Ապշելու բան էր. եթե աչքերը մոխրի գույն ունեն, պիտի որ դրանց նայվածքը մարդուս մարմինը տաքուհով չանի, պիտի որ... Բայց արի ու տես, որ տակը անթեղած շեղջ էր ու փորձված կինն անգամ սրսփում էր, ինչ մնաց անփորձ երեխան։

Տան փոքրը տեսավ մոր ձեռքից ամեն բան թափվում է, հաց սարքելու գործն առավ իր վրա։ Քույրն ու մայրը կողքը միայն բզբզում էին։

Իհարկե, աքլոր մորթել էր պետք նորափեսայի համար, բայց հավերը վաղուց թառին էին և հանգամանքն էլ այնպիսին չէր, որ բակում թառաժաժով աղմուկ սարքեն։ Սա միանգամից հասկացվեց բոլորի կողմից։ Դարձյալ փոքրը հիշեց, որ անցյալ օրվա խոզի մսից մնացել է։

Պատշգամբի մուտքի աջին խոհանոցն էր, պատշգամբի հակառակ ծայրին փեսա ու աներ նստած լռում էին։ Այդ անկյունում հարմարավետության նման մի բան էր իրար

արված. պատշգամբի լայնքով մեկ թախտ էր դրված, մի կարճ թախտ էլ դրված էր տան հիմնապատի կողմից և սեղանը երկու կողմից ամփոփված էր դրանցով։ Մյուս կողմերից մեկական աթոռ կար։ Հարութը նստած էր աթոռին։ Եղանակից մի երկու խոսք ասել՝ վերջացրել էին։ Եղանակի հետ կապված՝ անասնակերից, անասունից խոսեցին՝ հատավ։ Այստեղ տանտերը ձայն տվեց, որ օդի բերեն։

Պատշգամբի մյուս ծայրին թեթևացած իրար անցան, պահարանների դռները բացուխուփ արին, բաժակները զընգացին և տան փոքրը օդին ճանապարհոր բերեց դրեց։ Հետո թթու-բան բերին։ Եվ, իհարկե, այդ միջոցին այնտեղ ափսեից-բանից ջարդեցին։

Փեսան հասկանում էր, որ այս տանը այլևս հաց չպիտի կարի։ Դրա համար նախ ասելիքը պիտի ասի վերջացնի. թե այսպես ու այնպես, ձեր աղջիկը, ուրեմն, հարգելի աներհայրիկ ու զոքանչ-մայրիկ, պարզվել է, այսպես ասած, այնքան էլ, ինձ թվում է, հեռու ձեր պատվից, թող թշնամուս չպատահի՝ ամենքս էլ կարող է աղջկա տեր լինենք, — հեռու տնից, ուրեմն, այնքան էլ, ճիշտն ասած, ոնց ասեմ, որ... այնքան էլ, ուրեմն, կնության պիտանի չի... Այսինքն, շատ լավ էլ պիտանի է, բայց մի քիչ, ուրեմն, շուտ է պիտանի դարձել...

Հարութի բերանը չէր բացվում։ Ճիշտն, իհարկե, հացին ձեռ չտալն ու գնալն էր։ Այդ քայլը բավական էր, որ հասկանային։ Չհասկանան էլ, թող իրենք իրենց մեջ պարզեն... Այս մտքի վրա Հարութը պատկերացրեց աղջկա վիճակը իր գնալուց հետո և հասկացավ, որ այդ բանը չի անի... Այդպես ջահելավարի թողնել գնալը իրեն չի սազի։ Որպես վիրավորված կողմ՝ ճիշտը դա էր, բայց... Ուրիշ բան որ չլինի, ինքն այստեղ իր հորական տան ներկայացուցիչն է, փաստորեն իր ու իր հոր տեղն է միաժամանակ և աներոջ հետ հարկավոր է տղամարդավարի խոսել։ Հորեղբայրն այսօր կա — վաղը չկա, եղբայրը կորած է քաղաքներում, ինքը գերդաստանի գլուխ է դառնում, պիտի մտածվի այս երկու տների ապագա հարաբերությունների մասին։ Խնդիրը պիտի պարզվի, որ բանը չհասնի տասնամյակների քեն ու թշնամանքի։

Որոշեց խմի, որ ասի։ Խմեց։ Մեկ էլ խմեց։ Երրորդն էլ

խմեց ու հեռվից, կցկտուր եկավ։ Այդ ժամանակ անցել էին կարմիր գինուն և աներն ասաց.

— Այ որդի, մեր ցեղն էղենց ա՝ հեշտ... Դրա մերն էլ էր էղենց։ Ուզում ե՞ս էն պուճուրին տար՝ նույնն ա...

Հարութը պապանձվեց մարդու անկեղծությունից։ Հետո սիրտը լցվեց մարդու մեծահոգությունից։ Մի պահ եղավ, որ աքլորացավ, իրեն շահ ու սուլթան տեսավ՝ մեծին թողնելու — փոքրին տանելու հեռանկարից։ Ապա մեծահոգությանը մեծահոգությամբ պատասխանելու տղամարդկությունը բռնեց, և դա էր նրա բնույթը։ Նաև գինին լավն էր, գիշերվա էն ժամը ու ճանապարհը ցանկալի։ Վերջին հաշվով, մեծը փոքրից սիրուն էր։ Իսկ Հարութը սիրունի գիժ էր։ Կամ ներդաշնակության մոլի։ Կամ համաչափության հիվանդ։

— Եթե դրան թողնելու ես,— ասաց հարբած-հաշտված հայրը,— պուճուրին տար։ Թող մեկնումեկը տանդ լինի։ Գիշերվա էս ժամին ո՞վ պիտի տեսած լինի, որ մեկին բերել, մեկելին տարել ես, կիմանան՝ երեկ պուճուրին ես տարել։ Հրեն էն երկուսին էլ սպասում եմ... Տուն չեմ թողնելու, բայց՝ բա որ գան։ Բա որ լակոտները դոշներին գան... Տար, տղա ջան, սրան տար... Եթե ուզում ես՝ տար, բայց խմացի, շան ցեղ են, դրանց մերն էլ էր էղ։

Հարութը տեսավ՝ այդ մարդու վիշտը իրենինից մեծ է։ Նաև սիրո ու հաշտության ժամ էր։ Իրենք էլ այնքան իրար նման էին... Ոչ ոք չէր խղճալու այդ մարդուն, ոչ ոք չէր խղճալու իրեն, ծաղրի առարկա էին դառնալու առանձին-առանձին։ Եվ ամեն բան կախված էր Հարութից։ Կախված էր այս պահից։ Հետո, փաստորեն, մենակ տուն գնալու տարբերակ չէր թողնվում։

— Հարսը թող մնա, մնացածը թող քնեն,— վճռեց Հարութը։

Տղամարդիկ իրար նայեցին։ Եվ հասկացան՝ այս կյանքում իրենք իրար պահեցին՝ պահեցին, չպահեցին՝ կորած են։

Կանայք հեզորեն քաշվեցին ննջարան։

Գիշերվա մի ժամի անները ասաց.

— Աղջիկ չունենաս։

— Երբեք։— Հարութը ուզեց զլուխը վճռական տարուբերի, բայց ցնցեց ուշքի գալու նման։

— Կնոջդ շատ չսիրես,— եղածը անցած համարելով՝ որպես որդուն խրատեց աները։— Եթե շատ սիրեցիր՝ աղջիկ ես ունենալու, ես քեզ օրինակ։ Էնպես արա, որ ինքը քեզ սիրի ու՝ տղա կունենաս... Լավ տղա ես, սիրտդ բարակ մարդ ես, քեզ սիրելուն չտաս, չթողնես փալաս-փուլուսից աչք բացի, չթողնես պարապ մնա, շատ լավ չապրեք, որ հիմա էլ մտածի՝ էս կա, էն կա, բա սրանից հետո՝ ի՞նչ... Թող տանդ պակաս բան մնա, որ լինելը ուրախություն լինի... Թող միշտ երեխա բերի, որ պուճուր բանի, ինքչության կարոտը ուրիշ բան չկարծի... Հետաքրքրասեր ցեղ են, թող շատ բան չտեսնեն, որ տեսնեն՝ ուզենալու են համն էլ տեսնեն... Սիրտդ լրիվ քար մի արա, բայց սիրելուդ կարոտ թող, թող չմտածի, որ դու իրենն ու իրենն ես, մի բան էլ գուցե, կողքից լինի... Թող համոզված մնա, որ մի կյանքը քիչ է տղամարդուն իրենով անելու, մինչև տակը տեսնելու համար... Էս փակ կժի նման՝ չիմանաս ինչքան պակասեց, չիմանաս ինչքան մնաց... Քեզ մի քիչ էլ թաքուն պահի։ Բարձր մնա, սիրտդ խալու պես տաբերի տակ չփռես։ Պարզ է, սկզբից կողքերով կգնան, հետո կբոբկանան ու սիրուց-բանից կսըրսրփան, հետո տանու չստերով կտրորեն, հետո գոյությունդ լրիվ կմոռանան...

— Աղջիկ եղավ...— երդվեց Հարությը։

— Եթե կարաս, դրանց ցեղի առաջը առ։

— Կկարեմ,— հոխորտաց Հարությը։

Հետո աները խճճված, խմած գլխին աշխարհը շուռ բերող միտք ասաց։

— Ուրեմն,— ասաց,— դրանք դև են։ Դրանք քեզ սիրել են տալիս ու իրենք չկան։ Էստեղ էին, նստած էին, պառկած էին ու մեկ էլ չկան... Ոնց որ դու պառկած լինես իրենց պառկած տեղը։ Տեղը դեռ տաք է, իրենք չկան...

Հարությը գլուխը թափ տվեց ու նայեց մութ ապակիներին։

— ...Զարք են,— ասաց աները,— իրենց սիրել կտան ու շվաբի պես տակիցդ կփախչեն։ Ու կտեսնես քիթդ դետնին է առել։

— Բա ո՞ւր են,— հարցրեց Հարությը։

Տունը, գյուղը՝ քնած, ականջ էր դնում։

— Իրենց մեջ են քաշվել,— շշնջաց անները։

— Աղջիկ եղավ...— երդվեց Հարությը։

Ոչ դուրսը, ոչ ներսը ձայն-ծպտուն չկար։

Անները բաժակները լցրեց, վեր առան, որ տղամարդավարի լուռ, համախոհ, երդման նման խմեն...

— Չէ՛, չե՛մ ուզում... շա՛ն տղա... ցա՛վդ տանեմ, մի՛ արա, չէ՛...— քնի մեջ ճչաց, հեծկլտաց, մնչաց ու լռեց քույրերից ամենափոքրը։

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԺՎԱՐ ՏԱՐԻՔ

Ճակատագրի խնդիրը հեշտ էր, քան փոզինը։

Եթե տոմս եղա՞վ, մտածել էր տոմսարկղերի շարքի երկայնքով երկու-երեք օր զնալ-գալով, եթե եղավ՝ ճակատագիր է, պիտի գնա։

...Մյուս կողմից էլ, եթե քնքշության կարիք ունես, սովորական պատահականությունը կմեծարես ճակատագիր... Բայց, այդուհանդերձ, նա համոզված էր, որ ճակատագրականության ինքնամատույց հանգամանքին տեղ թողնվում է։ Ինքը իր կողմից մեծ ջանք չի զնում. հերթ չի կանգնում, առաջիկայի պատվեր չի տալիս, գնացքի հարյուր տոկոսանոց լինելիք տոմսի վրա չի քշում, բաց է թողնում ճամփա դուրս գալու փորձված միջոցը,— թողնում է մի դուռ՝ օդայինը, իսկ սեպտեմբերին օդագնացության հույսին մնալը նախախնամությանը ապավինել է նշանակում։ Ուրեմն, եթե եղավ՝ ճակատագիր է։

...Դե, եթե երկու-երեք օր քարշ գաս տոմսարկղերի մոտ, մի դուռ կբացվի. տոմսավաճառներից մեկն ու մեկը կխոզճահարվի, վերադարձվող տոմսերից մեկը քեզ կհասնի, վերավաճառող ստահակներից մեկը ականջիդ կշշնջա... Սիրահարվածը, անփորձ ճամփորդը տարբերվում է հիվանդի նման։

Նախախնամությունը ողորմած եղավ։ Չլինելու պես հեշտ եղավ տոմսը։ Բայց... իր նմանը, որ հայրական ժառանգության վրա չի նստած, ով էժան առնում—թանկ չի ծախում, ով գողությունից թունդ ամաչում է և չի ստացվել, որ աշխատի կարբիդի ցեխում, նա երկրիս վրա ճամփա գնալու մի միջոց ունի՝ պիտի պարտք անի։ Եվ ընկերների ոտքը գնաց։ Մեկի, երկուսի, երրորդի ու... Առանց այն էլ նրա կորովը լարովի էր, դժվար պրկվում՝ փրթվում էր մի ակնթարթում, և հետեւյալ այցելությանը պնդերեսությամբ զինվելու համար մի դիշեր ու մի ցերեկ պետք էր։

Հանաքամիտ ընկերոջ հետ փորձեց գործը հանաքով տանել, բայց խոսքի կեսին սխալը զգաց։ Փող ունեցողը հանաքի ձիրքը կորցնում է՝ հենց փողի մասին անլուրջ խոսեցիր։ Հայացքը նախ սգավորվում է, ապա պաղում-խորթանում է, վերջը դառնում է լրիվ բացակա՝ կարծես գնաց իր գանձի վրա աչք պահելու... Փողատերերը նաև ունեն մի նվիրական նախապաշարմունք, որ ձեռք են բերում մեկ օրվա մեջ, մեկ մարդու նման՝ չի կարելի ավանդից կտրել ուրիշին տալ, անհարկի չի կարելի պակասեցնել, թե չէ կսկսի ինքնիրեն պակսել...

Ամեն այցը ստոր դավ էր ընկերության դեմ։

Մարդիկ հանգիստ ապրում էին, հանգիստ ապրում են, այսօր էլ ահա գործից տուն եկան առանց վատ նախազգացումի, քեզ ընդունեցին առանց կասկածի, հյուրասիրում են հայավարի, ընկերության կենացն են խմում առաջին, նաև՝ վերջին բաժակով, իսկ դու, ընկերոջ ուսը գրկած, ընկերության բաժակի մեջ ա-հա՛ պիտի թույն կաթեցնես, մեջքը գրկած՝ պիտի կողքից, կարճ, սրտին խփես՝ փող է հարկավոր...

Հին, վստահելի մի եղանակ կար. պիտի ասվեր՝ հասկանո՞ւմ ես, մեկին տանում ենք մի շաբաթով... Ստացվեց... Հանկարծ... Հասկանում ես։ Ու հակառակի պես չունեմ հիմա... էդքան չկա։ Ընդհանրապես՝ կա, բայց տղամարդը երեխի բերնից չի կտրի էս դեպքի համար, հասկանում ես։ Դա պիտի մնա։ Այնպես, որ չունևոր չենք, ձեռքներս քարի տակ չի, կորած տեղ չի... Պահ է... Մոմենտ...

Չէր կարողանում։ Նրա մասին «տանում ենք» խոսքը կամ նման այլ խոսք ասել չէր լինում։ Այդ աղջկան, հասկանալի

է, նրանք երբեք չէին տեսնելու, անունն իսկ չէին իմանալու, բայց լեզուն համբակի չէր ու չէր ստացվում։ Հետո, նաև այդ փաստը չկար։ Նրան հունից հանող կինը մի քանի օրից լինելու էր այնինչ քաղաքում, մնալու էր երեք-չորս շաբաթ, և տղամարդու ուզածը այն էր, որ գեթ մի շաբաթ, ամեն օր նրան տեսնի առավոտյան, տեսնի կեսօրին, տեսնի նաև կեսգիշերին... Մեկ էլ, գուցե, այն, ինչը դիպվածը կամ կանացի քմահաճույքը կընծայի իբրև իր յոթնօրյա երջանկության անպարտադիր զարդ։

Զառամ շան սիրտը սիրուն լակոտի տեսքին է գերի։ Այ, այդ լակոտին, սիրուն, սկսնակ գերասանուհուն, որի ետևից վազել եկել էր իբրև պոչը ցից (եթե հո չէր նայի, որ թափը կոտրեր), իբր մեջքը պինդ (շտապելուց էր ողնաշարից փախչող քամակը առաջ ընկնում), իբր թեթևոտ (ճանապարհն էր, պարզապես, երկար), իբր երկրորդ շնչառության դեռ ընդունակ սիրող ու պահապան դամփռ,— այդ լակոտին արդեն երկու օր թատերախմբի որձակազմը հաճոյախոսության ու գինու կապած՝ լպստում էր իր աչքի առաջ։ Իսկ աղջիկը մաքուր էր՝ անց որ առավոտվա աղբյուրի ջուր, միայն թե միջօրեին տավարը գալիս, կճղակներով, բիթումոտթով մտնում էր ակը։ Ինքը մաքուր էր՝ դա չէր զգում կամ էլ շափից դուրս էր վրատահում ինքնամաքրման թափանցիկ ուժին, կամ զգում էր, ինչպես քոր եկող վերքի վրա մի զարշահոտ սպեղանու հովացնելն են զգում-հանդուրժում, կամ, ով իմանա... Սիրուն կինը՝ տապակած խոճկոր, սաղ է գալիս սպայակույտի գլխ սեղանին։

Երրորդ օրը մեր ապուշի լացը եկավ։ Խմած էր՝ եկավ։ Քիչ էր խմել, բայց հո՛ եկավ... Նոր էր դուրս եկել այն սենյակից, ուր աղջկան էլի խմբովին դարպասում էին...

...Նորեկ էր՝ պիտի սիրահետեին։ Նրանք, որ սիրո կոչված չեն, պիտի ատեին, իսկ տղամարդիկ մի ձևոքով հինը մոտ չթողնելով — իրենց պահելու, մյուսով այս մեկն էլ իրենց քաշելու ջանքից պիտի ճղատվեին... Տղամարդկանց տխմարության այդ ավազանը շնաձկների լողի տեղն է։ Եվ վերջերիս գեղեցկուհին ու տանու աստղը, սիրվածն ու երեսառածը մի ջղագար հոհոց դրած՝ վզովն էր ընկել անակնկալից ուշքի չեկող մի պատանյակի։ Նա տղային կործանում էր։

Դերից որ՝ հաստատ զրկում էր։ Բայց եթե գեղեցկուհի երեսառածին շնորհից, թեկուզ ուշադրությունից են զրկել այս պահին, նրանից քրոջ դիասքությունն պետք չէ հուսալ։ Հետո, նա կին էր և այդ ամենին կանացիորեն նայում էր միակ կետից. իր շնորհներին աչք դրած ամեն արարած տղամարդ է նախ և առաջ, ենթակա ու վերակա չկա, ով տղամարդ է, թող իր սիրուհուն, մի օրվա սիրուն, մի ժամվա բախտին կյանքը չէ՝ գործը զոհաբերելով տիրություն անի։ Թուլամորթը գործն ի՞նչ է անում։ Կյանքն ի՞նչ է անում զիջողամիտ տղամարդը։

Նա, ի հեճուկս ում խաղացվում էր այս տեսարանը, նա շահնշահի՝ ներքինիներին վստահողի դիմակը քաշել, ջղերի կծիկ գեղեցկուհուն զիջել էր խեղճ պատանուն, ինքը գրկել էր աղջկա մեջքը և մազերը, այտը, քունքը համբուրում էր իբր հայրաբար, իբր կուսության հովանավոր... Ժամ առաջ նա, երբ տղամարդկանց շրջապատում էր, խմած օղուց լրիվ զեղվել, բաժակը առել ու կենաց խոսք ասելու նման երազում էր. մեկը լինի (ինքը հոգնած է՝ ջանք չթափի), գա, սիրի փափո՞ւկ, անշահախնդիր... Կյանքում մի անգամ պատահել է։ Հեռու հյուսիսի բարեհոգի մի ռեստորանում ընկերն ասել է՝ ա՜յ էն կինը քեզ ուզում է, ինքը թե՝ վատ չի լինի։ Կինը անկաշկանդ մոտեցել է, քսան տարվա ծանոթի նման բարևել, գգվել, վիրն համբուրել է և մնացյալը գնացել է նույն սահմանությամբ... Իր ասպարեզում ճանաչված մարդ էր, գեշ արարքը անց էր կենում թուլության տեղ, լավը ուժգին թմբկահարվում էր, նա, իր ասելով, բեզարած արվեստագետ էր, նախաձեռնության, ջանքի այլևս ընդունակ չէր, բայց հենց որ կանայք սեղան նստեցին, շունչը տեղն եկավ։ Ու հիմա թեթև (ոճն էր թեթև), իբր ոչնչի կարիք չունեցող, իբր կուսության հովանավոր՝ ջահել աղջկան լպոստում էր։

Աղջիկը գգվանքները ոչ ընդունում, ոչ մերժում էր, ոչ էլ փորձվածի հաշվենկատությամբ խաղում էր ամենազոր միջինի վրա։ Իրեն պահում էր շատ բնական, տան ավագանի կիսաձեռնասուն ձկան նման — կեր ես զցում՝ մոտենում է, ձեռքդ մեկնում ես՝ խույս է տալիս առանց խուճապի։ Խույս է տալիս առանց խուճապի և գգվանքի, թե հետին մտքով գնացող ձեռքը չի կարկամում հիմար վիճակում, չի չարանում

երախտամոռությունից, չի հուսահատվում և հաջորդ փորձն էլ չի բացառվում, եթե չասենք՝ խուսափուկ նաղով հրահրվում է։ Եվ այն էլ կար, որ նրա վրա գնացող ձեռքը կոպտությունը թոթափած ուներ, խրտնեցնելու չափ նպատակամետ չէր, գոնե վերջնական նպատակը չէր երևցնում, վերջի հարցը թողնված էր բաց, ձեռնոցը նետված էր այնպես, որ կարելի էր և չտեսնելու տալ։ Ամեն մեկը ամեն պահի ինքնասիրությունը չվնասելով նահանջելու տեղ ուներ։ Եվ այդպիսին էր ողջ սեղանի մթնոլորտը։

Նա, ով սիրում էր, ապուշ էր կտրել։ Նա կնոջ ու տղամարդու հարաբերության մեջ սուսերախաղի զգոն կեցվածքը չէր ըմբռնում, չէր հասկանում մի բանը երկրորդ անգամ ասելը, նույն բանը երկրորդ անգամ ուզելը, հերթական անգամ մերժված լինելը... Նրա համար ապրելու այդ եղանակը գոյություն չուներ։

Եվ ծանր սրտով դուրս եկավ միջանցք։

Սուղ միջանցքը ամառանոցային երեկոյի կանխավայելքից ընդարձակվում էր։ Ակնկալիքով դռներ էին բացվում, մեղսախորհուրդ ծածկվում էին, նվազարանները իրար գոռելով տասնալեղու զլել էին՝ էստի՞ համեցեք։ Լեռան ընդերքի պաղ զորությունը ծորակներից հաղարաշիթ աշխատում էր Ղազախի ձմերուկի ու չեխական գարեջրի համը տեղը բերելու վրա, խավոտ զորդերին ածխահոտ կանանց բրիգադը վարժվում էր ծանրագնա ճեմաքայլի, վիթխարահասակ նկարիչների հրոսակախումբը բնորդուհիների առատությունից խելքամաղ եղած՝ իրեն տվել էր, թափին նայելով, տասներկուօրյա կերուխումի. «Կյա՞նքին մեռնեմ»— բոռաց մեկը... Որոշակի մեկի՞ կյանքին, թե՞ կյանքին առհասարակ. միտքը շարժվեց և նա ապավինեց մտածելուն։ Հիշողությունից ցաքուցրիվ մտապատկերներ հանեց աչքի դեմ՝ որպես խայծ, խթան, որպես իշու բիզ, բայց պաղած միտքը դրանց չկպավ, իրար չկապեց, պատկերից զենը իմաստ չտեսավ, միայն կրկնում էր անմիտ հարցը՝ որոշակի մեկի՞ կյանքին, թե՞ կյանքին առհասարակ... Բայց դա ուղեղի աշխատանք չէր, դա ուղեղի առողջություն չէր, մտքի սպի էր, դաջվածք էր մի, կարծես տող լիներ, որը կարդում ես երեսուն անգամ։

Այնուամենայնիվ, դա երանելի վիճակ կլիներ, եթե չի-

ներ վախը՝ չգիտես ինչով զգացվող, վախը, թե այս վիճակը խիստ է կարճատև, թե ահա-ահա անդրադառնալու է ահաճ մի բանի։ Փութով, որպեսզի անխուսափելիից առաջ ընկնի, սահուն, որպեսզի միտքն ուշքի չգա,— արագ ու սահուն, ամեն ակնթարթ վազքի անցնելու սահմանի վրա իջավ ներքնահարկ։

Խավարին տվող կարմիր էր լույսը, նվագը մեղմապարի էր, կրակարանի նմանակումը բոցկլտում էր իրականին զրեթե նման և սրճարանը հավասար չափով նմանվում էր թե՛ ակվարիումի, թե՛ ջրասույզ կացարանի։ Կին ու տղամարդ լողում էին, միայն թե լույսի աղբյուրից հեռու։ Գունավոր լույսից նրանք բոլորը միագեմ էին։ Դիմակ-գույնը քողարկում էր պարողներից ոմանց խռովքը, ոմանց էլ հաղեցածությունը։ Միայն մոտիկ նստած զույգը անհատական կերպարանք ուներ։ Նրանք չէին պարում, չէին ծխում, խմել էր մի շիշ գինի, և աղջիկը կիսախավարին ապավինած, թե՞ զգացմունքը չթաքցնելու նորօրյա բարքով, միգուցե հոգու խորունկ խռովքից՝ ինքնատիրապետումը կորցրել էր։ Նրա ձեռքերը՝ իրար հետամուտ մեկը մյուսին որսում էին օդում հածելիս, սեղանի վրա, գոգը դրած, աթոռի կողին, նա մատները չարդուտում էր, բռունցքները բերանն էր տանում, մազերը ձիգ փնջում էր ծոծրակի վրա, շաղ էր տալիս բաց ուսերին, դիմագծերը նույնքան ջղային խաղի մեջ էին, միայն աչքերն էին անթարթ ու թաց տղային հառած և այդ աչքերի արտասվելը արտառոց էր բաց աչքերով քնելու նման։ Տղան նստած էր կիսադեմով։ Նրա հայացքի ուղղությունը չէր ընկալվում, բայց աղջկա անհանգստությունից զգացվում էր, որ հայացքը նրա միջով թափանցում է։ Կարևոր մի բան աղջիկը ասել, վերջացրել էր, տղան, ոնց որ, պատասխանում էր, աղջիկը նրան լսում էր այնպիսի հափշտակվածությամբ, երբ ոչ մի բան չեն ընկալում, բայց սպասված բառը կորսան շուրթերի վրա։ Տղան տրվել էր խուսափուկ շատախոսության։ Նա մտահոգ էր, ջանք էր թափում, որ դա չերևա, բայց աղջկա բերանը մեկ հուսահատ սեղմվում էր, մեկ բացվում էր սպասումով, մեկ էլ ժպտում էր անուրախ ու հեղ և իր այտը շոյելու թե արցունքները սրբելու մղվող տղայի ձեռքը կենդանական եղանակով բերանով որսում,

համբուրում էր... Տղան ձեռքը ետ էր քաշում կշտամբանքով։ Տղայի դեմքին չէր բռնում տղամարդկային լրջությունը, և աղջիկը ապավինելով, համբուրելով, արցունքներով այդ դիմակը լվանում էր։ Տղան փափկում էր։

Ինչո՞վ է ծանոթ այս պատկերը։ Ինչո՞ւ է աղջիկը սիրողանզիջում, ինչո՞ւ է տղան զիջող ու տխուր... Ախ, ծնունդի պահապան աստված, ախր գրված է ճակատներին՝ աղջիկը երեխայով է, տղան երեխա սիրող տղա է...

Օդին օդնում էր, և նա տղային քսան տարուց տեսավ այստեղ իր նման նստած, տասը տարուց տեսավ իր որդուն՝ այդ տղայի տեղը նստած և սիրտը ցավեց անծանոթ տղայի համար, ցավեց անմեղ իր որդու համար՝ այնտեղ նստած... Երեխա պաշտող տղամարդկանց ցեղ... Նրանք հազար կանանցից միայն մեկի մեջ են տեսնում իրենց երեխաներին, բայց կանանցից յուրաքանչյուրը, բացի այդ մեկից, մտքի մեջ, համենայնդեպս, պահած ունի պատրաստի հոր նրանց կերպարը։ Ուրիշների պատանեկան երազանքը քաղաքագրությամբ, լուսնագնաց, երկրի զեկավար, ոսկու տիրակալ, կանանց ընտրյալը դառնալն է, նրանցը՝ պարզ, իրագործելի մի ցանկություն՝ սիրած աղջիկ—սիրելի կին, ուշիմ, բարեկիրթ երեխաներ — ապագայի լավ քաղաքացիք... Նրանք իրենց հասանելիք երազանքը զիջում են դեռ չունեցած երեխաներին և իրենց պուճուր բախտի ետևից գնում են կույր, ինքնամոռաց, և որովհետև կանայք նրանց հայրական հոտը զգում են հեռվից, նրանք ընկնում են խանձարուրների բույրով օծված որոգայթներից առաջինը, կաշկանդվում են վաղաժամ հոգսով և չեն կարենում իրենց անրջած երեխաների ապագան կռել։

...Ժամը լրացավ, և նա ոչինչ անել չէր կարող աղջկա սենյակ գնալուց բացի։

Նրանք, իհարկե, դեռ այնտեղ էին։ Նրանք, որ գործընկերոջ անպատկառ մի տնավարությամբ օտարից քաշվել չունեն, մեծահոգաբար իրենք էլ նրա ներկայությունը հանդուրժում են աղջկա կողքին, իրենց շարքերում, որովհետև համոզված են, որ բոլորով նույն բանն են ուզում, որ ամենքն էլ նույնն են ուզում և ուրեմն հավասար են իրավունքով։ Նրանք պատրաստ են աղջկան միջից կիսելու, մաս-մաս

անելու... Կարող են դիջել վերջին հաշվով, բայց համը հանելուց հետո, գրողը տանի, միայն համը հանելուց հետո...

Աղջիկը թատրոնի կին էր դառնում։ Նա ջահել էր՝ ներսը տեղ կար առանձին՝ սիրո և առանձին՝ սիրախաղի, կյանքը նրա դեմ մեկեն բացվել էր շքաղոնից, ոտքերի տակ գորգ էր փռված, որ ձգվում էր մինչ անմահություն, ամեն քայլին մի դուռ էր բացվում կրնկի վրա ու թվում էր՝ եթե կանգ առնի մի երկվայրկյան, հետևյալ դուռը փակ կմնա, եթե բացվի մինչև անգամ հապաղելով, քայլ անելու վճռականությունը կլքի նրան,— ուրեմն թափը կոտրելն է սխալ։ Իսկ տղամարդիկ՝ տողանի կանգնած, կնոջ համար հայելուց պատ են, որպես թե կինը ապրելիս լինի հայելապատ սենյակներում, հայելապատ փողոցով քայլի, ոտքերի տակ հայելի լինի, երկնքի տեղ հայելի լինի... Գեղեցիկ կանայք ապրում են իրենց արտացոլանքի հետ։ Եվ ոչինչ, որ տղամարդիկ կնոջ հայացքը թյուր կըմբռնեն՝ իրենց կզգան, իրենց կպահեն ավելի տաք, քան հայելին է։ Գեղեցիկ կնոջ պաղ նայվածքը նրա համար է, որ փշրի դրանք ուղած ժամանակ, գեղեցիկ կինը արտացոլվելու խնդիր չունի, միշտ կգտնի շքեղակազմ-անխտրական-ստորաքարշ ապակիներ, բայց կպահի նաև մեկը՝ զարդասեղանի հավատարիմ, պայուսակի հավատարիմ, ծոցում պահվող հավատարիմ, ծուռությունն էլ սիրող հայելի, որին նայում են միայն հոգու ներանձուկ ժամին և թեթև շնչով խավարում են, երբ ուզում են, շնչից սրբում են, եթե ուզում են, ավելի հաճախ, այնուամենայնիվ, թողնում են խավար։

Աղջիկը գիտեր՝ իր տեսադաշտում, ձայնի արձագանքի ոլորտից ներս իրենով ապրող մեկը ունի, նա խաղատանն է կամ անտառում, կամ դետակի մեջ, կամ պանդոկում և ձայն տա՝ կգա, չտա էլ՝ կգա, ճաշին կգա, ընթրիքին կգա, եթե շուտ չգա։

Իսկ նա ամառանոցային այդ քաղաքում մի կիսամութ, մի կիսափնթի՝ խոհանոցը սրահին մոտիկ — սրահը՝ զուգարանին, մի անմեղների, տղամարդկանց հավաքվելու տեղ էր ման գալիս և գտավ գարեջրատուն-խինկալանոցը։

Գարեջուրը խինկալու հետ՝ անմիտ բան է, բայց գարեջրի ենթադրվող հայրենիք Հայաստանում մի այնպիսի չոր ու

աղի բան չի հորինված, որ մատուցվի գարեջրի հետ։ Վանա տառեխը պիտի լիներ՝ գարեջրի հարգը չիմացող վայրենոց մնաց, Միջերկրականի խեցգետինը պիտի լիներ՝ արժանացավ Կիլիկիո ձիթապտղի սև բախտին, Արաքսի լոքոն տեղը կբռներ՝ քաշվեց Կասպից ծով, Կասպից ծովը Թուրանական կարոտախտով կուլ է գնում ասիական ավազուտներին... Հե՜րն անիծած.

— Խինկալի բերեք։

Բայց տեղը զով էր։ Առաստաղը աղյուսաշար թաղ էր կապած, հատակը սալապատ էր, պատերը՝ սրբատաշ քարից, նստարանները՝ կարպետածածկ քար, սեղանները՝ փայտամած քար, լուսամուտները՝ որմնախորշերում, խորշերը կեսից բիչ վեր հատվում էին մայթի գծով, ծառաբների երևացող հատվածներն առանց սաղարթի ու արմատների անկենդան էին, անցորդները երևում էին մինչև ծնկները... Ի՞նչ մարդիկ են ծնկներից վեր։ Անցնում էին անդամ։ Տաքատի փողքեր, բարձր կրունկներ, հյուսկեն ճտքեր, ճեմաքայլ ոտքեր, վռազ ոտքեր, լույսի շերտերի նման մկրատվող երկար սրունքներ, երեխայի փաթ ընկնող ոտքեր, մի ինքնավստահ, ազդեցիկ քայլ, որ ամսական եկամուտը հուշում էր՝ 15000... Այստեղ կանացի ձիգ սրունքները կանգ առան, նկարչագեղ ամփոփվեցին շրջանակով, աջ ծունկը ծալվեց, շոկվեց, հետո ծալվեց ձախը, հետո անտես ուղիղ իրանը մի կենտ կրունկի վրա սահուն կես շրջան դարձավ, ապա ետ դարձավ շարժման նախկին ուղղությունը շարունակելու պես անորսալի և հանդիպեց ում սպասում էր... Կնոջ ոտքերը ձգվեցին թաթերի վրա, կրունկները ասֆալտից կտրվեցին սիմվոլիկ համբույրի տևողությամբ, կտրուկ իջան, թվաց թակոցի ձայնը լսվեց և շրջանակում լույսն ամայացավ։

Այլևս ոչինչ անել չէր լինի աղջկա սենյակ դնալուց բացի...

ԲԹԻՏԸ ԲԵՐԻՆ

Եթե տոմսավաճառը չկպչեր մարդուն, ժողովուրդը չէր սևեռվելու այդ տեղի վրա։ Բայց հրաշք էր լինելու, եթե չասեր, թե...

...Ամեն բան ճիշտ էր։ Ճիշտ էր, որ բանթողի ամենախառնակ ժամին մերձքաղաքային ավտոբուսի մեջ մարդիկ կոտորվում էին ոտքի վրա ու դուրսն էլ հուլիս ամիսն էր, և որ մարդը քսան կոպեկ տվել երկու տեղ էր զբաղեցրել՝ կողքին էր դրել խաղողով լի կարագի արկղը և կանգնածների աչքը արկղի զբաղեցրած տեղի վրա էր... Սխալ բան չէր ասվել, միայն թե տարիքն առած մարդ էր, ամեն մեկի շարժումն էլ կողքիններին նեղություն էր, անցնելիքն էլ ինչ էր՝ կես ժամվա ճանապարհ, այնպես որ՝ սրտից մեռնելուն սովոր ժողովուրդ՝ տրտունջը ներս գցած գնալու էր։

Բայց տոմսավաճառը տոմսավաճառ չէր լինի, եթե ճակատագրի հետ հաշտված այդ ժողովրդին չլարեր մարդու դեմ։

— Աղա են դառել, քսան կոպեկով ֆայտոն բռնել, տուն են քշել տալիս...

Այսպես անդեմ — երրորդ դեմքով խայթելու սովորություն կա ժողովրդի մեջ և միամիտ — փոքր զանցառուն արդարանալ չի կարողանում. կասեն՝ ով էր քեզ բան ասողը, իսկ պնդերեսը վրան չի առնում՝ լավ իմանալով անդեմ խոսքի կարճ կյանքը։

Խաղող տանող մարդը անհանգիստ շարժումով մատնեց իրեն։

Տոմսավաճառ կինը ֆայտոն բառը, գուցե, հնին հակված սրտի բերումով ասաց։ Ավտոբուսի ամենատարեց ուղևորը եթե մտովի մի հիսուն տարի էլ ետ տարվեր, այսօրվա իր հագուստ-կապուստով անգամ ֆայտոնի ուղևոր չէր։ Ճիշտ է, այս մատչելի դարում էլ տաքսի չէր նստել, այլ հարվում էր մերձքաղաքային չոր ավտոբուսում, բայց ետընթաց հի-

սուն տարին նրան ավելի էր հեռացնում ֆայտոնից ու աղայությունից։ Մի բան էլ կար, որ ֆայտոնի ու աղայության ոգեկոչման ֆոնի վրա վիճակը դարձնում էր զավեշտական՝ նրա աղայական բեռն էր՝ շուկայի ընտիր խաղողը իր նման մաշված խաղողի արկղի մեջ։

Զիմացողը կհարցնի՝ կարագի արկղը ինչո՞ւ պիտի մաշված լինի, եթե մեջը երկրորդ անգամ կարագ չի դրվում։ Շուկայի գելը կպատասխանի, որ կարագ կրելը այդ ծալովի ստվարաթղթի փորձնական դերն է, դրա բուն գործածությունը սկսվում է կարագից աղատվելուց հետո, մրգահասի օրերին։ Եվ որ ավելի հարմար ման Կովկասը չի տեսել։ Եվ որ այս կողմերում ոչ մի բան մրգի ու պտղի առատին այնպես զարկ չի տվել, ինչպես ծալովի այդ տուփը։ Բեռն իրացնելուց հետո այդ թուղթը կարելի է առանց ափսոսալու դեն նետել, բայց եթե ծալծլես ու դարսես, թղթով էլ փաթաթես, տաս հատը կդառնա տղամարդու էլեգանտ բեռ։ Եվ կծառայի մինչև խոր աշուն։

Եթե ավտոբուսը քաղաք գնալիս լիներ, բեռի ու բեռնատիրոջ անհարիրությունը աչքի չէր զարնի. կմտածեին՝ մարդն իր խաղողը շուկա է տանում։ Բայց ավտոբուսը գնում էր շուկայի կողմից։ Նաև քսան կոպեկին հետամուտ տոմսավաճառը կար և երբ սա երկրորդ անգամ բերանը բացեց...

— Բիձա,— հուշեց շոգից չկոտրված մի ձայն,— քսան կոպեկ տուր, թող անջատվի։

— Էդ ո՞վ անջատվի։ Էդ ո՞վ էր լավամարդը,— վիզը ձգեց տոմսավաճառը, բայց հետևողական չեղավ. երիտասարդը կարող էր խոսքին տեր կանգնել։

Մարդը գուցե չէր կռահել, որ քսանկոպեկանոցով կարելի կլիներ տոմսավաճառի ձայնը կտրել, գուցե ծերունավարի ղլացել էր, բայց հիմա վճռեց.

— Արի։ Արի ստացի։

— Հարցը քսան կոպեկը չի, մարդկություն ասա,— իր բարձր տեղից քարոզեց տոմսավաճառը, բայց ձեռքից ձեռք անցած քսանկոպեկանոցը քսակը դրեց։

Մինչև կանգառ լռություն էր։ Կարելի էր կարծել ծանոթներ չկան ամեն օր նույն ժամին գործի գնացող, նույն ժամին վերադարձող մարդկանց մեջ։ Այնինչ կանգնածները

սիրտ չունեին խոսելու, նստածներն էլ խոսելով՝ կանգնածների ուշադրությունը վրանները հրավիրել չէին ուզում։

Կանգառում նոր հրմշտոց սկսվեց։ Կանգնածները սասանվեցին. նեղվողները տեղ արին իրենց, տեղավորվածները նեղվեցին, ավտոբուսը շարժվեց, հանդարտվելու ժամանակն էր, բայց առջևից բարձրացած մի կին կոնքերն ու ուսերը զործի դրած՝ սպառնալի գալիս էր ետ։ Առաջ նստածները մերումանուկ, նաև անկար մարդիկ էին, մեջները հարմար մեկը չկար, որի գլխավերևը կանգներ՝ խաղար ջղերի հետ և ճղելով եկավ։ Այստեղ էլ նստած տղամարդկանցից համեմատաբար երիտասարդ մեկի հայացքը բռնել չկարողացավ։ Եվ երբ անցել էր միջանցքի կեսը, իր քթի տակ տեսավ կարագի արկղը։

— Սա դիր վրեն,— անառարկելի ասաց ու ոտքերի արանքից վեր հանեց ահագին մի պայուսակ։ Ուրեմն, ժողովրդին ճղելիս այս պայուսակը հետն էր եղել։

Մարդը մեքենայորեն բռնել ուզեց պայուսակը, բայց մեկ էլ ձեռքը ետ քաշեց։

— Կճխլի, չէ՞։

— Դե որ կճխլի, վերցրու՝ նստեմ։

Մարդը օգնության հույսով շուրջը նայեց՝ հայացքը զոտկատեղերին ու փորերին առավ, նայեց կնոջը՝ միգուցե գթա, հապաղեց՝ դուցե թե զղջա, վերջը ձեռքը արկղին տարավ, կարծես ուզում էր գոգը դնի, բայց միտքը փոխեց։

— Փողը տվել եմ,— ելքը գտավ։

— Մեր փողը փող չի՞,— ծեփեց կինը։

— Էլ՞,— մարդը, երևում էր, խոսելուց լավ չէր։

— Է-մե չկա։ Իմ ձեռքին էլ բան կա, բայց ես ուրիշի գլխին չեմ դնում։

— Ես ո՞ւմ գլխին եմ դրել,— նեղացավ մարդը։ Չհասկացավ, որ իր գլուխը նկատի ունեն։ Եվ ճարահատյալ ձեռքը խոթեց արկղի տակ... Եվ դեմքը ծամածռվեց։ Արկղի տակ մի տհաճ բան էր կատարվել։ Մարդը ձեռքերը ետ քաշել ուզեց, բայց կինը պայուսակը բարձրացրած սպասում էր։ Մարդը արկղը առաջ քշեց, ետ՝ կոզքի թեքեց, խցկեց նստոցի ու առջևի թիկնակի արանքը, արմունկներով, կրծքով սեղմեց... Այստեղ ավտոբուսը արգելակեց։ Արկղը սպրդեց ու

տակը բացվեց։ Տերը դառնացած թողեց ու շտկվեց։ Արկղը վերից մեկ քառորդով պարպվել, նստել էր տակից դուրս թափված խաղողի վրա։ Արկղի ստորին՝ բացված թերթերը խաղողը պահում էին։ Իսկ արկղի տեղը հյութից թացվել էր։

— Ես չէի ասո՞ւմ,— ոչ ոքի չդիմելով ասաց մարդը։

Կինը իր սև գործն արած արդեն շուտ էր եկել։

— Բա կարագի արկղով խաղող կտանե՞ն,— կշտամբեց մեկը։

— Է, պատահեց, ասի տանեմ երեխաքը ուտեն։— Ձախորդությունը մարդու լեզուն բացել էր։

— Սկզբից ամանի մասին մտածելու էր,— խրատեց նույն ձայնը։

— Դե, ասի, ամանի երեսից չփոշմանեմ, տանեմ երեխաքը ուտեն։

— Խաղողը կողովով կտանեն,— լսվեց սթափ մի ձայն։

— Է-է,— ասաց մարդը։

— Թանկից էժանը չկա,— պատասխանեց նույն ձայնը։

— Է, տասը մանեթ իրեն տամ, տասն էլ քթոցին, էդ խաղողը կուտվի՞։— Մարդը ամեն անգամ գլուխը ծռում էր խոսողին նայելու, բայց չէր գտնում։

— Քթոցը տանը պետք կգար։

— Իսկ եթե պետք չգա՞ր,— հարցրեց ավտոբուսի հոռետեսը։

— Բա հիմա լավ է՞, որ ոչ կողովը կա, ոչ խաղողը,— հակաճառեց սթափ ձայնը։

— Լավ է, թե վատ...

Ավտոբուսը վերելքից պրծել էր, լուսամուտներից քշիցշատից հով էր փչում և ուշքի եկած մարդիկ հեշտորեն մարդու հոգու հետ խաղի մեջ մտան։

— Իշնելիս շիրան կսրբես,— բոլորովին լուրջ զգուշացրեց տոմսավաճառը։

Մարդը վիզը ծռեց տոմսավաճառին նայելու և պարանոցի խորշոմները այդ կողմի վրա խորացան։ Այդ պարանոցը նման էր կաղնու բնի։ Այդպես սևացած ու ճաք-ճաք պարանոց ունենում են ողջ կյանքը քար տաշած, գլուխները վեր պահելու ջանքից վզներին զոռ տված մարդիկ։

Մարդուն անախորժ էր տոմսավաճառի կպչելը։ Գերադասելի էր շաղակրատանքը խաղողի ու քթոցի մասին, դրանում, էլի, բարեհոգի ուշադրություն կար իր անձի հանդեպ, և երբ ավտոբուս բարձրացավ գլուխը տաք մեկը, նա բարի ընդունեց նորեկի կատակը.

— Հը, բիձա, գինի ե՞ս գցել։

— Անտեր անեմ էսենց գինին,— ասաց,— քաղաքից գյուղ տարվող խաղողն էլ շան բաժին էր դառնալու։

— Վեդրո էիր առնելու, լցնելու էիր մեջը, ջարդվածը գինի, մնացածը...

— Ասի՝ ցինկի համ չտա, երեխեքը ուտեն։

— Բա եղա՞վ,— ավտոբուսին աչքով արեց խմածը,— խաղողը մեզք չի՞ երեխանց բերանը տաս։ Խաղողից պիտի գինի քաշվի։

— Օղուն էլ դեմ չես,— խայթեց կանացի մի ձայն։

Տղամարդը սրտանց ծիծաղեց ընտանեկան հոգսը մատնած կնոջ ասածի վրա։ Ծիծաղելուց նրա դեմքը ավելի կլորացավ և երկու օրվա անթրաշության տակից թշերը արգավանդ կարմրությամբ ճառագեցին։

Բայց ավտոբուսը միտք չուներ թեմայից շեղվելու։

— Մենք ասում էինք՝ հարմարը կողովն է,— կարմրաթշին կողմնորոշեց կողովի կողմնակիցը։

— Է, տղա ջան, տասը մանեթ էլ որ քթոցին տաս...— մարդուն պինդ էր կպել ապրանքի ու ամանի նույնարժեք անհեթեթությունը։

— Թանկից էժանը չկա,— կրկնեց առակախոսը։

— Դա մեզ համար չի ասված,— խեղճացավ մարդը։

— Ումի՞ց ենք պակաս,— հոխորտաց կարմրաթուշը։ Նա կարծես ավտոբուսը կոչում էր դասակարգային գիտակցության։

— Քո ժլատությունով առածի դեմ մի գնա։— Զրույց հրահրողը զգաց, որ կարմրաթուշը գինովի անհոգությամբ նյութից կշեղվի։

— Դե, մարդն ինչ իմանար, որ գարդոնը փտած է,— հունն ընկավ կարմրաթուշը։

— Զրի արկղն էլ փտած կլինի,— վրա բերեց առակախոսը։

— Զրի ո՞վ կտար,— հարեց հոռետեսի դեր ստանձնածը։

— Մի մանեթ եմ տվել,— մեջ ընկավ մարդը։

— Դե էդ մանեթով էլ տակը փակի,— ծիծաղեց առակախոսը։

— Երեքանոցով էլի մի կերպ կփակվեր։

— Հինգանոցով՝ գուցե։

— Տասնոցով։ Դրա ճարը տասնոցն է։ Ճոճռան, կարմիր, անջրանցիկ... Տալիս են՝ հոգիդ փառավորվում է, տալիս ես՝ սրտիցդ էդ գույնի արյուն է կաթում...

Կարմրաթուշը էլի շեղվում էր և սաղրիչը ասաց.

— Երեխեքն էլ կասեն իրենց պապը քաղաքից է գալիս, խաղող է բերելու... Մի տասնոցն ի՞նչ էր որ...

— Է, քրտինքին տասնոց տալի՞ս են որ... Տասը մանեթ էլ աշխատում ես՝ երեքանոցներով են տալիս։

— Հարգը իմացողին են տալիս։

— Հարգը իմացողին չեն կարա չտան։

— Պիտի ուզես, որ տան։

— Աչքները պիտի հանես, որ տան։

— Ունենաս պիտի, որ տան՝ դնես վրան։

— Գույնն իր գույնն է սիրում։

— Գույնին վայել գրպան ունենալու է։

— Ամեն փող իր գրպանն ունի...

Խաղողը հյութ էր տալիս։ Հյութը առու կապել հոսում էր վարորդի կողմը։ Փողի հարցը մասխարության վերածելը մարդուն վերջնականապես ընկճեց։ Նրա շուրթերին իր հիմար վիճակը առաջինը գիտակցողի պահապան ժպիտը դեռ կար, բայց դա այլևս նույնիսկ դառը ժպիտ չէր։ Նա կուշտ էր բոլորից ու լսել չէր ուզում։ Ոտքի թաթով առջևից պահել էր արկղը, ձախ ձեռքով բռնել էր թիկնակի ձողից, աջը՝ թաշկինակով, դրել էր նստոցի թացության վրա, շաղված հայացքով դուրս էր նայում։ Նրա միտքը այնտեղ էր, վերջին կանգառում, ջուր դառած խաղողի արկղը այդտեղից դուրս քաշելու չարչարանքի վրա։

ՄԻՆՉԵՎ ՈՐ ՏԵՍՆԵՆՔ

Ուսուցչի օրվա առթիվ, ածխահատի օրվա ու էլի մի քանի օրերի՝ ոտանավորներ էր գրում պատանեկան թերթի համար։ Այդ գործը իրենն էր։ Չէին պատվիրում, բայց նման էր պատվիրելու։ Գիտեին՝ գրելու է, գիտեին՝ բերելու է, երկու ամիս առաջ, երկու շաբաթ առաջ, երբ հարկավոր է։ Դրա դիմաց սրտի ուղած ոտանավորը տարին մեկ կարող էր տպել։

Մայրս գյուղում մնաց՝ ականջը կանչի...

Այսպիսի հանգով։ Ավելի նշանակալի տոների համար խմբագրությունները ուրիշ հեղինակներ ունեին։ Մեռած ու կենդանի։ Մեռածների հետ, հասկանալի է, չափվել չէր կարող։ Գուցե նրանց տաղանդը չուներ, թեպետ որ նայես՝ և հանգն է տեղը, և չափն է կարգին, և բառերն էլ նույն հայերենն են... Բայց մեռածների ասածն ասած է։

Ապրողների հետ նույնպես չէր կարող։ Հավասար կամ քիչ ավել-պակաս շնորհքով հանդերձ՝ նրանց երեսը թիկունքից էր պինդ, թիկունքը՝ պինդ երեսից։

Ասածու տվածը պիտի շատ լինի,— մտածում էր մի առավոտ,— թե չէ՝ բոլուկով, ամենքս մի քիչ պաշար շալակած ճամփա ենք ընկել... Մեկի ծնկները շուտ են թուլանում, մեկի կամքը հերիք չի անում, մեկը գնում է դեմից քայլողի ոտնահետքերով կամ առաջինի փեշից է բռնել, մյուսն էլ բռնել է դրոշի կոթը, որ դրոշը շվաք անի...

— Վա՜յ, մամա ջան, մոռացա ասեմ՝ պրոռեկտորը Ձեզ կանչել էր...

...Պատկերացրեք, յոթ-ութերորդ դասարանում հերոսության կամ ընկերասիրության մասին շարադրություն հորինելու ոգեշունչ պահին ձեզանից առաջ նստածներից մեկը ետ դառնում ու լաստիկե պարսատիկով ծամած-մամլած թուղթ է շպացնում մտքի լարումից զգայուն դառած ձեր ճակատին... Մեքենագրուհին կիսաբերան (այդ էլ՝ անտեղի)

ժպտում էր նրան։ Նրա ժպիտը ոչ գեղեցիկ, ոչ էլ տգեղ էր, անհամարձակ կնոջ ժպիտ էր՝ համենայն դեպս, երբ տղամարդու վերաբերմունքը դեռ չի ճշտել։ Մայրաքաղաքի ուսանողական ութ թերթերի խմբագիրներից միայն այս մեկն էր բանաստեղծություն գրում ու տպում, և այդքանն էլ աղջկա համար ահագին բան էր։ Բայց հայացքները երբ հանդիպեցին, աղջկա ժպիտը ոչ թե չքվեց, այլ կարծես թե թարմ յուղաներկով դիմանկարի քիթուբերանը լղոզեցին։ Խմբագիրը դառը հայացքով նրան էր նայում։ Եվ այդ միջոցին շատ էր նման ինքը իրեն. դժվար ձեռք բերած իր պաշտոնը պահելու հոգսից ջղազար դառած, վաղ ամուսնության կնիքը դեմքին, քաղաք գալով եռանդը կոտրած գյուղացի տղա։

«Ասում էի, չէ՞, մի քիչ շատ էր»։

— Ի՞նչն էր շատ, ընկեր Պարսամյան։

— Իսկ-դու-աղ-ջի-ջան...— Նա խոսում էր վանկատելով՝ արա՞ս էր, թե բարբառային առոգանությունը ճնշելու միջոց, բայց վերածվել էր սովորության,— իսկ դու, աղջի ջան, մարդկանց բերանին իզուր ես նայում, եթե բարձրաձայն չեն արտահայտվում, դու էլ մի լսի։

— Ես խնդրում եմ...

— Այ աղջի, ո՞նց չգոռամ, երեսուն րոպե այստեղ նստած եմ՝ նոր ես ասում։

— Ես խնդրում եմ... Խնդրում եմ ինձ «այ աղջի» չասեք... շատ եմ խնդրում...

Խմբագիրը դուրս էր գնացել։

Չորս մատ փոշի էր նստած բուհական թերթի խմբագրության առօրյայի վրա։ Անվանի դասախոսները արհամարհում էին թերթը, կարգին ուսանողները զբաղվում էին ուսումով, նրանք էին թերթի հետ գործ բռնում, ովքեր ուսանել-ուսուցանելը երրորդական բան էին համարում։

Թերթ սարքողները մի քիչ ժրում են սեպտեմբերին։ Նախ, տարեկան ծրագիր են կազմում. առաջին համար՝ ռեկտորատի բարեմաղթանքի խոսքը առաջին կուրսեցիներին և վերջիններիս շողիք ի բերան թոթովանքը՝ է՜ս ինչ բախտ էր մեզ բաժին ընկավ, ի՜նչ վստահություն, սրա տակից ո՞նց ենք դուրս գալու... Լուսանկարներն են միայն տարբեր ամեն

տարի։ Հոկտեմբերին՝ այսինչ ամյակը, նոյեմբեր-դեկտեմբերին՝ քննաշրջանի նախապատրաստություն, հունվարին՝ բուն քննությունները, մարտին՝ քննաշրջանի ամփոփումը, ապրիլին՝ երկրորդ քննաշրջանի նախապատրաստություն, մայիսին՝ դարձյալ քննություններ, հունիսին՝ դրանց ամփոփումը և շրջանավարտների աղիողորմ հրաժեշտը անմոռանալի դասախոսներին... Լուսանկարներն են միայն տարբեր ամեն տարի։ Արանքներում՝ լուրեր, հումոր, հասարակ տոներ, ուսանողի վարքի հարցեր, այլևայլ հարցեր,— և այդ ամենը՝ անհոնորար։ Եվ ո՞վ կգրի։ Ո՞վ է հիմա անհոնորար երկու տող գրում, եթե պաշտոնի-բանի հարց չունի։ Ու թերթը ապավինել էր կարիերիստների մարտաշունչ վաշտին։

Պրոռեկտորը նախաճաշում էր։ Նախաճաշը շո՞ւտ էր սկսել, նո՞ր էր սկսել, քարտուղարուհուն հարցնե՞լն է ճիշտ, թե չհարցնելը... Ուտելը այն եղակի միջոցներից է, որ մի կարճ պահ հավասարեցնում է բարձր ու ցածր դիրքի մարդկանց. միևնույն բանով զբաղվող մարդիկ լեզու գտնում են։ Իսկ պրոռեկտորը ուտում էր փակված։ Փակված, մենակ ուտող մարդուց անիմաստ է լավ բան սպասել։ Բայց և շուտ գալ գնալ չէր լինի։ Քարտուղարուհին մասնավոր անձ չէ, իր մեծավորի լիազոր անձն է մեր աշխարհում, նրա վեցերորդ զգայարանն է, վերմակի տակից դուրս մնացած նրա ոտքն է, որ զգայուն է սառնության հանդեպ։ Եվ ուրեմն, անհարգելի շուտ գալ գնալը խմբագրի ուժերից վեր էր։ Նա ընդունարանում պիտի մնար մի քանի րոպե, դեկավարի նախաճաշի՞, նրա կանչի՞, ընդունարանի կահավորանքի՞, թե ինչի հանդեպ ակնածանք տածեր քարտուղարուհու վկայությամբ և նոր դուրս գնար՝ կրկին գալու պարտավորությամբ։ Կամ թե՝ սպասե՞ր։ Ի՞նչ իմանաս որն է ավելի վարվեցողական զգայուն ոտքի տեսանկյունից։

Իսկ քարտուղարուհին անտարբերության շքեղ նմուշ էր։ Մի բան էր պակաս՝ վրան դմբեթարդ ապակի քաշես, որ մթնոլորտից չփչանա։ Այդ աղջկա հետ խմբագիրը լեզու չգտավ։ Նա հիշեցնում էր ակնեղենի-ոսկեղենի փորձված-շնացած խանութպանուհու, որը հետաքրքրասեր հաճախոր-

դին ակնթարթորեն տարբերում է գնողունակից, ընդ որում՝ փողը առնում է գլխանց։ Դա մի կին էր, որ տղամարդկանց դուռ իրեն հայտնի չափանիշով դասակարգում էր երկու, երեք, գուցե տասը կարգի և խմբագրի նմաններին տառացիորեն չէր արժանացնում ուշադրության։

Խմբագրին բան չէր մնում, բան պատուհանից դուրս նայելը։ Նա բավարարվեց վարագույրների եղած ճեղքով, բարձր, թանկարժեք, զմրուխտ կերպասին ձեռք դիպցնել չհամարձակվեց... Այսինքն, պարզ չէր՝ տնավարի կրացվեի՞ն, թե՞ թաքուն մի տեղ քուղեր, թոկեր կան։ Իսկ ձեռքերը էլի չդիտեր ուր կորցներ։ Սովոր տեղը գրպաններն էին՝ դա բացառված էր, կրծքին խաչեր՝ ամբարտավան տեսք կունենար, մեջքին դարսեր՝ էլի այն չէր, և թողեց, որ կոնատի թևքերի նման կողն ի վար կախվեն։

Նա մտածում էր առանձնասենյակի գոնների մասին։ Այդ գոնները բացել-փակելու ձևը չգտավ։ Բաց ես անում կրկնակի դռան առաջին փեղկը և... եթե ծածկես երկրորդը բացելուց առաջ, կմնաս մութ-հիմար վիճակում, կխարխափես մինչև երկրորդի բռնակը գտնես և ներս կմտնես փարախի դուռը գլխով բաց արած ոչխարի նման։ Եթե չթողնես առաջին փեղկը, պիտի ճղատվես երկուսի միջև, կրունկով պահես, արմունկով պահես, մեկը չթողած՝ երկրորդը բացես կամ նույն վայրկյանին մեկը թողես-մյուսը բացես... և երբ ներս մտար ցանկապատի ճեղքից սողոսկած գողի նման, արդեն կես մարդ ես։ Միգուցե դրանք, իսկապես էլ, բացել-փակելու անհարմար են։ Դրանք պիտի բացեն քո առաջ, որ չխճճվես։ Կրկնակի դուռը արդյո՞ք նրա համար չի շինված, որ եթե դեմդ բացող չկա, մտնել չփորձես, որ հենց խճճվես հակառակ դեպքում, գլուխդ կորցնես, նվաստանաս ընդունելությունից առաջ և հետո, որպեսզի հետո, սև-փա-կան կամքով, այդ գոներին մոտենալ չուզես... Հնարավո՞ր է։ Չէ։ Քավ լիցի։ Ենթադրությունը եթե ոչ էժան, գոնե, հաստատ, ծանծաղամիտ է։ Դա ստացվում է ինքը իրեն։ Իշխանության՝ ուզած հագուստից իրեն թոթափող, մորեմերկ բնույթն է այդպես։

«Ասում էի, չէ՞, երեկվանը մի քիչ շատ էր»։

«Ի՞նչն էր շատ, ընկեր Պարսամյան»։ Մեքենագրուհու միամիտ ձայնը ականջին զնգաց ապտակի նման։ Եվ հրատակորեն հիշեց դեմքը։ Եվ դեմքը եկավ կնոջ դեմքը։ Աղջկա դեմքը։ Կնոջ դեմքը։ Աղջկա դեմքը... Եվ այդ անհարկի, անխոստումնալից, այդ ոչինչ չասող համեմատությունից սիրտը ցավեց։ Եվ նվաղելու պես հանկարծակի՝ սրտով-ուղեղով-մաշկով զգաց ու գիտակցեց, նաև վերհիշեց, որ կա նաև մի ուրիշ կյանք՝ հափշտակվածության ոլորտը միակ, երբեմնակի վերադարձը մարդուս մանկության, հայրենիքը տղամարդու, որտեղ կարող ես լինել բախտավոր, լինել քմահաճ և անպատժելի՝ երեխայի պես...

Բախտը այս մարդուն երես չէր տվել։ Հաջողությունը այցի էր գալիս հին, կամակոր սիրուհու նման, որի գալը հիշեցնում է վազուց չգալը և ուրիշ... «ուրիշ ոչինչ» ասելն էլ ճիշտ չի լինի, բայց ի՞նչ անուն տաս դառի ու քաղցրի համը հանող շիլաշփոթին։ Օրինակ, ի՞նչ էր նշանակում երեկվա օրը։ Երեկվա քաղցր, նաև դառը, վերջին հաշվով՝ անհամ օրը։ Օրը քանի՞ դեմք կունենա։ Նայած օ՞րը։ Նայած մարդո՞ւն... Հարցրեք նրանց, ովքեր ապրել են հազար տարի — ես ի՞նչ իմանամ։

Քանի՞ ջահել էր, մտածում էր, թե կարևորը օրվա միջից մի կերպ դուրս գալն է, վազը, իբր, նոր օր կլինի։ Բոլորովին ուրիշ մի օր։ Տարիք առնելով հասկանում էր, որ դժվար օրվա, անհամ օրվա միջից անվնաս դուրս չեն գալիս, դա հետք է թողնում գալիք օրվա, հետագա բոլոր օրերի վրա։ Միգուցե դա՝ անզորությունը, սկսվում է որոշակի տարիքի՞ց հետո։ Կամ՝ մի անողոք հարվածի՞ց հետո։ Որովհետև՝ եթե փորձը ճշմարտություն է, կար ժամանակ, որ անկասկած էր անցնող օրից թոթափվելու ճշմարտությունը...

Ջահել ուսերի ճշմարտություն էր։

Երեկվա առաջին հաճելի բանը հասկանալի էր։ Առավոտվա հաջողությունը ընդունում ես իբրև նոր օրվա տրամաբանություն, ընդունում ես այնպես, ինչպես լավ առավոտը, որը միայն քեզ չի պատկանում, այլև քարին, քարի վրա արևկողի եկած սողունին, արձակ ու ձիգ փողոցով անցնող զվարթ-լվացված տրամվային, թե՛ ջրափոսին, թե՛ մրջնանո-

ցին... Այդ առաջին հաջողությունով կարելի էր մարդավարի ուրախանալ։ Կամ կարելի էր չուրախանալ, որովհետև եղածը ի՞նչ էր՝ սպասված մի բան՝ ռադիոակնարկի հոնորարը տեղ էր հասել։

Ինչ ասել կուզի, հոնորարը թեթև փող է։ Աշխատավարձի հոգսը շատ է։ Աշխատավարձը դատապարտված է առօրյա մանր կարիքները կանոնավորապես վերացնելու խորին ձանձրույթին, այնինչ փողը արժե մի բանի. որ տառացիորեն վատնես, քամուն տաս իր տմարդի բնույթին վայել արհամարհանքով։ Այդ բանը անես գոնե երբեմն՝ գոնե մի պահ դրա առօրյա լծի բութ ցավը մեղմելու համար։ Եվ ո՞վ կպնդի, ո՞վ կհավատա՝ իբր եզը (եթե ջահել չի) լծփախ է տալիս մեկընդմիշտ ազատվելու միամիտ հույսով, իբր կողերի ծեծված կաշին չի թրթռում կրկին լծի տակ քաշվելուց հետո ստանալիք շառաչուն ցավի հեռանկարից... Բթացնող ցավից գերադասելին շամփրող ցավն է, թե հաջողում է մի շունչ քաշելուն։

Տարիքն առած, ընտանիքի տեր տղամարդ՝ նրան չէր սազում զբաղվել հիմար բաներով, բայց առավոտը խոստումնալից էր։ Եվ թափանցիկ էր անժուժկալ կնոջ ակնարկի նման։ Եվ ուրեմն, ստացածի տասներորդ մասով մտավ խաղի մեջ և շահեց քսանհինգ ռուբլի։ Շահեց «սպրինտ» կոչված պատրանքով, որի լավն ու վատը այն է, որ չես հասցնում հույսերով քոքվել, աննշան հույսդ վատ թաքցրած քաշվում ես մի կողմ (և ամբողջ տեսքդ կծու հեգնանք է սեփական անձիդ, նաև անբախտակիցներիդ հանդեպ), ծրարիկը բաց ես անում... ու հանկարծ շահեց։ Դե, որ օրը հաջող էր գնում, մտավ փոստատուն, միջքաղաքայինով պատվիրեց գյուղ՝ 10 բոպեից միացրին։ Մոր հետ խոսեց, դուրս էր գալիս շքամուտքից՝ կարծես շորը առավ մի բանի՝ մի տխմար միտք նրան կառչեց՝ այս վերջինը չպիտի աներ։ Առաջին պահ նա ծուռ ժպտաց այդ մտքի վրա որպես ուրիշի հիմար մտքի։ Միտքը նրան կողմնակի թվաց, որովհետև բուն միտքը չէր, մտքի ծաղիկն էր։ Պտուղն ավելի կպչուն դուրս եկավ՝ այս երկրորդը, իբր, շատ էր։ Եվ քանի գնաց՝ կծվեց, թթվեց, թունավորեց ողջ էությունը՝ մի մարդու համար, մի օրվա

համար չափից դուրս էր։ Դրանից արդեն փրկություն չկար։ Անհաջողությունների սովորած տղա՝ այդ օրը նրան հունից հանեց։

«Սրա տակը ի՞նչ է թաքնված»— մտածում էր հիվանդի նման մայթով քայլելիս, մտածում էր ճաշարանում պելված, անջատված որոճալիս, մտածում էր տպարանում, տուն գնալը հա՛ ձգձգում էր («Անակնկալի լավն էլ, վատն էլ քեզ մնա, ասված, երեխի տեր ենք»)։ Ստացած ու շահած փողով երեխաների, տան համար ոչ մի բան չառավ, որ չարաբաստիկ այդ օրվա հետ կապ չունենան, անգամ անկողին մտնելուց հետո իրեն արգելեց խոստովանել, թե օրվա հետ, երևի թե, փորձանքը անցավ,— չխոստովանեց, որ զգաստ մնա։ Եվ կեսգիշերն անց ճմռված, տաք (տհաճորեն տաք) սավանների մեջ մի մտքի հանդեց. որպեսզի մարդ հաջողությունից չկորցնի խեղճ գլուխը, արժանապատվորեն ընդունի այն, նրա հայրը առնվազն պիտի հաջողակ եղած լինի, նրա հոր հայրը հաջողության հետ պիտի նստած-վերկացած լինի, ապուպապերի համար այդ բանը անձրևի, ձյան, ծաղկունքի նման սովորական պիտի եղած-անցած լինի... Կամ թե՝ հակադարձ սաստկացումով։ Տարբերությունը էական չէ։ Ցեղի տևական հաջողությունը պնդացնում է մարդուս հոգին։ Եվ, ափսոս, նաև դախացնում է մարդու հոգին։ Բազմեցնում է ինքնարավության խախուտ գահին և... Վայ թե չարյաց փոքրագույնը դա է, իմ ասված, նույնիսկ դրա տարբերակն է, երևի թե, լավ. մարդու անխելք, փուչ տեսակը, որ անասունի նման է միայն չափի գալիս (դնչին տալիս ես՝ նոր է ետ դառնում, լեզուն այրում՝ ետ է քաշում, աչքը փուչ մտնում՝ գլուխն է թեքում, տրաքվելն է սոսկ ուտել-խժռելուց ետ կանգնեցնում), քան այնպիսինը, որ մեծահոգի փոքրոգությունից ամեն տրված համարի բախտ, երկրորդը՝ շատ, աշխատանք, ապրուստ ունենալը, պաշտոնի, անգամ ընչին մարդկային վերաբերմունքի արժանանալը ընդունի ոչ թե ինքնըստինքյան հասկանալի բան, այլ ընծա, շնորհ, ողորմածություն բախտի բերումով իրենից վեր կանգնածի կողմից և կուչուձիգ գա նրա առաջ, նրա կոշիկի քուղերը կապի, չհամարձակվի պորտից վեր նայել, միայն թե նա՝

«ողորմացողը», քո աչքերի մեջ չնչմարի այնպիսի մի բան, որի համար գլխին տալիս, ողորմությունը առնում են ձեռից։ Այդպես է լինում, երբ ուղտի բեռը բարձում ես էշին։

Մրափի ոգին հմայում էր դարանամուտ, մրմնջում էր մոգական խոսքեր՝ լույսը կբացվի՝ բարին հետը, լույսը կբացվի՝ բարին հետը, լույսը կբացվի... դիպչում էր նրան ու ետ էր ցատկում ձգված մարմնից, իջնում էր վերից փետուրի նման և զարթուն-տաք շնչառությունից թռչում էր վեր, մարմինը քուն չէր ընդունում՝ որպես մահի, և չափն անցկացրած, ձգված ցերեկվա հոգեվարքի ջղաձգումից ցավի երկու շիկացած սլաք բիբերը շամփրում, լովում էին ուղեղի մեջ։

Ու երազ տեսավ։ Բահ ու քլունգ առած ամբոխը կարծես գնում էր շաբաթօրյակի։ Կին, տղամարդ, դպրոցական ու կրծքի երեխա, լոզունգներով, իր իսկ ժխորի ալիքի վրա հորդում էր առաջ... Եվ մեկ էլ անցան քառատրոփի .. Տեղը, ուր հասան, կանաչ լանջ էր, շրջանակված էր քարացրոնքով և մեն մի ծառ կար։ Բացազատվեցին, ծծկերներին դեն շպրտեցին, բահ ու քլունգ գործի դրին և ամեն մեկը սկսեց իր համար գերեզման փորել։ Ինքը ո՞ւշ հասավ, թե՞ դյուրաշարժ չէր՝ որտեղ ուզում էր քլունգը խփել՝ զբաղված էր։ Բոպե չանցած՝ փափուկ հողերին տեր կանգնեցին, քարքարուտները նվաճեցին, և իրեն մնաց կաղնու տակը (ծառը պիտի որ կաղնի լիներ)։ Քլունգն իջեցրեց՝ առավ երես եկած արմատի, վրա բերեց երկրորդ անգամ՝ էլի արմատ էր, երրորդ անգամին զարմանքով տեսավ՝ իր բաժին տեղը հոծ արմատ է։ Ավելի ճիշտ, ծառի սաղարթի ստվերի չափով տախտակամած էր և քլունգը դաղաղին ընկնող խոշոր քարերի թնդյուն էր հանում։ Ինքը նեղացավ։ «Ես ուզենամ ինքս ինձ համար գերեզման փորեմ ու տեղ չլինի՞...»։ Թքեց հեռացավ։ Այստեղ արթնացավ։ Նեղացածության զգացումը դեռ նրա մեջ էր։

Վարագույրների թղաչափ ճեղքը շատ էր ու քիչ չէր։ Դրսում մի ինչ-որ նոսրություն կար, որից թոքերը ցավելու նման ցավում է հոգին։ Այդ օրվա լույսով ամեն առարկա, մակերես, գիծ, գույն ու շարժում տարանջատված գոյություն

ուներ ինքը իր համար և կյանքը նման էր շաղված կաթի։ Վարագույրների հեղքից նայելիս հավաքության և կամ խորության, առնվազն՝ շաղվածության հետ անմասնակից լինելու պատրանք կար։

Մի երիտասարդ տղամարդ ու կին ընկան նրա տեսադաշտը և դուրս կգային հետք չթողնելով, մտապատկեր չդառնալով, եթե կանգնեին ուրիշների, ուրիշ կանգնած զույգերի նման, ովքեր խոսում, շարժվում, հորանջում էին՝ այնպիսի բաներ, որ տեսողությունը ընդունում է ի գիտություն և ուրիշ ոչինչ։ Բայց այդ երկուսը պաղպաղակի կրպակի մոտ անբնականորեն անշարժացան։ (Անբնականությունը, արտաքոցը, կեղծը, սուտը նա զգում էր թիկունքի մաշկով)։ Երկրորդ հարկից էլ զգացվում էր, որ այդ զույգը փողոցի հետ, ուրիշների հետ կապ չունեցող բան է մտմտում, և շրջապատը նրանց համար կա ու չկա։ Կանգնած էին կիսադեմով իրար դարձած, նրանց իրարից բաժանում էր ոչինչ չասող, հավանաբար ապօրինության հանգամանքով պարտադրված մի տարածություն, բայց ոչ մի ուժ, ոչ մի հանգամանք ի վիճակի չէր այդ մարմինները հեռացնել զույգն-ինչ ավելի։ Նրանք այլևս կաշկանդված էին մեղքի թափանցիկ միակ շապիկով։ Եվ երբ հեռացան վճիռ ընդունած մարդկանց թափով, այնտեղ, որտեղ կանգնած էին, նրանց ողողած օդի մեջ նրանցից ինչ-որ բան մնաց։ Եվ այն մեղսանուշ, հնարավոր, մոռացված կյանքի կշտամբանքը դաղեց նրան՝ վարագույրների արանքից նայող տղամարդուն, կրծքի տակից մի բան ծանրորեն ընկավ ոտքերը, և կրծքավանդակը մնաց դատարկ։

«Ինչի՞ վրա ենք մեր կյանքը մսխում, ողորմած աստված,— դատարկության ընդերքում պատեպատ դիպավ հեծեծանքը...— Մեր արևին՝ թերթ ենք տպում, մեր արևին՝ ընթերցող ունենք... Ընկերների աչքից ենք ընկնում, կանանց աչքին դառնում ենք ծիծաղելի, աչք ենք կուրացնում ամեն բառի, տառի վրա, վրիպելու վախից դառնում ենք հոգեկան հիվանդ, բայց, միևնույն է, կախված ենք մի հատիկ տառից... Տառը ի՞նչ դառավ, որ դրա վրա դողում ենք անտեր շան նման...»։ Ընդունարանի ցածրիկ սեղանին իր թերթի վերջին համարը դրավ։ Ոտքի վրա շուռումուռ տվեց,

առաջին էջը, երկրորդ էջը, երրորդ էջը, չորրորդ էջը, դարձյալ երրորդը, ապա երկրորդը և առաջինը, հետո՝ մեկումեջ, հետո՝ անկանոն... Սխալի համար կանչած չլինե՞ն։ Բայց ի՞նչ կարող էր հասցնել նայել, եթե անգամ կարողանար կենտրոնանալ։ Համենայնդեպս, վերնագրերը որերորդ անգամ տառետառ նայեց, աչքի անցկացրեց ամենայն երևացող բան, առաջին էջի հոդվածներից ցաքուցրիվ կարդաց մի քանի պարբերություն և չհասած վերջակետի՝ հոգնություն զգաց։ Թերթը վար դրեց։ Ապուշություն է տպագրելուց հետո կարդալը։ Վկա է ասված, ինքը դրա վրա քոռացավ։ Իսկ եթե հանկարծ... Եթե մի բան... Մարդ ենք մենք, չէ՞։ Էդ անտեր թելը բարակ է, չէ՞։ Կկտրվի, ախր, մի տեղ։

Դեկավարությունը նրան կանչել էր մի պարապ հարցով։ Եվ ռեկտորատից նա դուրս եկավ ինքն իր հանդեպ զզվանքով լեցուն։ Էժան պրծնելու թեթևությունը ցնդեց դուռը ծածկելուց հետո։ Աստիճաններով իջնում էր կծկված, անձրևի տակ ընկածի նման, որի շապիկը կպել է մարմնին, մարմինը մի կերպ հարմարվել է անհաճո թացին, բայց եթե հանկարծ իրար եկավ, սառնությունը ծակծկելու է ասեղի նման։

Այդպես իջավ, խմբագրության հարկը անցավ, շենքից դուրս եկավ՝ անձրև էր մաղում՝ գնաց գլխաբաց։ Կգնար այսպես։ Մինչև առավոտ, ցերեկը ամբողջ, ու մի գիշեր էլ... Հայրը ապրելիս լիներ, ինքը գնար գյուղ։ Ոտքով գնար։ Հարյուր ռուբլի ծախսեր գնար, ասեր՝ այ հեր, տասը ռուբլի տուր գնամ մի օր ինձ համար ապրեմ։ Թոռներդ, հայրիկ, իմ հոգին կերան, դեռ մատնաչափ են՝ մաշկում են ինձ, և ես մի օր չեմ կարենում ինձ համար ապրեմ։ Նրանց բախտի վրա դողալուց անտեր շնից էլ վատ ենք դառել։ Ծնված օրից նրանց կարծես պատանդ են տարել, պատանդ են առել նրանց բախտը, որ մենք սողանք, եթե ուզում ենք որ նրանք ապրեն... Բայց երեխեքին հարկավո՞ր են ահուդողով ապրող հայրեր։ Նրանց կյանքի, բախտի համար լավ չէ՞ ունենան ուժեղ-մեռած, տղամարդ-մեռած, քան թե մեռած-չթաղած հայրեր... Ախ, չգիտեմ։ Այսօր հոգնել եմ հայրությունից։ Այս մի օրը շատ եմ հոգնել։ Արի դու ինձ հերություն արա՝ գնամ էսօրս նամուսով ապրեմ... Կոպեկ չեմ ծախսի շանորդի թոռներիդ վրա, թող իրենց հոր վաստակով ապրեն, թող

կաշին քերթեն, էսօր ես հայր չեմ, իմ հոր ուսանող, անհոգ որդին եմ, ձրիակերութեան այնպե՛ս կարոտ... այդ քաղցրութիւնը տուր ինձ, հայրիկ, տասը ռուբլի տուր՝ էսօրս ապրեմ։ Ապրեմ կամ հարբեմ։ Հարբեմ, որ օրը կապվի օրվա հետ, թե չէ՝ օրերը մթնում են ջոկ-ջոկ, ամեն օրը մի կյանք է թվում — ձանձրալի է այդքան կյանք ապրել... էլի եկել եմ արձակուրդին՝ տարին մեկ տուն եկող-չեկող անառակ որդիդ (նրան թվում էր՝ իր հետ պիտի ապրեր հավերժ), մայրս գործում է՝ ուրախութիւնը շուրթերով սեղմած՝ աստված, հանկարծ, շատ չհամարի, մենք նստել ենք վառարանի մոտ, շամփուրները վառարանում են, գինին՝ սեղանին, խըմում ենք շատ, ծխում ենք երկար, և քո հայրութիւնը տղամարդավարի զուսպ պատում է ինձ։ Իմ միջից լուսաշխարհ է գալիս որդիական սերս, դեպի քեզ է գալիս զգույշ, ամաչկոտ ու փափկած լեզվիս ծայրին է ահա՝ «Ի՞նչ լավ էր, հայրիկ, պատերազմից եկար, և մենք իրար տեսանք ինն ամսից»։ Պատառ չես դնելու բերանդ, գիտեմ, շուտ-շուտ ասելու ես՝ տղա շան, կեր, խմելու ենք կամաց, ծխելու ենք երկար, քնելիս դրպանս տասը ռուբլի ես դնելու՝ «մինչև որ տեսնենք» ասելով։

Ե՞րբ էր՝ անձրևը դադարեց։ Արևը իջնում էր Հայկական պարին։ Արևից ահռելի մի շողք էր գալիս, գալիս ճեղքում էր դեռ քաղաքի տանիքներին նստած ամպերի մութ զանգվածը և խփում էր Մատենադարանի լայն ճակատին։ Շողքը խփում էր Պողոտայի երկայնքով, շուրջբոլոր խավարի մեջ լույսի շեղբ էր կուրացուցիչ փայլով, կրճատվել էր տարածութիւն, վերացել էր սահման, կարծես արևը մայր էր մտնում սուրբ Սարգիս եկեղեցու մոտ, ձորապռնկին, այնտեղ, որտեղից քաղաքը կտրող մայր փողոցը իր երկար թափից գետնից կտրվում, թռչում-թառում է ուղիղ Հայկական պարի ուսերին։ Արևը մայր էր մտնում, այնինչ երկինքը բացվում էր, ամպերը Արաքսն ի վար հեռանում էին Արարատյան դաշտից, օդը զնգում էր — մայրամուտ չէր, այլ լուսաբաց, ինչ-որ շփոթ էր եղել մեր բաժին երկնքում՝ օրը նոր էր բացվելու, իսկ արևը նստել էր Հայկական պարին... Թաց էին ծառերը, թաց էր ասֆալտը, շենքերի պատերը,

մեքենաները, մարդիկ, ջուրը շունչ էր տվել ամենայն անշունչ բանի և եռջրհեղեղյան բեղուն խոնջանք էր տիրում երկրին։

Նա գնում էր ոտքով։ Խորտկարանից ելել, գնում էր կայտառ։ Անցնում էր կանգառ-կանգառի ետևից և ծուռ ժպտում էր ավտոբուսները խցկված մարդկանց։ Չգիտեր, չէր ուզում իմանալ՝ մինչև տուն՝ տասնհինգ կանգառ, գնալու է ոտքո՞վ, թե՞ ուղած տեղից կնստի մի բան։ Խղճում էր ավտոբուսները խցկված մարդկանց, բայց ինքը մտադիր չէր մինչև վերջ քայլել։ Մտադրությունը կլիներ նպատակ կամ բանի առօրյան կլիներ՝ որոշակի ժամի որոշակի տեղից որոշակի ժամի որոշակի տեղ... Այդ ամբողջ տենդը այսօրվա համար չէ։ Այսօր երանավետ հանգստի օրն է։ Հանգիստ, որ պարգևել է ինքը իրեն մինչև կեսգիշեր տուն հասնելու իր որոշումով, երանավետ այնքանով, որ չէր կարող, չէր էլ կամենա ամեն օր ունենալ, ամեն օր ունենալով՝ ընկնելու էր մի ուրիշ հոգեմաշ չափի մեջ։

Գնում էր ոտքով։ Սեպտեմբերի այդ երեկոն իջնում էր սահուն, փափուկ, անձայն՝ վայրէջքի ադեղ անող օդանավ, որ երևում է վերջալույսի ֆոնի վրա անսահման հեռվից։ Եվ նա չէր ուզում օրը վերջանա։ Այնքան չէր ուզում, որ կեսգիշերին դեռևս տան ճանապարհին էր։

«Արովյան պուրակ» չկպչող անունը վրան Պլանի գլխին, երթուղիների հանգուցակետում գարեջրի փայլատ կրպակը իսկը տեղին էր։ Ժամեր առաջ, երեկոյան կողմ, կրպակին մոտենալ չէր լինի։ Ծեր կինը չէր հասցնի գավաթները ողողել, գարեջուրը չէր հասցնի տաքանալ, վաճառողը չէր հասցնի թղթադրամները դարսել՝ ճմռթած կլոցկեր խալաթի գրպանները... Հիմա նույնիսկ կարելի էր կրպակին հենվել։ Եվ կասկածելի օդուց հետո երկու գավաթ գարեջուրը բալասան էր։

Երկու հոգի էլ ծարաված եկան։ Ասին՝ վարորդ են։ Ասին՝ գարաժից քաղաք կարել, գարեջրերը փորձելով եկել հասել են այստեղ՝ ամեն տեղ ջուր էր, սա լավ դուրս եկավ, ափսոս՝ խմելու տեղ չի մնացել։ Ուշ ժամի խմող տղամարդիկ՝ շուտ մտերմացան։ Նրանք այդ ժամին, այդ տեղի վրա համախոհ են, և նույնիսկ՝ ընկեր, փույթ չէ, թե վաղը, եթե

հանդիպեն, չճանաչի մեկը մյուսին։ Մեկը ասավ՝ նորքեցի են, փողոցը ասավ և տան համար, եթե նրան նեղացնող լինի, թող ծուի թեով իմաց անի՝ սելավի պես նորքից կիջնեն։ Մյուսը նայում էր մեկուսի կանգնած ջահել կնոջը։ Իրիկվա վրա փափկած կին էր։ Առավոտները նրանք ուրիշ են։ Ցերեկվա գուրը դիպվածի առաջ բաց է լինում և գեշ թե սիրուն բծախնդիր ու անառիկ են։ Բայց ժամ առ ժամ տեղի են տալիս, իրիկվա կողմ դառնում են զիջող, կեսգիշերին համաձայն են թեկուզ գեհենի, միայն սատանան տղամարդու կերպարանքով գա և տղամարդու բերնում սատանի, վատագույն դեպքում՝ շան լեղու լինի։

— Բան ասող եղավ՝ իմաց արա, սելավի պես տղերքով կիջնենք...

Ծարավները կոտրած տղերք՝ հեռանում էին խոտոր բելքով։ Միայնակ կինը գնացել էր՝ հետը տանելով կեսգիշերային կանգառների քաղցր խռովքը։ Փողոցների լույսերը հանգան։ Տաքսին անցավ՝ դանդաղ ընթացքով գայթակղելով։ Ինքնաթիռի լույսերի հետքից գնաց ձայնը։ Գործարաններից մեկը շառաչով արտաշնչեց ներսի շոգին։ Քաղաքն անցնում էր քնած ծերունու շնչառությանն։

Նա անվրդով էր, ինչպես անքամի գիշերվա ծառը։ Եթե չդար այսօրվա վերջին ավտոբուսը, առավոտվա առաջինը չէր կարող չգալ։

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է

Հեռախոսները երեք հատ են, և Անիկը գիտի, որ սպիտակ լեհականին ձեռք տալ չի կարելի։ Այդ բանը իմացավ վերջերս։ Մինչև իմանալը համոզված էր, որ սպիտակ լեհականը պարզապես խափան է։ Նախ՝ որ կոչնակն էր տարօրինակ մզզում, փոխանակ ընդհատումներով կանչեր, հետո էլ՝ վեց թվից հինգը չհավաքած՝ շխկոցով միանում էր,

կարծես թե մեկը, ձեռը լսափողին դրած, սպասում էր զանգի։ Անիկը մտածում էր, որ իր ընկած տեղը շտապ օգնության կամ հրշեջ ծառայության նման մի բան կլինի, բայց երբ իմացավ հեռախոսը «կառավարական» է, սաստիկ վախեցավ և այդ օրվանից զողալով է սրբում հեռախոսի փոշին։ Կարմիր հեռախոսին առհասարակ չի մոտենում. անտերը շատ է շքեղ, ասես խոսելու համար չի, այլ հետդ գիրեգման տանելու։ Անիկի հեռախոսը մոխրագույնն է, քաշում է համարը ու երևի թե զրուցակիցը ամեն անգամ հարցնում է՝ որտեղից է զանգում, Անիկը վրա է բերում.

— Խմբագրությունից։

Զրույցը գնա՞ց... Հարմար տեղավորվում է խմբագրի փափուկ, պտտվող աթոռին... բայց այդ գիրքին մնում է բոպեից ոչ ավելի։ Հետզհետե սահում է առաջ և արդեն բազկաթոռի պռնկին նստած, աչքը դռան կողմը և ամեն պահ վար ցատկելու պատրաստ, միաժամանակ սրբելով սեղանի փոշին, զրուցակցին հարցուփորձում է անցած մի օրում տեղի ունեցած-չունեցած բաներից։ Հինգ-տասը բոպեից զնում է լսափողը, ավլում է հատակը և անցնում հաջորդ սենյակը։ Այստեղ հեռախոսը մեկն է, աթոռը՝ չոր-սովորական, և Անիկը երկար է նստում լսափողը ականջին։ Այս մի զրուցակիցը կամ անհասկացողի մեկն է, որ չի հարցնում՝ որտեղից են զանգում, կամ գիտի որտեղից զանգելը ու էլի անհասկացող է, որովհետև խելքը գլխին ամեն մարդ, իմանա-չիմանա, կարդ է՝ հարցնում է՝ որտեղից են զանգում։ Սա չի հարցնում։ Ու քանի որ գլխի չի ընկնում, Անիկը մի միջոց գտնելով՝ ասում է.

— Խմբագրությունից եմ զանգում։

Իր սենյակում գրամեքենայի առաջ նստած Արամը, ինչքան էլ գործով տարված լինի, այս խոսքի վրա ժպտում, անցնում է առաջ։ Անիկի առտնին առօրյա շաղակրատանքի հեղեղը մտնում-անցնում է նրա լսողության միջով առանց հետք ու հետևանք և միայն այս դարձվածքը խփում է ականջին և աչքերը անձայն ծիծաղից տամկանում են։

Անիկը նորեկ է խմբագրությունում և նրա համար Արամի զբաղմունքը հանելուկ է։ Այն ժամանակամիջոցում, որ նա անց է կացնում հեռախոսազրույցներով, մասամբ էլ

ավելել-մաքրելով, երբ էլ որ կիսաբաց դռնից ներս նայելու լինի, Արամը կամ մեքենագրելիս է լինում կամ՝ պատուհանից դուրս նայելիս։ Արամի բացակա ժամանակ Անիկը նստել է գրամեքենայի առաջ, նույն ուղղությամբ նայել, բայց հինգ հարկանի շենքի խուլ կողապատից բացի բան չի տեսել, որին հնարավոր լիներ այդքան ուշադիր նայել։ Եթե տղամարդը անքիթք, լուռ պատին է նայում, կինը փշաքաղվելու իրավունք ունի։ Նաև խղճահարության իրավունք ունի, որովհետև գրամեքենայի առաջ նստած տղամարդ Անիկը չի տեսել։ Տղամարդու այդքան սեռոռն դեմք մեկ էլ գերեզմանոցում է տեսել։

— Արամ ջան, տասներեքերորդ աշխատավարձ կա՞,— հարցնում է Անիկը։

— Կա,— պատասխանում է գլուխը չբարձրացնելով։

— Ե՞րբ կտան։

— Ի՞նչը, Անիկ մայրիկ,— ու պելված նայում երեսիդ...— Ախ, հա՜... մեզ չի հասնում, չէ՛։— Անո՜ւշ, անջատված, իր անջատվածության վրա էլ ժպտալով՝ նայում է երեսիդ։ Մի ինչ-որ հնարով նայում է երեսիդ ու աչքերիդ չի նայում։ Ու ինքդ քեզ մեղավոր ես զգում երեխային քնից արթնացնողի պես։ Տանջված են, տխուր են, դեմքներին գույն չկա, աչքներից է երևում, որ սրտում ցավ ունեն, բայց չի էլ անցնի մաքներից, որ մարդ արարածը կողքինի հետ պիտի խոսի, իր նմանի առաջ սիրտը բաց անի։ Չեն անում։ Ամեն բան ներս են գցում, գցո՜ւմ... ու Անիկը որոշել է (ո՞վ գիտի մարդուս հետ վաղը ինչ կպատահի) մի առիթով Արամին իր տուն հաշի հրավիրի։

Բայց... Հաղար ներողություն, Անիկ մայրիկ, Արամը ճաշկերույթների ժամանակ չունի։ Համենայն դեպս, քանի դեռ բնակարան չունի, իրեն չի վերապահի անհոգ ապրել։ Երեխաների տեր է, աշխատավարձը՝ լավ գիտեք, տունը՝ վարձու մի սենյակ, գրելու հարմարություն չկա բոլորովին, և բանթողից հետո մնում է այստեղ, ուր տաք է, լուսավոր, գրասեղան, գրամեքենա, առանձնություն ունի,— մնում է երգիծական պատմվածքներ գրելու, ստացվում է շաբաթը երեք-չորս էջանոց տխուր մի պատմություն, ամիսը՝ չորսը, երկուսը մերժում են թերթերում ու ամսագրերում, բայց հա-

ղորդում են ռադիոյի առավոտյան «Ուրախ ալիք» հանդիսով, մեկը, ոնց էլ լինի, տպագրվում է իրենց ամսագրի վերջին՝ 44-րդ էջին մի տառատեսակով, որ կարդալու համար չէ, այլ տպագրած լինելու, իսկ վերջինը... մնում է դարերի համար։

Անիկը նայում է նրա տառապանքին և մտածում է, որ տղան մի օր կմեռնի։ Նայում է մտալար դեմքին, խուլ պատին հառած տենդոտ հայացքին և մտածում է, որ ավելի շուտ կիսելագարվի։ «Տեսնես, երեխեքը հորը նմա՞ն են»— մտածում է Անիկը։ Եվ ուզում է, որ երեխաները հորը շատ նման լինեն, որ նրանք շատ սիրեն իրենց խեղճ հորը, որ նա շատ սիրի երեխաներին, շատ ու շատ սիրի, ուրիշ ի՞նչ ուրախություն ունի այս երկնքի տակ, գրողը տանի։

Մի երկուշաբթի, բանթողից հետո, Անիկը մի փաթեթ դրեց Արամի սեղանին. բոխիի թթու էր լիտրանոց անոթի մեջ և կեսլիտրանոց շշով՝ թթի օղի։

Արամը քնքշանքով նայեց Անիկին. բառ չէր գտնում ասելու։ Շնորհակալություն ասելը տխմարություն թվաց այդ պահին։ Շատ է քաղաքավարի-անմտերմիկ։ Այդպես՝ եվրոպական վեպերից ծված պարոնիկներն են ասում՝ «Շնորհակալ եմ Ձեզանից, մայրիկ»։ Զգում ես, որ մայրերը կուրծք չեն տվել նրանց, այնքան որ խորթություն է փչում այդ տոնից։

Արամը խմել չէր ուզում, բայց չէր կարող Անիկին վիրավորել, Անիկը սովոր չէր խմելու, բայց չէր ուզում իր բերածը ողորմության նման լինի և խմեց մի կերպ կես բաժակ...

Արամը թող անուշ անի, ինքը կգնա իր գործին։

Այդ օրը հեռախոսով քիչ խոսեց. միտքը իր հյուրասիրության հետ էր։ Գործը վերջացրեց, տեսավ՝ շիշը դատարկ է։ Շիշը դատարկ էր, և Արամին ոչինչ չէր եղել։ Նույնիսկ գլուխը չէր դրել սեղանին։ Նստած էր սթափ ու ձիգ, և միայն աչքերն էին պայծառ։ Հայացքը էլի պատուհանից դուրս էր, էլի նույն շենքն էր, նույն կողապատը, բայց նրա դեմքը հիմա անճիգ էր և աչքերը զուլալ էին երկու ամսեկան իշուկի աչքերի նման։

Անիկը այդ պահին աղջկան հասկանում էր։

...Հիսուն-վաթսունական թվականներին գիպսից արձանիկներ էին ձուլում՝ շուն, կատու, աքլոր, ուրիշ շատ բաներ, վաճառում էին էժան կամ փոխանակում բնամթերքով, դրանք սնամեջ էին, խայտաբղետ ներկված և մեջքին, պարանոցին, կրծքի վրա մի տեղ ճեղք ունեին հինգ կոպեկանոցի տրամադծի չափով։ Պարզունակ այդ արձանիկների մեջ մեկը կար՝ բոլորակ դեմքով, մատաղաշ մի աղջիկ, ծամերը՝ սև, գլուխը՝ թեք, այտը՝ ձախ ափին։ Եվ հեզ մի ժպիտ կար դեմքին։

Ահա այդ դիրքով, անվրդով հեզությամբ, զուցե տարիների հետ քիչ խաթարված ժպիտով, ինչպես հիշողության շուլանն ընկած գիպսե արձանիկ, որի շուրթը առել է մի բանի,— այդպես, խմբագրության սենյակի բաղկաթոռին նստած աղջիկը նայում էր սիրած տղամարդուն։ Նա դուրս էր գալիս սենյակից, գնում էր տպարան, ժողովի, խմբագրում էր կամ ինքն էր գրում, շախմատ էր խաղում ընդմիջումներին... Այդ ողջ միջոցին աղջիկը նստած՝ նրան էր նայում, նրան սպասում, զբաղվում թերթ ու ամսագրերով և ինչ-որ ժամի ելնում-գնում էր։

Գալիս էր շաբաթը մեկ-երկու անգամ, նստում զրուցում էին, թե առանձին եղան, թե տղամարդը զբաղված չեղավ, և չէր ձանձրանում։ Չէր էլ ձանձրացնում։

— Հասմիկ, մի ժամով ժողովի գնամ,— թե ասեր՝ լավ էր։ Եվ գնում էր։ Ինչքա՞ն կտևի։ Ինչքան որ տևեց։ Ինչքա՞ն կտևի այս պատմությունը՝ դժվար է ասել։ Երբ կյանքից այսքան քիչ բան ես ուզում, մի կյանք կտևի։

Հին պատմություն է. սրտառուչ, տարտամ, մի քիչ դառնավուն... Մարմնական՝ ոչինչ։ Գրեթե ոչինչ։ Այդ պատճառով էլ այսքան տարիներ՝ ութ թե տասը տարի, շրջապատի վերաբերմունքը անփոփոխ նույնն է ամուսնացած տղամարդու և նրան սիրող աղջկա հանդեպ՝ հանդուրժողական, խղճահարության թեթև երանգով։

Անիկը դժվար հասկացավ նրանց։ Միառժամանակ խեթ նայեց, նայե՞ց... ու սրտաշարժվեց։ Սովորեց նրանց։ Հիմա, բանթողին, երբ նա գալիս է, եթե աղջիկը իր տեղում չեղավ, Անիկը քիչ հուսախաբվում է։

...Այնուամենայնիվ, մի կյանք չտեսեց այդ պատմությունը։ Աղջկան, գուցե, ավելին էր պետք, քան տղամարդու ներկայությունը, քան սրտաճմլիկ հավատարմությունը իր միակ սիրուն... Կամ գուցե տեսեց։ Գուցե տասը տարին մի կյանք սպառեց և այն, ինչ մնաց, ինչով ապրում է՝ սովն՞րն է կյանքի, ինչից կառչում են մի վերջին անգամ...

— Արամ, Հասմիկը ամուսնացե՞լ է։

— Ամուսնացել է։

— Բախտավոր լինի, մեղք էր, տղա ջան։

Կամ՝ ավելի կարճ հարց ու պատասխան։ Կցկտուր խոսքեր, զարտուղի մտքեր... Բայց նրա մասին։ Եվ միշտ Անիկի նախաձեռնությամբ։ Արամի դրդող ունկնդրությամբ... Մի բանում, սակայն, միաբան չէին։ Կինը ուզում էր խոսել ու լսել, իսկ տղամարդը լսել էր ուզում, ինքը բարձրաձայն ասելիք չուներ։ Եթե հանկարծ հրաշքով խոսեր, բթամիտի պես, կամ մատագարի, պիտի կրկներ՝ ո՞ւշ հանդիպեցին։ Եվ արդարանար պիտի ասելով՝ ուշացած սերը ուշ հղիության նման է լինում. լինում է քաղցր, լինում է դժվար, և անակնկալ լինելուց՝ նաև անհավանական, սիրտ մաշելու չափ տարակուսելի... Ինքն իրեն պիտի ձաղկեր ասելով՝ փոքրոգությունը սիրո համար հարմար դագաղ է. ուշ սեր չի լինում, վաղ ծերությունը իր անունն ունի։ Եվ հեշտ չէ թեպետ, բայց լավ է ապրել անունը տալով։

— Դու քո տունն ունես, մեղք էր, տղա ջան։

Անիկը, այսպես, մեկ-մեկ կխոսի աղջկա մասին։ Այնպես կխոսի, որ Արամը հոր մահը կհիշի, այն երկու օրը, երբ կարեկցաբար ուսերը գրկած՝ նրան դագաղից հեռացնում էին, սեղան նստեցնում, ասում էին՝

— Կեր։

— Պինդ կաց,— ասում էին։

— Դե, տղամարդ կաց, ի՞նչ ես փուլ գալիս,— կշտամբում էին։

ԿԻՐԱԿԻ

—Մարիամ...— կանչին պատասխան չկա։— Մարիա՞մ...— Ձայնը արձագանք չունի։— Մա-րի-ամ։— Ինքն իրեն ամփոփում է ձայնը։ Ոչ աղերսական է, որ գութ հարուցի, ոչ պահանջկոտ է, որ ջղայնացնի, ոչ էլ տիրական, որին տեր կանգնեն։ Սակավաջուր ցայտաղբյուրի շիթի է նման, որը երբեմն վեր է նետվում շունչը պահածի արտաշնչումով ու կրկին փլվում... «Ես... ես կա՞մ... ոնց որ թե՝ կամ»։

Խորտակարանի գեմուդիմաց գրանիտե ցայտաղբյուրներ կան՝ բարձր ու ցածր, ծխախոտի տուփ և լուցկու տուփ՝ իրար կողքի, ջուրը ցայտում է առանց ձայնի և թվում է, թե անհամ է ջուրը։ Համր աղբյուր է։ Մեծ քաղաքների ջրերն են համր։ Համր են անգամ շատրվանները։ Քսան-երեսուն քայլի վրա կարծես նայում ես հեռադիտակով։ Տարածության և լռության կապը խզվել է։ Դրանց միջև պատ է բարձրանում, ձայներից ծնված և նույն ձայները, ամեն առանձին, ինքնուրույն ձայն իր մեջ մեռցնող ազմուկի պատը, որ վեր է ելնում գիշերվա սառը, լռին ընդերքից, մարմին է առնում անմրմնելի, ուժգնանում է արեգակի բարձրանալու հետ և ցերեկը մատնում խլության։ Արևամուտից հետո փլվում է կամաց-կամաց, կեսգիշերին մոտ նորելուկ-մանուկ ձայներ են ծնվում դժոխային խլության կողից. ականջ շոյող զրնգոցով մի տեղ մուրճ են զարկում մետաղին, մի տեղ ճռինչով դարպաս են փակում՝ ասես ջուրակը մեկնանվագով խույս է տալիս նվագախմբի հախուռն աղմուկից, հարևան բակում, Արևելքի ծուլության խորքից, նարդու քարերը շրխկում են 500 վտ. լամպի լույսի տակ, և տաղավարից տղամարդկանց ձայներ են լսվում, քնկոտ ձայներ, քնափախ ձայներ, անկողիններին կարոտած ձայներ, անկողինների թշնամի ձայներ... և, վերջիվերջո, անքուն, անպատկառ ոմն լակոտի ավ-

տամբենայի վնգոցի ֆոնին վատ քուն մտնողի ցնցումներով լռությունը տիրող է դառնում,— հարաբերական այդ լռության մեջ պուրակներում, մայթերի վրա ցայտաղբյուրները ծկլթում են լեռան աղբյուրի շատ հեռավոր նմանողությամբ. պատից անդին երբեմն շենքը վերից վար կտրում, երկրի ընդերքն է վիժում շղթայազերծ կոյուղու ջուրը. երկաթուղային կայարանից բարձրախոսը քաղաքի վրա տարածում է քունը առած դիսպետչերի առույգ ձայնը՝ մտի չորրորդ գիծ, մտի չորրորդ գիծ... Դիմացի շենքի ութերորդ հարկում շենքի վերջին լույսը հանգավ, անջատիչի չխկոցը լսվեց և քունը փախավ լսողության անմեղ պատրանքից։

Եվ ամբողջ գիշեր մի կերպարանք՝ դեռահասի ստինքներով, աչքերիդ միջով սրտիդ խորքը նայող աչքերով, վտիտ, սիրելի անառակի կերպարանքը մերթ հստակվում է մտապատկերում, մերթ դիմագծերը աղավաղվում են, ինչպես ահրո գերազույն պահին, մերթ էլ դեմքը չքանում է մղձավանջային տեսիլքներում... բրդե ներքնակը լցվում է սագի փետուրով, փետուրները կենդանանում են, թևաբախում են շշշոցով, ներքնակը հանկարծ կտրվում է մահճակալից, խուճապահար եղած սագերի զժզժոց է լսվում մի տեղից՝ ներքնակի մե՞ջ են, թե՞ գազօջախի տապակոցում... Օ՜, տեր աստված, մարդ կարողանար աչքերը բացել...

— Մարիա՞մ...

«Ի՞նչ Մարիամ...»։

Կինը այդ պահին մտածում էր. տեսնես այս մե՞կն էլ մուրացող կդառնա, թե՞ ինչ-որ մի բան (թեկուզև մահը) կփրկի նրան։ Մի հիշողություն, որի մեջ ուժ կա, այդ տղամարդուց զգացած ուժի հիշողությունը մղկտում է այս մտքի վրա։

Բայց մուրացողության դուռը հասնելու օրինակներ Մարիամը գիտեր։ Խորտակարանում իր աշխատելու երեսուն տարում մի տասնյակ մարդ մուրացող դառավ։ Մուրացողների մի առանձին տեսակ են նրանք։ Նրանք չեն ուզում, բայց երբ տալիս են՝ դեմ չեն վերցնելուն։ Մանավանդ՝ քչով բավարարվում են։ Սկզբում նրանք խմում են բոլորի նման, հետո՝ ապառիկ, ապառիկ այնքա՜ն, որ գնալով ձրի է դառնում և փակում է ինքը իր ճամփան։ Հետո նրանց հյուրասիրում

են։ Կամ թե նստում են մի բաժակ գինով, նստում են ցամաքած բաժակի առաջ և միայն տեսքով ակնկալում են հյուրասիրություն... Նրանց ճամփում էին գաստրոնոմից օղի բերելու։ Բերած օղու առաջին բաժակը բերողինն էր։ Բացի դրանից, հնգանոցից 80 կոպեկը մնում էր իրենց։ Հետո՝ 50-ը, երբ չորսուքսանանոց օղին վերացավ։ Մանրադրամով գինի էին խմում՝ քաղցր գինի, որ խփի ձեռաց... Անկումից առաջ մանր-մունր ծառայություններ էին սրահում անում, ինչպես մոլեռանդ հավատացյալը իր եկեղեցում։ Դրա դիմաց Մարիամը նրանց հյուրասիրում էր։

Եվ վերջանում էր մուրացողությամբ։

Նա տեսել էր ինչպես են մարդիկ մուրացող դառնում. օրը-օրի, բաժակ առ բաժակ, կոպեկ առ կոպեկ... Տեսնելը, սակայն, հասկանալ չէ, նրանց հանդեպ զզվանք էր զգում, լավագույն դեպքում՝ արհամարհում էր։ Արհամարհանքից կարեկցանքին հանգելու համար և՛ շատ բան էր պետք և՛ շատ բան պետք չէր՝ մի սթափ հայացք, որ իր կյանքի ընթացքը չափեր։

...Ընդամենը երեսունմեկ տարի առաջ աղջկան պարտքով փող էր հարկավոր։ Հարկավոր էր մի տաք վերարկու, մի զույգ կոշիկ, որ անձրևաջուրը մեջը չլցվի, երկու ամսվա (ուշացրած) սենյակի վարձը, նաև հացի փող, որ հյուծվելուց անկողին չընկնի։ Շաբաթական մանր պարտքերը ջլատել էին նրա հոգին։ Այդ առօրյա նվաստացումից պրծնելու համար հարկավոր էր... վերարկուն հանած՝ ընդամենը մի զույգ կոշիկի, երկու ամսվա սենյակի վարձի, նաև հացի փող, որ ուզելու էր միանգամից և օտար մեկից։ Անպայման օտար մեկից, որովհետև ազգականները շռայլ են լինում ամենավերջում, նրանց շռայլությունը պետք է գալիս թաղման ծախսերին։

Ամեն երեկո հավանական պարտատերերի ցուցակ էր կազմում։ Գրում էր տաս-տասնհինգ անուն, հետո վերջից սկսում էր ջնջել... ջնջում էր ցուցակը ամբողջովին։ Այնուամենայնիվ, մի քանի անուն վերականգնում էր։ Եվ սպասում էր առավոտին, սպասում էր, որ պատահաբար նրանց հանդիպի։ Եվ չէր հանդիպում։ Երեկոյան նորացնում էր հին ցուցակը, սկսում էր վերջից ջնջել... պատահաբանություն-

ներն այնքան շատ էին՝ ջնջում էր ցուցակը վարից վեր։ Եվ ինչպես երեկ, մի քանի անուն վերականգնում էր։ Լավատեսությա՞ն, թե՞ հուսալքման պահերին էր դա։

Գիշերը հեշտ էր։ Անկարելի ցերեկվա դեմքը սքողված էր, կես քուն — կես արթուն թմբիրի մեջ աշխարհը թվում էր բարության հովիտ, այնպիսին, ինչպիսին 16 տարեկանում մեզ թվում է, թե կդարձնենք, եթե ամենքս մի քիչ ջանք թափենք, եթե ինքներս լինենք կարծիքից։

Հուսահատության շաբաթ եղավ, երբ հինգ հոգուց անհրաժեշտի կեսը խնդրեց՝ հինգն էլ մերժեցին։ Հետաձգելով, հուսադրելով, բացատրելով... Նրանք իրենք էլ, հասկանում ես, կարիքի մեջ են, նեղն են էս պահին։ Եվ Մարիամը հասկացավ նրանց. նրանց նեղությունը 50, 500, 5000 ռուբլի չունենալն էր, իրենը՝ 5։ Ցուրաքանչյուրը իր չափով նեղության մեջ է։

Աղջիկը դեպի կամուրջը գնաց։

Թանձր, կուրացնող ձյուն էր գալիս։ Սրը սառն էր, կոտինը սառն էր, ինքը սառն էր ոտից գլուխ... «տղամարդիկ»— մտքով անցավ։ Նրանք չէին մերժի։ Նրանք կտային անվերադարձ... անվերադարձ — որոշակի ակնկալիքով... Բայց այդ տարիքում, երբ սերը ամեն բացվող օրվա հետ սպասվում է, ամենաթանկը գրաված չեն գնում։ Գրավ չդրեց։ Դա ուրիշ կյանք էր։ Օտար կյանք էր։ Օտար, անհեթեթ, անբնական էր անցորդների աճապարանքը, լուսամուտներից շողացող լույսը, ազդագիրը, որ շորս օր հետո ապրողներին հրավիրում էր ֆիլհարմոնիայի փոքր դահլիճ այլերկրացի կիթառահարի մենահամերգին... Մթնում էր կամաց։ Տեսադաշտը նվազում էր, ավտոմեքենաները ձեռք էին բերել կենդանու բնազդ, բնությունը թելադրում էր հնազանդություն, ձուլում էր իրար գույն, ծավալ, շարժում, կամրջի ծայրը չէր երևում, բազրիքը բարձր էր, երևի՝ սառը, բազրիքին նստած ձյունը ձգվում էր՝ սպիտակ ու անկենդան գիծ, եթե ձեռք տար, բիծ էր մնալու, եթե մի կտրուկ շարժում աներ, մի տգեղ բան էր կատարվելու բնության մամլող անդորրության դեմ... Քայլում էր անկամ, ինչպես շնչում էր, կամքը մարմնից բաժանված էր և կյանքը շարժեր մի կտրուկ շարժման։ Ոչ կյանքը արժեր, ոչ մահը արժեր։ Թվում էր, թե

անխուսափելին պիտի կատարվի ինքն իրեն. երկինքը պիտի փաթիլ առ փաթիլ երկրին իջնի, մարմինը պիտի ընդարմանա, թերթերունքները սառցակալեն, շունչը պաղի և երանելի խավարը պատի իր բաժին կյանքին։

...Երբ հինգ հոգի նրան մերժեցին, աղջիկը ճաշակից նվաստացման ողջ դառնությունը։ Տարիներ հետո այդ հիշելով, հարյուրերորդ անգամ հիշելով, նա հասկացավ ինչպես են մարդիկ մուրացող դառնում։ Նրանք խնդրում են մեկից, երկուսից, նույնիսկ երրորդից, հետո դարձյալ այդ նույն երեքից, հետո խնդրում են նաև նրանցից, ովքեր պարզ չէ՝ կտա՞ն, թե չեն տա։ Ի վերջո, նրանք՝ ողորմողները-չողորմողները, դառնում են մի դեմք։ Առ-առավելն՝ երկու տարբեր դեմք. մեկը տալիս է, մյուսը չի տալիս։

Տղա ու աղջիկ մոտեցան ցայտաղբյուրներին, խոնարհվեցին շիթերի վրա, խմելը խաղ էր՝ այդ դիրքով երկար մնացին, գլուխները բարձրացրին միանգամից, պինդ համբուրվելուց կտրվելու պես և ծիծաղեցին... Եվ ահա ուժի հիշողությունը, որ խփեց մարմնին որպես թույլ հոսանք, անցավ հոգին և հետքը չկա։ Եվ չկա դեմքը։ Այս երկրորդ դեմքը՝ տարիների խարանը վրան, խանգարում է։ Ստացվում է մի դեմք, մի դիմակ։ Մի դիմակ և դեմք... «Բայց եթե նա իմ կողքին ապրեր...»— մտածեց կինը։ Եթե տղամարդն իր կողքին ապրեր, մտածում էր, ջահելությունը քիչ-քիչ կլուծվեր կնհիռների մեջ, և ծերությունը անակնկալ չէր խփի սրտին։ Եվ չէր լինի երկու տարբեր դեմք։ Կամ դեմք ու դիմակ։ Մեր ծնողները մեզ համար միշտ այնպես են եղել, ինչպես հիմա կան։ Լուսանկարները զժվացնում են մեզ, խառնում են իրար ներկա ու անցյալ, խաղ են խաղում մեր պարզունակ հոգիների հետ և մեզ թվում է՝ կյանքը անմիտ է, մահն անբնական... Ա՛խ, մեզ ստեղծող, թող այնպես լիներ, որ մարդ աշխարհ գար տկար ու զառամ, հետո շտկվեր աստիճանաբար, աստիճանաբար ոտները լցվեին կենարար հյութով, անոթները մաքրվեին տարի առ տարի, մաշկը գույն առներ ու զվարթանար, խելքը ծաղկեր մարմնին զուգահեռ, և այդպես գնար դեպի մանկություն... Ամենավերջում կաթի բույր գար թափանցիկ մաշկից, ուղեղը սրբվեր իմացածից, ծառը մնար ծառ, որ անուն չունի, քարը մնար քար, բամին փչեր ինքը

իր համար, ջուրը հոսեր ինքնանպատակ, բանականության վերջին ծվենը լուծվեր եթերում և մեր թիկունքին թևեր բուսնեին առանց ցավի։

Լռություն կա, որ ոչ մի բանից չի սասանվի, ոչ շոգեքարշի անդուր շչակից, ոչ անկած ջահի փշրվելուց, ոչ ավտոմեքենաների բախումը կանխող արգելակների մահասարսուռ ճռնչոցից, բայց կենտ մի բառը կհարամի ափսեդ ընկած զեռունի նման։ Մի բառը մարդուն կանի դիվահար... Երբ տղամարդը կրկնակի հազաց (այդպես հազում են հասարակաց մութ զուգարանի բաժանմունքներին մոտենալիս կամ երբ վեհերոտ պատրաստվում են խոսք բանալու), Մարիամը հապճեպ շիշը բացեց, տարավ դրեց սեղանի վրա և այդ ընթացքում, որը տևեց հագիվ մի րոպե, տաղնապի մեջ էր՝ հիմա կխոսի...

— Մարիամ, էն երեխին երազում տեսա։

«Մանուկ, ի՞ինչ ես ինձանից ուզում»... Իսկապես, ի՞նչ ես նրանից ուզում, ոչ տղեն ես դու, ոչ աղջիկն է նա, վաղուց կարդացած՝ քիչ հիշվող գիրք է. մի տղա ու մի աղջիկ են եղել, աղջիկը՝ սիրուն, տղեն՝ բոյով, տղեն ասել է՝ ուզո՞ւմ ես, Մարիամ, ինձ նման բոյով, քեզ նման սիրուն աղջիկ ունենանք... Աղջիկը սիրել ու ծիծաղել է։ Տղեն ասել է՝ եթե տղամարդը մի կնոջից ուզում է աղջիկ-երեխա ունենալ, դրանից վեր սեր չկա, Մարիամ... Աղջիկը ծիծաղել ու սիրել է... վաղուց կարդացած՝ քիչ հիշվող գիրք է... Հիմա եկել ու երեսուն տարվա բորբոսը կերած պատմությունը հետ ես թերթում... ու թերթերը մնում են ձեռիդ։ Դու գերեզմանից աճյունը հանում, մեկ էլ ես թաղում... Պատրանք չես թողնում անմահության...

Այդ տարի ձմեռը ո՞նց երկարեց... Ձյունը դառել էր աղքատին պատանք։ Կամրջի ծայրը չէր երևում, բազրիքը բարձր էր, երևի՝ սառը, կյանքի ու մահվան սահմանը չէր պատկերացրել, թե կլինի այդ աստիճան կոպիտ ու վանող, եթե իր մեջ կյանք չէր մնացել, եղածը մահ էր, եթե մահ էր, պիտի աճեր, ուշեր ինքն իր մեջ և թարախակալ վերքի նման անցավ բացվեր... Ձյունը գալիս էր մարմանդ ու թանձր, կարծես ձմեռը գարնան վրայով, ամռան վրայով, աշնան վրայով ձուլվելու էր եկող ձմռանը, և հորիզոնին հույսի մի

ափ պատուհան չկար։ Ինչ-որ մեկը բռնեց թևը ու կյանքը շարժեր մի կտրուկ շարժման։ Կարծես դա այն էր՝ անխուսափելին, որ կատարելու էր ինքը իրեն։ Զգուշորեն թևը քաշեցին և տեղի տվեց։ Ինքը մնաց, թևը տարան։ Վերարկուն հագից ելավ գնաց, ինքը մնաց կամրջի վրա՝ մատաղի գառ ձմռան ասածուն։

Ավտոմեքենան քաղաքից մի կերպ դուրս էր եկել և սլանում էր անհայտ ուղղությամբ։ Լույսը կորչում էր փաթիլների մեջ, ընթանում էին մութ բեմի վրա լուսարձակի կլոր շողքի մեջ պարավազք անող պարուհու նման, որը երբեմն թվում է թե դուրս կընկնի շողքից, գլուխը կտա մի պատի։ Ավտոմեքենան մոտենում ու չէր հասնում ձյան դորշ պատին, պատը փախչում էր հալածական, բայց մի ակնթարթ հնարավոր էր, որ անշարժանար։ Մի ակնթարթում կծեփվեին հողմապակուն ծեփվող-շպրտվող կաթիլի նման։

Տղամարդը կպել էր ղեկին, հայացքը մեխել էր ճանապարհին, ասես ոչ թե մեքենան էր ենթարկում իրեն, այլ ճանապարհի հաղիվ նշմարվող ժապավենը, որ գալար-գալար փռվում էր անիվների տակ՝ ավտոմեքենան որ կողմ էլ ծռեր։ Բայց թե՛ վարորդը, թե՛ ճանապարհը կհոգնեին։ Ճանապարհը միայն մի պահ չէր հասցնի ավտոմեքենայի ընթացքը բռնել... և առանց ջանքի, ինքը իրեն անխուսափելին կկատարվեր։ Բայց նա մենակ չէր։ Հուսահատությունը անբասիր է մենակության մեջ։ Հուսահատության մոայլ, սառցեղեն վսեմությունը հալչում էր կամաց ուրիշ մեկի շնչառությունից... Ծամերին նստած ձյունը ջուր դառավ, առաջին կաթիլը ընկավ ծոծրակին՝ ծոծրակը պաղ էր, ողնաշարի երկայնքով վազեց և մի ջղային հեկեկոց բռնեց նրա մարմինը, որը հանդարտվեց այն ժամանակ, երբ վերջին կաթիլ արցունքը քամեց։ Ավտոմեքենան քաղաք էր դառնում զգույշ ընթացքով։ Վարորդը ջարդված, բայց գոհ տեսք ուներ։ Նա հնարամիտ ու խիզախ մարդ էր։ Եվ հոգատար էր։ Համբերատար էր անհավատալի, բայց թե հետո ի՞նչ էր քաշելու՝ այդ չգիտեր։ Կամրջի վրա գտած մարմինը շնչի բերելը միայն սկիզբն էր։ Նա, ընտանիքի տեր լինելով, մի քանի ամիս հիվանդանոցից դեղատներ, դեղատներից հիվանդանոց ճանապարհները չափեց-չափչփեց, աղջկա համար նոր սեն-

յակ վարձեց, որ խոնավ չէր և առանձին ելումուտ ուներ, լավ վարձատրվող գործ գլուխ բերեց, նրա ընկճված մարմնին ու հոգուն կանացիությունն վերադարձնելու տանջանքը կրեց... և վարձատրվեց տարիներ տևած հավատարմությամբ։

Ձմեռն անցկացրեց հիվանդանոցում, գարունը «եղան լեզվի» նման նստեց վերքին, լուսամուտների վարագույրները արդեն քաշում էին արևի դեմ — մինչև նոր ձմեռ ահագին կյանք կար և Մարիամը վերստին կին էր։ Եվ երբ նա վերստին կին էր, անխուսափելին նոր կերպարանք առավ։ Ինքնաարդարացումը կամ հույսը այն էր, թե տղամարդուն վերադարձնելով իր գտած գանձը, ետ կստանա ինքը իրեն։ Անխուսափելին անկողինն էր, եթե շուտ մտներ, շուտ էլ կելներ... Բայց խրվեց մնաց։ Ուշ առավոտի անկողին եղավ, երբ ոչ կարգին կարողանում ես քնից արթնանալ, ոչ կարողանում ես նորից քուն մտնել։ Դա գերությո՞ւն էր՝ գերություն չէր։ Սիրո նման չէր։ Մարմինների ընտելություն էր, ամենավերջում՝ մարմնի պատիժ։

Հետո դու եկար, ու նա իմացավ ո՞նց են սրտով մարմինը սիրում։ Նա հասկացավ, թե ինչն է կանանց առնականության քարին ուխտ տանում։ Բայց ինքը իրեն չէր պատկանում։ Իր փրկված կյանքը սեփական աչքին քիչ արժեք ուներ, որ երախտագիտությունը ոտները կապեր, բայց թույլ էր կամքը։ Թե՞ մենակության պտուղն էր դառը։ Եվ նա ուրիշից ինը գիշեր իրեն գողացավ քո ոտքը բերեց և ինը օրը թագ ու պսակը եղավ իր կյանքի... Իսկ դու եկել ու երեսուն տարվա բորբոսը կերած պատմությունը թերթել ես տալիս... ու թերթերը մնում են ձեռիդ... Դու ինձանից խլում ես ուժի հիշողությունը, ոտնահարում ես թագ ու պսակի իմ ինը օրը աղետի նման գլխիս իջած քո ծերությունով ու իմ կյանքից ինձ բան չի մնում անառակությունից, կեղտից բացի...

Պատահեց, որ մի օր կեսօրին նա արթնացավ մինչև լույս տևած գինարբուքի սեղանի եզրին գլուխը դրած, մի քանի մարմին մեկնված էին որտեղ պատահի, որձկացել էին լվացարանում, թթված գինու, օղու, կոնյակի, մոխրամանների խառը հոտից նրա սիրտը բերանն էր հասնում,— և դա իր կյանքի խտացումն էր։ Այդ կյանքն սկսվեց արբունքի հաջորդ օրվա հեշտանքով, երբ թանձր է միտքդ, թանձրությունը

քաղցր է ինչպես սարքովի մեղր և անբանական զմայլանք կա ամեն ինչում... Հավատարմությունը ինչքան տեսական ու մոլեգին էր, ազատությունը բազմապատիկ սանձարձակ եղավ։ Այն ժամանակ կնոջը թվաց, որ եթե երկրորդ տղամարդը՝ իր կամեցածը, այդքան քաղցր է, երրորդը պիտի սիրո տոն լինի, չորրորդը պիտի... կամ հինգերորդը... Բայց հիմա գիտեր. ծնվում, մեռնում և միենուճարին հանդիպում են միայն մեկ անգամ։ Այլևս գիտեր, որ տղամարդը հազնելիք չէ՝ վրադ փորձես, այլաշխարհիկ պտուղ չէ, որի քաղցրն ու դառը համտեսով ջոկես։ Քաղցրը բախտն է։ Իսկ եթե երկուսն էլ մի հաշիվ են, կամ կորցել ես բերանիդ համը, կամ անհամությունը մեջդ է եղել։

Հեռամիջօրեին՝ ողնաշարը կոտրած սողուն, քարշ էր գալիս շոգի, փոշու մեջ ու չէր հասնում հանդրվանին։ Կինոթատրոնի շենքի ճակատի ջերմաչափը ցույց էր տալիս 37։ Ոչ ավելանում, ոչ պակասում էր... Անսպասելի մի բարալիկ քաշքաշամի ցայտաղբյուրներից դենը ծառացավ, ուսով հրեց մի տղամարդու, եղբևանու փոշին կուլ տվեց, պորտապարով արագ հասավ ցայտաղբյուրներին՝ ջրի շիթերը ցայլցըլտալով մի երկվայրկյան իրար առան, ապա սրընթաց ուղիղ դեպի դուռը եկավ, զարնվեց քիվին՝ երկու կես եղավ, վերին մասը համբարձվեց երկինք, ստորինը փուլ եկավ շեմին, և մի թույլ հոսանք վարագույրները տարուբերեց, մի բուռ փոշի շաղվեց հատակին, և լրագրի մի պատառ կպավ դռան մոտի սեղանի ոտին։

Հանքային ջրի բաժակը ձեռին՝ կինը սառել էր։ Հետո շունչը ետ բերեց բեկ-բեկ, ձեռքը արմունկից պոկվեց ընկավ վաճառասեղանին։

«Էդ նրանից է, որ հաճախորդ չունեմ,— մտածեց կինը։— Նրանից է, որ հաճախորդ չունեմ»։ Ոչ թե կրկնում էր միևնույն միտքը, այլ մի անգամ ձևակերպվածը երկարում-հոսում-շարունակվում էր, ինչպես լույսի շող՝ «Նրանից է, որ հաճախորդ չունեմ...»։

Մինչդեռ կիրակին կեսօրից հետո բնակարաններից դուրս շպրտեց ձանձրույթից մեռնող տղամարդկանց. նրանք քայլեցին փողոցներով, պուրակներում հապաղեցին, կինոթատրոնների կողքով անցան, թանգարանները շրջանցեցին,

մտան Մարիամի խորտկարանը, և կինը գտավ իր անելիքը, և շեղված օրը գլորվեց գնաց դեպի մայրամուտ։

Երեկոյան յոթից հետո թե՛ ձայներն էին խուլ ու խառնակ, թե՛ ծավալներն ու մակերեսներն էին նշմարվում աղոտ, ներդաշնակության գրեթե նման թմբիր էր բերել երեք շիշ գինին... և դեռահասի ստինքներով, աչքերիդ միջով սրտիդ խորքը նայող աչքերով վտիտ, սիրելի անառակի կերպարանքը հառել էր պատին, և սիրո շնչում տարրալուծված անձև շուրթերը ժամանակի խլության դեմ շշնջում էին նրա անունը վաղորդայնի առաջին ձայնի հստակությամբ։

ՉՈՐ ՕԳՈՍՏՈՍ

Եսթերը ամուսնուն ասում է.— Մի գնա։ Էսօր մի գնա,— ասում է Եսթերը։ Ձայնի մեջ խնդրանք կամ հորդոր չկա։ Ձայնը հույս չունի, որ կլսեն իրեն։ Եվ պատճառաբանություն չունի՝ ինչո՞ւ ամուսինը չգնա։ Եվ խոստում չունի՝ եթե չգնա՝ ի՞նչ, չգնա՝ ի՞նչ անի։ «Էսօր մի գնա»։ Աջ ոտը շեմից դուրս դրել, թիկնել է դռան շրջանակին, ձախը ոտնաչափ բարձր շեմափայտին է, և ծալված ծունկը անբնականորեն հարթ, ավարտուն է երևում։ Գլխից վեր շեմածածկ թիթեղի կեծությունը, դիմացը՝ անվրդով թիկունքը ամուսնու, իբր ստվերում կանգնած, իբր ամուսնուն կարևոր բան ունի ասելու,— նայում է ներփակ ու խեղդուկ բակին, կողքանց նայում է հարևան բակից վեր ձգվող բարդու կատարին և ինքն իրեն ասում է. «Իզուր էլ ասում եմ»։ Իզուր էլ ասում է։ Մեսրոպը կնոջից երկու քայլ առաջ, ծածկից դուրս և արևի տակ, կիրակին խմիչքով օծող, կիրակին հոշոտող տղամարդու կեցվածքով կանգնել ու նայում է սագերի պես ծորակը պաշարած երեխաների խաղին։ Մեսրոպը ծխելով սպասում է, թե երբ է տղամարդկանցից մեկնումեկը նարդին թեատակին տնից դուրս գալու։ Տղամարդկանց մնար, առավոտից սկսած

խաղը կիսատ չէին թողնի։ Միայն բարձրացող արևի շողը լիներ, էլի չէին թողնի։ Բայց կանանց ու երեխաների համար կանչերը նրանց, այնուամենայնիվ, տարան նախաճաշի։ Եվ կուշտ ու կուռ նախաճաշից հետո, կիրակնօրյա խորոված-ի կանխավայելքը սրտներում, օգոստոսի վերահաս միջօրեին տղամարդիկ քուն մտան։ Հիմա արթնանում են քնից՝ նարդու և թղթախաղի նորոգված մոլուցքով, թարմացած, առույգ, տղամարդավարի կազմ ու պատրաստ օրվա ամենահանդիսավոր մասին՝ քյաբաբ-խորոված-ով բակային խրախճանքի փորձությանը։

Ժամանակ առ ժամանակ կին ու աղջիկներից մեկնումեկը, երեխաներին ծորակից քշելով, դույլով ջուր առնում, շփում է իր շեմին։ Հողու մխիթարություն է, ոչինչ չի փոխվում, միայն ասֆալտից ելնող գոլորշին է նստում մարդուս շնչին։ Ասֆալտը եռում է, ինչպես եթե հենց նոր ծխացող խառնուրդը բեռնատարից թափած-տափանած լինեն։ Ասֆալտը փողոցից վիժել, ողողել է բակը, լցվել ամեն ծակ ու ծուկ, մնում է ներս խուժի տները, և կյանքը դառնա համատարած դժոխք։ «Էժան էր անտերը, անխնա փռեցին,— մտածում է Եսթերը։— Տղամարդու խելք՝ ցեխից պրծանք, կրակը ընկանք»։ Եսթերի հայացքը բարդու կատարին է։ Եսթերի մխիթարությունը Լուսավորչի քամին է։ Երբ բարձրանում է քամին, բարդին անձայն կեռանում է, կեռանում մինչև շտկում է իրանը, լսվում է սաղարթի սոսափը, բացվում է տերևների տակերևսը, և բարդու սաղարթը սպիտակում է՝ կրաչրում թաթախած ներկարարի վրձին։ Քամին բակ չի մտնում։ Գրեթե չի մտնում. փողոց ելնող քուչեն հազար կեռման ունի։ Բայց քամու հենց միայն գոյությունը թեկուզ վերևում, Եսթերի սրտին մխիթարություն է բերում։ Եվ նա արձակում է խալաթի վերին կոճակը, որը կրծքամիջին է և ստինքների ձգությունից միշտ թուլացած է լինում։

«Զորանաս»։ Շշունջը հասնում է Մեսրոպի ականջին։ Սովորության համաձայն Մեսրոպը չպիտի արձագանքի, բայց այնքան երկար է նայել բարձրահարկ շենքի պատշգամբին, որ պիտի ցույց տա, թե ինքը այստեղ է՝ իր կնոջ կողքին։

— Բան ասի՞ր,— Մեսրոպը շուռ չի գալիս։

— Ասում եմ՝ դժոխքից ինչո՞վ է լավը։

— Եկող ամառ քեզ ծովափ կտանեմ։

— Եղավ վեց տարի՝ ասում ես։— Եսթերի ձայնի մեջ հանդիմանություն չկա։ Ծովը նրա համար այնքան է հեռու, ինչքան Կանադայում ապրող քեռին. երկուսին էլ լուսանկարով է տեսել։ «Քեռուդ նամակ չգրեցիր»— ամեն անգամ, աչքը հեռուստացույցին դրած լուսանկարին առնելիս, ասում է Մեսրոպը։ Քեռին այդ լուսանկարում կուշտ-բախտավոր տեսք ունի. աջ ձեռքը շքեղ ավտոմեքենայի վրա է, ձախը՝ փառավոր կանթած, ինչպես բանակային տղերքն են ձեռքը մտերիմ ընկերոջ ուսին դրած՝ տնեցիների համար լուսանկարվում, և ժպտում է քեռին բարեկեցիկ, ճերմակ ժպիտով։ Բայց Եսթերը չի հավատում նրա բախտավորությանը։ Կեցվածքում, թե դեմքին մի տեղ, գուցե աչքերի մեջ, գուցե բերանի անկյուններում՝ տխրության մի ծվեն կա։ Կա, կամ Եսթերը վերագրում է քեռուն։ Միգուցե վերագրում է տարակուսանքից. մարդուս միակ քեռին առանց մի հատիկ հարազատի ինչպե՞ս կարող է երջանիկ լինել։ Միգուցե իսկապես կա, որովհետև հայրենիքից հեռու մարդ չի կարող այդքան երջանիկ լինել...

— Հայը կարող է,— ասում է Մեսրոպը։— Հազար տարվա մեջ հայը դրան սովորել է։ Ուրիշը չէր կարենա։ Ուրիշը հայրենիքի կարոտից էլի կապիկ կդառնար... Դու քեռուդ նամակ գրի, քեռուդ որ նամակ գրես, մեզ ավտո կուղարկի,— իբր կատակ է անում։ Իբր ինքն իրեն հեգնում՝ ժպտում է բերանի անկյունով։ Բայց ժպիտը խեղճի ժպիտ է ստացվում։ Բայց լրջությունը, հույսը, թե օտար մի մարդ, հեռու, օտար մի երկրից օրերից մի օր ավտոմեքենա կուղարկի օտար մեկին, աչքերի մեջ է։

— Ինչի՞ս քեռին է,— ասում է Եսթերը։— Կանադայից էստեղ՝ ի՞նչ քեռի,— տրտմում է Եսթերը։— Արյունը էսքան որ ձգվեց, մի տեղ չէ՝ մի տեղ կկտրի, չէ՞, Մեսրոպ։— Եվ հեկեկանքի պես անսպասելի խղճմտանքով է լցվում ամուսնու հանդեպ, նրա միամիտ հույսի հանդեպ և ինքն էլ ուզում է հավատալ, որ օտար մի մարդ, հեռու, օտար մի երկրից օրերից մի օր ավտոմեքենա կուղարկի օտար մեկին։

Լուսավորչի քամին՝ Եսթերի մխիթարությունը, դեռևս ինչ-որ տեղ, ինչ-որ լեռան փեշին ուշաթափ է օգոստոսի

տապից։ Ուր որ է կրարձրանա գետնից, կրարձրանա՝ պաղ, զնգուն, մաքուր, փորձի համար կսահի ծաղկած լանջով՝ ծաղկանց ճկվելը դուր կգա, մի ալիք էլ կանցնի լանջով՝ խոտուծաղկի հնազանդ պառկելը դուր կգա, կգա երրորդ ալիքով, չորրորդով սրընթաց կգա, ցողունների ճկուն մեջքից կթռչի լեռան թամբին, թամբից, հակառակ լանջն ի վար, կսուրա քաղաք... Եվ քաղաքի շնչին զարկվելով՝ կկոտրվի քամին։ Եվ քաղաքի փողոցներում փեշը գլուխը գցած կթափառի տաք, փոշեթաթախ, զզվելի մի քամի։

Չկա անդամ այդ զզվելի քամին։

Բայց Եսթերի կոճակը շեմի խսիրին է։ Կուզենար՝ կոճակը ընկներ ու պայթեր, իսկ կոճակը խսիրին ընկավ։ Իսկ Մեսրոպի հայացքը՝ իր երեխաների խաղին, բայց հինգերորդ հարկի պատշգամբին է։ Մեսրոպը երևակայում է, թե պատշգամբին լվացք փռող կինը իր վրայից է հատ-հատ շորերը հանում, անցկացնում լվացքի պարանին։ Եվ լվացքին վերջ չկա, վերջ չկա լվացքի պարանին... Ի՞նչ արած, այդքան հեռավորության վրա տղամարդուն միայն այդ է մնում, որ կինը իր վրայից շորերը անվերջ հանի։

Մեսրոպը նրան այնքան է ճանաչում, ինչքան շենքի մյուս բնակիչներին, ինչքան Մեսրոպի հարևաններն են ճանաչում շենքի բնակիչներին։ Տասնմեկ հարկանի է շենքը, բարձրացավ աչքի առաջ, կահույքի արհեստանոցի տեղում և բակը ապահով քողարկեց փողոցի կողմից։ Կանցնի այսպես հարյուր տարի, և հնօրյա, անբարեկարգ թաղը սպի չի լինի քաղաքի ճարտարապետական դեմքին։

Շենքը բնակեցվեց միանգամից, մետրոյի գնացքի լցվելու նման, և դրա մեջ անբնական բան կար։ Մի քանի հարյուր մարդ միանգամից դարձան բակում ապրողների հարևանը։ Սակայն բնազդը ասում էր, որ նրանք իրենց հարևան չեն լինի։ Իսկապես, նորաբնակները եկան խուռներամ, եկան ժխորով, տեղավորվեցին՝ բակի անդորրը խանգարելով, բայց տեղավորվելուց հետո փակեցին դուռ ու լուսամուտ, հնարավոր ամեն բան փակեցին, ողորմելի դիտանցքներ թողնելով փակ դռների վրա, այն էլ՝ ավելի փակվելու համար... Եվ բաղմահարկը նման էր քաղաքում բուն դրած օտար կա-

յաղորի միջնաբերդի. ապրում էր իր կյանքով՝ անտես, անքննելի։

Եվ միայն լավ եղանակներին, երբ արևը անցնում է շենքի ճակատի կողմը, բնակիչները դուրս են թափվում պատշգամբները և նայում են ցած, ինչպես մտացրիվ մարդիկ են նայում մրջնանոցին. վերից վար նայողի վիճակ, որ նրանց մարդկային նկարագրի հետ առնչություն չունի։

Այս հայացքների տակ ապրելուն էլ մարդիկ սովորեցին, և բակի ներփակ կյանքը կարծես արտաքնապես չփոխվեց։ Բակում ապրողները միայն երեկոյան արևից զրկվեցին։ Եվ մեկ էլ աղմուկն էր շատ։ Եվ, իհարկե, աղմուկը շենքից էր։ «Շենքից կլինի»—ասին միաբերան, երբ թաղայինը եկել էր պարզելու, թե ով է այն ստահակը, որ քանիերորդ անգամ կտրում տանում է տաբասաֆոնի փողը։ «Շենքից է»,— ասում էին երգ ու երաժշտության ձայն լսելիս, ասում էին մի հանգով, իբր ուրախությունը նրանք հաստատ անհամության կվերածեն։ «Շենքից է»— ասում էին անկարեկից՝ սգո մեղեդու ձայն առնելիս, ասես դա մարդկանց կացարան չէր, այլ Սողոմ, որտեղից ամեն բան սպասելի է, նույնիսկ երկու հուղարկավորություն միանգամից։

Բայց ինչ էլ լիներ, շենքը քաշում էր։ Համենայն դեպս նրանց, ովքեր վարից վեր նայելը նվաստացուցիչ չէին համարում, ոչ էլ վերից վար նայելը՝ բախտավորություն։ Շենքը ձգում էր նավահանգիստ մտած օտար նավի նման, ձգում էր խորհրդավորությունը փակ դռների ետևում խմորվող կյանքի, առավել խորհրդավոր դարձող այն բանից, որ այդ կյանքը ծիկրակում էր վարագույրների ետևից, այդ կյանքի ծվենները թրթռում էին լվացքի պարաններին, այդ կյանքը լույս էր տալիս պատշգամբներին սուրճ խմող կանանց մերկ սրունքներից... Եվ թվում էր, թե այնտեղ, քեզանից տասը քայլ հեռու, նույնիսկ ամուսիններն են իրար հետ երջանիկ։

Այնտեղ՝ հինգերորդ հարկի պատշգամբում, իր հագից շորերը հանող, լվացքի պարանին անցկացնող կինը, թիկունքում՝ իր սեփական կինը, սեփական կնոջ ջղային շնչառությունը,— Մեսրոպը կանգնել ու հետ չի նայում։ Գիտի, որ կոճակը էլի խսիրին է, լավ գիտի կիսաբաց կրծքերի տեղը, բայց պատշգամբի կինը հագից շորերը հանում, փռում է

լվացքի պարանին։ Մեսրոպը մինչև վերջ մերկացնել չի ուզում, վերջին շորի վրա շունչը ետ է բերում և սկսում է նորից։ Եվ շորերին վերջ չկա, վերջ չկա լվացքի պարանին...

Պատշգամբի կինը վեջինը հանել, վերջինը ձեռքին՝ անձնատուր լինելու չափ սպիտակ, գալիս է լվացքի պարանով։ Գալիս է անփույթ, ճոճուն, կանացի... Իսկ պարանի ծայրը Մեսրոպի վզին է կապած։

Մեսրոպը շրջվում ու խոպոտ նետում է.

— Կոճակդ պոկվեց։

— Վաղուց է պոկվել։— Եսթերը չի փոխել դիրքը, միայն հայացքն է հինգերորդ հարկի պատշգամբից փախցրել բարդու կատարին։

— Կկորչի։

— Կոճակը նրա համար է, որ ընկնի-կորչի։— Ձանձրույթից Եսթերը համաձայն է մի երկու ապտակի։ Գոնե մի բան կփոխվի։ Գոնե ամուսնուց կխռովի։ Չի ասի՝ էսօր մի գնա։ Թող գնա իր համար խաղա, աչքը պատշգամբներին՝ խաղա։ Խաղա այնքան, մինչև սև ու սպիտակ խաղաքարերը խառնվեն շաղված աչքերի առաջ։ Եսթերի խիղճն էլ չի տանջի ամուսնուն դավաճանելու համար։

Եսթերը քմայքոտ, խոովկան աղջնակի պես կտրուկ շուռ է գալիս, դուռ-դռան հետևից շրխկացնելով հասնում է խորքի սենյակ, վարագույրները ետ է շպրտում պատուհանից, բաղկաթոռը քաշում պատուհանի մոտ, աթոռը՝ բաղկաթոռի, ընկնում է աթոռի մեջ, ոտքերը դնում է բաղկաթոռից բարձր աթոռին, այնպես, որ սենյակի կիսամութում սպիտակ ագռերը դրսից երևան, իսկ ինքը չերևա, ինքը բոլորովին չերևա... և այդպես նայում է իր պատշգամբին։ Պատշգամբը երկրորդ հարկինն է, ուղիղ Եսթերի պատուհանի դիմաց ու մոտիկ, այնքան, որ մնացած պատշգամբները տեսադաշտում չեն, այնքան մոտ, որ Եսթերը չի համարձակվում բացահայտ նայի, նայում է վարագույրի փեշերը երեսին պահած, բաղկաթոռի թիկնակին հետ ընկած և կիսախուփ կոպերի տակից։ Այսպես՝ դավաճանում է ամուսնուն։ Այսպես նայում է ուսանող պատանուն։ Գուցե ուսանող, գուցե զորակոչի սպասումից ձանձրացող մեկը, գուցե և գիշերվա գող ու ավազակ... բայց՝ սիրուն։ Պառկել է

ճոճաթոռին, գոտկից վեր՝ մերկ ու պիրկ, երբ սենյակ մըտնելիս մատները ծոծրակին ագուցած՝ ձգվում ու աջուձախ ջարդում է ողնաշարը, մեջքը բարակ և ուժեղ է, ինչպես իրանը ջահել վագրի։ Հիմա, ձեռքերը գլխատակին, ինքն իրեն ճոճելով նիրհում է երևի։ Եսթերի կողմը չի նայում։ Չնկատելու տալ չի կարող։ Եթե տղամարդը կնոջ մի տեղին նայում է, նայում է կնոջ բաց տեղին, հարյուր մարդու մեջ լինի, հարյուր քայլի վրա լինի՝ կինը զգում է, որ իրեն են նայում։ Երբ տղան այսպես կիսապառկած, գլուխը թեք և բաց դիրքը բերանբսիվայր փորին՝ նայում է Եսթերի պատուհանին, Եսթերը սարսում է մի պահ և ծնկները հանկարծ թուլանում են։ Եվ փակում է կոպերը, հազիվ ընդդիմանում է ճոնների զողին, ոտքերը աթոռից վար առնելու բնազդին ու ձգված-լարված, ինչպես ոտքերը եռման ջուրը գնող մոլագար մեկը, ինչպես օտար անկողնում օտար տղամարդու սպասող մեկը՝ սպասում է ինչ-որ բանի։ Լարումը գնալով վերանում է, զգայարանները թմրում-խլանում են, շնչառությունը դառնում է հանդարտ, անլսելի, Եսթերը վերանում է ինքն իրենից կամ թե սուզվում ինքն իր մեջ, ուր այլևս չկա պատշգամբի պատանին, ուր չկա ոչինչ և դրսի ձայները ձայներ չեն, այլ պղպջակների անձայն պայթյուն ջրի մակերևույթին, այլ միայն ձայնի հիշողություն,— և այստեղ... Նա տեսնում է իր երեխային՝ հեղհեղուկ, վերացական գիմագծերով, վերացական-հրեշտակի կերպարանքով մի մանուկ, իսկ մանկան մոտ, շուրջը ինչ-որ տեղ հածող, տեսնում է իր տղամարդուն, նրան, թեկուզև միակին աշխարհում, որը չի հավատա ոչ մի բանի, բացի տղամարդուց, չի հավատա կնոջ ամլությանը և Եսթերի պես կհավատա տղամարդուն։ Նա գեղեցիկ է, առնական, կապույտ աչքերի շամփրող հայացքով, ինչ-որ բանով նման պատշգամբի պատանուն, ինչ-որ տեղ՝ նաև ամուսնուն... Ինչ-որ տեղ նաև ամուսնուն, որովհետև Եսթերը հավատում է պահին, այն եղակի պահին, երբ քարն անգամ կպտղավորվի։ Եսթերը այնպես է հավատում պահին, որ Մեսրոպը երբեմն փշաքաղվում է նրա կանացի էության պոռթկումից։ Մեսրոպը փշաքաղվում է, որովհետև չգիտի ինչից են կանայք ցնորվում։ Իսկ կինը, հետո, երանելի մի թմրության մեջ ձեռ-

քերը դնում է իր մեղկացած փորին և, ինչպես ինքնաբեղմնավորման սարսուռով անշարժացած ծաղիկ, չի շնչում — շնչում է կամաց, ներշնչանքով, թվում է՝ եթե այդպես երկար մնա, եթե շատ երկար կարողանա շնչել — չշնչել կամաց, ներշնչումով, իր բացված մաշկի ամեն բջիջով, այդժամ ներս կառնի կյանքի առաջին հյուլեն և այդ պահը ինքը պիտի որ զգա, չի կարող չզգալ այդ պահը։ Հետո, օրեր շարունակ, կյանքով լցվելու սպասումի մեջ, ամեն գլխապտույտից գլխապտույտ երջանիկ, ամեն տկարություն ավետիս ընդունող, ապրում է մի ուրիշ աշխարհում, քայլում է լուսնոտի նման, քնում է երեխայի պես՝ քնել-արթնանալուց հետո լինելիք հրաշքի հավատով... Ու մեկ էլ սթափվում է պահը կորցնելու սարսափից։ Եվ պաղ ու տաք օրերի վայրիվերո հերթագայումից գլուխը կորցրած Մեսրոպը կնոջ անկոտրում հավատի գիշերներին մտածում է, որ կանայք այդպես են միայն ցնորվում։ Նա կնոջ հավանական խելագարության դեմ կենտ մի ճար գիտի՝ մանկատնից բերեն խոշոր աչքերով, մի լավ, մի առողջ երեխա։ Բայց Եսթերը խուլ է, ինչպես ինքնաբեղմնավորման սարսուռով անշարժացած ծաղիկ։ Եսթերին, Մեսրոպ, հարկավոր չէ ուրիշի երեխա, նրան անմահություն է պետք կամ անմահության պատրանք։ Եսթերը չի ուզում ինքն իրենով վերջանա։ Եսթերը չի ուզում մահանա։ Այս աշխարհում, Մեսրոպ, նրան հարկավոր է ընդամենը անմահության պատրանք։

Իսկ Մեսրոպը չի մնում տանը։ Չի հասկանում, որ իր այրական ներկայությունը Եսթերի մեջ պետք է մնա անբացակա։ Չի հասկանում կամ արդեն չի հավատում, որ ինչ-որ բան կփոխվի և Եսթերին իր հույսի հետ թողնում է մենակ։ Այսպես չհավատալով էլ կգնա։ Այսպես, ինչպես տղամարդկանց շրջապատ է գնում, ինչպես գնում է խմելու ու խաղի, կամաց-կամաց կգնա տնից՝ իր երեխաներին ուրիշ կանանց մեջ գտնելու։ Ու երևի թե ճիշտը դա կլինի։ Ճիշտը դա կլինի, որ Եսթերը մնա մենակ, մնա այն միակ տղամարդու հույսին, նրա գալուն կամ կանչին, մնա այն միակ հույսով, որ նրան իր մոտ բերող մի ուժ, մի աստված, այս մեկից անկախ կարեկից մի աստված պիտի որ կյանքում լինի...

Վարորդի միայն աչն է ղեկին, թույլ, արմունկից ծալված, թվում է վարելու հետ առնչություն չունի, այլ դրված է հենց այնպես, որովհետև ավելի հարմար տեղ չկա դնելու։ Զանձրույթից, թե ղեկին շնիրհելու համար նա սուլում է։ Սուլում է վայրիվերո, մեղեդիների շփոթով, մեղեդուց մեղեդի թռչելով, անհարկի ղլելով և անսպասելի մարումներով, բայց և զարմանալի միալար ու տաղտկալի։ Այդպես՝ ծաղկից ծաղիկ թռչող մեղվի ընդհատուն բզզոցն է լսվում հուլիսի միջօրեին։

Կինը հանել է գլուխը պատուհանից, և աչքերը խուփ են։ Սարահարթի տաք օդը փչում է դեմքին։ Դեմքը՝ նիհարոտ, թեժաթուխ թոնրահացի գույնի, անկենդան է, ինչպես խցիկի հողմապակին։ Կիզող արևի տակ, բեռան տակ, շարժիչի սրտամաշ ողբով բեռնատարը սողում է վերելքին։ Սողում է մեղրաջրում խրված ճանճի օրհասական ճիգով, և կակղած ասֆալտի ու դողերի շփման ձայնը քաղաքի ձայներից հոգնած կնոջ ականջին հնչում է իբրև մանկուց հարազատ նվագ՝ ճռեկների շնչահեղձ երգը՝ երաշտից մրկված ամռան դաշտերում։

Ժամ առաջ է բեռնատարը դուրս եկել քաղաքից։ Այդ մի ժամվա ճանապարհը փախուստ էր Արարատյան դաշտից, իր ասֆալտով տապակվող քաղաքից, որի կպչուն շունչը՝ հալ ընկած ձյութ, դուրս է հորդում խճուղիներով, և դրանից կարծես փրկություն չկա։

Փրկությունը հորիզոնի մոխրագույն մշուշներում ուրվագծվող լեռնաշղթայից անդին և հուսահատվելու չափ հեռու լեռնանցքն է։

— Ես քեզ ռեստորան կտանեմ,— խոստացավ վարորդը, երբ լեռան թամբը անցան։

«Ուրախությունդ մեռնի»— մտքում ասաց կինը։ Սարերի հովից սթափված ամուսնու ոգևորությունը նրան չէր դիպել։ Ամուսնու խոստումը անգամ փուչ խոսքի արժեք չուներ, քանի դեռ մի կասկած նրա հոգու հանգիստը առել էր. որ-

տե՞ղ է ամուսինը անցած երեք գիշերը եղել։ Արդյո՞ք բաղայում է եղել։ Ճի՞շտ է, որ երեք օր հերթ է կանգնել գերան բարձելու համար... Կասկածելը ժամանակավոր սփոփանք էր, նրա պատիկ հույսն էր, թե կարող է, այնուամենայնիվ, ամուսինը բաղայում եղած լինել։ Իրականում նա կասկած չուներ. անցած երեք օրը ամուսինը ուրիշի հետ է գիշերել։ Իսկ ինքը, միամիտ, հավատի վերջին ծվենով հուսացել էր, որ ամուսինը այս անգամ չի գնա, մարդ կլինի՝ կնոջ հետ քաղաք գալով, նրան անպատիվ չի անի։ Քաղաքի ճանապարհին մտածել էր. եթե մտքին շնություն լիներ, կնոջը հետը չէր տանի։ Ամուսնու աղգականի տանը, ուր երեք օր մնացել էր, մտածում էր, թե այդպիսի ստորություն ամուսինը երևի թե չանի։ Խանութներում հերթի կանգնած, երեխաների համար շորուկոշիկ առնելիս մտածում էր. «Գոնե էս անգամ չգնա, գոնե էս անգամ չանի»։ Հիմա, վերադարձի ճանապարհին, խռոված, ասես ոչ թե կին լինի, որ կարող է խանդել, այլ հորից նեղացած աղջիկ-երեխա, նա տրտմորեն մտածում է. «Գոնե էս անգամ չգնար, կնոջը առաջին անգամ քաղաք էր բերել, քաղաքը տեսած չկար... Մարդ լիներ, կնոջը օտարի դռանը թողած՝ չգնար հերթ կանգներ ՆՐԱ դռանը...»։

«Մեռնի տղամարդկանց սիրտը,— հայացքը լանջն ի վեր արածող նախրին՝ մտածում է կինը,— ի՞նչ սրտով են հերթ կանգնում... Ի՞նչ ախորժակով են մեկի թերմացքը մեկելը ուտում, իրար հարու տալիս, իրար կատար ծակում՝ ամեն ձեռքի տակ ճկռող վառեկի համար»...

Նրանցից մեկն էլ Օֆիկն էր՝ Գոհարի երիտասարդ օրերի անպատվությունը։ Օֆիկի տունը գետահովտի վարորդների կարճատև հանգրվանն էր, ճանապարհամերձ ճաշարանի կամ բեռնաթափման կայանի նման մի բան։ Սիրո բեռով գալիս և բեռնաթափ գնում էին։ Եվ Օֆիկի շեմին, նրա մաշված շեմին, մրջնանոցի իրարանցումով ճակատ ճակատի գալիս և իրար ճանապարհ էին տալիս։ Այսպես՝ օրնիբուն, այսպես՝ տարիներով, մեկմեկուց չամաչելով և մեկմեկու փոխարինելով, մարդկանց աչքի առաջ և մարդկանցից չա-

մաչելով՝ գնում էին ու գալիս... Հներին ցիցկատար աքլորներ էին փոխարինելու գալիս...

Բայց նրանցից մեկը (և դա Գոհարի ամուսինն էր) անփոփոխ մնաց։

Անհասկանալի էր, մեռնելու չափ անհասկանալի էր, և Գոհարը երբեք հասկանալ չկարողացավ, թե աստծո շոռոտի վրա ամուսնու սիրտը ո՞նց տաքացավ։ Չհասկացավ, այդ ինչպե՞ս եղավ, որ նա, մի տղամարդ, որ կյանքում չթողեց կինը վրան մի կաթիլ օծանելիք ցանի, հանկարծ քիթուբերանը լղոզած անառակին կուլ գնաց։ Կնոջը խանձարուրների լաթերով խճճեց, իսկ ինքը հազար մաղի հաց կերած չբերի հետ գնաց։ Չհասկացավ՝ այդ ինչ զորավոր կախարդանք էր, որ երբ նա, գյուղից, գյուղի տղամարդկանցից կուշտ՝ թողեց ու քաղաք գնաց, Գոհարի ամուսինը հետևից գնաց...

Ու ամիսը մեկ գնում էր։ Գնալիս՝ մի քանի օրով էր գնում։ «Ապրանք բերելու»— ասում էր։ Զյուն-ձմեռ չէր նայում՝ գնում էր, լեռնանցքը՝ մահվան ճամփա, գյուղի վարորդներին օձով ծեծեիր, ոտքները դուրս չէին դնի շեմից, իսկ սա գնում էր... Տղամարդ էր, պիտի ճանապարհ գնար՝ Գոհարը հասկանում էր։ Ու եթե տղամարդը դուրսը, ճանապարհին է, նրա սրտում մեղքի դուռը կրնկի վրա բաց է՝ գիտեր, ընդունում էր։ Բայց ցավը այն էր... Եթե նա, ում մոտ ամուսինը գնում էր, աշխարհի անառակը չլիներ, գուցե թե Գոհարը ամուսնուն հասկանար։ Եթե Գոհարը կույր լիներ, նրան տեսած չլիներ, եթե միայն լսելով իմանար, եթե նա երևելի գեղեցկության տեր լիներ, եթե մի քիչ թեկուզ Գոհարից լավը լիներ... այդ էլ չէ՝ եթե ամուսնունը միայն լիներ, ոչ թե բովանդակ աշխարհինը,— միգուցե Գոհարը ամուսնուն ներեր։ Բայց չէր հասկանում և ամուսնուն չէր ներում։ Իրեն էլ չէր ներում, որ այդ անպատվությունը, ինչի մասին աշխարհը գիտեր, հնազանդ տանում էր, դեպքից դեպք ձայնը բարձրացնելուց և վերջում հուսահատ հեկեկալուց բացի՝ ոչինչ չէր անում։ Այդ էլ՝ իբր ըմբոստանալը, երեխաների մեծանալու հետ հաղվադեպ էր դառնում։ «Հերն էլ անիծած,— մտածում էր,— երկուսն էլ այլանդակ, իրար գտել են»։ Սրանով էր սիրտը փոքր-ինչ թեթևանում, երբ իր անպատվության մասին մտածելու ժամանակ ունենում էր։

Մտածելու ժամանակ, իհարկե, լինում էր։ Բայց ի՞նչ օգուտ մտածելուց։ Եվ Գոհարի միտքը, խոհեմ իշուկի բնազդով, երբ հանկարծ սովոր ճամփից շեղվում էր, վերստին գտնում էր իր ճամփան, ընկնում էր առօրյա հոգսերի տրորված արահետը։ «Հոգին հավիտենական տանջանքի համար չէ,— հուշում էր խոհեմ կենդանական բնազդը,— այլ միայն ուրախության։ Եվ եթե ասված կամեցել է, որ ուրախություն լինի, առօրյա խաղաղության մեջ թեկուզ հոգին թող ապրի»։

Խաղաղությունը պիտի որ անհոգ կյանքում լիներ։ Գոհարի խաղաղությունը հոգսերի մեջ էր։

«Աշխատող ձեռքերի հանգստությունը մտքի անհանգստություն է,— զգուշացնում էր պահապան բնազդը։— Եվ որ մտքի անհանգստությունը սրտին նստվածք է տալիս»։

Գոհարը զգում էր, որ անիծյալ այդ երեք օրը ծանրացել է սրտին։ Անսովոր պարապության մեջ, անսովոր ճամփորդության ընթացքում ամուսնու սովորական բացակայությունը, շատ սովորական դավաճանությունը նրա անսահման կանացի միտքը գամել էր իր դժվար, անիրավված կյանքին և ցրվելու, մոռանալու ելք չկար։ Սահեռուն այդ մտածմունքը ինքն իր մեջ խմորվելով՝ դարձել էր սեփական դժբախտությունը գիտակցողի՝ ինքն իրենով սնվող և ուռչող ցավագին մի վայելք և այդ վիճակից, որի մեջ ցավոտ ստինքը ուշ և դժվար ծնված մանկան բերանը դրած մայրն է միայն լինում,— այդ վիճակից դուրս գալու ցանկություն և ուժ չկար։

Հիմա, ճանապարհամերձ ռեստորանում նստած, Գոհարը պատառ հացի անգամ ախորժակ չունի։ Հայացքը սեղանին է, միտքը սեղանին չի դառնում։ Միտքը այնտեղ է, այն նեղվյալ տանը, ուր ամուսինը երեք օր գիշերել է։ Գոհարը շատ կուզենար, որ դա շան բուն լիներ, բայց երևի կանոնավոր բնակարան է. խոհանոցով, պատշգամբով, ննջարանի առանձին, ննջարանի պատուհանին՝ թանձր վարագույր, երկտեղանոց փայտե մահճակալ, կողքը՝ ցածրիկ պահարան, վրան՝ լուսամփոփ,— իսկը շնանալու տեղ... որտե՞ղ է նա այս ամենը տեսել։ Հավանաբար ինչ-որ մի ֆիլմում։ Բայց այդ կարգի ննջարանի տիրուհիները մի ուրիշ բան են լի-

նում, նրանք կյանքից չեն, կյանքում այդպիսի կանայք չկան։ Համենայն դեպս, Գոհարը չի տեսել։ Եվ հետո, ինչ կապ ունի նա՝ վարորդների բաժինը, հեքիաթի կանանց հետ, ինչ գործ ունի հեքիաթային ննջարանի հետ, ով նրան արքայավայել այդ տունտեղը կտա։ Կամ թե՝ խցիկների նեղվածքին սովոր, երկտեղանոց մահճակալն ու այդ ողջ ճոխությունը նրա ինչի՞ն է հարկավոր։ Նրան այն էլ կբավի, որ չորս պատ և տակը գետին ունենա, պինդ, անառակությունը հանդուրժող գետին...

Բայց ինչ էլ Գոհարը մտածի, շնարուն-տան պատկերը աչքերի առաջից փախչում է։ Աչքերի առաջ ինչ-որ տեղից հիշվող, խավարոտ, փափուկ ննջարանն է։ Եվ այդ տան տեղը Գոհարը շատ է ուզում իմանալ։ Ոչ թե ինչ-որ բան ձեռնարկելու համար, այլ միայն որոշակիության։ Միմիայն որոշակիության համար և ուրիշ ոչ մի բանի։ Որովհետև անորոշությունը՝ որ ամուսինը կարող էր քաղաքի այս ծայրում էլ գիշերած լինել, հակառակ ծայրում էլ, և տասնչորսերորդ հարկում ինչ-որ մի շենքի, և ինչ-որ խավար գետնահարկում,— այդ անտեղությունը (ասես նա ամեն տեղ էր եղել և ամենքի հետ էր եղել), այդ բարդ անորոշությունը խճճում էր նրա պարզ կանացի էությունը։ Թվում էր՝ եթե տեղը իմանա, եթե թեկուզ մոտավոր տեղը իմանա, եթե այդ բնակարանի կահկարասուց գոնե մի մանրամասն իմանա (մի գուցե իր անպատվությունը տեսանելի և տառապանքը անտանելի դարձնելու համար), ամեն բան կընկնի իր տեղը, և ինքը վերջապես կհանգստանա։

Հայացքը սեղանին է, միտքը սեղանին չի դառնում։ Սեղանին խաշած ձուկ է՝ վարդագույն մսով իշխան, պանիր, վարունգ, լոլիկ, լվացքի օճառի եփվածքով թուխ հաց և մի շիշ օղի... և երկու լի բաժակ։ Ո՞վ է այդքանը խմելու, եթե ամուսինը ղեկին է։ Ակամա նայում է շուրջը, ասես մեկ ուրիշն էլ կա, որ նստելու է սեղան, բայց ուշանում է։ «Ես եմ խմելու»— հանգիստ, իր վճռականությունից չզարմանալով մտածում է Գոհարը։ Ծարավ նայում է օղու թերատ շշին։ Ուզում է խմել, բայց ձեռքերի համար ամաչում է։ Ամաչում է ծխախոտի տերևներից հավերժ սևացած ձեռքերը

սեղանին դնի։ Ուզում է, բայց սովոր է իր քաշած օղուն, թթի, սալորի, տանձի, հոնի բուրավետ օղուն։ Իսկ խանութի օղի՝ հաղվադեպ է խմել։ Եթե առիթ է եղել, եթե շատ են ստիպել։ Այն էլ՝ մի բաժակ։ Ու այն էլ՝ զզվանքով։ Բայց հիմա սեղանին թույն էլ լինի, խմել ուզում է։ Թվում է, եթե մի բաժակ խմեց, իր ներսում տեղահան եղած մի բան մեկեն ու փափուկ տեղն է ընկնելու։ Մտքին քաղաքի անիծյալ ննջարանն է, հեղհեղուկ, մղձավանջ երազի մի պատկեր, որ քաղաքով մեկ, երկնի ու գետնի միջև թափառում և մի տեղ չորս պատ ու տանիք չի գտնում։ Մտքին նույն անհանգիստ որդն է. եթե տեղը իմանա, թեկուզ մոտավոր տեղը իմանա... Քաղցած, խորշանքով նայում է սեղանին։ Առաջը թերմացք են դրել, մի ուրիշ, մի ուրախ սեղանի թերմացք և ինքը պիտի ուտի։ Ուրիշի հետ քաշած ուրախությունը իր հետ են շարունակում։ Այդ տմարդի վերաբերմունքը հնարավոր չի տանել։ Աչքերը լցվելու վրա են։ Ձեռքը տանում է աչքերին... «Ամոթ է»— սթափվում է հանկարծ և արցունքները սրբելու պատրաստ ձեռքը մեկնում է բաժակին։ Գոհարի ձեռքը դողում է։ Դողով ու դժվար խմում է օղին։ Մի պատառ հաց է ծամում։ Ծամում է երկար։ Արցունքը կուլ գնալ կարող է, թերմացքը չի գնում... Ինչ արած, մտածում է, միշտ էլ այդպես է եղել, դրսի ուրախության փշրանքներն է ամուսինը տուն բերել։ Դուրսը, շրջապատի մեջ, սեղանների զարդ լինելով, իր սեփական տանը մարդավարի ուրախանալու, կնոջն ու երեխաներին ուրախացնելու ժամանակ չի ունեցել...

Գոհարը մտածում է. եթե այնպես պատահեր, եթե կյանքը այնպես դասավորվեր, որ ամուսնու հետ շուտ-շուտ ճանապարհ գնար, եթե գոնե մեկ-մեկ գնար, եթե այնպես լիներ, որ դաշտի աշխատանքից աչք բացելու ժամանակ ունենար, եթե երբեմն աղատվեր տան գործերից՝ խոզանոցից, հավաքնից, գոմից, կարողանար՝ ձեռքերը հաներ լվացքի տաշտից, կարողանար՝ ամուսնու հետ մարդամեջ ելներ,— եթե միայն այսքանը հնարավոր լիներ, երևի թե իրենց հարաբերությունն այդպիսին չլիներ։ Երևի թե հարկավոր է,

որ մարդ ու կին միայն երեխաներով չկապվեն, միայն առաջին հոգսերով չկապվեն։ Մարդ են, չէ՞։ Օտարները, օտար տեղով, երբ մի անգամ միասին սեղան են նստում, ինչ-որ բանով իրար կապվում են։ Ինչո՞ւ իրենք էլ այդպես չլինեն, ընտանիքից, երեխաներից, անկողնուց բացի մի ուրիշ, մի մարդկային կապվածություն չունենան։ Ընդամենը այսքան մի բան. ամիսը մեկ նստեն այսպես, իրար դեմ-դիմաց, որպես հավասար սեղանակից, խոսեն հազար ու մի դատարկ բաներից և մի ուրիշը նրանց խմիչք և ուտելիք մատուցի։

Երկրորդ բաժակից հետո Գոհարը մտածում է. հերն էլ անիծած կյանքի, առաջին անգամ այսպես սեղան են նստել, որ ինքը հոնքերը կիտեց, ի՞նչ է փոխվելու։ Տասնհինգ տարի ոչինչ չի փոխվել, հիմա ի՞նչ է փոխվելու։ Ամեն անգամ այսքան հոգատար չեն լինում իր հետ, փոխանակ վայելի, մտքից ինչ ասես չի անցնում... Իսկ գուցե ոչ մի նընջարան էլ չի եղել։ Գուցե ամուսինն իսկապես ուրախ է, որ կնոջ հետ ճանապարհ է գնացել։ Եվ ռեստորանում կնոջը հյուրասիրելու համար է, գուցե, ուրախ։ Ուրիշ ե՞րբ է եղել, որ ամուսինը իր ձեռքով նրա ափսեն ձուկ դնի, իր ձեռքով աղ ցանի... և ընդհանրապես այսքան ուշադիր լինի։ Ուրիշ ե՞րբ է եղել։ Ինչո՞ւ մի անգամ էլ ինքը չվայելի, ինչո՞ւ մի անգամ էլ իրեն ռեստորան չտանեն։ Ումի՞ց է պակաս, գրողը տղամարդկանց տանի...

Վերջին բաժակի վրա Գոհարը մելամաղձոտ է դառնում. եթե կյանքը ուրիշ կերպ դասավորվեր, եթե հայրը ինը երեխա չունենար, և ինքը դպրոցը չթողներ վաստակելու համար... Եթե իր սերը մի ամիս շուտ պրծներ բանակից ու հասներ իրեն...

Աչքերի մեջ տաք ու տամուկ մուժ, Գոհարը նայում է շուրջը։ Ավտոբուսից իջած, ավտոբուսից ուղացող, ինչ-որ ջրեր խմող, ինչ-որ վռիկ ուտող, գդալներին փչող-շտապող մարդիկ... Եվ ամուսնու բացած սեղանը Գոհարին դուր է գալիս։ Ռեստորանում նստելը, մատուցողի վազվզտուքը, իրենց ծառայելը՝ անչափ դուր է գալիս։ Այս բութ թմրությունը, որ իջել է ուղեղին, նրան դուր է գալիս... Միայն թե, մտածում է, վեր կենալիս հանկարծ չօրորվի, հանկարծ չդիպչի մի բանի՝ ամուսնուն խայտառակ անի... Դուրս գա-

լիս բռնում է ամուսնու թևը, ամուսնու թևը բռնած՝ նրան դուր է գալիս...

— Հարբած եմ,— թևանցուկ քայլելիս թոթովում է Գոհարը և ակամա ժպիտով ձգվող բերանի անկյունները հավաքել չի կարողանում։— Հարբած եմ,— ասում է ավտոմեքենային մոտենալիս։— Երեխերը վրես կծիծաղեն,— ասում է խցիկում նստած և ինքը անձայն ծիծաղում է։

Ներողամիտ-ծաղրող-քաջալերող հայացքով, ինչպես հարբեցողն է առաջին բաժակը խմող պատանուն նայում, ամուսինը նայում է Գոհարին։ Մեքենան պոկվում է տեղից։ Գոհարի աչքերը խուփ են։ Իրանը դեռ զգաստ ու ձիգ է, բայց գլուխը, թիկնակին հետ ընկած, աշուձախ ճոճվում է։ Մըտքին սեղանն է, սեղանի մոտ՝ ինքն ու ամուսինը. հետո՝ մի ուրիշ սեղան՝ նա և ամուսինը. հետո նույն սեղանը՝ երեքով՝ ինքը, ամուսինը, նա. ու դարձյալ իրենք՝ երկուսով. ու դարձյալ նրանք՝ երկուսով. դարձյալ՝ երեքով. ապա և վեց հոգի՝ ինքը, ամուսինը, և չորս երեխաները՝ համեղ ձուկը խփշտելիս... Ու նորից վեցն են՝ առանց Գոհարի. հետո էլ բոլորով՝ ինքը, ամուսինը, նա և չորս երեխաները. ու նորից մնում են երեքով՝ ամուսինը, ինքը, նա... նա, ինքը ամուսինը... ինքը, ամուսինը, նա...

ԾՈՒԽԸ ՄԱՐԵՑ

Ասել էր՝ մի արևոտ տեղ կթաղեք։ Ոչ ոք չհիշեց երբ և ում էր ասել, բայց նման էր իրեն և տղերքը արևի դեմը փակող թխկին շիվերից քշտեցին։

Գերեզմանատունը արևմուտք նայող թեք բացատ էր հոնուտ լանջի վրա, լավ արև էր տեսնում միայն երեկոյան, դրա դեմն էլ առել էր տոհմի շիրմաշարքի մեջ աճած ջահել թխկին։ Մեծ չէր գերդաստանը՝ անցյալում ուներ հազիվ յոթ-ութ շիրիմ։ Եվ ոչ էլ գերեզմանոցն էր մեծ։ Ոչ էլ գյուղն էր

հին։ Տարածվելու էլ տեղ չուներ։ Ամառանոցի, մեղու պահելու տեղ էր՝ միակ աղբյուրով, որի շուրջը ընդամենը մի երկու հարյուր տարի առաջ հավաքվել, ճյուղեր էր տվել Արցախը թողած մեկ-երկու գերդաստան։ Այնպես որ ամեն գերդաստանին ընկնում էր հաղիվ մի տասնյակ շիրմաքար։

Ծառից ցած ընկած տեղը անհարմար թեք էր, հարմարը վերի կողմն էր և տեղն էլ՝ հեռանկարով... հեռու տնից՝ տան մեծի համար։ Բայց թիկին ստվեր էր զցում այդ տեղի վրա։

Գերդաստանը վաղուց կորուստ չէր ունեցել և չիմացան ծառը երբ աճեց։ Դուրս էր եկել պապի շիրմաքարի տակից և քարը քիչ-քիչ հանում էր վեր։ «Դեռ որ թող գնա»— մտածել էին ամեն անգամ, կարծես հույս կար, որ ծառը ինքնիրեն կչորանա, կամ՝ բունը, թերևս, դաղարի հաստանալ, կամ... Հույսը, կարծես, պապի վրա էր։ Նրա շիրմաքարը այդքան հեշտ դժվար թե խախտվեր։ Նա, որ քար էր սարքել կնոջ ու քրոջ, եղբոր ու դստեր համար, նա, որ այս փոքր գյուղի հանգուցյալներին արժանացրել էր իր անուն-աղգանվան տակ հավերժանալու բախտին, նա, որ տաշել էր իր սեփական քարն ու սպասել տակը մտնելուն... «Դե, երևի, աստված դեմ է, որ մարդ իր քարը տաշի»— ենթադրել էր հարսը։

Գերեզմանոցում ամեն տեսակ ծառ ու թուփ աճում էր (երևում էր լանջը հատելով են գերեզմանատան տեղ բացել) և ամենալավ հոնը այստեղինն էր — հասնում ու կաթում էր անմարդաբնակ երկրի բնության կարգով։ Բայց ոչ մի քար դեռ շուռ չէր եկել։ Ասենք, ոչ մի քարի տակից թիկի չէր ծլել։

Տղերքը ստորին շիվերը կտրեցին սղոցով (կացնով՝ կարծես մի բանի ցավ էր տալիս), շիվերը տարան գերեզմանատան դարպասի մոտ խնամքով դարսեցին։ Թիկին՝ բունը տկլոր, արմավենու նման կանգնեց հայոց գերեզմանոցում։ Արևի դեմը բաց էր արևմուտքի կողմից։

Գերեզմանափոր հալևորներն արդեն աչքաչափ անում, տնտնում էին կտրելիք գետնի վրա։

...Նրանց տարեկիցներն իրենք էին այստեղ պառկած, նրանք ի՞նչ գերեզման փորող էին, բայց գյուղացիք ասել էին՝ կնեղանան։ Գյուղը փոքր էր, բայց կգտնվեր երկու-երեք հարեհաս տղամարդ, որոնք կարող են կով մորթել-քերթել,

հարսանիքի ու թելեխի սեղան սարքել, միս խաշել երեք հարյուր հոգու համար, նաև գերեզման փորել, բայց ասին՝ հալևորները կնեղանան։ Հիմա նրանց տիրապետող զգացումը նեղանալն է, կմտածեն՝ իրենց հաշվից դուրս են դցել։ Երիտասարդների դեպքում, իհարկե, մոտ չեն գալիս (նրանց գլուխը այդպես էլ չմտավ, որ մեծը փոքրի գերեզման փորի), բայց մնացած դեպքերում չկանչեն՝ նեղանում են, ասացին։

Գերեզմանափորներին իմաց արին առավոտյան տասի կողմը, նրանք տեղ հասան տասներկուսին։ Չնայած երկու օր առաջ էին իմացել մահը, չնայած երեկ տեսել էին քաղաքից բերելը ու իրենք իրենց մեջ պատրաստվել էին, բայց ծերունավարի տնից ելնելն ու տեղ հասնելը տևեց երկու ժամ։ Եթե կարողանային էլ, գուցե պատշաճ չհամարեին այդ տեղը շտապել։

Եկել էին բահով, բլունգով, թոկով, մի ման ջրով։ Սկսեցին։ Առանց թել ձգելու աչքաչափ բռնեցին, բահով գծեցին ուղղանկյունին և նստեցին ծխելու։

Տղերքից մեկը գերեզմանոցից եկավ՝

— Բիձերը չեն հասցնելու,— ասաց։

— Նրանց հանգիստ թողեք,— ասաց ավագ որդին։

Քիչ հետո գերեզմանափորներին հաց տարան։ Մի ժամից գնացին ման-չամանը բերելու՝ տեսան հալևորները շշի վզիկը ջարդել են. անծանոթ էր եղել «Ստոլիչնայայի» պտրտվող խցանը։

Ամանները ետ բերողը կասկած հայտնեց՝

— Վայ թե հալևորները հալից ընկել են, հանկարծ ու...

— Ձեր գործին կացեք,— ասաց ավագ որդին։

Մեծ եղբոր որդու հետ Սև ծովի ափերից եկավ հասավ փոքր եղբայրը, և մեռելատան շունչը տեղն ընկավ։ Մտածել էին՝ հանկարծ ու չհասցնեն, հանկարծ ու հայրական տնից մեկը չլինի, որ հող տա երեսին։

Քանի դեռ կենդանի էր՝ պատկանում էր գյուղին, զավակներով՝ պատկանում էր ամուսնու ցեղին, բայց մահը եկավ, կտրեց կապ ու կապանք, և նա օտար որբ էր մոր գերեզմանից այսքան հեռու մի տեղ։

Նա գյուղի համար լավ հարս էր եղել։ Մեծերին հարգանություն, փոքրերին ուսուցչություն էր արել, ամուսնու տոհմին երեք սիրուն, խելացի տղա էր պարգևել, երկու կաթնակեր աղջիկ էր մեծացրել երկու հայ օջախի համար, քառասուն տարի հաշմանդամ ամուսին էր պահել, տասներկու թոռ էր մեծացրել, մինչև ծնողները քաղաքում ոտքի կանգնեն, տնից չէր բացակայել շաբաթից ավելի և ահա այս երկար՝ ամիս տևած բացակայությունից հետո զավակները քաղաքից նրան բերին հողին հանձնելու։

Անտերացած հալևորը հա՛ պտտվում էր դագաղի շուրջը ու մրմնջում էր՝

— Ափսո՜ս-ափսո՜ս։

Հետո դուրս էր գալիս, մտնում էր այգի, ելնում էր ճանապարհ, մտերիմ մեկին գտնում էր, որ իրեն կշտամբի.

— Բա հիսուն տարի մարդու հետ ապրես ու մեռնի՝ նոր հարգը իմանա՞ս...

Հալևորը վերջին երկու շաբաթը օրումեջ զանգում էր Երևան՝ թող դուրս գրվի գա, ի՞նչ օգնություն տեն ցույց տալ էդ հիվանդանոցներումը... Եվ երկու օր առաջ ասացին՝ դուրս ենք գրել, վաղը գալիս է։ Խոստացած օրը դուրս չեկան։ Հանգուցյալը գալու էր որպես բուժման այդ փուլը անցած։ Բայց երեկ չեկավ ու ահա այսօր բերում են...

Միջնեկ որդին, հարսն ու փեսան կեսօրին եկան։ Եվ մեքենայից դուրս գալու եղանակից հալևորը հասկացավ։ Այդ ե՞րբ էր եղել, որ ժպտալով առաջ չգան։

Երեխաները եկան նստեցին, խոսեցին դեսից-դենից, հարսը եկավ հալևորին հաց տալու, որդին մարած լամպ գտավ՝ նորով փոխեց, փեսան զրսում փայտի դարսն էր կոկում, այսպես կամաց-կամաց եռանդի եկան (չհասցնելու վախը ներսից չափ էր զգում) և երբ սենյակներից մեկի մահճակալները հանելուն հասան, փեսան հասկացավ, որ այդ խոսքը վերջապես ասել պետք է։ Նա վճռական գնաց դեպի խորքի սենյակը և աներորդին ու կինը հետևեցին նրան։

Հալևորը բազմոցին նստած թերթն էր շուռումուռ տալիս։ Նայեց շտապ խեղճացած երեխաներին ու ակնոցը հանեց։

— Ասեք... Ասեք պրծեք...— ու ձայնը կերկերաց։

Հարսը փուլ եկավ կեսարարի կողքին, գրկեց ու հեկեկաց։ Տղամարդիկ դուրս եկան սենյակից։

Վրա հասավ առաջին գիշերը։ Այս գյուղում կարդ էր, որ հանգուցյալի մոտ երիտասարդները մնան։ Մնացին՝ փեսաներից փոքրը, ազգական տղերքից երկուսը և հանգուցյալի ամուսնու եղբոր որդին, որին հանգուցյալը կուրծք էր տվել։ Եվ նա անարատ կաթնակեր որպես՝ չքնեց երկու գիշեր։ Ավելի երիտասարդները հերթով քնում էին, նա արթունի հետ արթուն էր երկու գիշեր։

Մերկացրած սենյակ էր, իշոտնուկները՝ պատերի տակ, մեծադիր լուսանկարը պատին, դագաղը՝ սենյակի մեջտեղը գիշերվա լռության մեջ կախված։ Դռան մոտի թախտը դուրս չէին տարել և արթուն տղամարդիկ վրան նստած շախմատ էին խաղում։ Դուռը բաց էին թողել, որ սենյակում ծուխ չկանգնի և ժամանակ առ ժամանակ ցավ էին զգում ներս քշող կատվի վրա։

Հանգուցյալին այսպես անշարժ տեսնելը, այն էլ առանց կոծողների, անիրական էր։ Ծիր ու զվարթ նրա բնույթին խորթ վիճակ էր սա, և թվում էր մարմինը այստեղ, ինքը հիմա դռնից ներս կմտնի ու խնդալով կասի՝ «էֆ ինչ օյին-բազություն է, վերեք նստենք հացի»։

Բայց ժամը եկավ և նրան տարան։

Գերեզմանոցում հալևորին պիտի որ ձայն չհասներ, մանավանդ որ ավագ եղբայրը կողքն էր և հանգուցյալին պատշաճը հատուցեց, բայց երկու օրում երկու նախադասությունից զատ բան չէր ասել ու խոսեց։ Ու երևում էր կյանքում չի խնայել հանգուցյալին։

Գերեզմանատնից դարձան, հոգեհաց տվին։ Երկար ճանապարհ գնացողները սեղանից ուղիղ ճանապարհ ընկան։ Զավակները դատարկված-պապանձված նստեցին, մինչև ազգական-հարևանները սեղանը հավաքեցին։ Բակով մեկ պայտաձև սարքած սեղանը թողեցին շաբաթ օրվան, հայտարարված յոթի ու քառասունքի համար։ Մնում էր երկու օր։

Այդ երկու օրը անցկացրին յոթի սեղանին պատրաստվելով։ Շաբաթ օրը հաց տվին մի հարյուր հոգու։ Իսկ առաջը ընդամենը մեկ օր կար, որ շաբաթը փակվեր։ Գործը քաղա-

քում մնում էր, երեխաները թողնված էին՝ մեծերը իրենց, փոքրերը ուրիշների հույսին — հարկավոր էր շտապել։

Եվ անցան տունը մեռցնելուն։ Նախ այծը ուլի հետ ծախեցին։ Կարտոֆիլ էր, տանձ էր, լոբի էր, խնձոր էր, ուրց էր, ավելուկ էր՝ մեջ-մեջ արին, ամեն բանից մի քիչ թողնելով գարնան համար — հալևորը գարնանը հետ էր գալու։ Հետս սառնարանը անջատեցին, դատարկեցին, մաքրեցին, գազի ծորակը նկուղից փակեցին, էլեկտրականությունը ապահովիչներից անջատեցին, պատուհանների փեղկերի սողնակները գցեցին, վարագույրները վրա քաշեցին, ցեցի դեմ բան ցանեցին տեղաշորի ու պահարանի մեջ, այգու դուռը կողպեցին ու տակ ու գլխին ցաքի դրին... Հերթը հասավ հավերին։ Այդ գործը հա՛ ձգձգում էին, որովհետև հանձն առնող չկար։ Վերջը՝ փեսաներից կրտսերը պիտի աներ։ Նա խոհանոցի երկու դանակները տարտամորեն իրար քսելով իջավ աստիճաններից, հավանոցի դեմ կանգնեց։ Այսպես անկամ կանգնեց-կանգնեց... կարուկ կռացավ, շալվարի փողքերը քշտեց ու այդ գործողությունից կարծես եռանդի եկած՝ մտավ ցանցապատ տարածքը։ Հավերին առավոտից դուրս չէին թողել։ Մեկն էլ պետք էր, որ մտներ հավանոց ու հավերը մեկ-մեկ դուրս տար։ Հալևորից բացի այդ գործը երևի ոչ ոք չաներ և նա ներս մտավ և առաջին հավը կիսաբաց դռնից դուրս մեկնեց։ Փեսան առավ ու վիզը կտրեց։ Հալևորը շտապում էր, դժվար էր շնչում գարշահոտը, և վրա-վրա տալիս էր հավերը, իսկ փեսան արդեն չէր հասցնում գետնին սեղմած արնաքամելով հավերին հանդարտացնել, չէր հասցնում անգամ ոտքերի հոդերը կտրել և գլխատված հավերը թպրտում էին շուրջբոլորը։ Հալևորը հավաքնում անհամբեր էր, մորթողի ձեռքերը արյան մեջ կորած էին, դանակը բթացել էր, բայց նա մոռացել էր երկրորդ դանակը, որ կողքը գցած էր։

Երբ վերջին երկու աքլորն էլ մորթված էին, նա շտկվեց ու ինքն իրենից զզված թքեց՝ շուն լինես, տան փոքրը չլինես։ Ատակը, մտածեց, կուտ կերած հավեր են, երեխեքը մի շաբաթ քաղաքում կուտեն։

Հավերն էլ բմբլեցին, մաքրեցին, բաժանեցին ու այլևս անելիք չկար։

Երբ բոլորը մեքենաների մեջ էին, տան մեջ մի բան դղրդոցով ընկավ։ Մի պահ քարացան։ Բոլորի մտքով անցավ՝ մոր նկարը չլինի՞... Միջնեկ տղան դռները բացեց, սենյակներով անցավ, ոչինչ չտեսավ։ Եկավ նստեց ղեկին, «բան չկար»— ասաց, ու մեքենաները զգույշ, ցավակցաբար հոբնդացին։

ԿԻՆԸ, ՇՈՒՆԸ, ՏՂԱՄԱՐԴԻԿ

Նման էր, որ երիտասարդ կինը ամուսին չունի։ Միաժամանակ Լենինգրադում ապրելուց հետո վերադարձել էր ծննդավայրը, գեղարվեստի ինստիտուտում դիսերտանտ թե լաբորանտ էր ձեակերպված և արվեստների հովանավորի կեցվածք ուներ։

Փափլիկ, խոսվիան շուրթերով, երեսունի ու քառասունի միջև նայած օրվան ու արամադրությանը տատանվող այդ կինը դեռատի աղջկանից ինչ-որ բան ուներ և նման էր, որ ամուսին չունի — տղամարդիկ այս հարցում քիչ են սխալվում։

Թե ինչով էր զբաղվում ինստիտուտում, այնքան էլ պարզ չէր առաջին շաբաթներին, թեպետև ինստիտուտ ասածս միջին մեծության միջնակարգ դպրոցից էլ փոքր էր, դրսից՝ անշուք, ներսից՝ ողորմելի։ Այն էր երևում, որ դասախոսականի բաղմոցին նստած ծխում էր չափավոր, տեսական հաճույքով նստում էր բուֆետում սուրճ խմելու, խոսում էր սակավ, շաղակրատում էին հետը լինող մարդաթող կանայք, ինքը աջուձախ բարևում էր իրեն բարևելու համար բուֆետ մտած տղամարդկանց, այդ օրը դասերից ազատ, բայց հատուկ իրեն տեսնելու համար ինստիտուտ եկած տղամարդկանց, ապա և բարձրանում էր երկրորդ հարկի դասախոսական, և արվեստագետ դոցենտները հաճոյախոսում էին, սա

էլ հաճոյախոսությունները ընդունում էր հավուր պատշաճի։

Անունը Լիդա է։

— Լիդա,— դասամիջոցին մոտենում է արվեստագետի կոչումից իրեն կտրիճ զգացող տարեց մեկը,— Լիդիա,— սիրունացնում է անունը,— գնա՞նք սուրճ խմենք։

Լիդան սովորաբար չի մերժում, իսկ եթե ասաց ժամանակ չունի՝ սուտ է, նա օրը ութ ժամ մաքուր ժամանակ ունի ինստիտուտում, պարզապես մի քանի բաժակ արդեն խմած է լինում, «իսկ անչափավորությունը, գիտեք, ծերացնում է կնոջը»— բարձրաշխարհի՞կ, հմայիչ ժպտում է Լիդան։

Այսպես ժպտում է, նստում է դասախոսականում, բուֆետում, ինքնուն ռուբլի է ստանում Լենինգրադ ապրած լինելու, իր փափկիկ տեսքի կամ արվեստների հովանավորի կեցվածքի համար և մտքում օր-օրի հաստատանում է ազնվազարմ մի շնիկ ունենալու գաղափարը։

Լավ շնիկ գտնելու համար նա հարցուփորձում էր ամենքին (ուզում էր որ «բալոնկա» լինի, անպայման «բալոնկա»... Հասկանո՞ւմ եք, նրանք փաղաքուշ են և հումորի զգացում ունեն), բայց շնիկի մասին, իբրև նվիրական իզձի, ծեր պրոֆեսորի առաջ էր միայն սիրտը բացում։

Պրոֆեսորը ավարտել էր նույն այդ Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան, միաժամանակ այնտեղ աշխատել էր, սերում էր Թիֆլիսի հին առևտրական տոհմից, կիրթ էր, յոթանասունն անց ու կնամեծար։ Լիդան գնահատում էր հումորի զգացումը տղամարդկանց մեջ և համոզված էր, որ շներն էլ ունեն։ Իր ցեղական շնիկը որ՝ հաստատ ունենալու էր։ Այդ մասին նա խոսում էր առանց հումորի նշույլի, նույնիսկ մի տեսակ ոգեշունչ թախիծով, վաղամեռիկ բանաստեղծի ոտանավորը կարդացող բանասեր ուսանողուհու հանգով, և դա էլ նրա հմայքին հմայք էր ավելացնում։

Անտեղյակները, հասկանալի է, քթերը չէին խոթում շների վարքուբարքին վերաբերող արտոնյալ զրույցների մեջ, բայց Լիդայի համակրանքը շահելու համար շուն որոնում էին բոլորը։ Օրը տաս-քսան բոպե դասախոսականի հեռախոսը զբաղված էր լինում շան հարցով։ Շաբաթից ավելի սենյակը դարձել էր Լիդայի շտաբը. զանգում էին ներսից, զանգում էին դրսից, ներս մտնողը լուր էր բերում, դուրս ելնողը խոս-

տանում էր էլի հարցուփորձել... Թալինցի երիտասարդ դասախոսը հարևան քրդերից Կովկասյան կոչվող հովվի շան լակոտ բերեց։ Լակոտն ամբողջ օրը երկրորդ հարկի հիացմունքի առարկան էր. բրդոտ, կճատ, փոփոլ պոչով, սև աչուկներով — քայլում էր գլորվելու պես, գգվում էր՝ խելքամազ էր անում կանանց, բայց թե մեծանար՝ չորանի շուն էր դառնալու և երիտասարդ մտավորականը կճատին տիրոջը տարավ։ Նա արդեն գիտեր, որ սիրուն շունը դեռ չի նշանակում ագնվածին շուն, բայց նվիրվածությունն էլ գնահատող չեղավ, որովհետև ոչ ոք չգիտեր քրդի հովվից շան լակոտ պոկելու գինը։

Շունը գտնվեց։ Զանգեցին դասախոսականի հեռախոսով և շնատերն ու Լիդան այսպիսի զրույց ունեցան։

— Դուք նախկինում շուն ունեցել ե՞ք։

— Այո, իհարկե,— ասաց Լիդան։

— Ի՞նչ ցեղի։— Հեռախոսին մոտ եղածները լսեցին, որ ձայնը զառամյալ է։

— Ամենատարբեր,— խոհեմորեն պատասխանեց Լիդան։

— Շենքո՞ւմ եք ապրում։

— Այո, շենքում։

— Ո՞ր հարկում։

— Հինգերորդ։

— Ափսո՜ս...

— Անհանգստանալու բա՞ն չունեք։

— Գիտե՞ք, ես չեմ ուզում նրանից բաժանվել, բայց հանգամանքները... Դուք գոնե պատշգամբ ունե՞ք։

— Երկու պատշգամբ։

— Իհարկե, ապակեպատ են։

— Մեկը բաց է։

— Երեխա ունե՞ք։

— Տղա ունեմ։

— Ձեր ամուսինը շուն սիրո՞ւմ է։

— Ինչպե՞ս ասեմ...

— Ներող եղեք...

— Ի սեր աստծո...

Երկուսն էլ լռեցին միաժամանակ։ Հետո կինը դժվար

շունչ քաշեց լսափողի մեջ, շունչը պահեց, բայց ասելիքը ասես շնչի հետ ներս էր առել՝ երկար պահել չկարողացավ.

— Խնդրում եմ ներեք... Դուք աղջկաս տարիքին եք... Շունը կին չէ, նա կապվում է մի տղամարդու... Գնացողեկող տղամարդկանց հետ...

— Դուք ինձ ինչի՞ տեղ եք դրել...

— Ես ասացի՝ ներողություն։

Լիդան ներողությունը կարծես չընդունեց։

— Խնդրում եմ ինձ հասկացեք,— ասաց կինը։

— Հասկանում եմ։

— Ես պիտի տեսնեմ ձեր տունը,— վերջացրեց կինը։

Լիդան այս մեկը չէր սպասում։

Բայց պառավին դուր եկավ շան ապագա կացարանը և շունը դուրս եկավ դասախոսականի կյանքից։ Տղամարդիկ ի՞նչ էին անելու այսուհետև։

Իհարկե, շունը մեկ-մեկ հիշվելու էր դեռ։ Նա լակոտ էր, դեռ թոթովախոս հաչելու էր, մրսելու և հիվանդանալու էր, չարություն էր անելու, զվարճալի էր լինելու, խելք ու հումոր էր դրսևորելու,— բայց միայն ծեր պրոֆեսորի համար։ Այդքանն էլ նրան շատ էր։ Իսկ տղամարդկանց պետք էր ավելին։ Վատը այն է, որ տղամարդկանց նկրտումները այդպիսի մի շրջապատում չի պատշաճի, որ անսքող ու կոպիտ լինի, ինչպես բանակային սիրո հորդումը գնդի զերձակուհու հանդեպ։ Շան պատմության պես քնքուշ պատրվակ, այրական նկրտումները իբր սքողող, միամիտ մի բան պատք է ամեն դեպքում։ Եվ մինչ արվեստի տղամարդիկ պարապայլով, հեռվից, նրբորեն մոտենում էին, մինչ կնոջ ու տղամարդու միջև ընկած տարածությունը կարճում էին շան ու արվեստի վերաբերյալ երկար խոսքերով,— որտեղից որտեղ մեկը իջավ մեքենայից, աջ դուռը բացեց կնոջ առաջ, կինը ճկվել, մտնում էր ներս՝ ամենաանհարմար-հարմար պահին սա ձախ ձեռքի լայն ափով կարճ, օժանդակելու նման հասցրեց արվեստների հովանավորի նրա կեցվածքի ակնհայտ տեղին, դուռը դրեց, անշտապ եկավ նստեց ղեկին, քշեց՝ գնացին։

— Խփե՞ց,— աչքերին չհավատաց պատուհանից իբր ցրված դուրս նայողը։

— Ո՞ւմ խփեցին,— ակնոցները հանեց մյուս պատուհանի առաջ նստած պրոֆեսորը։ Բոպեներ առաջ նա չէր կարողանում սեղանին դրած թղթերի վրա կենտրոնանալ մայթին կանգնած ավտոմեքենայի լաքի փայլից։

— Խփելու տեղին,— չարախնդաց շնիկի որոնումներին չմասնակցածը։ Նա շփոթմունքը հարմար համարեց քողարկել անպատկառությամբ։

— Հո նախկին ամուսինը չէ՞ր...

...Նախկինն էր, թե նախկինը չէր,— երեսունը հազիվ բոլորած մի տղամարդ էր՝ մեջքը պինդ, մութ աչքերով, խոյի մեջքը ուղենար կջարդեր ափի կողով, բայց ուժի տեղ չի, բանջարեղենի իր խանութում դեռ որ լավ է։ Լավից էլ լավ է։ Հերթը հո միշտ կա։ Մարդիկ էլ հո նյարդային են։ Իսկ կշեռքի նժարների հավասարվելուն սպասելու համբերություն հայը չունի։ Ու իրարից բողոքավոր չենք։ Տուն չենք թալանում, բանկ չենք կոտրում, դանակ չենք քաշում անցորդի վրա, դրպան չենք մտնում ավտոբուսում,— այսպես մարդուս խիղճը հանգիստ է...

Հանգիստ խղճով 7-ին գործը վերջացնում է, մեքենայի դուռը բացում է, նստում, կպցնում է ծխախոտը ու մտածում է... Մտածելը պարտադիր չէ. աջ ձեռքը դնում է զեկին և իր փիլիսոփայությունը ձեռքի տակ ունի։ Շտապել է պետք. 21-ը ռետրո է դառնում, իսկ աղջիկները դա սիրում են՝ փողը հետը. տղամարդը գիշերային կենդանի է, տղամարդը ցերեկը՝ տանը — չղջիկը քեզ օրինակ. վեներական հիվանդությունը հիվանդություն չէ, այլ բախտի բան. կինդ երբեք պիտի չիմանա օրվաղ հաշիվը, բայց շաբաթը, ամիսը էսքան պիտի տանը տաս՝ պարտադիր. կյանքում կլինեն մի տասը հոգի, որոնց պիտի չնեղացնես, մնացածը թող զգուշանան քե՛զ նեղացնելուց... Կյանքը բարդ չի։ Շատ չէ՝ մի տաս... տասնհինգ տարի էլ որ էսենց ապրենք...

Նախկինն էր, թե վերջերինս — պարաքայլը արհամարհող, շների հետ զլուխ չղնող, արվեստը հարգող, եթե իրեն շատ չմոտենա, կանանց սիրող, եթե միայն գրպանով հոգա, օրվա ընծայի ատամներին նայել չիմացող, ծախելիս դինը գլխանց առնող, առնելիս գլխանց գինը տվող տղամարդ էր մի։

ԿԵՂԾ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

Երեկվանից էր հայտնի, որ բան չի գտնվելու, բայց տղերքը համբերատար պեղում էին։ Առավոտը անկամ էին գործի կպել, բայց գործի ավարտի վրա եռանդի եկան՝ հարամված գործը պրծնեն գնան տուն։

Արդեն հասել էին դամբարանի հատակին, ուր հողի մի բարակ շերտ ժանգի գույն էր առել. անասունի մորթուց այդ հետքն էր մնացել։ Եթե լցնովի հողի ու բնահողի սահմանը լուծված անգամ լիներ, զրանից դենը սպասելիք չկար, որովհետև մորթին աճյունի տակ են փռում։

Նրանք պիտի պատրաստ լինեին և պատրաստ էին դամբարանը կեղծ գտնելու։ Այս դամբանաբլրից երկու դամբարան արդեն կեղծ էին դուրս եկել և կեղծի հավանականությունը, ճիշտ է, նվազել էր, բայց այս մեկն էլ կարող էր լինել։

Կեղծ՝ այդ մենք ենք հիմա ասում։ Դրանք ոչ միայն կեղծ չեն մտահղացվել, այլև մեռնելու անկեղծ խոստումով կառուցվել են վաղօրոք։ Այսինքն, մահվան մտասևեռումը իրենից վանելու համար, մահվան շունչը իր տնից հեռու պահելու համար ունևորը դամբարան էր կառուցում իր ու մերձավորների համար, որ պիտի նշանակեր, թե՝ այս փուչ աշխարհում ապրելներս մի մեծ ուրախություն չի, իմացիր, և գիտենք, որ ճշմարիտ հանգիստ քո գրկում ենք գտնելու, հող երանելի և ահա մեր ինքնակամ քայլը դեպի քեզ, ահա հավերժական մեր կացարանը՝ մեր ձեռքով կառուցած, բայց ինչ-ինչ կիսատ գործեր դեռ պահում են այստեղ, ներողամիտ եղիր, քանզի մեր կամքը մերը չէ, գիտես...

Բայց գնում էին պատերազմ ու բորենու կեր դառնում, բայց խորշակի նման անցնում էր թշնամին ու մարդ չէր մնում, որ մեռյալներին թաղի, և դամբարանները մնում էին առանց աճյունների։

Այս մեկը, սակայն, կողոպտված էր։

Նույնիսկ կմախքի կես կազմը չլրացավ։ Հավանաբար գանձագողերը շտապելիս են եղել։ Երեի լույսը բացվելու

վրա է եղել, երևի ճանապարհով աշխարհապահ զորքի ջոկատ է անցնելիս եղել, հնարավոր է՝ ձեթը վերջանալու վրա է եղել... Նրանք ձեթի ճրագ կամ մարխ են ունեցել, հետևները ջուր կամ գինի են վերցրած եղել, այսինքն՝ հիմնավոր գործ անելիս են եղել, բայց գողի առավոտը շուտ է բացվում՝ աճյունախառը պարկը լցրել հեռացել են։

Երեկվանից ափերի մեջ շուռումուռ էին տալիս փարշի կտորը՝ երեք հազար տարվա դամբարանից հանված միջնադարի խեցեղենի նմուշ։ Անիծյալ այդ խեցեղենը ոչ մեկի մտքից դուրս չէր գալիս, բայց Ավոն էր, որ ամեն անգամ փոսից ծխելու դուրս գալով, ձեռքն էր առնում գրեթե հազարամյա այդ հանցանշանը։

— Ջուր չէ, գինի են խմել,— վերջնական եզրակացություն արավ Ավոն։— Արաբատյան դաշտում գինին ջրից էժան պիտի եղած լինի։

Փոսից չպատասխանեցին։ Մարդը այդ կիզիչ արևի տակ, փոշի կուլ տալով չէր ալարել՝ խոսել էր, մարդը կարծիք էր հայտնել և մարդաբան Ժաննան նրա խոսքը անարձագանք չթողեց։

— Գոնե գանգը թողած լիներին,— նվնվաց Ժաննան։ Նա դամբարանի ծածկասալերից մեկին նստած՝ քաջասրունք ռազմիկի սրունքոսկրը չափով իր սրունքի վրա։ Ժաննան մինչև ծնկները հասնող դուլպա էր հագել (վախենում էր կարիճներից) և շորտ։ Գերեզմանի հազարամյա փոշին նստել էր զիստերի աղվամազին։— Գանգը թողած լիներին, ինձ հերիք էր։

Ավոն խնդաց նախքան կասեր.

— Աճյունի վրա քեզ հետաքրքրող ուրիշ բան հազիվ էլ լիներ։

— Լավ, մեկ էլ կուզես,— նեղացած ձևացավ Ժաննան։ Հրանտը փոսի մեջ կոկորդի փոշին հազալով մաքրեց, այնինչ խոսքը սպիրտի մասին էր։ Ժաննան ոսկորները մշակելու սպիրտի կեսը Հրանտից թաքուն տալիս էր Ավոյին, մնա-

ցածին ջուր էր խառնում և ոսկրերը լվանալիս լա՞վ չարշարվում էր։

Հրանտը համբերատար պեղում էր։ Ինքը արշավախմբի պետն է, իրեն հուսահատվել չի սազի, այլապես ջահելներից ինչո՞վ տարբերվի։ Թեթևամիտ Ավոյից ինչո՞վ է տարբերվելու։ Իսկ տարբերվել պետք է։ Ժաննայի աչքում գիտությունից բացի շահեկան մի բանով, տղամարդկային մի գծով առանձնանալ պետք է։

Հրանտը մտածում, բայց ջահելներին չէր ասում, թե բացառված չէ, որ տասնմեկ-տասներկուերորդ դարերում աճյունը պղծողները այդ փարշը ջարդած լինեն կատաղությունից։ Բացառված չէ, որ մի անգամ արդեն դամբարան մտած են եղել և դարեր հետո մտնողները հուսախաբությունից աճյունը ցրիվ են տվել, գինու թե ջրի փարշն էլ փշրել են պատին։ Եվ ուրեմն այս հազարամյակում իրենցը երկրորդ խումբն է, որ տխմար վիճակի մեջ է ընկնում... Դժբախտարար, ժամանակը ամփոփ, ապահովիչ փուլեր չունի, արարքը չի պարփակվում իր ժամանակի մեջ և, եթե անգամ սերունդների կենդանի շղթայով չի փոխանցվում ու չի աղդում մարդկային վարքի վրա, ապա այսպես ահա դաշվում է իրեղեն աշխարհին և այս օրվա նման անակնկալ լույս աշխարհ է գալիս...

Այլևս պեղելու բան չկար։ Հրանտը ձեռքը մեկնեց, որ վեր քաշեն։ Ավոն նստած տեղը հակվեց առաջ, ձեռքը բռնեց («Ոտքերիդ տեղ արա»—«Արել եմ») ու ձգեց։ Հրանտը խցանի նման դուրս թռավ փոսից։ Ժաննան Ավոյի մերկ բազուկը բռնեց՝ ուժե՞ղ։ Ավոն բնազդով մկանները լարեց։ Ժաննան ուրախացավ ռետինի առաձգականությունը հայտնաբերած երեխայի նման ու Ավոյի բազուկի հետ խաղաց։

Բայց հաց պիտի ուտեին։

Ասենք, ուտելու մի կարգին բան չկար էլ։ Երեկվանից շտապում էին համբ եկած գործը շուտ պրծնեն և ձկան պահածոյից, վարունգից, պանրից բացի հետները բան չառան։ Բանվորություն անող դպրոցականները հետները մածուն-բան

կոմենտային, բայց այսօր նրանց կարիքը չունեին և պատվիրել էին չգալ։

Այս տարի բախտները չէր բերում։ Հերվա ուսանողուհիների ոտը բարի էր. լավ ապրում էին, լավ էլ աշխատում էին։ Ընդհանրապես տարին լավ սկսեցին. Մերուժանին պակասող նյութերով ապահովեցին և ուղարկեցին Լենինգրադ դիսերտացիան գրելու։ Այնտեղից էլ նվեր ստացան հնագիտական մի զույգ ուսանողուհի։ Լավ նվեր էր, բայց սոված ուսանողուհիներին պահել էր պետք։ Օգը փոխել՝ ախորժակի էին եկել։ Երկու բարակիրան արարածներ էին, բայց կարծես ջուլհակուհիների բրիգադ էր ճամբար դրել։ Չէին քնում ու սոված ման էին երկու ժամը մեկ։ Ջահել էին, կարող էին ամառն էլ արթուն անցկացնել, բայց տղերքին հանդիստ էր պետք։ Նա՝ տանը աշխատավարձի էին սպասում։ Իսկ աշխատավարձը, դաշտայինն էլ հետը, չէր հերիքում անգամ աղջիկներին։

Հետո, գյուղի տղերքը պաշարած էին պահում արշավախմբի կացարանը։ Տղերքը, ճիշտ է, մեծ օժանդակություն էին (թե չէ աղջիկների ախորժակը փակելը հեշտ չէր), բայց, մեկ էլ, տանում-չէին բերում։ Հնագետները անհանգստանում էին. սերը՝ սեր, քեֆը՝ քեֆ, բայց կարող էին նաև սպանել։

Տնակը գյուղի ամենաբարձր կետի վրա էր, ջուրը չէր բարձրանում, և ջուր բերում էին պահակի տնեցիները։ Վտիտ երեխաները դանթարի տակ բեկված գալիս, տեսնում էին սլացիկ ուսանողուհիներին սենյակներում անքուն, կիսամերկ, սոված հածելիս... Պահակը շաբաթը մի գառ էր մորթում, բայց հնագետները տեսնում էին դա ինչ է նստում իրենց վրա. տնակը կամաց-կամաց կահ-կարասուց մերկանում էր, իսկ զույգը դուրս գրելու ժամանակը մոտենալու փոխարեն կարծես հեռանում էր։ Ինչ արած, կերակրել էր պետք այդ սիրո հրեշներին։ Արժեր, որ կերակրեին։ Պարզասրտության, ջանասիրության, ուտել-չուրանալու դիմաց արժեր, որ օրը մի գառ ուտեին, այնինչ ուտում էին շաբաթը մեկը։

Բաժանվելիս ուսանողուհիները տղերքի վզներովն ընկել, հոնգուր-հոնգուր լալիս էին։ Նրանք սրտանց էին կապվել

այս հարավին, ուր ճահիճ ու մոծակ չկա և կարող ես զօրդիշեր կիսամերկ թրև գալ, այս երկրին, ուր տղամարդիկ իրենց երեխաներին հավասար հոգ էին տանում ուրիշի կանանց և փոխարենը ուզում են ընդամենը սեր։

Աղջիկները երազում էին եկող տարի վերադառնալ, բայց Ժաննան Մոսկվայից գալու էր և երկրի հնագիտական ֆակուլտետներին հայտ չներկայացրին. արշավախմբի կացարանը նեղ կգար Ժաննային ու աղջիկներին։

Բայց Ժաննան փոխվել էր։ Այն ջահել, կրակոտ մարդաթողից միայն հեշտ ծիծաղելն էր մնացել։ Կոտրվել էր մի տեսակ։ Մտահոգը՝ մտահոգ չէր, բայց մտասևեռված էր տան վրա և նախկինի նման արշավախմբի եռանդի սնուցողը չէր։ Մի խոսքով, մեջը սեր չկար։

Հրանտը հույսեր էր կապել նրա վերադարձի հետ։ Հրանտը մտածել էր տղամարդավարի պարզ. ջահել մարդաթողը կեռա, կփրփրի՝ կնստի, երբ նստեց, հուսալի սիրո կարիք կունենա, երբ ունեցավ, ինքը դեմը կգա։ Հրանտը հասկանում էր, որ Ժաննան երեխա-երեխա ամուսնացել՝ ամուսնությունը լուծ է տեսել։ Արագ բաժանվելով՝ իրեն վերածընված է գտել։ Այդ ժամանակ նրա աչքին երևալը Հրանտը ճիշտ չէր համարել։ Ճիշտը, մտածել էր, սպասելն է։ Բայց Ժաննան երկու տարի մեծ մայրաքաղաքի ազատ կյանքից հետո եկել ու, ահա, ամուսնանալ էր ուզում։

Հրանտը, գուցե, հոգու խորքում ուզենար կնոջից բաժանվել, բայց բարդությունները միտքը շեղում էին գիտությունից։ Ժաննան, գուցե, հոգու խորքում երազեր հուսալի սեր ու ամուսին, բայց Հրանտը անաստղ տղամարդ էր, շան հավատարմության դրոշմն էլ ճակատին էր, իսկ Ժաննան հանդարտվել էր թեև, բայց այն արյունն էր, որ մի ոհմակ անաղուհաց քրդի շներին երևի թե գերադասեր տանու քոսոտից։

Ժաննան ուզեց Ավոյի ձեռքի վարունգին աղ անի ու Հրանտի հայացքը բռնեց։ Ժաննայի ձեռքը, սակայն, չկարկամեց, Ավոյի վարունգից սահուն անցավ, ճախրեց սփռոցի վրա, աղ ցանեց մնացածին, ասես այդ հիմնական միտումով էլ մղվել էր առաջ։ Հրանտը նրա շարժումների այդ անխուճապ, սահուն անցումներն էլ սիրում էր։

Լուռ, անախորժակ ուտում էին։ Վարունգը տղամարդկանց ատամների տակ այնպես էր ղռթղռթում, ասես ճակընդեղ ուտող հիվանդ տավարի գոմում լիներ։

Տղամարդկանց անախորժակ ուտելը Ժաննային միշտ էր հուսահատեցրել։ Նա ելավ, գնաց ավտոյի դուռը բացեց, կիսով ներս մտավ (շունչը կտրվում էր արևի տակ շիկացած մետաղե տուփի ներսում) և դուրս ելավ մի շիշ գինի ձեռքին։

Այդ գինին հասկանալի չէ ինչից են ստանում։ Արտադրողները չեն ասում, որ ծախվի, առնողները հետևողական չեն լինում, որովհետև ընտրելու բան չկա։ Անորոշ հայտնի է, որ գինու սպիրտն են բացում։ Այսինքն, ջրի մեջ քիչ սպիրտ են լցնում և որպեսզի այդ խառնուրդը շնչեխ, էլի ինչ-որ թույն են ավելացնում, որից տղամարդիկ շան նման կատաղում են։ Իսկ գիշերը ծարավ տոչորվում են։ Այդքան հեղուկ խմելուց հետո մեռնում են ծարավից։ Այդպես մի քանի տարի խմում ու երեսուն տարեկանից տառապում են ստամոքսի խոցից։

Ժաննան դեմքին զզվանքի արտահայտություն էր տվել, այսինքն՝ գինին տաք է։ Պիտի որ գինին եռալիս լիներ խցանի տակ, բայց Հրանտը խցանը բոլորեքյան կտրեց ու շիշը քաշեց գլուխը։ Արևը վերից էր վառում, շիկացած քարը տակից, իսկ նա կպել էլ եռման գինու շշից. եթե խորովվում ենք՝ խորովվենք, էլ թերախորով լինելնե՛րս ինչ է։

— Հրանտը ցնդում է,— Ժաննայի ականջին ասաց Ավոն։

Հրանտը շշի կողքից աչքերը հարցական շլեց։ Ավոն նշանացի հրաժարվեց իր բաժնից՝ հանգիստ խմիր։ Հրանտը շիշը ցամաքեցրեց և ուսի վրայով, կտրիճաբար շպրտեց։ Շիշը ընկավ բերանի վրա, վեր թռավ ու նստեց դամբարանից հանած հողաթմբին։

— Ա՛հ,— շշմեց Ժաննան։ Այդքան քար ու կարկառի մեջ շիշը իջել էր գետնին, թռել ու նստել էլի հողին։ Ժաննայի զարմանքը շշի վրա էր, բայց շշի գծած կորագծի մյուս ծայրին Հրանտն էր, և սա ինքնաբավ ժպտաց։

— Նշան ենք բռնում,— Ավոն վեր թռավ տեղից։

Տղայությունը երկուսին էլ կալավ։ Ժաննան էլ քար էր վերցնում (ափսոս էր, որ պատահական դիպչեր), և տղամարդիկ աճապարեցին։

— Զմոտենաս։

— Պուճուր քարով։

— Փետով հաշիվ չի...

— Մ՚պրի Ավոն...

Խփողը Ավոն էր, բայց Ժաննան լավ տեսավ, որ Հրանտի քարը կորագծով իջնում էր շշի վրա։ Մինչ դա կախվել էր շշի վրա, Ավոյի տականց նետած քարը կարճառաջ սուրաց ու վայրկյան առաջ շիշը ցրիվ տվեց։ Հրանտինը ապարդյուն Բրմփաց հողին։ Ջարդված շշի զնգոցը դեռ ականջներում էր և այդ խուլ անկումը հագիվ թե հնչեր, բայց Հրանտը անօգնական տնքոցը կարծես թե լսեց։

Զահրումար գինին տեղ էր հասնում, և Հրանտը շիշը նշանի առնելու Հովոյի կոչի մեջ դիտավորություն տեսավ։ Մարդ մի կյանք ապրում և գուցե մեկ անգամ է իր ձեռքով կատարված նման հրաշք տեսնում, իսկ Ավոն, ահա, շշի վայրէջքի հրաշքը արագ ցնդեցնել ուզեց։ Եվ Հրանտին էլ հիմարացնելով խաղի մեջ քաշեց, որ իր ձեռքով արվի։ Եվ վերջին պահին էլ ավելի հիմարացրեց՝ ինքը խփելով։

Ավոն եկավ նստեց ու տղայաբար խնդում էր Հրանտի վրա։ Ժաննան սփոփոցը հավաքում էր։ Հրանտը աջ ուսը կախ գնում էր դեպի ավտոն։

Երբ շարժվել էին, Ավոն խոսեց.

— Թե ինչի՞ էինք արևի տակ հաց ուտում։

— Իսկապես,— զարմացավ Ժաննան։

— Ի՞նչ կերանք որ,— քամահրեց Հրանտը։

Հաց կերան, որովհետև հենց դաշտից քշելու էին տուն, բայց գյուղի խաչմերուկի վրա Ավոն հարցրեց.

— Ո՞ւր քշեմ։

— Բազա,— հրամայեց Հրանտը։

Ժաննան տարակուսած նայեց երկուսին էլ, բայց արդեն գյուղի ճանապարհին էին։

Գյուղի խանութի առաջ կանգ առան առանց պայմանավորվելու։ Ավտոն կարծես ձի էր՝ բնազդով կանգնեց։ Այդ խանութում ոչխարի չսառեցրած միս երբեմն լինում էր։

Լինում էր նաև սատկած ոչխարի չսառեցրած միս, որը, իհարկե, անասուն չպահող հայկական գյուղերից եկողների համար էր։ Անասուն չպահողները լավ չեն ջոկում սատկածն ու չսատկածը, ջոկեն էլ՝ առնում են, որովհետև եթե խանութի գինին ու օղին մարդուն միանգամից չեն սպանում, սատկած ոչխարի միսը ինչի՞ պիտի սպանի։ Հետո, օղուն զոռ էին տալիս և թույնը թույնով շեղոքանում էր։

Այս խանութում խմիչք լինում էր անգամ սակավապետության ժամանակները։ Խմիչքների վերին թարեքին «Սիբիրսկայա»-ի տուղ շշերն էին՝ որակի նշան ճանճի ծնուկով։ Եթե ոչ տասը, գոնե յոթ տարի առաջ քաշած օղի պիտի լիներ։

Բազայում ալարկոտ փոխվեցին, ալարկոտ լվացվեցին, սենյակներում անիմաստ գնացին-եկան, վերջապես նստեցին հացի։ Այդ ընթացքում, իհարկե, օղին սառնարանում քիչ սառավ։

— Մրսած ես,— ասաց Ավոն, երբ Հրանտը առաջը քաշեց տոմատով «Ստավրիդայի» երկրորդ տուփը։ Հրանտը անորոշ բրթմնջաց՝ առաջիդ հացը կեր։ Նստած էին պատշգամբում։ Արագածից արդեն փչում էր իրիկվա քամին։ Ցերեկվա տապից շշմած գյուղը իրիկնամուտի ձայներով շնչի էր գալիս։ Տարվա այդ եղանակին եղջիները Արագածի վրա են լինում, բայց տնապահ փոքրամասնությունը մի հայ գյուղի բնակչության չափ էլի կար։

Հրանտը ուտելուց հոգնեց։ Ելավ, մի պտույտ արավ սենյակներում, եկավ կանգնեց Ժաննայի թիկունքին ու անսպասելի երգեց.

— Նամակ, նամակ, նամակ էլ կստանաս,

Խաբար, խաբար, խաբար էլ կստանաս...

Երգը այդքանն էր, կամ իմացածն էր այդքան։ Երբ մի տասն անգամ երկտողը կրկնվել էր, Հրանտը անսպասելի էլ ընդհատեց.

— Մեր թաղում մի գիժ կար, անունը Կարո, քսան տարեկանում նույնն էր, ինչ քառասուն տարեկանում։ Հարսին մռայլ, կենտրոնացած ուղեկցում էր Ջանգվի ձորի պահես-

տը՝ աշխատանքի, այնտեղից վերադառնում էր երանությունից սեպերը բաց... Իրենից եմ սովորել.

Նամակ, նամակ, նամակ էլ կստանաս...

Երբ Հրանտը ներս էր գնացել թեյ դնելու, Ժաննան հարցրեց.

— Իրո՞ք ցնդում է։

— Լրիվ քո մեղքը չի,— զգաստացրեց Ավոն։ Այս հանգով խոսեցին։ Մի ժամանակ մտերիմ եղած, հետո սառած մարդկանց խոսակցություն էր. խոսեին՝ չէր լինում, չխոսեին՝ չէր լինում։

— Հարա՞յ,— ներսից գոռաց Հրանտը։

Ժաննան վեր թռավ տեղից, Ավոն հոնքն իսկ չշարժեց։ Բայց պահ անց Ժաննայի քրքիջի վրա ելավ գնաց։ Հրանտը եռման ջուրը թեյնիկի մեջ լցնելու փոխարեն լցրել էր հընդկական թեյի լիտրանոց տուփի մեջ։ Դրանում երկու ամսվա խմելիք կար։ Ժաննան ծիծաղից նվաղել էր, Հրանտը ծոծրակն էր քորում։ Ավոն թեյի տուփը դատարկեց գույլի մեջ, թեյամանն էլ շուռ տվեց վրան։

— Մի շարաթ կխմեք։

Հետո վերնաշապիկը հագնելով պատշգամբ ելավ։ Օդը սառը չէր, բայց լույսի վրա եկող մժղուքը համը հանում էր։ Գյուղը նոր շնչի եկած՝ արդեն պատրաստվում էր մրափի. ժողովուրդը ժամը չորսից ոտքի վրա էր լինելու։

Նամակ, նամակ, նամակ էլ կստանաս...

Ավոն բաժակը ետ դրեց. երգողը Ժաննան էր։ Նա երգելով էլ պատշգամբ ելավ և մատերը խրեց Ավոյի մազերի մեջ։

— Նոսրացել են,— ասաց։

— Ցանովի չի, կնոսրանա։

— Քոռանամ...

— Զզվում եմ երկու տղամարդու արանքում գնացողեկող կնոջից։

— Ավո։— Նրա գոդացող մատերը քարացան։

Ավոն ուսով հպվեց կնոջ կողին՝ մի՛ նեղանա։

— Մի բաժակ թեյ բերե՞մ,— զգացվեց Ժաննան։

— Վեղրոն բեր, կամաց կխմենք։

Ժաննայի համար արդեն ամեն ինչ ծիծաղելի էր։ Երկրորդ շշի կեսից երեքի համար էլ ամեն բան, ամեն մանրուք ծիծաղելի էր։ Ու քանի որ ծիծաղելը հեշտացավ, անցան անեկդոտներին։ Հետո անցան անպարկեշտներին։ Գիշերվա մի ժամի հոգնեցին ու ամենքը իր ներսում իրենից ու մյուսներից զզվեց։

Վեց ժամ նստած էին ու գործից չէին խոսել։ Երբ քնելու էին գնում, Ավոն հարցրեց.

— Դամբարանը քանի՞ տարում հողով կլցվի... Եթե քամու հույսին մնա։

— Ես՞մ,— տհաճությամբ գործին անդրադարձավ Հրանտը։— Մի տաս... հարյուր տարում երևի։

— Շշի կտորները դամբարան լցվեցին,— սենտիմենտալ շերեալու համար Ավոն հորանջելով ասաց։

— Դա էլ մեզանից հիշատակ,— վերջին ուժերով ծիծաղեց Ժաննան։

— Առավոտը անցնելիս չթեքվե՞նք,— Ժաննայի կատակը չընդունելով, պատասխան էլ չսպասելով, իր համար խոսեց Ավոն։ Եվ, իհարկե, պատասխան չստացավ։

Գիշերը Հրանտը Ժաննայի անկողնու մոտ նստած, երկա՞ր բան էր ապացուցում։ Դուռը ծածկել չէր համարձակվել, և Ավոն դժվար քուն մտավ։ Ուշ արթնացան։ Առանց նախաճաշելու ճամփա ընկան։ Դամբարանից հինգ հարյուր քայլի վրա անցան, Ժաննան մղձավանջ երազն էր պատմում և ջարդված շիշը, դամբարանը մոռացան։ Այդպես էլ երբեք չհիշեցին։

ԿԱՆԱՅՔ

Որեմն, բանը հասել էր պատմվածք մեքենագրելուն։ Հազիվ մի շաբաթ ինքը նրանց առանձին թողեց, կամ նրանք իրեն մենակ թողեցին, մի քանի օր հետները սուրճ խմելու չգնաց, կամ նրանք հետները չտարան, և ահա բանը հասել է պատմվածք մեքենագրելուն։

Պատմվածքի մասին միտքը Ալիսին առավոտից գերել էր։ Ասես բարձրաձայն արտասանելիս լիներ, ասես բեմի համար սերտելիս լիներ — ասում էր շարահյուսական տարբերակներով, որ, ափսոս, սահմանափակ էին և հնչերանգներով, որոնց թիվ չկար։ Բայց ոչ մեկի մեջ այնքան հեգնանք չկար իր կամ նրա հանդեպ, որ սիրտը սփոփվեր ու միտքն էլ հանդարտվեր։ Այնուամենայնիվ, այսօր երեկվանից հեշտ էր։ Այսօր, վերջապես, հախուռն ապրումները խոսքով ձևակերպեց, և ինքը կարծես ինչ-որ չափով կողքից նայող դարձավ։

Սևուկի գործը մեքենագրելը չէր և սահեղներին խփում էր հատ-հատ։ Նա ավելի շատ հմայված էր իր երկար մատների պարով։ Սևուկը երեխայի պես թշերը փքել էր, շուրթերը անձայն արտաբերում էին տպվելիք բառերը, և Ալիսը միաժամանակ նրա շուրթերին նայելով՝ կասկածեց, թե դա կարող է իրեն ծանոթ պատմվածքը լինի։ «Չի՛ կարող պատահել»— իր կասկածամտությունից վախեցավ Ալիսը։ «Ամոթ քեզ»— ինքն իրեն նախատելով կասկածը փարատել ուզեց Ալիսը։ Բայց տեղը նստել չկարողացավ։ Ելավ, թեյնիկը դրեց, գնաց թարմ ջուր բերելու, որ երեկվանը փոխի, միջանցքում չպատահեց մեկին, որի հետ խոսել լիներ, շուտ դարձավ, թեյնիկը վերցրեց, ջուրը ո՞ւր թափի՝ լցրեց պարապ ծաղկամանի մեջ։ Թարմ ջրով թեյնիկը դրեց կրակին, քիչ էր մնում անելիքը չիմանար՝ աչքը ընկավ պատի օրացույցին։ Որոշեց գտնի տարվա քսաներկուերորդ հինգշաբթին, դաավ՝ մայիսի 28-ը։ Հեռախոսով զանգեց մի տեղ՝ չպատասխանեցին, մյուս համարով խոսեց՝ չէր կենտրոնանում...

Ալիսը Սևուկից ընդամենը վեց տարով էր մեծ, բայց ինքը նոր հասկացավ, որ դա ուրիշ սերունդ է՝ ճամփան կարճող սերունդ։ Ալիսը իրեն նախապաշարված կին չէր համարում, բայց մինչ բանը պատմվածք մեքենագրելուն կհասներ, իրենք երեք ամիս սուրճ էին խմում համարյա քույր ու եղբոր պես։ Չորրորդ ամիսն էր գնում՝ դեռ ոչ մի բան չկար, թեև նահանջելու տեղ էլ կարծես չունեին։ Երբ տղամարդը

կողքով անցնում էր, հա՛ մղվում էր, որ ձեռքը բռնի, զրուցելիս՝ խոսքը ձգում էր, որ շուտ չհեռանա, ինչ տրամադրություն էլ ունենար, նրա հայացքը բռնելիս՝ ժպտում էր, որ կասկած չունենա... Ալիսի համար նա ոչ առաջինն էր, ոչ էլ երևի, վերջինը լիներ, ինքը տղամարդու միակը չէր հաստատ, բայց Ալիսի ուղածը քչից-շատից կայուն մի կապվածություն էր, որ կարծես թե կար։

Այստեղ Սևուկը եկավ։

Նա նոր դեմք չէր շենքում, հարկն էր պարզապես փոխել, և տղամարդիկ առանձնապես իրար չանցան։ Նաև իրենց սիրո լավ շրջանն էր, և Ալիսը այնքան էլ չանհանգստացավ։ Համենայն դեպս, ուզում էր, որ Սևուկը մի կապվածություն ունենա։ Երևան, այո, կար, բայց Սևուկը դեռ այն տարիքում չէր, որ միայն մայրությունով գոհանար կամ լիարժեք մայրություն զգար։ Նա ինքը դեռ երևան էր և իր երևան, երևի թե, այն խաղընկերն էր, որ խոսվում է, երբ ուրիշ խաղընկեր ես գտնում և իսկույն ներում է՝ հենց վերադարձար։

Սևուկը, ուրեմն, խանդի առարկա այն տեսակն էր, որին շուտ են սիրում, որին շուտ են ներում։

...Պատմվածքը ձեռագիր էր, բայց կասկածը, թե դա իր քանիցս մեքենագրածն է, Ալիսին հանգիստ չէր տալիս։ Հեղինակը գոհ չէր գրածից և մի քանի անգամ մեքենագրել տվեց։ Ահա տարին լրանում է, ու պատմվածքը էլի ձեռագիր է։ Ուրեմն վրան էլի աշխատել է։ Ուրեմն, մեքենագրածից արտագրել է։ Փաստորեն նորից է գրել։ Փաստորեն դա ուրիշ պատմվածք է։ Եվ հետաքրքիրն ինչ է՝ մեքենագրողն էլ ուրիշ է։

Աղջիկներից ամեն մեկը քիչումիչ մեքենագրել գիտեր, բայց Ալիսը այդ ձեռագրին վարժվել էր։ Գրամեքենան իրենցը չէր, երբ փոքր-մոքր բան էր լինում մեքենագրելու, խընդրում-բերում էին և մեքենագրողը Ալիսն էր լինում։ Այդ մեքենան սենյակից սենյակ շրջում էր։ Այդ շենքում երկուսից մեկը ինչ-որ բան գրում էր, որովհետև հիմնարկի ղեկավարը գրում էր։ Հազիվ թե ղեկավարին դուր գալու համար գրելիս լիներին։ Հազիվ թե ղեկավարն ուզենար շենքում մրցակից ունենալ, բայց ստացվում էր, որ աշխատանքի ընդունում

էր նրանց, ովքեր երեխա ժամանակ գրական խմբակ են գնացել։ (Որպես աշխատող նրանք ինչ էլ լինեին, գոնե պատրաստի ընթերցող էին)։ Եվ նախապատվությունը տրվում էր գրասեր, մարդաթող կանանց։ Ճիշտն ասած սա տղամարդու աշխատելու տեղ էլ չէր, բայց շրջապատ էր, բարեկամություն էր, վերադասի գանգ էր — տղամարդիկ էլ կային։

Պատմվածքի հերոսակը այդ սակավ տղամարդկանցից էր։ Վարչության աստիճանակարգում նա չորրորդ աստիճանի ծառայող էր, երկար միջանցքի վերջին կեռմանի վրա չորս սենյակ զբաղեցնող ենթաբաժնում մի փոքր իշխանավոր էր, որին սակայն քարտուղարուհի չէր հասնում, ու ինքն էլ շատ գրելու դատապարտված չէր, իսկ տարին մեկ գրած մի քանի էջը աղջիկները կմեքենագրեին ընկերաբար թեկուզ տասն անգամ։

Երեկ ահա ներս մտավ ու ասաց.

— Աղջիկներ, ո՞վ կմեքենագրի, չորս էջ բան է։

Նայեց երկուսին էլ, բայց ուզում էր, որ Սևուկը անի։ Երեի տղամարդու հայացքը Ալիսի վրա պաղեց, երեի Սևուկի վրա ջերմացավ, և երկուսն էլ զգացին ով պիտի անի։ Տղամարդը չէր ուզենա, որ այդքան զգացվի, դրա համար էլ ասաց՝ ծխախոտը բերանում ու աչքերը, իբր, ծխից կկոցած։ Եվ թղթերը անփույթ ընդհանուր սեղանին դրեց։ Այսինքն, սեղանը Ալիսինն էր, բայց դռանը ամենամոտը լինելով՝ սենյակին հասցնագրվածը, ընդհանուրին հասանելիքը գրվում էր այդ սեղանին։ Ուրեմն, դա նախ Ալիսի սեղանն էր և ինքը կարող էր խնդիրքը իրեն ուղղված համարել։

— Երկուսով կանենք,— ելքը գտավ Սևուկը։

— Տղումեջ կանենք,— խայթեց Ալիսը։

— Ոնց անհավասար չի՞ լինի,— կատակով դուրս պրծնել ուզեց տղամարդը։

Այս ոգով մի քանի խոսք էլ փոխանակեցին, որը գնալով միշտ է անհամանում։

Դա երեկ կեսօրից հետո էր։ Ալիսը գործատեղից շուտ ելավ։ Մտավ խանութ, մտավ կինո, ընկերուհուն զանգեց՝ հանդիպեցին, տանը հեռուստացույց նայեց, եղբոր ու հոր տարատները արդուկեց, ուշ անկողին մտավ, որ շուտ քուն

մտնի, ու քունը չտարավ։ Առավոտը եկավ գործի՝ Սևուկը մի էջ մեքենագրել էր։

— Դու ձեռագիր կարդալուց ո՞նց ես։

«Լավ, էլի»— մտքում աղաչեց Ալիսը, բայց խոստացավ, որ կեսօրից հետո կթելադրի։ Հույս ուներ, որ ուրիշ պատմվածք կլինի։ Հույս ուներ, որ Սևուկը մի կերպ գլուխ կհանի։

Գնաց սենյակներով շրջեց, տեղակալի աչքին երևաց՝ հանձնարարություն ստացավ, կեսօրից հետո էլ զբաղմունք ունեցավ։ Թղթեր էր ջոկվում, մատյաններ էր ստուգում, գրություններ էր ծրարում... Զբաղմունքը կհերիքեր նաև վաղվան, բայց համբերությունը հատավ։ «Համոզվիր՝ պրծնի»— ասաց ինքն իրեն ու տեղից ելավ։

Սևուկը շարշարվում էր ձեռագրի վրա։

— Արդեն կարդում եմ, գործդ արա։

Երեխայի պես էլ անմեղ նեղացել էր։

— Գործից ձանձրացել եմ, տուր կարդամ,— պնդեց Ալիսը։

— Կանեմ, կանեմ,— ժպտաց ու ներեց Սևուկը։

Ալիսը նստեց թելադրելու, և դա այն նույն պատմվածքն էր։ Մնում էր վեր կենա ու գնա, բայց մնաց նստած։ Հիվանդագին մի հետաքրքրասիրություն բռնեց նրան. ի՞նչ է փոխել, ինչքանո՞վ է փոխել։ Կարծես իրենք դա երկուսով էին գրել, և նա իրեն չհարցնելով՝ բաներ է փոխել, որ չի կարելի, կարծես իրենից ստացած նամակը տվել են կարդալու նրան, ում հա՛տկապես չէր կարելի։

Եվ որ Սևուկը այդպես դանդաղ էր մեքենագրում, կարծես դանդաղ, ցավացնելով տնտղում էր Ալիսի Հոգին... Գոնե շուտ վերջացնեն։ Գոնե շուտ վերջանա։ Եվ Ալիսը թելադրեց։ Բան էր փոխված՝ տխուր էր, փոխված չէր՝ տրխուր էր։

ԲՈՒՔԸ, ԵՐԳԸ, ԵՐԵԽԱՆ

Երեխան արդեն հասնում էր դպրոցին։ Վագքից արդեն անցել էր քելքի։ Վախենում էր գլուխը վեր առնի՝ դպրոցը տեսնի սպասածից հեռու։ Նաև թիփին աչքերին էր խփում, և երեխան գնում էր՝ փալաս կեպին աչքերին քաշած։

Դպրոցին, փաստորեն, հասել էր, մնում էր հասնի շեմին։ Զորս պատերի ապահովության հեռանկարից արդեն տաքանում էր։ Կամ լավ թմրել էր։ Այդպես գլուխը կախ գնալու դեմ էր առնելու դռանը և իրեն հաճելի անակնկալ էր մատուցելու։

Երեխան այնքան էր ինքն իրեն ապավինել, այնքան էր մտել ինքն իր մեջ, որ մրմռացող ոտքերը այլևս իրենը չէին։ Նա արդեն ոտքերին օգնել չէր կարող և ճիշտը դրանց գոյությունը ուրանալն էր։ Եթե ոտքերը իրենը չեն, ուրեմն ցավն էլ իրենը չի, խորամանկում էր երեխան։

Ձեռքից եկածը արել էր. գուլպայի ծակ թաթը ձգել, ոտքի տակ էր դրել, ոտքին մեծ, պոռթած կոշիկների ներսը դարման ու քուրջ էր խցկել, ձեռքն ընկածով կապոտել էր, բայց կարծես բան արած չլիներ։ Սառած, անդգալի, պրոտեզի վրա քաշած կոշիկի նման, ուրիշի ոտքին եղածի նման անհաղորդակից կային և տարօրինակ էլ էր, որ հետը դալիս էին։ Այսինքն, առաջն ընկած գնում էին։

Երեխան հասավ դռանը ու դուռը չբացած՝ ներսում էր... Դուռը դեմ ընկավ, ու երեխան ցրտից ոտքից գլուխ դողվեց։ Ուրեմն, դեռ ներսում չէր։

— Հարութ քեռի,— կանչեց,— սառա, Հարութ քեռի։

Երեխային թվաց հեռվի՞ց, դանդաղ, միջանցքով գալիս են։ Գալիս-չեն հասնում։ Դռան դեմ անակնկալի եկած երեխան անպաշտպան էր։ Այդքան չզգալու տված ցուրտը, այդքան իրենից վանած, արհամարհված ու չարացած ցուրտը մեկեն, վրիժառու խփել էր երեխային։ Կամքը հաշվարկված

էր որոշակի տարածության, որոշակի ժամանակի համար և հիմա իր գործը արել՝ վերացել էր։ Սառնամանիքի դեմ նոր խաղ սկսել չէր լինի, և կամազուրկ մարմինը ցրտի բերանը տված՝ երեխան տղամարդավարի մղկտում էր։ Ու ամեն պահ ներսում հայտնվելու հույս ուներ։

Դռան փեղկը հույսով ետ գնաց ու դխկոցով դեմ առավ նիզին։

— Էսքան շուտ ո՞ւր ես եկել, այ լակոտ։

Հանգը այնպես չէր, թե՝ այ որդի, բա դու մեղք չե՞ս, բա դու քուն ու դաղար չունե՞ս... Ձայնը քնահարամ եղած հարբածի չարություն ուներ, բայց երեխան չարությունը բիձու փնթփնթոց հասկացավ։

Լավ մարդուն նեղություն տալու համար երեխան մեղավորություն զգաց և արդեն որպես ներս մտած՝ բացատրեց, արդարացավ.

— Հարութ քեռի,— ասաց,— վազելով եմ եկել՝ շուտ հասա։

— Իմ գործը չի, Ավագը կարգադրել է չթողնեմ։

Երեխան կարծեց լավ չարդարացավ։

— Ավագը չի իմանա, Հարութ քեռի, կմտնեմ նստարանի տակ։

— Գնա ձեր թախտի տակ մտի,— ասաց։

Երեխան կարծեց հոգու հետ խաղ են անում։ Կարծեց հետագա վայելքն են ձգելով քաղցրացնում։

— Ավագը իմ մոր քեռու տղեն է, Հարութ քեռի, բաց արա։

— Գնա, գնա,— ասաց,— մի անգամ էլ ետ վազի արի՝ ժամը կգա։

Երեխան առաջին պահ չհավատաց, բայց հեռացող ոտնաձայնը իրոք հեռանում էր։ Երեխայի խելքը մտավ, որ, ուրեմն, ճիշտը տուն գնալ—դառնալն է։ Եթե գուրը չեն բացում, ուրեմն ճիշտը դա է, ու իր լավն են ուզում։ Բայց բուքը, մութը, բքից ասկված, տեղները չմատնող շները... Երեխան գպրոցի մատույցներում ձեռքի փայտը վախի հետ շպրտել էր՝ ո՞նց գաներ։ Հետո, ախր, ո՞նց կարող էր տուն գնալ-դառնալը ավելի հարմար լինել։ Իսկ եթե հարմար չէ, գուրն ինչո՞ւ չբացեցին... Երեխայի միտքն էլ էր սառչում։ Իսկ

ոտքերը ինքնաբերաբար դոփդոփում էին։ Երեխան արդեն պարում էր։ Բայց ուսը դցած շորի պայուսակը ընդունում էր և գրպանիկի թանաքամանը կարող էր շուռ գալ։ Երեխան ձախ ձեռքը հանեց թևատակից, շորի վրայից բռնեց թանաքամանը, բութ, սառչող մատով խցեց բերանը։ Հիմա կարող էր ապահով թռչկոտել։

Ձախ ձեռքն էլ ոտքերի հետ սառչում էր։ Ականջներին երեխան կամքի գերագույն լարումով ձեռք չէր տալիս. տրոբեր՝ մղկտոցը սաստկանալու էր։ Միտքը ցրտից, ցավից շեղել էր պետք։ Մի բան անել պետք էր։ Հիշեց, որ գրպանում հացի կտոր կա, աջ ձեռքն էլ թևատակից հանեց, կոխեց գրպանը՝ լիքը ձյուն էր, ձյան տակ հացը բարացել էր։ Եվ երեխան սկսեց երգել.

Այսքան ուրախ կյանքը մեր ընկեր էսինչն է ավել,
Այսքան ուրախ կյանքը մեր ընկեր էսինչն է ավել...

— Սովից ցնդել ե՞ս, այ լակոտ։

Երեխան քարացավ։ Ամոթից մի երկվայրկյան նույնիսկ տաքացավ։ Իր երգելը երգեցողության դասատուն անգամ լսած չկար, իսկ սա Ավագն էր։ Երեխան կուչ եկավ ու սպասում էր, որ վզակոթին տան։ Միաժամանակ սպասում էր դուռը բացվելուն։ Լարումից երեխան մի քիչ էլ տաքացավ։

ՉԵՌՔԴ ԵՏ ՏԱՐ ՅԱՎԻ ՎՐԱՅԻՑ

Տաքսին երեք հոգի էր տանում։ Վարորդը առաջարկել էր, մենք էլ արագ համաձայնել էինք երկուական ռուբլի ավելի տալով՝ թեթև ճանապարհ ընկել։ Ինձ հետ տարիքով մի կին էր եռեք նստած և այդ վազ ճաղատացած, կարճլիկ տղամարդն էր, վարորդի կողքին։ Երևանից այնպիսի թափ էինք առել, որ բացառվում էր միանգամից զրույց սկսելը։ Կարծես սպասում էինք շունչներս տեղը գա։ Արագությունը

կլանել էր ոչ միայն վարորդին, այլև ուղևորներիս։ Աշտարակն անցանք՝ դարձյալ լուռ էինք։ Ապարան չհասած... ճաղատս խայթվածի նման շուռ եկավ ու պայթեց՝ «Բա սա օրենք է՞», և չդեց մինչև Կիրովական։

Խոսքն այն մասին էր, որ իր ներկայացրած փաստաթղթերում սխալ են գտել և իրեն զրկել են ինքնագործ խմբի հետ Բեռլին գնալուց, չնայած ինքն արդեն տասը տարի խմբի առաջին դհոլչին է։ Ուրեմն, որ ինքը ժամանակին գլխի չի ընկել կեղծ փաստաթուղթ հանի, հիմա պիտի տուժի՞։ Բա տասը տարի՞ն... Բա հիմա որ մինիստրի տեղակալը Ալավերդի է գալիս հուշարձանի բացմանը, չբռնի՞ ասի՝ ով Գերմանիա է գնում, թող նա էլ դհոլ խփի։

Այս վրիժառու միտքը նրան հանգիստ չէր տալիս, բայց զգացվում էր, որ չի անի։ Այդ սրտի տերը չէր։ Ասում էր՝ բռունցքը բաժնի վարիչի սեղանին է խփել, բայց տարբերակներով վերապատմելուց հասկացվում էր, որ չի արել, ներս է գցել ու հիմա մեր քթից է բերում։

Տարեց կինը կարեկցանքի շեշտով նրան հարցեր էր տալիս և պարզվեց, որ տղան իմ հայրենակիցն է։

— Ի՞նչ մարդ են նոյեմբերյանցիք,— հարցրեց կինը։

— Թո՜ւ, մարդ չեն,— ասաց և Ապարանից Նոյեմբերյան հողին հավասարեցրեց նոյեմբերյանցիներին։ Եվ իր ծննդավայրի մասին այդքան թշնամանքով խոսող մեկին ես չեմ տեսել։ Նա տասը տարի առաջ էր տուն դրել Ալավերդիում և տեղացիներից փոխ էր առել ալավերդցիների՝ այդ կնոջ ու իր ասելով՝ ատելությունը հանդեպ նոյեմբերյանցիները։ Ինչ կա որ, հարևանները իրար արևով չեն երդվում. սրա անասունը նրա հողն է մտնում, սրա շունը նրա հավն է գողում, մեկը մյուսի աչքաղրած գործին է տեր կանգնում, մեկը տունը շինում է այնտեղ, որտեղ մյուսին թվում էր ինքն էր շինելու... Ուրիշ պատճառ որ չլինի, երևկվա գյուղացի ալավերդցին իրեն քաղաքաբնակ է համարում, նոյեմբերյանցուն՝ գյուղացի, այդ էլ որ չլինի՝ մի քանի նոյեմբերյանցի Ալավերդու շուկայում դեղձ են ծախում... Հարևանին չսիրելու առիթ միշտ կա։ Բայց ի՞նչն էր այդպես դաղել այդ մարդուն։ (Ես զգում էի, որ նրա ոտքը պինդ են կոխել, կամ ակամա են տրորել, իսկ ոտքը բարակ է եղել ու հոգին՝ փոքր։ Ըստ

Երևույթին նրանց ցեղից էր, ովքեր ոռնում են դեռ ցավ չտված և ոխը կտակում են որդիներին)։ Պարզվեց, որ Նոյեմբերյանում ապրող հոր տան ատաղձագործական հաստոցի հոսանքը անջատել են։ Կարգ չի, որ տանը հաստոց լինի և անջատել են։

Մեզ ուղեկից կինը տասը տարի աշխատել էր Նոյեմբերյանում, և նա էլ վստահ էր, որ Նոյեմբերյանցիք մարդ չեն։ Նա բժշկուհի էր կամ բուժակուհի։ Ես հպանցիկ նայեցի նրան ու համոզված մտածեցի, որ նա երիտասարդ տարիներին վատ չի զգացել Նոյեմբերյանում, պարզապես երիտասարդությունն անցնում է՝ փողը մնում, և հիմա, որ ամեն ծառայության համար ինչ-որ կերպ վարձահատույց են լինում նրա բնազավառում, հիմա, այսօրվա շահերի տեսակետից այն տարիներին նայելիս (սերը անցնում է, փողը՝ մնում) այդ տասը տարին իսկապես կորած է նրա համար։

— Մենակ՝ Նասիբյանը,— ասաց կինը։

— Հա՜, Նասիբյանը։

Այդ կինը այսօր Երևանից տաքսիով գնում էր Կիրովական հատկապես մի խանութ մտնելու ու ետ դառնալու։

Չէ, ես Երևանից Կիրովական պիտի ավտոբուսով գնացած լինեի։

...Մեղրու ճանապարհին ես ճանապարհի ընկեր ունեի տարիքն առած մի գործընկերոջ, և նա ամբողջ ճանապարհին հաշտվել չկարողացավ այն բանի հետ, որ ուղևորներից մի քանիսը հինգ ժամվա ճանապարհը գնալու են ոտքի վրա։ Նա ստեպ-ստեպ շուռ էր գալիս նրանց կողմն ու ասում՝ «բա էսենց բան կլինի՞»։ Նրա մտահոգությունը ոչ ոք չէր կիսում։ Նստածներից մեծ մասը այդպես ոտքի վրա գնացած պիտի լիներ։ Նոյեմբերյանցուս համար էլ արտառոց մի բան չէր հինգ-վեց ժամ ոտքի վրա ճանապարհ գնալը։ Միայն պատերազմ ու բանտ տեսած այդ մարդը չէր հանդարտվում։

— Բա էսենց բան կլինի՞։

Արցախեցու նրա առոգանությունը ավելի սրտառուչ էր դարձնում նրա խոսքը։

Նա դարաբաղցի էր, ես՝ լոռեցի, երկուսով Նախիջևանը կտրում էինք՝ Մեղրիում Երևանը ներկայացնելու։ Երկուսս էլ այդ ճանապարհը անցնում էինք առաջին անգամ, և ինձ

Թվաց նրա վրդովմունքը վերաբերում էր նախ՝ ավտոբուսից դուրս եղածին։ Համենայն դեպս, այդ նախադասությունը ձև էր տալիս նորանոցյալ ժամանակներում թափառող իմ մրտքերին։ Նա՝ յոթանասունն անց, ես՝ քառասունին մոտ, այդ օրը ծանոթացած՝ չէինք խոսում, բայց մեր մտածմունքի առարկան նույն Արաքսի հովիտն էր։ Միայն երկրորդական հարցերում էինք տարամիտ. վերջում ճանապարհը նրան նրկար էր թվացել, իսկ ես չէի զգացել ժամանակն ինչպես անցավ։ Ինձ ոչինչ չէին ասել այն գյուղերի անունները, որոնց միջով խճուղին անցել էր։ Պատմությունը չգիտի այդ գյուղերի անունները։ Նման է այն բանին, որ ձեռքդ ես առել մի մասունք մատյան, որի գրերը անշնորհքորեն քերել, նոր գիր են գրել։ Եվ կազմն են փոխել։ Եվ վերնագիրն է անհեթեթ։

Նույն Արաքսի հովիտն էր՝ նույնի ավազուտներով ու շիկահողով, ծիրանի ու խաղողի այգիներով, միայն արտերն էին շատ, մեկ էլ՝ հայացքի ապավեն Արարատը չկար։

Կանգառը հարկադիր էր։ Ավտոբուսի վարորդը հինգ ժամ տեսլիք ճանապարհի վրա, երևում էր, կանգառ տալու մտադրություն չուներ, նրան այն էլ էր շատ թվում, որ անցագիր ստուգելու համար մի տեղ կանգնեցրել էին, մի տեղ էլ պիտի կանգնեցնեին։ Բայց շարժիչի միալար-հուսալի հոբնդյունը սկսեց գլսկալ, և դադար առանք։

Ճանապարհի ձախին քարակոփ բլուր էր սարքած և քարերի արանքներից ու շաղափած անցքերից ջուր էր ցայտում։ Լցնովի հողին առատ խոտ էր աճել։ Բլուրը օազիս էր կիսաանապատի մեջ, և ջուրը գով ու անհամ էր։ Ուզեցի հասկանալ, մի քանի անգամ փորձեցի ու չհասկացա՝ ջուրը Վայոց ձորի լեռներից եկող ջուր է, որ դաշտում անհամացել է, թե՞ ընդերքից է հանված... Մեքենան չէր շարժվում։ Ինձ ճանձրացրեց համը տեղը բերելու իմ համառությունը։ Անցա ճանապարհի աջ կողմը, բարձրացա այն բլրակի մնացորդի վրա, որ խճուղու տակ էր մնացել և հորդահոս մի խողովակ ու տակը նով տեսա։ Դեպի հարավ, շերևացող Արաքսի կողմ արտեր ու այգիներ էին փռված և հորիզոնը փակում էր ցածր մի բլրաշար։ Հատ երևույթին, դա Արաքսից այն կողմ էր ընկնում... Եվ այստեղ էր որ տեսա Փոքր Մասիսը Մեծի ֆոնի վրա։

Ես կռացա նավի վրա, ջուր շփեցի երեսիս և ինքս ինձ ասի՝ «Քեզ այսքանն է հասնում Շարուրի դաշտից»։

Չնայած Արարատը չէր երևում, մնացյալ ճանապարհին իմ հայացքը դեռ Արաքսի կողմն էր։ Բայց հայացքս ոչ մի բանի վրա կանգ չէր առնում, և այդ ամայությունը ավելի սրատամաշ էր, քան Արարատի գերյալ պատկերին նայելը։ Պարապության մեջ նայելուց կսկծացող աչքերս հա՛ ձախ էին դառնում՝ հանդստանալու Վայոց ձորի, ապա Զանգեզուրի լեռնաշղթայի վրա... Բայց հեռվում ձգվող լեռնաշղթաների վրա շաղվող հայացքիս դեմ հածում էր Զորավարի առաջնորդած գաղթականության խմբակային ուրվականը...

Այն, ինչ բազմաշարշար այդ քարավանը քաշել էր Արաքսից այն կողմ, դեռ ողջ տառապանքը չէր։ Արևմտյանից զրկված այդ ժողովուրդը դեռ պիտի Արևելյան Հայաստանը կտրեր լայնքով ու երկայնքով՝ Ղարս—Ալեքսանդրապոլ—Զալալօղլի—Դսեղ—Գիլիջան—Մարտունի—Վայոց ձոր—Նախիջևան—Ջուլֆա—Խոյ—ետ՝ Ջուլֆա—Նախիջևան—Զանգեզուր—Դարալագյազ—Երևան։

Ի՞նչ հեղինակության տեր պիտի լիներ մարդը, որ կարողանար հետապնդող թշնամու վերահաս գնդակի տակ սովյալ ժողովրդին տանել այդ տանջանքի ադեղով, որի վրա են ընկնում Հայաստանի բոլոր լեռնանցքները, և ճակատ տար այս անգամ Խոյի կողմից ներխուժող Թուրքին, ապա ևս մի ծանր նահանջով զորքն ու բազմապատկված ժողովրդին անցկացներ Զանգեզուրի լեռնաշղթան և Զանգեզուրը պահեր մեզ համար։ Եվ ի՞նչ ապարախտ պիտի լինի զորավարը, որ այդքան կաշկանդված լինի իրեն ապավինած ժողովրդի ապահովության հոգսով ու չկարողանա իրեն վայել թափով շուռ դա, իր ծանր ձեռքը բարձրացնի առելի թշնամու վրա... Թուրք ավարառուի ամեն անգամ բերող բախտից էր, որ տասնութ թվականի մայիսից հետո զորավարի ձեռքերը կապված էին գաղթականության բախտով։

1985 թվականի հունիսի վերջերին ես թերթելու եմ այդ օրերի տարեգրությունը և մի զուգադիպություն ապշեցնելու է ինձ. այն օրերին, երբ ես Նախիջևանի դաշտում, ապա և Մեղրու հյուրանոցի իմ սենյակում մտածելիս եմ եղել երկու մեծ հայերի մասին, 67 տարի առաջ այդ մի քանի օրը Ան-

դրանիկը Դսեղում եղել է Թումանյանի հյուրը։ Եվս մի զուգադիպություն. ինձ այդ խորհրդածություններին մղած օրը, որ դուրս եմ եկել Երևանից, մայիսի 22-ն է եղել։ 67 տարի առաջ այդ օրը հայկական 5-րդ հրաձգային գունդը և գնդին աջակցող աշխարհազոր գունդը Թշնամուն ջախջախում են Ղամշլու գյուղի մոտ և օրվա վերջին գրավում Սարդարապատ գյուղը։ Դա մեծ ճակատամարտը շահելու առաջին քայլն էր։

...Իսկ Ղարաքիլիսան բաց էր Թշնամու առաջ։ Բայց Սարդարապատը գրավելուց երկու օր հետո հայերը այնուամենայնիվ ճակատամարտ են տալիս, որ տևում է երեք օր։ Այդ ճակատամարտում հայերը փաստորեն գիտակցված նահատակության գնացին, որովհետև Ղարաքիլիսայի բախտը վճռված էր այն բանից հետո, երբ պաշտպանության կարևորագույն բնագիծը՝ Ջաջուռը, հանձնվել էր առանց մարտի։

...Երբ Լոռվա սարերից իջել, Կիրովականով դուրս էի գալիս դեպի Երևան, հիշեցի, որ չորս օր առաջ Կիրովական մտնելիս մոռացել էի այդ օրերին իմ մտքերին իշխող պատմությունը։ Խանգարեցին հիշել։ Եվ խանգարողը դհոլչին էր, որի նմանները միշտ են ջլատել մեր միտքն ու վիժեցրել են մեր միաբանությունը։

Իսկ Մեղրու ճանապարհի իմ ծերուկ ընկերն ու ես մի բանում էինք տարակարծիք. վերջում պարզվեց՝ ճանապարհը նրան երկար էր թվացել (այդ էլ երևի իր հոգնած ոսկորներից էր, կամ՝ կցկտուր էր եղել նրա ծերունական միտքը— ժամանակն էլ է դժվար անցնում խորդուբորդություններով), իսկ ես չիմացա ժամանակն ինչպես անցավ։

Եվ ժամանակը չզգալով հանդերձ, հակառակ ֆիզիկայի օրենքի, ինձ մեծ էր թվացել Հայաստանը։

Երևի դա Հայաստանից էր։

Մեծ արագությունների երկիր չէ Հայաստանը։ Արագությունը փոքրացնում է երկիրը։ Հանդարտ ընթացքի դեպքում Հայաստանը մեծ հայրենիք է։ Հայաստանը ինքը հանդարտ ընթացք է թելադրում։ Որքան դեմնի երեսը, տասն այդքան գեմնի տակ է Հայաստանը, և տողերս գրելու հուլիսի այս օրերին հնագետ ընկերոջս հետ Արարատյան դաշտի ղռերում երեք հազար տարվա դամբարան պեղելիս ժամանակը ինձ

պատկերանում է ուղղահայաց ընթացքով։ Ինձ համար մարդկության քաղաքակրթությունը ծլում է երկրի ընդերքից և ճառագում տիեզերք... Գուցեև սպառվելու միտումով։

Հայաստանը իր խորությամբ է երկիր։ Հայաստանը մանրամասն սիրելու հայրենիք է և այդպես մանրամասն սիրելու դեպքում մեկ չէ՝ տասը կյանք էլ չես սպառի։ Միայն թե շտապելու հարկ չկա։ Առավել ևս համեմատելու կարիք չկա։ Քարտեզը երկրի ու հայրենիքի մասին գաղափար չի տալիս, մասշտաբայնությունը հանգստություն չի բերում բնակչի հոգուն, որովհետև մեծը դեռ մեծարժեք չէ, նաև մեծից մեծը միշտ կա։

Երևանից հինգ ժամ ճանապարհ անցնելով՝ ես Մեղրին տեսա իբրև նոր Հայաստան։ Քարտեզի պատկերը, անշուշտ, իմ մեջ կար, բայց եթե այնպես է ստացվել, որ Հայաստանի հարավային սահմանը աղեղ է տվել և դու գնում ես աղեղի լարով ու ճանապարհին հանդիպած անունները քեզ ոչինչ չեն ասում, ուրեմն աղեղի մյուս ծայրին Մեղրին պիտի գրտնես իբրև նոր Հայաստան։ Այո, քարտեզի պատկերը իմ մտքում կար, բայց Մեղրին դտնվեց հրաշքի նման... Հայաստանը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգված, մի կենտ ոստոտ ոտքը Արևելքի սրտում և ոտքը Արաքսով, այստե՛ղ, հա՛տված... Վերջին հատումն է։ Բայց կարող էր վերջինը չլինել և Մեղրու գոյությունը հրաշքի է նման։

Առավոտ վաղ հյուրանոցի պատշգամբ դուրս գալով, ես նայում էի ուս-ուսի կանգնած պղնձագույն լեռներին և շաղված հայացքով ու քնատ ուղեղով չէի ըմբռնում, որ իրար ձուլված այդ լեռների մեջ կիրճ կա և այդ կիրճով անցնում է Արաքսը՝ սահման, և թե ահա այն ապառաժոտ լանջը Հայաստան է, մյուսը՝ Պարսկաստան... Նույն լեռնաստանն է, նույն քարն ու թուփը, նույն սողուններն ու գեռուններն են արևկող անում նույն արևի տակ, և միայն մարդի՞կ են տարբեր, թե՞ ջոկված։ Ես ինչքա՞ն պիտի ապրեմ այստեղ, որպեսզի քնից արթնանալով՝ արդեն մեջս լինի մերն ու ոչ մերը։

Առավոտները մարդիկ երեխայի են նման։ Առավոտը մարդուս մանկությունն է և իրականությունը չընդունելու վաղորդյան այդ վայրկյանները մեզ դարձնում են Երեխաների Երկրի քաղաքացի։

Ես երկու օր գնում-գալիս էի Արաքսի ափով և պղտոր, ժանգի գույնի ջուրը իմ լսած, կարդացած, երգածս Արաքսի պատկերին չէր բռնում։ Ամեն ժողովուրդ իր մայր գետն ունի, բայց հայը միակն է գուցե, որի համար մայր գետը մնում է գրքերում հոսող, երգերում շառաչող գետ։ Այսպե՞ս էլ մայր գետ լինի, պղտոր ժամանակների միջով պղտոր հոսում է, անցնում է երկրիդ կողը քերելով և երևում է ասես ապակու միջից... Մեծ ակվարիումի հոսող ջուր է մայր Արաքսը։

Արաքսի ջրի գույնն ունեն Մեղրու լեռները։ Եվ պղտոր ջրի ափին, ժանգոտ լեռների մեջ՝ առափի քարին նստած լողացող գեղեցկուհու է նման Մեղրի քաղաքը։ Իրեն հասանելիք արդյունաբերական ազատ ու տենդը Ագարակին տված Մեղրին տեսնելով՝ ես առաջին անգամ հպարտություն զգացի հայ քաղաքաբնակի համար և առանց կասկածի որոշեցի, որ այդպիսի քաղաք է եղել Վանը։

Այդպիսի քաղաք կարող էր լինել Ալավերդին, բայց Ալավերդին իր քավության Ագարակը չունի և քաղաքի ապառաժներն իսկ սևացած են, նաև վարդերն են քիչ, և ծառն է սակավ, և գետն է ձկնազուրկ, մարդիկ էլ մեծ քաղաքի բնակչի հովեր ունեն։ Ալավերդին մեծ քաղաքները կապող ճանապարհի վրա է, իսկ մեծ ճանապարհի վրա ապրողները մեծ աշխարհի հետ լինելու պատրանք են ունենում։

Գնացքների պատուհաններից շպրտած աղբի մեջ քաղաքակրթության պերճ դեմքը, այնուամենայնիվ, կա, և մեծ աշխարհի հետ առաջին շփումը պերճ աղբի հետ է լինում՝ «Վինսթոնի» տուփ է, մանդոյի անոթ, «Կոկա»-ի շիշ, ծամոնի թուղթ, «ադիդասով» ինչ-որ ներքնաշոր...

Եվ այնուամենայնիվ ալավերդցին ավելի շուտ է Սև ծով հասնում։ Նա երկաթգծի մի ծայրին Երևանը, մյուսին՝ Թբիլիսին ունի, չհաշված Մոսկվան... Այս կողմերում մինչև դարակես քաղաք ասելով Թիֆլիս են հասկացել։ Նաև Շուլավերի սև շուկան կա... Ալավերդցին ընտրության հնարավորություն ունի և այնքան էլ կապված չէ Երևանի հետ։

Ամեն անգամ լոռի գնալով ես զգում եմ, որ հիվանդանում եմ տեղական հայրենասիրությամբ և երեք օրից Երևանի ու Արարատյան դաշտի գոյությունը ինձ թվում է անիրական,

չնայած իմ տունն այդտեղ է ու իմ երեխաները ծնվել ու ապրում են այդ դաշտում։ Բայց այս անգամ ինձ խիստ անհանգստացրեց Երևանի բնակիչ լոռեցուս՝ Արարատյան դաշտը ուրանալը (Լույս դառնան մեր միաբանության գործի թագավոր ու ռամիկ նահատակները — նրանք այդ ինչպե՞ս էին մեզ ի մի բերելու...) Անհանգստությունս գուցե նրանից էր, որ տասը օրվա մեջ ես Հայաստանը երկայնքով կտրել-դարձել էի, գուցե նրանից, որ ոտքս Հայաստանից դուրս էի դրել... Վերջին հաշվով, ես տեսել էի Մեղրին։

Մեղրին, զգում ես, այնպե՞ս մայրաքաղաքի կարիք ունի։ Մեղրին իր վարդով ու նռով, իր կոկլիկ-կառուցիկ տեսքով իրեն անապահով է զգում իր ձկնառատ Արաքսի ափին, իսկ Ալավերդին, ահա, իր ծուխ ու մրի մեջ, իր անձուկ ձորում, ձկնաղուրկ Դեբեդի ափին մայրաքաղաքի կարիք այնքան էլ չունի։ Եվ անկեղծորեն էլ ալավերդցիք զարմանում են, որ Երևանի նման շոգ ու ազատ քաղաքում մարդը, մանավանդ՝ լոռեցին, կարող է ապրել։ Եվ այդ քամահրանքից էլ անցնում, ակնարկում են Երևանի խանական անցյալը, Ալեքսանդրապոլը Թուրքին անկոիվ հանձնելը... Ես հայրենակցի իրավունքով սաստեցի իմ հյուրընկալին. «Եթե ասված մեզ Թշնամու ոտքը կոտրող բնաշխարհ է տվել, դա մեր բախտն է, ոչ թե գերազանցությունը»։ Եվ պատմեցի Արաքսի հովտից ստացած իմ տպավորությունը։

Երբ հասանք Ջուլֆայի մատույցները, այս դաշտը ինձ մի լայնածավալ գետ պատկերացավ, որի ահռելի լայնքը շիշտակի նեղանում ու այստեղից դուրս է հորդում Պարսկաստան։ Իսկ ավելի ճիշտ՝ այս դաշտը սելավի հուն է եղել և գաղթը եղել է պարբերաբար կրկնվող սելավի նման. Մասիսի լանջերից, Ծաղկունյաց լեռներից, Գեղամա լեռներից, Զանգեզուրի լեռներից գետերի հունով՝ ժողովուրդը քշվել, լցվել է հովիտը և դաշտն էլ սրբելով՝ հոսել Պարսկաստան։ («Տղամարդկանց շատերին սրի քաշեցին, այլոց գերեվարեցին կանանցով ու մանուկներով և անցկացրին Երասխ գետից, Ջուղայի հունով»— գրում է Ղևոնդը 637 թվականի մասին)։ Եվ չարաբախտորեն այնքա՞ն հարմար է այս դաշտը տեղահանության համար։ Եվ սրբված ու լայնարձակ դաշտը

այնպե՞ս գայթակղիչ է անասունի ու անասունի եռնից գնացողի համար՝ հակառակ ուղղությամբ։

...Լույս դառնա Ներսես Աշտարակեցին, որ այս դաշտը վերաստեղծեց հայերի երկիր։

Արաքսի ափով երկու օր գնալ-գալով, բնականաբար ես մտածում էի Դերեղի ափին անցկացրած իմ կյանքի մասին։ 65 թվականին մեր ուսերորդ դասարանը ինչ-որ ձևով նշեց Եղեռնի հիսնամյակը։ Մենք արդեն ինչ-ինչ բաներ գիտեինք թուրքության մասին (դեռ 56 թվականի Նեղոսի հղնաժամի օրերին ինչ-ինչ աղբյուրներից առած լուրերով տարեկից լակոտները մեզ սպառնում էին օսմանցիների գալով), բայց ոչ մեկիս մտքով չէր անցնի և զպրոցն էլ ավարտեցինք՝ երկար ժամանակ չիմացանք, որ ընդամենը գետի այն ափով, երկաթգծով, որի վրա հավասարակշռություններս պահելու վարժություններ էինք անում,— որ այդտեղով թուրքեր են անցել։ Եվ որ Սադախլու կայարանի կառամատույցին — ողջ հովտում միակ ասֆալտապատ՝ ջահելության ճեմելատեղին, թուրքի ոտ է դիպել։ Պատմությունը, փաստորեն, մեզ ամեն ինչի մասին տեղեկություն էր տվել, բացի մեզ հետ պատահածի ու մեր կողքին եղածի։

Այո, թուրքերը ոչ միայն Ալեքսանդրապոլ, այլև Լոռի մտան։

Եթե ոսոխը մտել էր Փամբակի ավազանը, Ղարաքիլիսայի բախտը վճռված էր։ Թուրքը թարախ էր կապել Բազումի և Փամբակի լեռնաշղթաների միջև և պիտի բաց թողնվեր, եկք պիտի տրվեր նրա ընթացքին ամենակարճ ու անվնաս ճանապարհով։ Եթե Լոռու ձորն ու Դիլիջանի ուղին փակվեր, անօրենը շուռ էր գալու Ապարանի վրա և Երևանի վիճակը աղետալի էր լինելու։ Թուրքական զորքը շտապում էր Բաքու, բայց ռազմաերթով չէր անցնի Երևան—Սևան ճանապարհը։ Ղարաքիլիսան հանձնելը Երևանի փրկությունն էր։ Բայց երկու-երեք օրը բավական եղավ, որպեսզի հասկացվեր, թե ասկյարությունը այն զորքը չէ, որին կարելի լինի ռազմավարական նկատառումներով քաղաք հանձնել։ Երկրամասի թուրքամետ ամբոխն էլ իր հերթին էր սանձազերծվել և հայ զորքը Դիլիջանից դարձավ՝ վանդալների նրանց կամքը կոտրելու, Ապարանի ուղղությամբ անարգել մաներ-

ները խափանելու, վերջապես՝ ավարառու ամբոխի ախորժակը փակելու և ըստ էության հանձնվելիք քաղաքի տակ մի այնպիսի ճակատամարտ տալու, որը Թուրք ռազմագետները երկար են հիշելու։

Թշնամին Թողնվում է Հայաստանի Թիկունքը։ Նրա ճանապարհը բաց էր մինչև Բաքվի մատույցները, բայց նվաճողը անպատիժ արշավանքի չէր գնում, գնում էր ճակատի երկրորդ բնագծի դեմ։ Բաքվի կոմունայի հայկական գնդերը սպասում էին քաղաքի մատույցներում։

...Եթե Ղարաքիլիսայի ճակատամարտը որոշված լիներ և Անդրանիկի 4 հազարանոց ջոկատը հասներ Դսեղից, Թուրքերի տասը հազարանոց զորքի դեմ հայերը կունենային 11 հազար զինվոր և հավանաբար Թշնամուն ետ շպրտեին Ղարաքիլիսայից... ետ շպրտեին դեպի ո՞ւր։ Եղած ուժերով հակառակորդ չէր ջախջախվի, իսկ Ալեքսանդրապոլում նստած էր Թուրքական 15-րդ կովկասյան դիվիզիան, Ախալքալակն ու Ախալցխան, Բոլնիսն էլ հետը՝ զրավված էին, Թիֆլիսում գերմանացին էր, Լոռվա Թիկունքը Ղազախի կողմից անապահով էր, հարավից հարվածի տակ էր Զանգեզուրը,— Թուրքերը Ղարաքիլիսայից ետ շպրտեին դեպի ո՞ւր և քանի՞ օրով։ Եվ որտեղի՞ց էր մեզ համալրում գալու։ Գլխավոր զորախումբը գլխավոր խնդիր ուներ՝ պահել Երևանը, փակել Նախիջևանի դուռը, Իգդիրի կողմը, Արագածի հարավային լանջերի վրայով սպասվող հարձակումը, Ապարանը, Ախտան, Սևանը և ճակատամարտ տալ Սարդարապատի տակ։

...Արդյո՞ք այդ օրերին հայ առաջին բանաստեղծն ու առաջին զորավարը Դսեղում բանակած ջոկատը չէին դիտում Լոռվա երկրապահ զորք։ Արդյո՞ք Ղարաքիլիսայից հետո նրանք արդեն չէին մտածում Զանգեզուրի ու Նախիջևանի մասին...

Լոռի գնալով, ես հատկապես Դսեղ մտնելու մտադրություն չունեի։ Գործս այլ տեղի վրա էր, ճամփորդելուս առիթն էր այլ, բայց Մեղրին տեսնելուց հետո կուզենայի տեսնել Դսեղը։ Ըղձական-անկամ ցանկություն ցանկություն էլ մնաց։ Դսեղ մտնելս ինքնին չստացվեց, և ես Թողեցի դա իրերի բերումին։ Եվ իրերի բերումը ինձ սարերը տարավ...

Այն սարերը, որտեղով Զորավարի ջոկատն ու ջոկատին ապավինած ժողովուրդն էր անցել։

Երեք շաբաթ սարերում անձրև էր եկել և միայն տրակտորով էր հնարավոր գյուղից բարձրանալ։ Ճկուն ԴՏ-54-ի կցանը բեռնված էր տախտակով ու շիֆերով, և մենք այդ բեռի վրա, հարթ գետնին նստածի նման ծնկներս կզակներիս տակ բաշած՝ սար էինք բարձրանում։ Նստածներից այդպես ճանապարհ գնալու հմտություն չունեցողը ես պիտի լինեի, բայց 50—60-ական թվականներին բեռնատարների թափքերին անցկացրածս օրերի փորձը ինձ պահում էր հավասարակշռության մեջ։ Ետպատերազմյան շրջանի ցելերի գազան ԴՏ-ի հարազատ հոնդյունի ամեն ելևէջ հուշում էր ճանապարհի վիճակը և մկաններս հին վարժանքի հիշողությամբ կանխում էին կցանի ցնցումները։ Ցեխը ծածկում էր տրակտորի թրթուրները։ Ատամնաբույժ ընկերս ինձ զբաղեցնելու համար միալար պատմություններ էր անում, բայց ես կարող էի ականջիս պոչով լսել, որովհետև նա իմ կըրտսեր ընկերն էր, իսկ բոլորովին չլսել չէի կարող — հյուրընկալի նրա ջանադրությունը սրտաշարժ էր։ Այդ մի քանի օրը ընկերս լռում էր միայն այն ժամանակ, երբ ես խոսում էի (իսկ ես քիչ էի խոսում) և մեկ էլ՝ երբ սեղանի վրա քնում էր։ Այսպես, ուտել խմելով խոսում, խոսում ու մեկ էլ քնում էր աչքերը բաց։ Երբ քունը խոսելու ժամանակ էր վրա տալիս, դառնում էր ռնգախոս, ապա լռում էր, շնչառությունը հանդարտվում էր, ու աչքերը պաղում էին։ Խոսողին «հա», «հըմ» անելով արձագանքում էր, բայց քնած էր լինում։ Այդ միջոցին ինձ գերբնական սարսուռ էր պատում։ Անցնում էր 5—10 բոպե և նա քիչ-քիչ ուշքի էր գալիս։

Մենք վերելքը հաղթահարեցինք և մեր հայացքի դեմ բացվեց Գուգարաց լեռնաշխարհը։ Եվ մի շաբաթվա մեջ ես երկրորդ անգամ տեսա, որ Հայաստանը վիթխարի երկիր է, որ՝ Արարատյան դաշտի ներփակության մեջ, տաքդեղի ու սամիթի ածուի եղրին, այսքան սահմանին դեմ առած, Արարատը աչքիդ առաջ ցավ ունենալով՝ պայթում է սիրտդ նեղությունից և հայացքդ պատեպատ է զարկվում... քարտեզ գտնելու։ Այնինչ քարտեզը սփոփանք չէ. թվում է՝ Մոսկվայից ինքնաթիռով Երևան գալիս վայրէջքի թափին Հա-

յաստանը նեղ է գալու, թվում է ինքնաթիռը գետնից կտրվելիս Հայաստանի սահմանից դուրս է ընկնելու...

Քանի մենք բարձրանում էինք, լեռնաշխարհը մեզ հետ բարձրանում էր։ Արդեն այն սահմաններում էինք, որտեղ օդը ծփում է, ցնծում է մարդու թոքը և սիրտը խայտում է լեռնային գետակի ձկան նման։

Հյուսիսի վրա Վիրահայոց լեռներն էին, հյուսիս-արևմուտք՝ Ջավախքի լեռնաշղթան ու դրա թիկունքին երևացողը, թերևս, Ջավախքի բարձրավանդակն էր, Բազումի լեռները մնում էին հարավ-արևելք... Եվ այնպե՞ս անտագնապ էր մարդուս հայացքը սահմաններ չընդունող բարձունքների վրա։

Հյուսիս-արևելյան կողմը Գուգարաց լեռնաշղթայի մի բազուկ կտրում էր հորիզոնը։ Դրանից անդին Քոի հովիտն էր և տեսողության սահմանից դուրս էր Կովկասի շղթան։ Այդ լեռնաբազկի վրա մի տեղ պետք է որ պապիս ուրթատեղը լինի։ Այսօրվա կողմից ես չեմ բարձրացել այս սարերը և չէի կողմնորոշվում, բայց երկու-երեք տարի ապրել եմ սարերում ամառ թե ձմեռ։ Այն օրերին ես պիտի որ նայած լինեմ այս կողմի սարերին և ինչ-որ բան երազած։ Ես այն ժամանակ հայրենիքի զգացողություն ունեցած չեմ եղել, որպեսզի սահմանի գիտակցության դառնությունը ապրած լինեմ և աշխարհն ինձ համար այս է եղել, որ տրված է ամենայն կենդանի արարածի ի տնօրինություն։ Իմ հոգին խայտալիս է եղել անդիտության մեջ։ Ես չեմ իմացել անգամ, որ Քաչալ Ավետիքը իմ խորթ պապն է, որ նա ամուսնացել է Թուրքերի գյուղի ճանապարհին սպանված իմ ունեոր Մեխակ պապի այրու հետ։ Չգիտեի անգամ, որ մարդ երկու զույգ պապ ու տատ է ունենում, որովհետև հայրս տասնհինգ տարեկան՝ հորական պապս, որ Թիֆլիս պառկած է եղել հիվանդանոցում և հիվանդատես թե հիվանդապահ դնացած տատս մի քանի օրվա մեջ մեռել ու թաղվել են անհայտ է որտեղ։

Իմ սարերում մնալը մի բերան պակասեցնում էր մեր բազմաբերան ընտանիքից։ Ինձ կարող էին սարերի օդ ու ջրի հույսին թողնել ես մեկ-երկու տարի և հաղիվ թե պարտուսի նախանձախնդիրները պակասություն զգային։ Բայց

հայրը կրտսեր որդուն ուսումի էր տալու և օգոստոսի մի օր ծածկած սայլով սարերից իջեցրեց Դեբեդի հովտի կիսաանապատը։

Սայլի մեջ ես անձրև չեմ զգացել. ըստ երևույթին քնած եմ եղել։ Համենայն դեպս ոչինչ չեմ հիշում մինչև այն րոպեն, երբ սայլից հայրս ինձ առավ թամբին։ Ուզեցել էր՝ որդին տեսնի այդ օրը... Անձրևից հետո արև էր շողում։ Մենք գնում էինք մի ճանապարհով, որ հետո պիտի նմանեցնեմ ու մտքումս այդ ճանապարհը պիտի մնա Դեբեդի ափից մեր տուն տանող ճանապարհի տեսքով... Անձրևից հետո լվացված երկրի վրա արև էր շողում, օդը զրնգում էր այսօրվա նման և այդ պահի բերկրանքը առաջին իմ բերկրանքն է լինելու, որ թեւադրված չի լինելու շոշափելի բանից։ Այդ օրը աչքերս բացվել են հրաշքի դեմ... Բայց ահա թե ինչու է այդ ճանապարհը հիշողությանս մեջ տպավորված լինելու Դեբեդի ափից մեր տուն տանող ճանապարհի տեսքով. բերկրանքի այդ պահին հաջորդող հիշողությունս մեր տուն մտնելն է։ Տուն եմ մտնում՝ անկողինը հատակին է փռված։ Անկողինը տրորելով գնացի դեպի մայրս, «երեխեն» կանչի վրա մեխվեցի։ «Երեխեն էս չի՞»— հարցրի, ցույց տալով ինձնից հետո ծնված քրոջս. «էլի կա»,— ասաց մայրս և նրա ժպիտը առաջին ամոթխած ժպիտն է լինելու, որ ես տեսել եմ։

Բարուրի մեջ քնած էր իմ քույրիկներից ևս մեկը։ Ուրեմն սարերում իմ եղած ժամանակ մեր ընտանիքում ծնվել էր ութերորդ երեխան։ Դա Մեծ սատակման տարին էր և շաբաթներ անց մեր տունը բռնած տխրությունից ես ենթադրեցի, թե մեռել է իմ միակ պապը, որովհետև հայրս ներս մտավ ու ասաց. «Պապը մեռել է»։ Բայց պապս ապրեց ևս տասը տարի և նրա հոգեհացին ինքս տղա թոռներս փառավորապես խմեցինք։

Ամառ-ձմեռ սարերում լինող տատս ու պապս երևի թե 18 թվականի մայիսին տեսել են Դսեղից դուրս եկած զաղթականության ու զորքի երթը... Այսօր հունիսի ինն է։ Երկու շաբաթ անընդհատ եկող անձրևը դադարել էր գիշերս ու առավոտը այնպես բացվեց, որ մարդուս ոտքերը կտրվում էին հողից։ Միայն ցեխն էր ծնկահար։ Բայց սարերում գե-

տինը շուտ է չորանում։ Շուտ կչորանա, քանի դեռ իսպառ տրորված չէ։

...Սարերը կտրտված են ճանապարհներով։ Նորանոր ճանապարհներ են բացվում, որովհետև հեղեղը հինը ավերում է։ Նոր ճանապարհը հողի կուրծքը բացում է նոր հեղեղի դեմ և ջուրը կամաց-կամաց սարերը սրբում է հողից։ Ծաղկունքից է սրբում, որովհետև թվում է սարերում խոտ չի աճում, աճում է միայն ծաղիկ և այդ ծաղկից է լինելու մեր վայելելիք յուղն ու սերուցքը, ինչի ակնկալիքը ունենք ես ու ընկերս։

...Օդը զնգում էր, արևը կիզում։ Սաստկացող քաղցը նույնիսկ հաճելի էր՝ արտակարգ նախաճաշի հեռանկարով։ Մեր բախտից էր, որ երկու շաբաթ տևած անձրևը կտրվել էր մեր գյուղ մտնելու դիշերը։ Բայց հունիսին, այսպես թե այնպես, երեք օրից մեկը կարող է արևոտ լինել։ Այնինչ զորքն ու ժողովուրդը այստեղով անցել է մայիսին... Ով մայիսին եղել է սարերում, նա գիտի ինչ թաց ու թոն է կապում երկնքին այսքան մոտ երկրին։ Եվ այդպիսի մի ժամանակ մեր տառապյալ ժողովուրդն ու զորքը գնացել է՝ ծաղկունքին արյուն տալով։

Մեկ դիվիզիա բանակի իրավունք ստացած երկրին զորավարի շորս հազարանոց ջոկատը ավելորդ էր գալիս, և Անդրանիկը նենգ դաշնակցին ուխտադրժության առիթ չտալու համար իր ջոկատն ու ջոկատին ապավինած ժողովրդին տանում էր սարերով, մի բուռ Հայաստանի սահմանները քերելով՝ Դիլիջանով, Սևանով, Մարտունիով, Վայոց ձորով՝ Նախիջևան... Մի՞թե զորավարը հավատում էր, թե Թավրիզի ուղղությամբ գործող բանակի գիծը կճեղքի նման դժոխային երթ անցած ջոկատով ու ժողովրդով։ Արդյո՞ք զորավարի նպատակը չէր՝ շոշափել Արաքսից այն կողմ բանակած Թուրքերի ուժերը և նրանց դիտավորությունները Նախիջևանի ու Զանգեզուրի նկատմամբ, նաև՝ Նախիջևանում ազգամիջյան կռիվները կանխելը և անհրաժեշտության դեպքում հայ ազգաբնակչությունը ապահովաբար Նախիջևանից դուրս բերելը... Այդ խնդիրը չէին կարող աչքի առաջ չունենալ Հայոց առաջին բանաստեղծն ու առաջին զորավարը։

Լոռվա սարերում, երկրային խուճապից ու ժիտրից վեր կանգնած, կյանքի հավերժության պատրանքին այդքան մոտ լինելով, հույսս դրած մի անակնկալ, այս բարձունքներում հնարավոր պայծառացման վրա, ես փորձում էի ըմբռնել երկու մեծ հայերի մտագրությունները մինչև վերջ։ Մտածում էի. այնուամենայնիվ Զանգեզուրին երկրապահ զորք ավելի անհրաժեշտ էր, քան Լոռուն, Նախիջևանին առավել, քան Զանգեզուրին, Արցախին առավել, քան Նախիջևանին... Բայց 67 տարիների համբությունը փառ էր կապում աչքերիս դեմ, շմտածելու սովոր ուղեղս նեղվում էր ժանգի տակ։

Միայն ապշելու կարողությունն էր մնացել և ապշում էի. այդքան բոլորը չուզենան ապրելդ ու հանկարծ ապրե՞ս...

...Սարերից ոտքով իջանք։ Իմ բեռը երկու բլիթ պանիր էր ու մի ման խավիծ, որ մայրը հետս էր դրել, որ Երևանում ապրող իր անվանի որդուն տանեմ։ Ուժս տեղը ու առավոտը լավ նախաճաշած, ուրթում մեղրով ու սերուցքով պնդացած՝ ես, սարերի սովորս, երկու կիլոմետրանոց վայրէջքի ավարտին արդեն քայլումեջ գայթում էի։ Սարից իջնելը երևելուց շատ հեշտ չէ, իմացողը գիտի, բայց այնուամենայնիվ... Այնուամենայնիվ ի՞նչ համեմատություն նրանց հետ... Ես պատկերացնելու մոտ էի։ Մոտ էի ավելի քան երկու օր առաջ, մոտ էի ավելի, քան այդ պահին որևէ մեկը, բայց այդ վերջին կետից մինչև պատկերացնելն ու զգալը այնքան տարածություն կա, որքան չիմանալուց իմանալը։ Ոչ, բացարձակապես անհնար էր պատկերացնել անգամ, թե ինչպես է այդ փախստական ժողովուրդն իր հիվանդների ու վիրավորների բեռան տակ, սովից ուժասպառ, թշնամուց հետապնդվելով՝ քայլել Երզնկայից Էրզրում—Ղարս—Ալեքսանդրապոլ—Զալալօղլի—Գսեղ—Դիլիջան—Ելենովկա — Բայազետ—Մարտունի—Մալիշկա—Նախիջևան— Ջուլֆա — Խոյ ապա՝ Նախիջևան—Զանգեզուր ճանապարհը... Եվ դրեթե միակ դեպքն է սա, երբ տեղահանված մեր ժողովուրդը պահպան ջոկատ է ունեցել։

Մարցագետի հետ սարերից իջած, գետի հետ դուրս եկանք գյուղի վրա։ Գետը գնալով՝ զորանում էր, ես՝ թալկանում։ Իմ հոգին լիքն էր բնությամբ, միտքս խճողված էր անստույգ պատմությամբ, ինքս ջարդված էի և իմ նորագյուտ ընկերը,

որի ընկերությունը այն ուրացող դհոլչուց հետո սպեղանի էր հոգուս, սպասում էր գյուղական այն լավ սեղանով, որի վրա ավելորդ բան չկա ու պակաս էլ չկա։

Նա ինձ հետ սարերը չբարձրացավ, որովհետև այդ մի արևոտ օրը կարող էր առաջիկա շաբաթվա մեջ վերջինը լինել՝ աչքը տեսածից է վախենում, իսկ կարտոֆիլի բուկլիցի ժամանակն անցնում էր։ Նա հատկապես այդ գործի համար ուրբաթ եկել էր Կիրովականից, բայց երեկվա անձրևի տակ էր ընկել։ Այս բարձրության վրա երկինքը ջղազարկնոջ է նման՝ լացն ու ծիծաղը հանկարծակի։

Մթնում էր։ Միառժամանակ դեռ նստել կլիներ պատշգամբում, բայց վառարանի գոյությունը անհանգիստ էր անում հովվերգության հակված հոգին։ Ճղոնները դարսեցի ինչպես կարգն է։ Դարսում էի դանդաղ և ամեն փայտ դնելով՝ մի տարով թեթևանում էր քառասնամյա իմ բեռը։ Կրակը ամեն տեղ բոլոր ժամանակներում նույն կերպ է բոցկլտում և դեպի մանկություն տանող ավելի լավ միջոց չկա, քան նախապատմական այս հրաշքը։ Հետո ծպեղներ արի ու դրեցի ճղոնների տակ ու արանքները։ Արարողություններից մերկացող այս կյանքում կրակ անելու արարողությունը դեռ կա՝ փառք կրակի աստծուն։ Շատ վաղուց տնական կերոսինի հոտ չէի առել բենզինով ներծծված քաղաքում ու չնայած բեռնատարների թափերին քարշ եկող տղա-երեխայիս քիթը մի ժամանակ քամահրանքով ծռմռվում էր կերոսինի ջրալի հոտից (այնինչ ռունգերս հաճույքով էին քաշում ու մինչև հիմա շնչառություն բացվում է բենզինի ցնդող հոտից), բայց այդ ժամին, այդ սենյակին՝ թախտով, պատուհանագոգով, պատուհանագոգին դրված զարթուցիչով, այդ սենյակին ու լայնանիստ վառարանին կերոսինի հոտն էր սազում, ինչպես բուրմունքը՝ ծաղկած դաշտին։

Եթե ծով ունենայինք՝ ծովից էր դուրս գալու մեր աստվածը, եթե անտառների տեր լինեինք՝ անտառից էր գալու, բայց չունենք և մեզ ահ ու խորհրդատվություն ներշնչողը կրակն է եղել։ Եվ կրակի միջից էր ելնելու մեր երեխա աստվածը։ Եվ քանի որ ամեն մարդ իր օջախն ունի, քանի որ ամեն մարդ ինքն է իր կրակն անում՝ առանձնյա, ինքնամփոփ է եղել մեր հավատը և մեզ չի կպել նախորի բնազդը։

Երեկոն խմելու չէր տրամադրում։ Ես այնքան լիքն էի տեսածով, լսածով, շնչածով, և զգայարաններս այնքան սրբված էին, որ խթանիչի կարիք չունեին։ Ինձ պետք էր ընդամենը այնքան, որ շիրմա լինի իմ ու առօրյայիս միջև։ Այդքանը արդեն կար և նրա ետև՝ կար, քուն էր մտել իմ տունն ու առտնին իմ հոգսը։ Մոռացում հարկավոր չէր։ Մոռացում չի էլ լինում, լինում է միայն ցավագին արթնացում։ Ամեն ավելորդ կաթիլը հիմա թույն էր իմ նորոգված արյան համար։

Ընկերս հայավարի համառ հյուրասիրությունը մի հնարով զուգակցում էր հարգալիր զիջողությանը, ես՝ ինձ ընծայված օրը պահպանելու ջանքս չէի թողնում հասներ անձնապաստանության... Իսկ երեխան հա՛ շուլալվում էր մեզ, զգալով, որ օդին ու զրույցը մեր ուշադրությունը շեղում են իրենից։ Նա չգիտեր, որ մի որոշակի աստիճանի վրա մենք հակվելու ենք դեպի իրեն... Այսինքն կարող էր արդեն քնած լինել։ Բայց մենք չէինք կարող չզրուցել։ Լոռում լինելով՝ չես կարող չխոսել Թումանյանի մասին, Թումանյանի մասին խոսելիս՝ չես կարող չհիշել կամավորական նահատակ Արտավազդին և «երկու քարի արանքում» թպրտացող հայ կամավորական շարժումը... Այդպես է, երբ մենք մեր սրբատաղեղ պահերին ուզում ենք մեր մեծերի մի լավ տողը հիշել, երկրորդ տողին մեր ձայնը խզվում է ցավից։ Այդպես է լինում Աբովյանին հիշելիս, Տերյանին հիշելիս, Վարուժանին հիշելիս, Չարենցին հիշելիս, Զոհրապին հիշելիս, Սիամանթոյին հիշելիս... Նահատակների ստեղծած գրականություն է մեր գրականությունը և մեզ վիճակված չէ ունենալ մաքուր պոեզիայից բավականություն ստացող գեղագնտի երանելի հոգեվիճակ։ Եվ եթե Քուչակն էլ չլիներ, մենք ի՞նչ էինք անելու գրականության ու կյանքի այս նեղվյալ «կապի» մղձավանջում։

Երեխան արևածաղկի քթից էր թռել, թշերը կարմիր, ծիծաղն անպակաս։ Քսմսվում էր մեզ ու կարկաչում, մեզ հետ էր բերում մեր մտասևեռ մռայլությունից, սառեցնում էր մեր բորբոքվածությունը, մեկ էլ պապանձվում-ապշում էր՝ իր հետ, այստեղ չլինելու մեր համառությունից, բայց երեխայաբար չէր հուսահատվում։

Քունը տանող երեխայի վրա իջնող ջերմությունից նրա թշերը կրակ էին կտրել, աչուկները կուլ էին գնում քնի ու արթնության սահմանի առեղծվածային փայլով... Եվ քունը գլխին երեխան, ընկերներիս հոգածու ներկայությունը, հավերժական կրակն ու պատուհանագոգին ժամանակի հետ չափ ընկած ժամացույցը ասում էին՝ Զեռդ ետ տար... Ետ տար ձեռդ ցավի վրայից՝ այս երեխայի գլուխը շոյիր, պրկված շուրթերդ սիրով ետ բեր՝ կարմիր խնձոր թուշը համբուրիր,— այս մի օրն էլ հա՛յ մի լինիր, գրողը տանի, հայ մի՛ լինիր։

ԾԱՆՐ ԼՈՒՅՍ

Վերտինսկին իր պաշտամունքն էր։ Զայնապնակը միշտ առանցքի վրա էր լինում՝ ասեղը իջեցնում էր, տեղավորվում էր հին բազմոցի իր անկյունում, ոտքերը քաշում էր տակը, թևերը խաչում էր կրծքին ու... խլանում էր այս աշխարհի ձայների հանդեպ։

...Դարասկզբի Մոսկվան, Կիևը, Խարկովն, Օդեսան, ամառանոցային քաղաքները՝ սիրո ուռկանում — փոքր ու մեծ զրքերից ծանոթ, լավ ու վատ ֆիլմերի մեջ հարություն առնող ցնո՞ր աշխարհ... Մառուղիներում՝ ճեմաբայլ ամբոխ, սպիտակ-փրփուր հանդերձների ծով, նվագարանների արծաթափայլը թույլ լապտերների լույսերի ներքո, արժանապատիվ երիտասարդների ձմռան սպիտակ փեշերին ձգվող աշնան փոզոցում, շքադռների բացվել-ծածկվելը լուսության ալկուն ծրխնիների շուրջ, և տղամարդիկ, որ անբիծ ճերմակ բաճկոններով են, գավազանները անցրած ունեն արմնկածալին, նրանք բարեսես ու բարեկիրթ են, սիրահետում են չդարպասելով, դալուկ մատներ համբուրել գիտեն և սիրած կանանց ծաղիկ են դրկում երկտողով հանդերձ...

Նա ուշացած էր այս աշխարհ եկել։ Կամ ժամանակից շուտ էր եկել։ Այսինքն. մարդու այն տեսակն էր, ում խփում են ամեն կարգի ժամանակները. հերոսականը՝ ավելի եռանդով, ոչ հերոսականը՝ ճղճիմությամբ, պատերազմականը՝ դաժանությամբ, ետպատերազմյանը՝ անտարբերությամբ, և նրանց համար ժամանակների լավն ու վատը չափվում է ցավի մեղմությամբ — ցավի ուժգնությամբ։

Բայց ժամանակ կար, երբ այս կյանքը նրա համար ապրելու տեղ էր։ Հետո նրան ի՞նչ պատահեց։ Այդ բանը նրան ե՞րբ էր պատահել։ Մոր փորին ուրիշ տղամարդու ձե՞ռք էր կպել, օրորոցը գիշերվա կեսին շո՞ւտ էր եկել, սովի տարի՞ն էր գժախոտ կերել... Խեղճ երեխա, անմեղ արարած, կյանքը թակարդ էր ծննդկան մոր ոտքերի առաջ, ճակատագիրն էր ջադու տատմեր, իսկ նա անտեղյակ աշխարհ եկավ ու պատրաստվում էր երջանկության...

Այսպես անտեղյակ աշխարհ գալիս ու պատրաստվում ես երջանկության, այնինչ ցեղիդ մեջ ինչ-որ մեկը սաղմնավորվել է արնապղծության սոսկալի մահճում. կամ մեկի մայրը ծոցվորության ութերորդ ամսում դիվոտել է լիալուսնի ծանր լույսից, կամ թե՝ պանդխտի կիսաայրի, մեջքի ցավից մորմոքվելով վեր է կացել մութուլուսին ու երեխեքին քնած թողել՝ դուրս է եկել իբր ցախի, իբր՝ գիշերվա մատղաշ սունկի, բոխու, սիբեխի, ավելուկի... Այսպես, գյուղից դուրս է եկել ու շաղաթաթախ դալարիքի մեջ քայլել է լանջերն ի վեր, լանջերն ի վար, լանջերով խոտոր, և փեշերը թացացել ու փութիկոտ քելքը կաշկանդել են, բայց գնացել է երինջի նման, որի աչքին արոտ չի գալիս, երբեմն միայն, մեջքի ցավը կոտրելու հույսով կռացել է՝ մի թեր թրթնջուկ, մի բերան սինձ է պոկել անցել, ծներեկի տեսքից ցնցվել՝ ընթացքն է շեղել,— այսպես երկու բուռ կանաչը փեշում, ոտքերը՝ փեշից ազատած, խոտը՝ ծնկից վեր, ոտքերը՝ ճերմակ, խոտը՝ կանաչ, երկինքը՝ կապույտ, մշուշը՝ ճերմակ — գնացել է... Հետո ոտքերին հանգիստ տալով՝ իջել է ձորը ու անհանդարտ մարմնի կեսը եղինջուտի միջով է տարել և մրմուռը պատճառ բերելով՝ մորմոքվել է բարձր ձայնով, հետո լանջն ի վեր սողացել է թուխպի նման... Այստեղ ձախից թուխպի մի լեզվակ եկել ու շուլալվել է ոտուփեշին... Նա քարացել է։ Աչքերը բացել՝ տեսել է կոնքին թխպի օղակ, ձեռքով ծուխը քշելու հանգով շարժում է արել՝ բան դուրս չի եկել, քայլել է առաջ՝ կանգ է առել, վազել է առաջ, նետվել է աջ, նետվել է ձախ, ընկրկել է, բայց ապարդյուն... Եվ հաշտված հետը, նաև ցավը հոգնությունով մեղմելու ջանքից ուժասպառ, նաև նեղացած, որ բնությունը իր ստեղծածին տեր չի կանգնել, չի սփոփել, չի ամոքել,— բռնել է

մի վարընթաց կածան... Ու այստեղ էլ՝ տեղաշարժերով անընմբռնելի թուխպը նրա դեմ է ելել։ Եվ կարծես կինը գոյություն չի ունեցել, ինքը՝ անկամ, ինքը՝ բացակա, այդ նրա կոնքին օղակ կապած թխպի ծվենն է երկար փնտրել-վերբստին գտել մայր զանգվածին, վերաձուլվել է համատարածին... Կինը մտել է գորշ լռության մեջ, ջրի մեջ սուզվելու նման՝ աչքերը փակ, շունչը պահած ու խավարի ակնկալիքով, բայց երբ կոպերը թրթռալով վեր են քաշվել, անիրական մի կերպարանք... անիրական, բայց տղամարդու իրական հոտով խաշնարածի մի կերպարանք թխպից զատվել, առաջ է եկել։ Կինը փլվել է արահետին, քար ու խիճ անցավ խրվել են մարմնի մեջ կամ փշրվել, դարձել են փոշի, և շաղված միտքը մի բան է ուզել՝ գետնի տակն անցնի, հետո ուզել է ելնի ու փախչի, հետո թե՝ սա երազ է, շատ է ուզում, բայց չի կարողանում աչքերը բացի, մի հույս է մնում, որ տղամարդը հասկացող լինի՝ ամեն ինչ կատարվի արագ... Մշուշից ելած, արահետին ծնկի եկած, աչքերը փակ, բերանը բաց, փեշը փորին սեղմած ջահել կին — տասը կյանք ապրիր՝ կպատահի՞ — չի պատահի։ Եվ ուրեմն, տղամարդը հասկացող լիներ-չլիներ, սրտակեր լիներ, թե աստծո զառ, էական չէր։ Եվ ուրեմն, այդ երկուսին իրար մոտ բերող, այդքան մոտիկ բնությունը՝ բարեգութ մայր, միաժամանակ՝ զորքը իմացող կավատուհի, մեղքը իր վրա է առել, ինքը լրվել է, և լինելիքը եղել է ամպի պարպումի նման։ Եվ կնոջ մարմնի բութ ցավը անցել է հողին։ Ավելի հողին։ Ավելի խորը... Հետո կինը վեր է կացել՝ անձրևի ծեծից թոթափվողշտկվող խոտի նման, ձգվել է զարթնող ծառի նման, շուռ է եկել՝ հետևյալ պահին սիրո զույգին մոռացած երինջ, շուտով գտել է զյուղի ճամփան և օրվա մեջ առաջին անգամ նա լսել է, որ անտառը լիքն է հավքերով, տեսել է, որ ծառերի բները՝ վեր, ճյուղերը շեղ են աճում, զգացել է, որ անտառը ծառերի զանգված չէ սոսկ, այլ ամեն տեսակ իր անունն ունի, և ամեն ծառի մոտով անցնելիս, ամեն խոտի ոտք դնելիս, ամեն ծաղիկ շրջանցելիս՝ անունները անվան տերերին ձայն են տալիս իր ներսից։

Շաբաթներ անց, սար ու դաշտ ընկած՝ արմատ է կրծել, խոտ է արածել, ամենալեղի պտուղն է լափել, հող է

կերել, մոխրաջուր ու կրաջուր խմել... բայց պտուղը թույնով սնվել՝ զորացել է։

Խեղճ երեխա, անմեղ պտուղ, արյան, բախտի հարամվելու հազար ձև կա, իսկ դու անտեղյակ աշխարհ ես գալիս, օրորոցիցդ վերաճում ես, եթե քուն ու սնունդ ես առել, եթե վրաց ցավող տեղ չունես, աստծո օրը քեզ համար ուրախություն է... բայց անարդար է տնօրինողի բռնած գործը. ազքատությունը ժառանգվում է կարողությունից ավելի հաստատ, ձախորդությունը նոր ձախորդության դուռ է բացում, մեղքը դուրս տալիս ու հատուցվում է յոթերորդ էլ անմեղ պորտում, և ոչ մի ծնվող երջանկության երաշխիք չունի։

Նա մեծանում էր, ու նրա մեջ ամենաերևացող բանը սերն էր — ամենքի հանդեպ ու ամեն ինչի։ Նա անխտրական իր սիրո դիմաց ոչինչ չէր ուզում — միայն իր սիրուն սնունդ որպես, կամ սիրուն խչմար, կամ սերը բոցելու խոիվ՝ ուզում էր, որ իր սիրո մեծ առարկայից՝ այս մեծ աշխարհից, մի փշուր էլ իրեն պատկանի։ Թող որ դա լինի ամենաչնչին նշույլը նրա, մեկ հարյուրերորդն այնքանի, ինչը երջանկացնում է ուրիշներին, բայց որ՝ պատկանի ամբողջովին, անմասնատելի, անվիճարկելի։ Աշխարհը ձեզ՝ ի տնօրինություն, իմ բաժին նշխարքը ինձ առանց պայմանի։

Ժուժկալության ու անզիջունության այս խառնուրդն էլ, երևի թե, զրկում էր նրան մինչև անդամ նվազագույնից... Ինչ իմանամ։ Ես բախտավոր եմ ու հեշտ եմ խոսում, բայց նրա կյանքը չի տեղավորվում այն սկուտեղում, որ թեթև բռնած քեզ եմ մատուցում։ Որևէ կյանք չի տեղավորվի։ Երբ բախտավոր ենք կամ հաջողակ ենք, ամենքս էլ մի քիչ խոզ ենք։ Չի՞ պատահել, որ կաղի կողքով վազելով անցնես, կոկորդը կապած երեխայի մոտ պաղպաղակ լափես, արշավաձիու նման հիվանդի սենյակ խուժես... Ամեն անդամ ամենքս մի քիչ խփում ենք նրանց՝ ինչքա՜ն շատ է։

Ահա այդպես, եղբոր աղջիկը (այդ ես եմ) իր գեղեցկության մեջ կենտրոնացած երկու քայլ արեց՝ սենյակը կտրեց լայնքով, նստեց բազմոցին, ոտքերը քաշեց տակը մի շարժումով, որ թե ուժեղ, թե նազելի էր և գոտկատեղից վար պատկերացավ ամենաշահեկան տեսքով. երբ բաց են լինում

միայն ծնկները, և երբ ոտքերը առեղծվածորեն սկիզբ են առնում ինչ-որ տեղից, ինչ-որ տեղ առեղծվածորեն վերջանում են, և իրանը, որ թվում է ավելի երկար, ծիլ է տալիս կանացիության պարարտ կենտրոնից։ Իսկ նա նստած է՝ շալը ծնկներին՝ գիրքը վրան, թաշկինակը ամեն պահ հնարավոր հարբուխի դեմ բռան մեջ սեղմած և զարմուհու ամեն շարժումը տեսադաշտում կամ զգայարանների ընկալունակության սահմաններում ունենալով, աչքը մի պահ կարում է գրքից, թոռցիկ նայում է վրան, այդ ակնթարթում հիացմունքն ու մտահոգությունը փոխնիփոխ իշխում են նրա նայվածքին, և այս անգամ էլ մտահոգությունը սառում մնում է աչքերի մեջ՝ «Տականքի մեկը այս ոտքերի, այս մեջքի համար հավերժական սեր կխոստանա ու աղջիկը խելացի է՝ բայց կխաբվի...»։

Նա քեզ սիրել չի կարողանում, դու դա զգում ես, բայց մի նեղանա։ Իմ զգացմունքը նա հասկանալ չէր կարողանում։ Քո վրայից մի հնության հոտ է գալիս, որ ուրիշներին խբրտնեցնում է... Իմ գլուխը դրանից պտույտ է գալիս։ Դու պապենական ձեր քուրսու տակից ոտքերդ քաշել, վեր ես կացել, եկել անհարցում մտել ես քաղաք, քաղաքը ձեր գյուղի թաղերից մեկն ես հաշվում — ոչ ավելի, մնում է, որ լողարանից տաշտը բերեմ, ջուր տաքացնեմ ոտքերիդ համար, ես լվանամ, դու հաճույքից փնչաս ու հալվես... Նրա հաշվով դու գոնեիկ ես ու մեզ միասին թողնելուց նա վախենում էր։ Բայց բնակարանն ինքն առաջարկեց։ Հենց վախենալուց էլ առաջարկեց։ Այս տանը, ուր ես շատ եմ քնել, ուր նրա շունչն ու իրերը կան, ես անպաշտպան չեմ իր կարծիքով։

...Այսպես եղավ։ Մեր ամուսնության նախօրյակին զանգահարեց։ Դե, ամեն օր մեր տուն զանգում էր, ես օրումեջ այստեղ կայի, այստեղ հարմար էր պարապելը, հաճելի էր ծնողներիս աչքից հեռու մեծավարի սուրճ խմելը, նույնիսկ նրա անդադրում հոգատարությունը նեղություն չէր... դե՛ո նեղություն չէր։ Իմ խակ անձը ամեն վայրկյան ուշադրության առարկա էր, իսկ տատիկիս՝ ծնողական խստությունից ազատ սերը հավասարակշռում էր հորաքրոջս մայրապետական խստությունը, եթե պատահեր՝ չափը անցներ։ Ուրեմն, ինձ զանգահարեց, և այս զանգը սովորական չէր։ Ինձ չէին

կանչում մեծավարի՝ մի մեր տուն արի, այլ ըստ պատշաճի հրավիրում էին։

Նա այդ առիթով սեղան էր բացել։ Սեղանին իմ սիրած ծաղիկներն էին՝ սիրածս ծաղկամանում։ Փողաշուշանները հինգ հատ էին, բայց թվում էին քիչ, որովհետև ծաղկամանը բարձրավիզ էր և թվում էին ճոխ, որովհետև սլացիկ վզի բարձրության վրա ծաղկեփունջը փարթամ տեսք ուներ։ Նա միրգ էր դրել, գաթա էր թխել, չինական ճերմակ սփոռոց էր փռել... Ճերմակ սփոռոց, ցմփոր շշով բալի լիկյոր (ծաղկամանը նրբիրան էր) ծիրանագույն սկահակում՝ կարմիր խրնձորներ և դրանցից վեր՝ սպիտակաթույր փողաշուշաններ։ Նա հուզված էր շղագրգռվածության ատիճանի։ (Ուրախությունն էլ, տխրությունն էլ նրան տրվում էր ջղերի զնով)։ Իմ հայացքը անկեղծորեն վայելում էր սեղանի տեսքը։ Կասեր, որ նա նատյուրմորտները գերազասող հանճարեղ ու անդամալույծ նկարչի կին լիներ։ Հանճարեղ թե՝ ոչ, բայց անպայման անդամալույծ, որպեսզի կնոջ սիրո առարկան, չլիներ թե, անձնազոհության կարիք չունենար, և նատյուրմորտները գերազասող, որպեսզի նա խղճահարության ասպարեզում բնորդուհու մերկ կերպարանքով մրցակցուհուց ազատ մնար։

Արարողություններ սարքելը նրա բանը չէր։ Կամենալն՝ ուրիշ, կարենալու համար նախ՝ սառնասրտություն պիտի ունենաս, պիտի կուշտ ու ինքնագոհ լինես, բավարար չափով պիտի լինես դատարկամիտ։ Իհարկե, նա այն խառնվածքը չէր, որ իրագործությունը շփոթեր առօրյայի հետ, բայց ինքը իրեն ուժեղ էր լարել՝ չդիմացավ և մտահղացած հանդիսավորությունը ինքը ավերեց։

— Ես գյուղ եմ գնում... Սեպտեմբերին սիրում եմ գյուղը... Հոկտեմբերը սիրածս եղանակն է... Ես հոգնել եմ քաղաքի մետաղի ձայնից... Դուք կմնաք երկու ամիս, որ տանը փոշի չնստի, ցեց չընկնի... Առաջին հարկից առնետներ են վերև գալիս... Տատի նկարը ճանճերը սևացնում են... Առավոտները ես աշխատանքի կհասնեմ ավելի շուտ, քան քաղաքից... Յոթի գնացքով... կամ յոթն անց կեսի ավտոբուսով... Քաղաքի աշունը տանել չեմ կարող... Ընկած տերևը ավլում են աղբի նման ու ծառերը մերկանում են մերկ մայ-

թերին... ու արմատները լուր չունեն ծառից, որովհետև ընկած տերևը սրբում տանում են աղբի նման... Ու...

— Հորաքույր ջան, մենք տուն ունենք...

— Սերը, սիրելիս, առանձնության մեջ է անբասիր... Մի հակառակվիր։ Դուք տուն չունեք։ Տունը ձերը չէ։ Կարիք չկա, որ մեղրամիսը... որ ձեր սկիզբը առօրյայից հասարակ դառնա։ Ինչո՞ւ նեղվեք կամ մտածեք, որ ուրիշները ձեզնից նեղվում են... Մնացեք միառժամանակ։

Քանի խոսում էր, թևս բռնել, սեղմել էր վզնոցիս խաչին։ Վերջացրեց՝ ժպտաց, նայեց աչքերիս՝ թեթևացել էր։ Բայց չէր վերջացրել։ Ձասված խոսքը կոկորդին կանգնած պատառի նման երևում է։ Ջղային մարդու նիհար կոկորդին։ Նա հազիվ թե խոսքը վերջացներ այդքան հասարակ՝ մնացեք միառժամանակ։ Նրա աչքերը մատնում էին կիսատ մտքի՝ մարգարեանալով լրվելու գայթակղությունը։ Եթե ասվեր, այդ խոսքը լինելու էր վսեմորեն սարսռեցնող բան, բայց ես դրանից վախ չունեի։ Իմ սերը շատ էր խանդավառ, ես ուզում էի, որ իմ անխռով, իրենով հարբած զգացմունքին խառնվի մի քիչ զգաստություն, մի թեթև տագնապ, ճակատագրականության ինչ-որ շորշոփ... Երևի թե իմ ցանկությունը թեժ կրակը մի բուռ ջրով բորբոքելու երեխայական քմահաճույք էր։ Այդպես էլ չասաց՝ «Գուցե ձեր սիրուց այս քառասուն օրերը մնան»։ Եթե ասեր, մենք այդ պահին չէինք լինի այդքան տարբեր, այդքան չէինք մնա իրարից հեռու։ Նա՝ վերջնականապես այդքան զրկված, ես՝ սիրո ու ապագայի տեր։ Ես համաձայն էի մի քիչ պակասի, միայն թե մի քայլ մոտենամ նրան, համաձայն էի, որովհետև երբ ուրիշներն են երջանիկ լինում, համարում ես հնարավոր — նրանք ուրիշ աշխարհից են, բայց մերձավորիդ երջանկությունը զրկանքիդ կողքին ըմբռնել չես կարողանում։ Ես համաձայն էի գոնե մի քիչ զոհաբերության, որովհետև նա զոհաբերում էր իր ունեցած միակ բանը՝ ինքնապաստան առանձնությունը... Այստեղ նա կար իր հին կահույքի ու հին գրքերի, հին երգերի նոր ձայնագրությունների, իր չորացրած ծաղիկների, ծաղկամաններով շոր փշերի, ջահել օրերի լուսանկարների միջավայրում, և մեր՝ քույրերիս, ներկայությունը խանգարող հանգամանք չէր։ Նա մեզ վաղուց ընտելացել էր, մեր ներ-

կայությամբ իրեն զգում էր ուզածի նման։ Մենք կարողանում էինք չորս հոգով սենյակում լինել ու չորսս էլ մեզ համար լինել։ Խոսում էինք այն ժամանակ, երբ լռությունը դառնում էր խանգարող հինգերորդը, բայց ավելի շատ կարդում էինք։ Տատիկից հետո այս տունը հիշատակների կացարան էր։ Ճիշտ է, նման չէր մեռելատան, բայց նման էր եկեղեցու։

Դու նկատե՞լ ես՝ եկեղեցիներին ու գերեզմանոցներին անպաշտոն կապված մարդիկ միատեսակ ձանձրալի են, հավասարապես բթամիտ են։ Երբ գյուղ գնացի, նրան գտա գերեզմանոցում։ Նա զբաղված էր տատիկի շիրիմի շուրջ ինչ-որ անիմաստ, անիմաստությունից վերջ չունեցող, երևի թե հազարերորդ անգամ արված բաներ անելով։ Երբ մարդուս միտքը զբաղված է, ձեռքերը ապրում են իրենց կյանքով։ Ես հուսահատված մտածեցի, որ նա մեկընդմիշտ իր զգայական եռանդի համար ասպարեզ գտավ։ Այդ ասպարեզը այնքան անհատակ, անպարագիծ ու անորոշ է, որ կկլանի ուզածդ եռանդ։

Վերադարձիս ճանապարհից աջ խաղողի շարք-շարք այգիներ էին, գծերը բարակելով փնջվում էին հորիզոնի... Այնտեղ, որտեղ հորիզոնի գիծն էր լինելու, Արարատ լեռն էր, և շարքերը դեմ էին առնում լեռան լանջին, կախվում էին աներևույթ Արաքսի վրա և նման էին Արաքսից հանած առուների... Շարքերի կրկնությունի՞ց էր, թե՞ շարժիչի միալար ձայնից՝ քունս տանում էր։ Աչքերս փակել էի, քաղցր թմբիրը պատել էր ինձ, բայց գլուխս խախուտ ապակուն մոտ հարմարեցրած՝ ինձ պահում էի քնի-արթնության սահմանի վրա, որ գլուխս չընկնի կողքիս նստածի ուսին, որ ճակատս հանկարծ չխփվի դեմի երկաթին... Մտածում էի քո մասին։ Կոպերիս տակ քո պատկերն էր. դեմքդ, բայլվածքդ, աջ ձեռիդ ափով ծոծրակիդ շպացնելու ծիծաղելի սովորությունդ... Հետո պատկերդ ամբողջացավ ֆոնի վրա, հետո խորացավ միջավայրով, միջավայրը շարժում մտավ և դա արդեն մտապատկեր չէր, դա երազ էր։ Բայց գլուխս հաստատ պահելու զգոնությունը դեռ վրաս էր, ու ես չկայի երազի մեջ։ Ես չկայի ու զգացի, որ երազը կկառավարվի։ Առանց ջանքի երազը ժամանակի խորքը տարա, ու մենք երկուսով (ես, կարծես, կողքից) մեր առաջին օրվա մեջ էինք։ Հետո կա-

մնցա մի քիչ ետ բերեմ՝ դա էլ եղավ։ Ու այստեղ ինձ մանրամասներ երևացին, որոնք ես մոռացել էի։ Թե՞ չէին եղել, նոր ավելացան — ես մոռացել եմ։ Բայց տպավորությունը այնպես էր, թե կառավարում եմ արդեն եղածը։ Դա քիչ նման էր փակ աչքերով վերհիշելուն, բայց հստակ էր ժապավենի վրա հանած կյանքի նման։ Մանրամասների առատությունն էլ հիշեցնում էր ժապավենի հիշողությունը։ Հետո ուղեղիս արթուն մասը ինձ երազից դուրս էր քաշում ինչ-որ խոստումով, ետ էր բերում կուահումի անհանգստությամբ... Ես գայթակղությանը չդիմացա։ Երազն ու քունը թոթափելու ջանքից գլուխս ցավով դժժաց, երազը շաղվեց, աչքերս բացվում էին՝ ես հասկացա։ Նրա հայացքի իմաստը պարզվեց։ Ու իմ դեմքը ամոթից վառվեց։ Նա խաբված էր։ Նա իմ մասին մտածել էր ավելի լավ, ինչին ես արժանի չեմ։ Իմ արարքը ստորություն է նրա հանդեպ, ափսոս, երբեք բացատրել չեմ կարողանա։ Եթե բանը նրան պարզեմ, կթեթևանամ, բայց նա կխոցվի։ Իմ արարքը գուցե հասկանա, բայց իր հիմար վիճակի համար իրեն չի ների։ Ինձ էլ չի ների։ Մարդիկ ոչ մեկին չեն ներում իրենց հիմար վիճակի համար։ Հիմար վիճակի վկա չեն սիրում։ Քեզ չեն ներում նույնիսկ այն դեպքում, երբ քո մասին վատ են մտածել — լավն ես դուրս եկել, փոխանակ իրենք իրենց չներեն, փոխանակ ինքդ նրանց չներես։

Նա ոչ մի բան չի մոռանում, դրանից էլ ապրելը տառապանք է նրա համար։ Նա սպասում էր, որ իմ դեմքին տեսնելու է ամուսնական երկրորդ օրվա հիասթափություն կամ ցավոտ մի բան, որը ես, գիտեր, թաքցնել չէի կարող, եթե լիներ։ Բայց որտեղի՞ց պիտի լիներ, եթե ես... մենք... մեղանչե՞լ ասեմ՝ մեղանչել էինք պսակից առաջ։ Բոլոր դեպքերում, նա չէր տեսնելու իր սպասածը։ Իմ պարագային նրա լսած-իմացածը սուտ դուրս եկավ։ Ես չգիտեմ, մարմնի ցավի հիշողությո՞ւնն է կարճ, թե՞ սիրո կախարդանքն էր մեծ... Ու գիշերն էր լուռ... Լուսինն էր նոր... Հողն էր խոնավ... Աստղը՝ պահապան... Այդպես եղավ...

...Բայց դու քնած ես... Քո արձակուրդը վերջացել է... Քնիր, դու պիտի քունդ առնես... Տղամարդը պիտի քնի, որ գործի վրա քունը չտանի... Որ սիրո վրա քունը չտանի... Որ

ղարթնի ու կնոջը գտնի առաջին անգամ... Այսպես հեռանա, որ մոտենա... Կորցնի, որ նորից գտնի... Գտնի-կորցնի... Կորցնի-գտնի... Կինը կսպասի... Կանայք կսպասեն... Թող նրանք քնեն։ Նրանց քունը պատերազմից պատերազմ ընկած միջոցին է... Կանայք՝ ոչինչ։ Նրանք ամենաշատը՝ կթառամեն, ամենաշատը մենակ կմնան... Մեկը անցած պատերազմի հաշմանդամ կգտնի, մեկը մի զառամյալի կհանի դագաղից, մեկը դեռահասներին տղամարդ կօծի, մի մասը հավատարիմ կմնա զրկվածներին, մի մասը հավատարիմ կմնա մեռյալներին... Երեխաներին կպահպանի... ծայրահեղ դեպքում՝ ատելածը պատերազմի, որովհետև գալիքում էլ զինվորի ու տղամարդու կարիք կլինի։

...Անցած գիշեր ես չքնեցի—մտքովս հիմար բաներ անցան։ Երևի սա ժառանգական է. երբ մեր միտքը ճամփա է ընկնում, մենք լուսնոտի անկամությամբ գնում ենք նրա ետևից ու կանգնել չկա... Երեկ գիշեր լուսինը մեծ էր... Լիալուսինը գերեզմանների լուսատու է, սառն է, ոնց որ մեռելի ճակատ, մեր ցեղի համար վատ ուղեկից է։ Նրան հիշեցի։ Այն հատուկ զանգի օրը հիշեցի... Նրա պատրաստությունը սեղանով չէր վերջանում. տունը հիմնիվեր սրբել-մաքրել էր, լվացք էր արել, սառնարանը լցրել էր ինչով կարող էր, իր իրերի մեծ մասը հեռացրել էր, իմոնը բերել էր աչքի առաջ, առե՞լ էր, թե իր իղձերի մութ պահարանից զուրս էր բերել տղամարդու երեք զույգ գուլպա («Պահարանում մի քանի ձեռք սպիտակեղեն կա»—հարմար էր գտել, որ սա ասվի խոհանոցից), իր ննջարանից բերել էր այս գիշերազգեստը, նորով էր փոխել հին խսիրները... Նա մեզ համար պատրաստել էր այս սենյակը, իմ սիրածն ու իր սիրածը և, հիշում եմ, ես մտածեցի. «Նա ինձանից շատ է մտածել այս բանի մասին»։ Ու հիմա ինձ թվում է, թե ես նրա տեղն եմ պատկել։ Ես նրա առաջն ընկել, ամուսնության առաջնության իրավունքին տեր եմ կանգնել, դավաճանել, պատկել եմ նրան պատկանող տեղը ու վատ եմ զգում, իսկ ինքը իրեն վատ չի զգում... վատ զգալուց լավ է զգում։ Նա իրեն այնպես է պահել այս օրերին, կարծես ես այս մեղրամիսը ապրում եմ նրա համար... Մի մեղրամիս կարծես ապրում ենք երկու

հոգով... Պատկերացնո՞ւմ ես իր կյանքը իմով ամբողջացնելու նրա խելագար երազանքը...

Երազանք ասելը ճիշտ է։ Նրա կյանքը երազանքի նման ձիգ-պարզունակ էր։ Ճիշտ է, օժտված էր երազանքի ճկունությամբ էլ, բայց ճկունությունը մի հատկություն է, որ դիմանում է ներգործության որոշակի ուժի միայն, այդ շափից վեր ուժի դիմաց ճկունությունը որպես հատկություն գոյություն չունի։ Նաև անզոր է ժամանակի դեմ։ Եվ բոլորովին ոչինչ է ահեղ հարվածի առաջ։

Բայց մինչ հարվածը նրան կհասներ, մինչ ժամանակը կսկսեր մաշել, նա ապրում էր այգաբացի սպասման մեջ հմայված արևածաղկի նման։

Այդ տարիքի աղջիկներից ով մեկ անգամ թատրոն է մտել, երազել է բեմի մասին։ Նա չէր կարող բեմ չերազել, որովհետև ամենքին ու ամեն ինչին ողողելու պատրաստ սերը անհամբեր էր, այդ հորձանքից աղջկա սիրտը կարող էր պայթել։ Նրան պետք էր լույսերի մեջ շողշողացող բեմ. կամ կախաղանի տախտակամած. կամ զոհասեղան. կամ ոգեկիզման բորբոքուն խարույկ. կամ գնդակահարության ճեփ-ճերմակ պատ, ինքը այդ ֆոնին՝ սևազգեստ ու սքանչելի... Եվ թատերականի քննություններին տապալվելը նա ծանր տարավ։ Նրան բուն քննություններին մասնակցել էլ չթողեցին, նախաքննական փուլից ձրի խորհուրդ տվին փորձել ուրիշ տեղ՝ բանասիրական — որոշակի հասցե էլ տվին... Եթե նա միայն հիասթափվեր, դա շուտով կանցներ ու, գուցե, փորձեր եկող տարի, էլի մեկ տարի, երրորդ ու չորրորդ տարին էլ, ամեն անգամ հույս փայփայելով, թե այդ տարի դերասանական խումբ հավաքողը անվրեպ աչք կունենա։ Բայց աղջիկը վիրավորված էր։ Նա չէր կասկածել, որ իր մեծ սերը բեմ հանելու պատրաստակամությունը այն աստիճան անանձնական, վեհանձն քայլ է, որ եթե չընդունվի էլ երախտագիտության զեղումներով, գոնե պատշաճին պիտի գնահատվի,— բայց չհասկացան։ Հինգ-վեց հասուն տղամարդկանցից չեղավ մեկը, որ դա հասկանար։

Տղամարդկանց այդպիսի մի խումբ հետագայում նա տեսել էր գործի վրա՝ նկարչականի ավարտական քննությունը

ներին։ Այդ հեղնաժպիտ տղամարդկանց հանձնախումբը նըստած է եղել քաղաքի մեծ ցուցասրահի մեջտեղում, ապակեծածկ առաստաղից վիժող արևի շողքերի մեջ, ավարտական աշխատանքները երկյուղածորեն բերելիս են եղել առաջ, սրանք հաստ ու բարակ վզերը ծռել են աջ, ծռել են ձախ, ափերն աչքերին հովանի արած՝ նկարիչներին հատուկ թափով իրանները շպրտել են ետ (իբր երկու թիզ տարբերությունը տեսանկյունը տեղը կբերի), ձգվել են առաջ, աչքները կկոցել են, հետո չռել են՝ գլխով են արել նախագահի գըլխին համաչափ... Նա պատմում էր. «Տղաները մեջտեղ բերին ննջարանի կահավորման-ձևավորման մի առաջարկ։ Կողքը կանգնեց հեղինակը՝ մի պատկեր աղջիկ. երկար ու ողորկ սրունքներով, բարակ մեջքով, նրբաթել անթև ջեմպրով կրծքերն ընդգծած կարծես մատիտով, պարանոցը բարձր ու ճերմակ, դեմքը՝ գեղաղանց ամեն ինչից... Աղջիկը խոսում էր անփույթ, ավելի շուտ իր ձայնով տարված, քան մտքին հետևելով և տղամարդկանց ուշադրությունը ցուցափայտով հրավիրում էր Հոլիվուդի արհեստանոցներում սարքվելու արժան ռեկվիզիտի նախագծին։ Բայց հանձնախմբի անդամներից ոչ մեկը չէր նայում ցուցադրվող աշխատանքին, նրանց բոլորի հայացքները գուլպայի պես տնավարի վեր էին սողում աղջկա մերկ սրունքներով, մի որոշ հատված անցնում էին երևակայության օժանդակությամբ, փաթ էին գալիս բարակ մեջքի շուրջ, շունչ էին առնում կրծքերի վրա, մի մասը այստեղ կրծքազարդի տեղ կպչում մնում էր միառժամանակ, մի քանիսը մի շնչում մագլցում էին պարանոցը, շուրթերը համբուրում էին... Առաջին խումբը վար թողած աջ ձեռքի հետ (աղջիկը շնորհալիորեն ձախլիկ էր) իջնում խաղում էին աղղրի վրա, մյուսները ցուցափայտը բռնած ձեռքի հետ իջնում ու բարձրանում էին, իջնում ու բարձրանում էին, աչքները կկոցվելով՝ անցնում էին խոշոր պլանի, շաղվելով՝ փոխվում էին ամբողջականի... Իսկ ականջներում առաստաղի տակ արձագանք տվող՝ կանացի փափուկ, անիմաստ ձայնն էր... Հանձնաժողովի թե՛ երիտասարդ անդամների բաց բերաններում, թե՛ տարեցների մաշված շուրթերին տպավորությունը միաձայն էր՝ հրաշալի ննջարան է... «Դե-

բաղանց... դեմ կա՞—չկա, գերազանց»— նախագահողը իրար էր անցել...»։

Տղամարդիկ նրա մեջ մի բան, այնուամենայնիվ, տեսել էին։ Նրանք ինչ-որ բան տեսել էին, բայց նրա սիրտը չէին շահել, մի թեթև միայն կաշառել էին ու թողել էին հիմար վիճակում. ոչ այն է՝ նրանց բթամիտների շարքը դասես (նրանց նկատած — մեջդ եղածը կվարկաբեկվի), ոչ այն է՝ մեծ խելք վերագրես — նրանք չէին տեսել գլխավորը։ Եթե նա այն ժամանակ լիներ այնքան շոր, ինչ որ դառավ հետագայում, կողի կընկներ՝ չէր դնա բանասիրական, բայց դեռ ճկուն էր և ընդունվեց։ Իր ասելով՝ ընդունվեց, որ զբաղմունք լինի։ Մինչ հետագա անելիքը որոշելը կարելի էր մի բան էլ ավել սովորել։

Նա սովորելու ոչ մի առիթ բաց չէր թողնում։ Ինձ խրատում էր հետևեմ իրեն ու բացատրում-ներշնչում էր մատվորականի կյանքի հմայքը. ձեռքերդ մաքուր, ոտքերդ մաքուր, պետք եղածի չափ ազատ ժամանակ, երեկոները՝ համերգ ու թատրոն, հեղինակային երեկոներ, հավաքույթներ, հրավերքներ... Այս տունը ինչե՞ր է տեսել տատիս ապրելու ժամանակները... Հորաքույրս ճաշակի տեր էր, շրջապատված էր խոհեմ կանանցով, խելացի տղամարդկանցով, նրանք գործի ընկերներ էին, բայց գալիս էին նաև կողքից. մեկի ծանոթը կամ ամուսինը, մյուսի լավ երգող ազգականը... Ես, դեռ երեխա, սիրում էի այդ շրջապատը. նրանց երգելը, արտասանելը, կատակախառը կենաց ճառերը, — ինչ անեին, սիրում էի։ Հորաքույրս իմ ներկայությունը խրախուսում էր սկսած տասնչորս տարեկանից։ Դա այն կյանքն էր, որի վրա նա ինձ ձևում էր։ Բայց երբ քիչ թե շատ խելահաս դարձա, հասկացա, որ այդ կյանքը իր երազածի խեղված պատկերն է, նկատեցի, որ այդ հրավերք-հավաքույթներին համարյա երբեք նա լիասիրտ ուրախ չի լինում։ Ամեն անգամից նա ավելի, մի քիչ ավելի բան էր սպասում, քան ստանում էր, ու երբ հյուրերը ցրվում էին, մահու չափ հոգնած էր լինում։ Ոչ այնքան հոգնած, ինչքան ուրիշ մարդ։ Չի ասվի, թե ընկերների մոտ ձևանում էր։ Չէր ձևանում, միշտ հավատում էր հաջորդ պահին։ Ու եթե, հանկարծ, սպասելիքը արդարանում էր, երբ իր տարերքի մեջ էր լի-

նում, ապրելու ջանք չէր երևում նրա վրա, ուրախանում էր այն աղջկա պես, որը գիտի՝ գեղեցիկ է, առավոտը հանդիպում ունի սիրած մարդու հետ և կասկած չունի, որ անջատումի ամեն ժամը իր հմայքը կբազմապատկի նրա աչքում... Հոգու այդ զվարթ վիճակում լինում են՝ հիմարները միշտ, շփացածները՝ երբ հարկ համարեն, բախտավորները՝ կարճ ժամանակով։ Նա հիմար չէր, շփացած չէր, ոչ էլ բախտավոր... Բայց մարդուս հոգին չբավորի գրաստ հո՛ չի, թեկուզ հազվադեպ, բայց նա էլ իր տոն օրն ունի։ Եվ մարմինն էլ իր կյանքն ունի ու իր կիրակին, մեկ էլ մաղձիցդ սիրտ խառնելու չափ կհագենա և կուզենա թույնից զրկվել, քեզանից փրկվել նախամարդու խմբակային խրախճանքի մեջ...

Դրանից էլ էր նա շուտ հոգնում։ Հոգնում էր կամ սպառվում էր։ Երևի թե հենց այն պատճառով, որ նա ոչ մի բան կիսատ չէր ուզում, կիսատ չէր զգում, կիսատ չէր անում, դրանից էլ, երևի թե, հոգնում էր շուտ։

Բայց նա այդքան ի՞նչ էր ուզում։ Նրանք ի՞նչ են այդքան ուզում... Ումի՞ց են ուզում։ Եղել է, չէ՞ (եղած կլինի) մի ժամանակ, երբ մարդ երկու աստծուց է բան հուսացել՝ իր բախտից ու իր աշխատանքից։ Ու եթե մեկը խուլ է եղել կամ կույր է եղել, եթե մեկը զլացել է, ավել է մյուսը։ Իսկ թե երկուսն էլ երես են թեքել, մարդը նրանցից խռով է կացել, բայց նոր աստված չի հորինել... Հիմա, ոնց որ, կուռքերը շատացել են։ Հաշվիր, որ չկան։ Երբ ուրանում են գլխավորը, մանր բաները շատանում են։ Ու շատերից էլ շատ են ուզում, որովհետև եթե տալու հնարավորություն կա, ստանալու էլ գայթակղություն կա, եթե տվող աղբյուրները շատանում են, ստանալու եղանակները բազմանում են, տվողների բազմանալով՝ վարձահատուցման եղանակները ստորանում են... Եվ տուրևառի այս մղձավանջում արժանապատվության հուզարկավորների գորշ թափորը երկրագունդը որերորդ անգամ գոտեվորվում է...

...Ասենք, նրանք ի՞նչ մեղք ունեն, այս թափանցիկ դարը մեզ հունից հանեց։ Մեզ չէր կարելի այսքան բան տեսնել։ Սա կյանքի ձև չի, ապրելու ձև չի, ամենօրյա զվարճանք է ու ամենօրյա սգահանդես... Ողջ աշխարհի ուրախությունն

ու տխրությունը աչքիդ առաջ է։ Բայց ուրիշների ուրախությունով չենք ուրախանում, որովհետև նրանք չեն ուզում, չեն էլ կարող մեզ իրենց ուրախությանը մասնակից անել, ուրիշների տխրությունը մեզ չի վշտացնում, դարձնում է միայն անտարբեր, որովհետև համատարած է։ Ուրախությունն էլ է շատ, տխրությունն էլ։ Մի կյանքի համար, մի մարդու համար չափազանց շատ է։ Վարագույր չկա և ապրուստի քրմերը արդեն սեղան չեն նստում առանց կինոհեռուստաաչքի, ծածուկ չեն ուտում իրենց առօրյա լորի սիրտը, կապկի ուղեղը, արջի թաթը, եղնիկի մեջքը, որպեսզի մենք բան հասկանանք մեր պանրուհացից... Անառակությունն էլ ննջարանի դուռը չի ծածկում, բավարարություն չի ստանում մինչև ծափ չտան, աղջիկներն էլ արդեն հոժար չեն Բելմոնդոյից գեշ տղամարդու, և կանայք իրենց բարձերի տակ պահած ունեն ամուսիններին ոչնչացնող համեմատությունը սուպեր ցուլերի հանճարի հետ, և տղամարդիկ անկողնային շնաձկներին գործի վրա տեսնելուց հետո մտածում են, որ, ուրեմն, իրենց ախոռում ջորի են պահել այսքան տարի...

Երեսունվեց տարեկանում նա սիրահարվեց։ Սիրահարվեց, ինչքան թույլ կտար նրա պատիժ ընությունը։ Ախ, նրա այդ քուջուջող ու ավերող միտքը... Նա ամեն բանից պիտի յոթ էլ չէ՝ յոթանասունյոթ չափ առներ, պիտի մանատեր՝ մաս-մաս շոշափեր, նայելը քիչ էր՝ պիտի նայեր լույսի դեմ պահած, պատճառը քիչ էր՝ պիտի իմանար դրդապատճառը, պիտի այնպես աղար ու մաղեր, որ տակը բան չմնա։ Նրա համար սիրելը քիչ էր, պիտի իմանար ինչ է սիրում, ինչու է սիրում, ինչպես է սիրում։ Նա ուզում էր հասկանալ սերը։ Հասկանար ոչ թե ընդհանրապես, այլ հենց իր սերը։ Գուցե նրանը իսկական սեր չէր, գուցե նրա ոչ մի սերը սեր չի եղել, որովհետև սերը պիտի որ տեղ չթողնի վերլուծության։ Միգուցե և իսկական սեր էր, պարզապես նա պատուհասված էր մտքի ընթացքով հափշտակվելու հիվանդությամբ և սերը չէ՝ մահն էլ չէր փրկի նրան ճակատագրից։

Ի՞նչ իմանաս։ Եթե քեզ համար դատողություն անելը հեշտ է՝ ուշքի արի, եթե կարող ես՝ ընդունիր, չէ՝ ենթադրիր,

որ գուցե կա, կլինի, էլի, մի ինչ-որ բան, որ դու չգիտես-ուրիշը գիտի։ Թե չէ միտքդ չափ ես գցում՝ չզգալով, որ թեթև միտքը թեթև վարդ ունի, որ հիմար միտքը, ծեքծեքուն կնոջ քայլվածքի նման, ետքից տանելու հատկություն ունի... Ուշքի գալով՝ ես մտածում եմ, որ նրա ուզած սերը ուրիշ էր։ Մեր իմացածը չէր։ Նույնիսկ մեր երազածը չէր։ Երազանքի թևերից մեկը երևակայությունն է, մեկը՝ հավատը։ Մերը այն է, որի թևերից մեկնումեկը խուզած է լինում, ու այդքանն էլ մեզ ձեռ է տալիս։ Նա հավատում էր մինչև մահ սիրուն։ Նրա սերունդը հավատում էր։ Երևի թե սերունդները մեկումեջ հավատում են։ Երևի թե 50, 100, 200 տարին մեկ եկող-անցնող սիրո ալիքը նշանն է այն գերագույն մաքրագործող սահմանումի, ըստ որի սերը չպիտի վերջնականապես շնական դառնա... Մյուս կողմից էլ՝ ինձ թվում է թե, եթե կյանքի մի ասպարեզում նա հաջողեր, եթե արժեցող մի բանի հասներ, գուցե թե սերը նրա մտքի տերը չդառնար։ Ասում եմ, բայց համոզված չեմ, որովհետև նա այն մարդը չէր, որ դժվարը հեշտով փոխեր, որ ճակատագիրը փոխեր կյանքով։ Սազում էր, որ նա ծնված լիներ նահատակության բարենպաստ ժամանակներում, երբ ահեղագույն թշնամիներին տուրք էին տալիս կույս աղջիկներ, նաժիշտներին ողջ էին թաղում թագուհիների դամբարաններում, աղախինները թույն էին խմում, որ տիրուհիների դագտնիքները գերեզման տանեն, և աղջիկները կախվում էին սիրած տղայի՝ առանց հեծյալի վերադարձած ձիու սանձով։

Հորաքրոջս շրջապատում չկար մեկը, որ Նրանով չհիանար, բայց նրանք կյանքի մարդիկ էին։ Այդ կյանքը լիքն էր արատներով. նրանք արատի մեջ էին ապրում, լավագույն դեպքում ապրում էին արատի կողքին և նրանց համար հորաքույրը այն երեխան էր, որի աչքերի մեջ նայելով՝ ցերեկվա կեղտից մաքրվում են։ «Փողը մարդուն աղտոտում է»— ասում էին առաջին անգամ սահմանելու պես, «Պաշտոնասիրությունը արժանիքից զուրկ ոչնչության հատկություն է», «Մարմնական սերը չորրորդական է՝ համեմատած...», երրորդում էին ու չէին կեղծում։ Նրանք տեսել, շոշափել ու զգացել էին, նրանք ամեն օր տեսնում, շոշափում, հիաս-

թափվում էին, այդ բոլորից նրանք ինչ-որ բան հասկանում էին, որովհետև ապրում էին։ Իսկ նա ինքը կյանքի փորձ չուներ, փոխարենը միտքը սուր էր, և ընկերների փորձից դուրս բերած եզրակացություններն ու ընդհանրացումները ստացվում էին մոտավորապես ճիշտ։ Ապրելու համար այդքանն, իհարկե, բավական չէր։ Նա չէր էլ ապրում։ Նրա սո՞ւր միտքն էր տիրոջը զրկել ապրելու ջղից՝ հետաքրքրասիրությունից կյանքի հանդեպ, թե՞ պահապան բնազդն էր դարձրել ամենատես կողքից դիտող... Ինչ որ է, նա վախենում էր շփվել կյանքին ու վերջին անգամ, երբ սիրահարվեց, կարծես վարակվեց տարաշխարհիկ ինչ-որ ախտով։

Ուշ տարիքում սերը չի մարսվում, ինչպես չի մարսվում ամեն ուտելիք։ Ամեն տարիք իր սե՞րը ունի — հնարավոր է։ Բայց դա հո չի նշանակում, որ ամեն մեկը ուղած տարիքում սեր կունենա։ Չի նշանակում։ Մեկը կունենա, հազարի համար դա կլինի այն տառապանքը, որ անց է կենում սիրո անվան տակ առ ի չգոյէ լավագույնի։ Այնինչ սերը չպիտի լինի տառապանքի բույն։ Թող զրոզի ծոցը գնա, ես չեմ հասկանում սիրտ մաշող սերը։ Երեխան չպիտի ծնվի տառապանքից... Սիրո երեխան ծնվում է՝ բախտի աստղը ճակատին, սիրո երեխան աշխարհ է գալիս արևի լույսով, տուն է մտնում՝ ոտքը բարով, մեծանում է դաշտի խոտի պես՝ աստծո աչքը վրան, ու թե աղջիկ է, լինում է մոր նման սիրուն, եթե տղա է՝ հոր նման սրտոտ, ու եթե մայրը ուզեցել է՝ աղջիկ կծնվի, ուզեցել է տղա լինի՝ տղա կծնվի, ուզեցել է... Այ, եթե ուզեմ, եթե շատ ուզեմ, սիրեմ ու ուզեմ, ուզելով սիրեմ՝ տղա կծնվի։ Ու բերանը քոնը կլինի, ձեռքերը՝ իմը, աչքերը՝ քոնը, մազերը՝ իմը... հասակը՝ քոնը... մեջքը՝ քոնը... շունչը՝ քոնը... Քաղցր տղա, կողքիցս մի հեռանա... Ինն ամիս կողքիս մնա, որ թողնեմ տղեն հորը քաշի... Իմ կողքին մնա, կողքիցս քայլի, որ մոր փորին կասկած չդիպչի, չար աչք չդիպչի... Մնա ու մի ականջ կախի մեծաբերան ապուշներին, դիշեր ու զոր պարզ երկնքի դեմ ոռնում են գլխակեր կուշտ շները... Մի հավատա, տղամարդը զինվոր չի ծնվել, նրա տեղը դաշտը չի պատերազմի, տղամարդու տեղը սա է՝ կնոջ կողքին, երեխաների գլխի վերև՝ անբացակա, որ երեխաները հոր շնչի տակ հասակ առնեն, հոր

հասակն ի վեր ձգվեն խաղողի ողջի նման, հայրական ձեռք գլխներին օրհնանք, սաստում ունենան, հոր հետ վաստակեն ու հացի նստեն, իրենց ձեռքով ծնողին թաղեն, ապրեն ծնողի ապրած տեղը, ապրեն ծնողին իմացողների հետ, ծնողի թողած լավ անունով մխիթարվեն, զավակներին մխիթարանքի տեղ թողնելու հոգսով ապրեն, շիրիմներով կապ ունենան անցյալների հետ, կապ ունենան եկողների հետ... Անմահությունն այսպես հասկանան... Քաղցր տղա, կողքիցս մի հեռանա, գուցե կյանքում ինձ այս մի քանի օրերը մնան... Էսքանն էլ շատ է ինձ համար... Իսկ թե սրանով չգոհանամ, եթե հետո սա ինձ քիչ թվա, չգոհացողը ես չեմ լինի, ուրացողը ես չեմ լինի։ Ես, ուրեմն, մնացել եմ այս գիշերվա մեջ, ուրեմն ես մոխրացել եմ սիրո սպիտակ սավանների մեջ, ես, ուրեմն, դարձել եմ իմ երեխան... Թող կյանքիցս ինձ էս ուշ մթնող-շուտ լուսացող օրերը մնան։

Նա այսքանով կգոհանա՞ր — ես ի՞նչ իմանամ, գուցե գոհանար, եթե ապրեր։ Շատ ու քիչ զգացողությունը ապրելու մեջ է։ Բայց ի՞նչ ապրելու մասին է խոսքը, երբ նոխազների, ճգնավորների, նահատակների ճակատագիրը նրան տանում էր ուրիշ ուղղությամբ կամ քշում էր շրջագծով՝ կյանքին շփվելով, կյանքի չորս բոլոր և աննկատելի շրջադիծը մեծացնելով՝ կյանքից դուրս։

...Սպիտակամաշկ, արագախոս, հանկարծակի ծիծաղողլողող անձնավորություն էր նրա սերը։ Միջահասակ էր, նիհարոտ էր, առատ ու շեկ մազեր ուներ, իմ հասկանալով՝ վախկոտի մեկն էր, որովհետև բարակ ձայն ուներ, մանավանդ որ՝ տղամարդկանց հետ զրուցելիս չէր կենտրոնանում։ Այնինչ կանանցից թե՛ ջահելի հետ, թե՛ ահելի մի անկյուն քաշված քշփշում էր ժամեր շարունակ։ Տղամարդը կնոջ հետ ցածր ձայնով եթե սիրո մասին չի խոսում՝ ի՞նչ է ասում... Կանայք նրան միշտ ասելու բան ունեին։ Ըստ երևույթին, վստահում էին խիստ կանացի այն մտքերը, որ թաքցնում էին տղամարդկանցից և վստահ չեն, թե ընկերուհին կհասկանա։ Նա մունջ լսող էր։ Նա չափից դուրս էր ուշադիր կանանց նկատմամբ։ Առաջինը ինքն էր նկատում պարզած բաժակը, ինքն էր կռահում սեղանակիցներից ամեն մեկի ախոր-

Ժակի ուղղությունը, ինքը ծխող չէր, բայց գրպանում վառիչ էր պահում և կրակը հրամցնում էր ուրիշներից վայրկյան առաջ, վերարկուները հանում, պահում էր հանդերձապահի հաճկատարությամբ, հաճոյախոսություններ էր շաղ տալիս գարնան ոչխարի փսլինքի նման... Զզվելի էր։ Երբ նա խոսում էր՝ աղմկարար էր, մեկ էլ խոսքը արագ մի տեղ կապ էր զցում ու կարեկցանքի կիսաձայնով հետաքրքրվում էր կողքին նստածի հարսի քրոջ թոքաբորբով, մի ուրիշի քեռու տղայի բնակարանի ձգձգված հարցով... Այսպես, երևի, այլերկրացի տղամարդիկ կին ընտրողների ձայն են շահում, այսպես՝ հռչակված դերձակ են դառնում, այսպես՝ զառամյալ ազգականուհու կարողությունը ժառանգում են անտրոհելի իրավունքով։ Նրա խոսքը, որպես կանոն, անամոթ էր։ Չի ուրացվի, սրամիտ էլ էր։ Եվ ուրեմն, անամոթությունը թեկուզ թափանցիկ, բայց շապիկ ուներ։ Այդ բանը կանանց խուտուտ է տալիս։ Մի խոսքով, նրա մեջ ամեն ինչ կար՝ հազար ու մի մանրուքի խանութ, որ տնտեսուհուն դուր է գալիս։

Եվ ուրեմն, դու մի զարմանա, որ նա իմ սերը չի հասկանում։ Նա քեզ սիրել չի կարողանում, դու դա զգում ես, դու մի նեղանա։ Դու տղամարդ ես, կնոջը մի մեղադրիր։ Տղամարդը սիրված լինելը պիտի գնահատի, չսիրվելը ցույց չպիտի տա։ Դու նրան ների, նա մեծ սիրտ ունի... Ուներ, հիմա բան չի մնացել։ Նա ոչ մեկին հիմա արդեն սիրել չի կարող։ Իր սիրո դիմաց նա բան չստացավ... Ջստանալը այն խոսքը չէ, չստանալուն կհամակերպվեր,— նրա ահռելի, ինքնամատույց սերը չընդունվեց, մերժվեց, արհամարհվեց մինչև անգամ, որովհետև այդ սիրո մեջ կասկած չկար, որ շափի բերեր, անխտրական ու անվերապահ նրա սերը մեղմություն չուներ և գերմարդկային... անմարդկային էր ավելի շուտ... Նախահարձակ էր։ Հետո էր, որ նրա սերը դարձավ խտրական անձնասիրության աստիճանի, քիչ ավելի ուշ լրիվ ցամաքեց, ու նա այլևս ոչ մի բան չունի, ունեցածը այդ է եղել։

Չէ, հորաքույրս կանացի չէր։ Այդքան սիրառատ, այդքան սիրո հակված լինելով՝ կանացի չէր։ Թուլությունը զենք տեսնելու սեռի բնագրը պահապան չուներ և տղամարդու նրա

իդեալը, հասկանալի է, տղամարդ չէր։ Ու իմ սերը չի հասկանում... Ու զարմացած է... Զարմացած է, որովհետև միշտ մտածել է, որ ես ինքն եմ ինչ-որ չափով։ Այդ համոզմունքը ծնողական վստահություն է նախ և առաջ (հասուն տարիքում մորիցս շատ ես նրան եմ կապված եղել), հետո արդեն՝ իրեն հատուկ չափազանցում։ Հիմա նրա վստահությունը պակասել է։ Պակասել սկսեց այն օրվանից, երբ իր երազած ինստիտուտի ուսանող դարձա, երբ նրա սերը անփառունակ զնաց կորավ. այդ շիկամազին հարազատ քրոջ անկողնում գտան։ Դրանից հետո տղամարդու նրա իդեալը չճշտվեց, չէ՛, որ կպատահեր, եթե նա ջահել լիներ, եթե մի քիչ մոռանալու ընդունակ լիներ, եթե նրա կյանքը կրկնակի, գուցե՝ եռակի ձգված չլիներ, այլ անհետացավ, ցնդեց, մեռավ, գոյություն չունի։ Տղամարդիկ նրա համար հիմա այլևս գոյություն չունեն։ Նրա կյանքը հիմա, կարծես, պահ տրված բեռ է, որ նա՝ բարեխիղճ, նա՝ պարտաճանաչ, պիտի տանի հասցնի տեղ ու ճանապարհի կարճն ու երկարը մի հաշիվ է։

Նա մի այնպիսի անհամբերությամբ այս կյանքը մտավ, որ ամեն մի չնչին թե մեծ, բայց նոր գաղափար կպչում էր նրան, ինչպես փոշին կնստի թացին։ Երբ նա դպրոցը ավարտում էր, այսպես մերկ էր. լողացած, թարմ, ինքը իրենով զմայլված մարմին, ինքը իրենով զմայլված հոգի, այն վիճակում, երբ հոգի ասվող թեթևությունը լույս է տալիս թափանցիկ մաշկից։

Պատերազմը վերջացել էր։ Պատերազմից տղամարդիկ վերադարձան լուսնոտի նման։ Նրանք նույնիսկ ամբողջովին չվերադարձան։ Եվ կանայք, որ պատերազմի տարիներին ապրել էին անուրախ ինքնուրույն կյանքով և համաձայն էին որդիներ ծնող հարճի վիճակին, նույնիսկ դրան չարժանացան։ Պատերազմից նրանք իրենց իմացած-ճամփած տղամարդկանց ետ չստացան։ Վերադարձած տղամարդիկ կես տասնամյակում ապրել էին մի կյանք, մեկն էլ՝ վերագիր, մնացածը կանացի գործ էր և ժամանակը կնաբարո ընթացք բռնեց։

Հետպատերազմյան քսան տարին հորաքույրս կինիշխանության ջատագով էր։ Այդ գաղափարից ամեն մի կին ինչ-

որ մի բան կորցնում է ինչ-որ ժամանակ, բայց դա անցնում է։ Հիմա էլ կանցնի։ Կանայք իրենց նվաճումները իրենք կդնեն տղամարդկանց ոտքերի տակ, եթե, իհարկե, տղամարդկություն մնացած լինի... Նրան զինակից, դաղափարակից ուրիշ կանայք էլ տղամարդկանց դեմ հոխորտացին, տղամարդկանց վերից նայեցին, արին ամեն բան, ինչ անում են նման դեպքերում, բայց անկողին մտնելուց առաջ դաղափարի քուրձը հանեցին։ Իր շրջապատում, իր սերնդի մեջ նա չդտավ մի տղամարդ, որը զինակից ամուսին լիներ։ Հարմար մեկին նա կդտներ այն քչերի մեջ, ովքեր ետ եկան պատերազմից։ Նրանք պատրաստի զինակից էին, որովհետև ոչ մի բանի առարկելու գլուխ չունեին։ Դաղափարը նրանց համար պարապ հնչյուն էր, նրանք եղել էին դաղափարից մի քայլ դենը։ Այդ տղամարդիկ տարիքով նրան հասնում էին, բայց պատերազմը բազմապատկել էր կանանց թիվը, և տղամարդիկ այստեղ մարուր ոսկի արժեին։

Նրան մի ուժեղ ցնցում էր պետք։ Այն մեկի նման, որ պատահեց ուշացումով, երբ հանկարծակի ծիծաղող-լռող շիկահերը անասունի մեկը դուրս եկավ։ Այդ ցնցումը ամլացրեց նրան։ Ավելի վաղ նրան պետք էր մի ուժեղ հիասթափություն կամ մի ուժեղ, հոգատար ձեռք, որ ծռե՞ր-ճկեր այդ անհնազանդ, անպտղության միտող շիվը ու քանի դեռ չէր դախացել, ճկեր հանդեցներ կյանքի հիմքին (այդպես վաղն են ջահելացնում անդալիսով), որտեղից նա՝ արմատակալած, վեր կձգվեր արդեն որպես կին։

Ուժեղ ձեռքերի պակասություն կա։ Հոգատարության կարիք են զգում կին ու աղջիկ։ Տղամարդու սով է, սիրելիս։ Դու ուրիշ ես։ Զգիտեմ, քո ձե՞ռքն էր ուժեղ, թե՞ քո ձեռքի տակ կեռանալու ցանկությունս էր մեծ ու երազանքս՝ ճիշտ, թե՞ նրանից էր, որ մենք մեծացանք լիության մեջ, պակաս բան չկար, մնում էր սերը՝ այդ էլ եղավ տաք անկողնու վրա գնացող կատվի նման, թե՞ երկրապունդը արևի շուրջը նորից սիրո շրջանով գնաց... Լինելիքը եղավ։

Մեր մայրերի արդանդները տաք, ապահով էին, ցրտից, սովից, չկամությունից շղաձիգ չէին, մենք՝ մեր մոր փորում, մեր հայրերը մեր կողին էին և մեր առաջին՝ չտեսի ճիշը նրանց համար էր։ Եվ մեր մայրերը իրենց մայրերի ու քույ-

բերի նման ստիպված չէին երկունքի ցավը անեծքով տանել, ստիպված չէին շրթունքները արնոտելով՝ ճիչերը զսպել, որովհետև լսող ունեին, որովհետև տղամարդիկ խլացած չէին պատերազմով։ Նրանք դրսում՝ դռների եռև, պատուհանների տակ զվարճալի զսպվածությամբ հաճում էին ու մեր մայրերի տիրավոր-գիլ աղաղակները ցերեկվա լույսը, գիշերվա մութը սրատում էին... 41-ին ծնված տղերքը մեզանից մեծ էին տասը տարով, մեզ շրջապատում էին անցյալ, անկաշկանդ տղամարդիկ, հին զինվորները կպել էին տղամարդու իսկական գործին, ամենավերջին պատերազմը (այդքան անավար պատերազմը պիտի որ վերջինը լիներ), այդ պատերազմը մեզնից հեռացել, պատմության մեջ մոտենում էր խաչակրաց պատերազմներին, հողը պարարտ էր ապրելու համար ու այս անգամ էլ եղպատերազմյան բախտավոր-ծնող ժամանակների սերունդ լինելը վիճակվեց մեզ։ Ես ծնվել եմ սիրո համար։ Ու եթե քեզ մի ժամ չեմ տեսնում, ոտքերիս տակից հողը գնում է։ Բայց միշտ հո այդպես չի մնա... Թե՞ կմնա, եթե իմ ու քո սիրո վրա անդադար դողամ։ Ես կդողամ, բայց վախենամ թե սերը անկախ լինի կամքից։ Ես հասկանում եմ, սերը խնամքի կարիք ունի, սերը սիրում է, որ իրենով զբաղված լինես, շահես, պահես... բայց փայփայանքը այլասերելու հատկություն ունի։ Փայփայանքն էլ կաշկանդանք է։ Կաշկանդանքը այլասերում է... Ի՞նչ հող տաս զբաղխիդ։ Եթե չգիտես ինչից, ինչիդ, ինչպես է սերը կպչում, չես էլ իմանա ինչով պահես, չես էլ իմանա ինչից կցնդի... Թող որ ամեն բան տեի այնքան, ինչքան կարող է։ Ափսոսալը փոքրոգություն է, ես չեմ ուզում լինեմ փոքրոգի... Եթե ես ուժ ունենամ ու չափսոսամ անցածը, ուժ ունենամ ու չուրանամ ապրածս կյանքը, եթե ընդունել կարողանամ, որ ոչ թե մահն է անհեթեթ-անարդար-դաժան, այլ իմ ծնունդն է պատահական բախտ,— եթե այսքան ուժ ունենամ, մեծահոգությամբ կանմահանամ։ Ես հավատում եմ անմահությանը։ Հավատում եմ առանց որևէ երաշխիքի։ Իսկ մի ժամանակ երաշխիք էր պետք։ Մեծամոլության այս ցույցը տես։ Լինելո՞ւ բան է. որ բնությունը մեզ՝ իր պսակին ու գլուխգործոցին օժտած չլինի առանձնահատուկ, արտոնյալ բախտով... Այսքան գեղեցիկ, այսքան բանական լինեմ ու մեկ էլ՝ չի-

նե՞մ... Չի կարող լինել։ Ես ինչպե՞ս կիսեմ ինչ-որ սողունի ճակատագիրը, այս զարմանալի կյանքից հետո ի՞նչ սրտով, ի՞նչ հնարով ընդունեմ, թե եղածը այս է. կա անմահություն երկրի վրա՝ մի կյանքի սահմաններում, կա տիեզերքում՝ բոլորիս համար, բայց հավերժության այդ խնջույքին մեզանից ոչ ոք անհատապես հրավիրված չէ։

Մեզ ձեռ չի տալիս, որ կյանքը հանկարծ այսքան պարզ լինի ու բարդացնում ենք, ո՞նց ենք բարդացնում, ողորմած աստված, ասես բարդացնելու էլի տեղ ունի։

...Ես խոսում եմ, որովհետև շատ ու շատ բան պարզ չէ ինձ համար։ Խոսելով կամ մտածելով ինչ-որ բանի մոտենում ես։ Դու մոտենում ես, նա հեռանում է։ Եթե չես հասնում, չես էլ կորցնում տեսադաշտից, որովհետև կանգ չես առնում։ Համենայն դեպս, շարժման պատրանք կա։ Գոնե ձանձրույթից փրկություն կա։ Ես ձանձրանալուց սարսափում եմ։ Վախենում եմ մի օր մնամ մնացորդ կյանքով ու, նրա նման, չիմանամ այդ կյանքն ինչ անեմ։

...Նա այն էր անում, որ իր մահվանը պատրաստվում էր։ Նա այդ գործը առաջ էր տանում իրեն վայել հետևողականությամբ՝ կյանքի հետ իր կապերը հերթով խզելով։ Այդ բանը նրան հեշտ տրվեց. երեխա չուներ, տղամարդկանց վանել էր վաղուց, աշխատանքը ճգնավորի աշխատանք էր, ընկերախումբը ցրիվ էր եկել մոր մահից հետո, կարդում էր այն հեղինակներին, ովքեր մեռել էին ամենաուշը դարասկզբին, մնում էին հարազատները, նրանց էլ գոյությունը կարող էր չզգալ իր գոյությունը չզգալու նման կամ դեպքից դեպք մտաբերելով։

Տասը տարի առաջ, երբ վերջնականապես պարզորոշվում էր այդ չկայացած կյանքի պատկերը, նա եռանդի վերջին պոռթկումով (կարծես վերջինն էր) կպավ ինձ։ Նրա վարքը ընդհանրապես պոռթկումնային էր։ Դա սազում է գժանոցներին, հարմար է գալիս ուսանողական միջավայրին, բայց չափի բերված առօրյայում իմաստուններն էլ, հիմարներն էլ դրանից դիվոտում են։ Իմաստունները՝ որովհետև ձանձրացած են իրենց իսկ ջահելությունից, հիմարները՝ որովհետև ցնցումները վիրավորում են նրանց անթերի տախտակությու-

նը... Նա ապրում էր պոռթկումներով ու ամենաշնչին զրգիռի հանդեպ վերաբերմունքը երեխայական-անմիջական էր։ Դա բնական չէր, որովհետև մարմնի նույնիսկ բնազդական զգոնությունը տարիքի հետ բթանում է։ Տարիների հետ կոփվում է հոգին։ Այդպես՝ աշխատող ձեռքն է կոշտանում ու պաղ ու տաքի, ցավի հանդեպ դառնում է պակաս զգայուն, մի բան, որ պետք է գործ անողին, գործին՝ առավել։ Այնինչ նա կոշտանալուց սարսափում էր։ Նա իր բնածին զգայնությունը փայփայում էր ջութակահարի մատներ որպես։ Փայփայել ասելը քիչ է, կարծես անդադար գրգռում էր ու պատճառը, միգուցե, այն էր, որ ունեցածը միայն դա էր... Չէ, նա ծնվել էր պակասավոր։ Ժամանակի մեջ մի երևելի բան անող, շրջապատին իրենից ինչ-որ մասնիկ թողնող խառնվածքն էր նա, բայց վերջին պահին տաղանդ կոչվածը նրան չէր կպել և մնացել էր չպատճառաբանված զգայնությամբ, կամ անկատար լինելուց՝ ամուլ, անգործության դատապարտված հատկությամբ, որ ներսից իրեն է խփում, դրսից ուրիշին... Նա տպավորվող էր լուսանկարչական ժապավենի պես, նրա մեջ այնքան բան էր լցվում օրվա ընթացքում, որ ինչ-որ ձևով պիտի դուրս գար, բայց ելք չէր գտնում։ Նա ծնվել էր լուրջ արատով և ժամ առ ժամ, օր-օրի թունավորվում էր իր ներսից։

Երբ ինձ պինդ բռնեց, երևսունհինգ տարեկան էր։ Բնական է, որ երիտասարդ հորաքույրը հասունացող զարմուհու դաստիարակությունը իր վրա առնի։ Իսկապես որ, սկզբում նրա վարմունքի մեջ չիրագործված երազանքը իր երեխայով իրագործելու մայրական ջանք կար։ Հետո էր, որ... Տխուր բան է, բայց պատահում է, շատ է պատահում, որ ինչ-որ չնչին երազանք գլուխ է գալիս հազիվ մի քանի սերնդի կյանքով... Թող տխուր լինի, տխրությունն էլ զգաստություն է։ Երևի թե դա հենց այն է, ինչը ամենից շատ է հարկավոր մարդկային ցեղին — որ սերունդները կապված լինեն երազանքի ընդհանրությամբ. որ ծնողները երազանքի հետ մնան իրենց զավակների մեջ. որ զավակները, մի նոր հով բռնած, աքսորի ու մահվան չտան ծնողներին. որ ծնողները դառնությունից չանիծեն նրանց ծնված օրը. և որ թոռները անմխիթար դատավորների դերում չմնան ամբողջ կյանքում, անե-

լանելիությունից իրար չխառնեն չարն ու բարին, վերջնականապես զրկված չլինեն երազանքից։

...Դու ինձ մի ուղղի, ասում եմ այն, ինչ ասում եմ։ Նպատակից՝ չէ։ Երազանքից։ Լեղուն անսխալական ու իմաստուն է։ Երազանքը սլացիկ, թեթև, անվնաս բան է, իսկ նպատակը միշտ խփում է ինչ-որ բանի։ Եթե հասնում է՝ խփում է նպատակ-կետին, եթե չի հասնում՝ դառնում խփում է ելման կետին, կամ հենց սկզբից, ետհրման թափով, խփում է իր ելման կետին։ Մեծ նպատակը այն հրթիռն է, որ մոխրացնում է ելման դաշտը և նրա համար ելման դաշտի խնդիր չկա, որովհետև վայրէջքի ուրիշ տեղ ունի կամ բոլորովին վայրէջք չունի։

Մենք կռահել ենք նպատակասլացություն կոչված բանի ավերիչ ուժը ու երազող ենք։ Մենք կասկածում ենք, ուրեմն մոտ ենք սթափվելուն։ Մենք հազիվ-հազ սթափվելու ճանապարհին ենք, իսկ խժդժության տասնապատները վայրահաչում են մեր մասին՝ իբր թուլամորթ, աննպատակ սերունդ դուրս եկանք, իբր մեր կյանքում վեհություն չկա... Հապա սիրելը, երեխաներ աշխարհ բերելը, առավոտյան աչքերը բացած երեխայիդ զարմանք հրճվանքը՝ երեկ կայինք—էսօր էլ կանք, հապա քունը, լավ երազը, ընկերությունը, խոնջանալուց հանգստանալը, մրսելուց հետո ջերմանալը, նվաղելուց ուշքի գալը, հիվանդությունից ապաքինվելը, օտարությունից տուն դառնալը, հենց միայն լուսաբացի օդը շնչելը,— վեհությունը սրանից դո՞ւրս է։ Եթե դուրս է, ի՞նչ համ ունի, ի՞նչ զույն ունի, ինչի՞ց է շինված... Վերջին հաշվով, հետո ի՞նչ կապ ունես, եթե դուրս է։

Դու ուշ զարձրու օր ու գիշերվա, տաք ու պաղի, մակընթացության ու տեղատվության, շնչելու ու արտաշնչելու, հոգնության ու եռանդի լիցքի իմաստուն կարգին։ Զգո՞ւմ ես՝ կա բան անելու ժամանակը և բան չանելու ժամանակը։ Եվ չանելը ոչ թե կորուստ է ժամանակի, այլ ժամանակի խնայողություն, այլ ժառանգություն ապագային... Փութեռանդությունը հակառակ է ժամանակի վսեմ ընթացքին։ Եվ ժամանակը անողոք էլ է, վաղ թե ուշ քթից է բերում իր վսեմությունը արատավորող վախկոտ, փորրոգի, քամապնչած ջղագարների։

Գիտե՞ս ինչն է էս աշխարհի տունը քանդում՝ իրենից հետո բան թողնելու՝ մահկանացուի մեծամիտ ջանքը։ Այնինչ աշխարհը նրա թողածի կարիքը չունի։ Համենայն դեպս, բան խողնելու ճիգ չի պահանջում որևէ մեկից այս հպարտ ու ժուժկալ աշխարհը։ Միայն թե՝ եղածը մնա։ Դու ցանքդ արա, հունձդ հնձի, քեզանից հետո երեխա թող՝ անպիղծ արյունով, մերձավորիդ սիրել չես կարող՝ վնաս մի տուր, մի բան էլ նույնիսկ առ ու հետդ տար ու համեստորեն համոզված եղիր, որ առանց քեզ էլ այս հին աշխարհը իր լավ ու վատից զուրս կհանի։

Ես չհասկացա. առաքելական հավակնություններով առապող մարդիկ այդպես ծնվո՞ւմ են, թե՞ հիվանդությունը նրանց կպչում է հանգամանքներից — գրքի բորբոսից, մրսելուց, վախից, թերասնումից... Միգուցե՝ կերկոխ լինելո՞ւց... Հերաքուչոս ուրիշներին խելքի բերելու, իրեն կպած ինչ-ինչ գաղափար փոխանցելու (կարծես շիկացած երկաթ էին տվել ձեռը), կամ գաղափարով վարակելու (դա կատաղության հիվանդություն է) ամբարտավան ու վտանգավոր ցեղից էր։ Կուզես ասա՝ մոլորված ցեղից, կուզես ասա՝ բարին կամեցող— վտանգը չի պակասում։ Այդ համառ ցեղը դաս չի առնում ոչ նախորդների, ոչ իսկ սեփական փորձից, առիթը եկավ՝ ամեն բան սկսում է նորից։

Ինչ ասել կուզի, նա գթասիրտ էր։ Այդքան գթասիրտ մեկ էլ մայրն էր, բայց նրանց միջև սար ու ձորի տարբերություն կար։ Տատիկը իր գթասրտությունը կրում էր հանդիստ, նույնիսկ անտեղյակ, որպես մարմնի առողջություն, այնինչ նրանը հիվանդագին էր ու հակված էր խղճահարության։ Դա արգեն կիրք էր։ Եվ կիրք լինելով՝ զգուշանալու էր, որովհետև կիրքն զգացմունքի բիրտ աստիճանն է։ Նա խղճում էր մուտքի, շենքի, դիմացի շենքի, ձախի շենքի, աջի շենքի, չերևացող կողմի շենքի հարևաններին առանց խտրության։ «Դու նայիր, ուշադիր նայիր,— ասում էր ինձ,— նրանք առավոտը արթնանում՝ թեյ են խմում, սուրճ են խմում, երեխաներին պարտեզ են տանում, գործի են գնում, գործից գալով՝ երեխաներին տուն են բերում, ճաշում, ընթրում, հեռուստացույցի առաջ նստում են... Շուկա են գնում՝ շաբաթ-կիրակի խաշ են դնում, խորոված անում, հյուր են գնում,

հյուր են ընդունում, տղամարդիկ օդի են խմում, կանայք լվացք ու արդուկ են անում... Երկուշաբթի արթնանում են՝ սուրճ են խմում, թեյ են խմում, երեխաներին դպրոց են ճամփում... ու ո՞չ մի ոգեղեն բան, ո՞չ մի ձգտում...»։ Ես առարկելու բան չունեի։ Ես ուշ հասկացա, որ ապրող-ծնող-աշխատող մարդիկ ոչ իրենց աշխարհ գալուց են սքանչացած, ոչ մահին են վերագրում սոսկալի խորհուրդ, անցած օրվա տվածից գոհ են, գալիք օրից սպասում են քիչ ավելին, ու ոչ մի օր կորած չէ նրանց համար, որովհետև երեխաները մեծանում են ամեն օրով՝ մի կաթնատամով, մի թլվատ բառով, ևս մի քայլով, ոտքի կանգնելով, թիկունք դառնալով... դա կյանքն է խոտի՝ ելնում է հողից, սերմ է տալիս, հող է դառնում առանց ցավի։

...Նա, ով ապրել է խոտ ու ծառի հետ, ով տեսել է բողբոջումը, պտղակալումը, սերմերի չուն, տերևաթափը ցրտից սսկված երկրի վրա, ծառի իմաստուն պատրաստությունը ձմեռելուն — նա իրեն կզգա բույսի մի տեսակ, նա, ով ամեն օր դեմքի վրա զգացել է կենդանու շունչը, ով ամեն անգամ զարմացել է նորածին հորթի՝ մայրական կրծքի անվրեպ կողմնորոշումով, ով տեսել է սարդին՝ հյուսելիս, օձին՝ խորխի միջից դուրս գալիս, երեխայի դեմ գելխեղդ շան խեղճանալը, շան լակոտին խոճկորների շարքում ծիծ տվող մեբուն խոզին, ով ականջը հողին դրած քուն է մտել, բայց պաղությունը ներս չի առել (որովհետև քրտնած մարմնի ջերմությունը տաքացրել է անկողին-հողի առաջին շերտը), ով սայթաքել է, բայց չի ընկել ընկույզի ծառից (նրան պահել է ծառի, ճյուղի նախնական զգացողությունը), ում վրայով ձին քառատրոփ սլացել է ու չի տրորել,— նա չի կարող իր անձին, կյանքին ավելի մեծ կարևորություն տալ, քան այդ ամենին, որովհետև շոշափել է գոյակցության ողնաշարը, իր շուրթերին զգացել է համընդհանուր ավիշի համը։ Ուրիշ բան է, որ չի կարողանա բացատրել, թե ինչ համ ունի, որովհետև համեմատության եզր չկա։

Այն ժամանակ, երբ մարդը ձիուն ընդունում էր այնպես, ինչպես կա — ոչ ավելացնում, ոչ պակասեցնում էր, այդ ժամանակ ձիու կյանքը ավելի հեշտ էր։ Եվ ձիու կողքին մարդու ապրելն էր ավելի հեշտ։ Հեշտ էր ու ճիշտ, որովհետև

հիմարանալու վտանգ չկար։ Իսկ իր նմանով շրջապատվածը, սոսկ իր ստեղծած սարքուկարգի կողքը ապրողը մեծ բնության հարաստեղծ ընթացքին հետևելու հնարավորությունից զրկված լինելով, ներդաշնակության ու ճշգրտության այդ հրաշքի առաջ սեփական նվաստությունը գիտակցելուց զզաստանալով հեզանալու ընդունակությունը կորցնելով՝ մնում է տգետ, տգետ լինելով՝ վտանգավոր, նմանվում է այն ապուշին, որը սեփական ձեռքի հոդերի ճարճատելու հատկությունը երջանկորեն հայտնաբերած՝ այդ զբաղմունքից չի կշտանում, ինքն իրենով հիանալուց չի դադարում։

Հորաքույրս հնարավոր ամեն լավ բան՝ գեղեցի՞կ ասեմ, ներդաշնա՞կ ասեմ, աղնի՞վ ասեմ, թե՞ առաքինի — տեսնել էր ուզում միայն մարդու մեջ։ Սա հո մեթոդի, քմահաճույքի, նախասիրության հարց չէ հասարակ, այլ բթամիտ ինքնասիրահարվածության։ Սա տգիտության մտայնությունն է, թե երկնքի տակ հնարավոր ամեն լավ բան ի մի բերվել, պահ է տրվել մարդուս անոթին... Անապահով այդ անոթին։ Այս ճանապարհը հիասթափության դուռն է տանում՝ այդպես էլ եղավ։ Նա երես թեքեց պաշտամունքի իր առարկայից ու քանի որ բանը մինչև վերջ հասցնելը նրա կիրքն էր, հիասթափությամբ չգոհացավ, շուռ եկավ գլուխն ի վար, այս անգամ արդեն իր ուզելիքը փնտրել սկսեց ամեն ինչի մեջ, բացի մարդուց։ Սա էլ մեծամտության մյուս երեսն է — ատելությունը կպչում է նրան, ինչին չափազանց ես կարևորություն տվել։

Նա ոչ մի բան չհասկացավ, թեպետև մոտ էր հասկանալուն։ Մոտ էր այն գծին, որին հասնում են դժվար կյանքով ապրած մարդիկ, բայց անցնում են էլի քչերը — դժվար կյանքն էլ իմաստության շտեմարան չէ։ Բայց նա ա՛յն տեսակը չէր, ում մի կյանքը դաս է լինում։ Նա իմ կյանքով ամեն ինչ սկսում էր նորից։ Եվ մի այնպիսի կրքով ինձ կպավ, կարծես թե մեջտեղ էր բերել իր երկրորդ կյանքը — այդ գայթակղությանը ո՞վ կդիմանա։

Նրա կրքից ես պիտի որ զգուշանայի, եթե այդքան խակ չլինեի։ Այսօրվա խելքով կզգուշանայի, բայց այն ժամանակ իմ խակությունը երկուսիս էլ հարմար եկավ։ (Խակությունը պետք է գալիս այդ տարիքին, օգնում է, որ կասկա-

ծամտությունը, զգուշավորությունը, անվստահությունը ժամանակից շուտ մարդուն խոզության չդատապարտի)։ Ու մինչդեռ իմ ժիր բնազդը վստահաբար ինձ տանում էր նախասահմանված ճանապարհով (բայց ուրիշների կամքով էր զուգվում պճնամոլի անհոգությամբ), նա անհոգությունս հնազանդություն հասկանալով, թևերը քշտած՝ մտապատկերում ինձ տեսնում էր իր պատկերով ու նմանությամբ, բախտավորությամբ էլ ջնարակված։ Ես չգիտեմ, դա հաջողվո՞ւմ է մեկնումեկին, չգիտեմ՝ նրան կհաջողե՞ր նոր սկսածը տանել հասցնել ծանոթ փակուղի, եթե ես մի քիչ փափուկ լինեի, եթե իրենից մասն ունենայի։

Ես հեշտ եմ խոսում, որովհետև ուրիշ մարդ եմ։ Ուրիշ եմ եղել ծնված օրից, բայց նա այդ բանը չհասկացավ։ Նրանք այդ բանը չեն հասկանում։ Նրանք այնքան են զբաղված լինում իրենք իրենցով, որ դիմացինին չեն նկատի, մինչև ճակատ-ճակատի չգան, մինչև ցավ չզգան... Ես չեմ հասկացել, որ ուրիշ եմ։ Այդ տարիքում հասկանալ հնարավոր չէ։ Հարկավոր էլ չէ։ Այդ տարիքում ապրում ես դաշտի քամու նման, կամ հարավային ու հյուսիսային, արևմտյան ու արևելյան քամիների տակ ճկվելով բացվող ծաղկի նման, որի ճկվելը ցավ չի տալիս մատղաշ ցողունին, որովհետև դա է նրա ապրելու ձևը՝ ճկվել-ուղղելով վեր ձգվելու ուրախությունը...

Երբ դեռ ինքներս մեզ չենք խթանել նպատակներով, չենք թիմարվել պատրաստակամությամբ ու չենք բեռնվել զաղափարներով, մեր էությունը նման է բույսի։ Ամեն նյութ ու ամեն վիճակ պիտի որ օժտված լինի ինքնահատուկ զգացողությամբ։ Պիտի որ լինի գնդաձևության, հոսունության, սերտաճումի, ողորկության, տարրալուծումի, մակարդվածության, ուղղաձգության և այլնի ինքնազգացողություն։ Ես, ինչպես բույսը, երերուն աճի զգացողություն ունեցել եմ։ Երևի այդպես ձուկն է ունենում ջրհոսելիության զգացողություն... Պատահում է, երազում ես թռչում եմ։ Կար ժամանակ, թռիչքս անկման ձև ուներ, հիմա ճախրում եմ։ Ու զգում եմ թևերիս ուժը, հոգերիս ջանքը, զգում եմ թանձր, ծանր օդը... Երկու անգամ ինձ վախեցրել են։ Առաջին անգամ որսորդական հրացանով նշանի առան (ես բղավում էի՝

ազավնի չեմ, ճնճղուկ չեմ, հրեշտակ չեմ...), երկրորդ անգամ երեխաները քարկոծեցին... Մայթին քայլելուց հոգնել էի, թե՞ քայլելու հարմար ժամ չէր՝ ծնկներիս մեջ ուժ քաշեցի, թևերիս տվի ու բարձրացա վեր։ Փողոցն անցնում էի անցման վրայով՝ էլեկտրագծերը խանգարեցին, քիչ վեր ելա, փողոցը անցա, մայթի թեղին շրջանցեցի, հինգհարկանի շենքի քիվին քսվելով անցա, բարձրահարկերի շարքի դեմ վարանեցի, հետո հեծանիվ քշելու նման, ջրի տակից ոտքով հրվելու եղանակով վեր բարձրացա, արգելքն անցա, բարձրությունս պակասեցրի... Այստեղ նրանք՝ լակոտներն ինձ նկատեցին։ Մայթի վրա քար ո՞րտեղից, մտածեցի, բայց նրանք արդեն քարկոծում էին։ Աղաղակս նրանց չէր հասնում կամ ինձանից դուրս չէր գալիս, ես զգում էի, որ բալի չափսի մի քար էլ դիպչի՝ կտապալվեմ ու լեղապատառ վայրէջք արի... Երազում լավ է։ Բախտավորություն է սավառնելու զգացողությունն ճանաչելը, բայց սավառնողին, ախր, խփում են։ Նվ ճիշտ են անում։ Համենայն դեպս, ներքևիններին ես հասկանում եմ։ Թևավորներին եթե խփում են, անթև թռչողին ինչո՞ւ չխփեն։ Եթե ցածում ես, այդ տեսլքից կամ լեզուդ պիտի կապ ընկնի, կամ լեղիդ պայթի, կամ պիտի խփես, մանավանդ որ փորձը ասում է, որ եթե թռչողը մարդ է՝ խփելու հարմար դիրք է որոնում, եթե խուժել է ուրիշ ոլորտ՝ վերջը բարի չէ... Չէ, ոլորտները լավ է մնան անձեռնմխելի։

Նա մարդու առաջ սահման չէր տեսնում։ Նա համոզված էր, որ մարդուս բախտը իր կամքն է, և նրան նույնիսկ իր՝ պրկված կամքով ապրած-ձախողված կյանքը դաս չեղավ։ Նա հիմա էլ իր կյանքի ձախողումը հեշտ ու հանգիստ կվերագրի կամքի չհիշվող ակնթարթային մի թուլության, քան իր համոզմունքը կասկածի կառնի։ Փաստորեն նա մնացել է նույն դեռահասը, ինչ քսան տարի առաջ է եղել։ Նա ու նրա նմանները առաջ չեն գնում անմեղունակ ամբարտավանության այն տարիքից, երբ թվում է, թե երկրագնդի առանցքը դու ես։ Այդ վստահությունը լավ է այնքանով, որ հետագայում վրան խնդաս։ Այդ տարիքն ու վստահությունը լավ են առաջին սիրո համար, սիրուց դուրս մնացած ամեն պարագայի կյանքի այդ մոդի շրջանը անկման շրջան է, խեղա-

ճումն է երեխայական արդարամիտ աշխարհընկալման, կորուստն է այն հայացքի, որի առաջ շնչավորի ու անշունչի միջև սահման չկա. երբ իրերը մտածել գիտեն, անասունը խոսել գիտի, երբ ձյունը՝ թիթեռ, թիթեռը՝ ծաղիկ, ծաղիկը ուրախ արագիլ է, շնիկի մայրը նրա կողքից գնացող կինն է, մեծ մեքենան փոքրի հայրն է, լուսանկարը բնորդի կրկնակն է... Պատանեկությունը լավ է, եթե դաս է լինում։ Լավ է, եթե այդ կարմրուկը թեթև տանում, վերադառնում ես... Չես վերադառնում։ Նախնական արդար ընկալումներին վերադարձ չկա։ Երևի թե միայն վերջում, իբրև սրտի վերջին ուղևիր, տարիների կուտակված ազից լված հոդերդ մի կերպ ծալելով ծնկի կգաս այդ ակունքի մոտ, աղբն ու տիղմը դուրս կտաս մի ժամանակվա երեխայի աչք-զուլալ ակից ու եթե տակը թացությունն եղավ՝ գոտի շուրթին ճաք կբացես՝ իբր պարզի, եթե ջուրը տակն անցած եղավ, կնստես ու կսպասես (վերջին հրաշքին սպասում են մահվան զուգահեռ), որ հրաշք լինի՝ աղբյուրը բխա... Աղբյուրը բխա, մի պուտ ջուր առնես, ընկույզի կճեպ կոպերիդ քսես, մլարը կապած բիբերդ ցողես, որ թեկուզ մի պահ, թեկուզ կոպերիդ թացության ցնդելու միջոցի չափով տեսնես այնպես, ինչպես տեսար աշխարհից քո հիշողության առաջին օրը, երբ ստվերդ հայտնաբերեցիր... Եվ ստվերդ հայտնաբերած՝ նախ ուզեցիր նրանից պոկվես — չկարողացար, հետո տեսար ծառն ստվեր ունի, բայց պոկվելու ջանք չի թափում ու հանգրստացար... Հորիզոնից ամպ էր գալիս՝ մտածեցիր կգա, փայլուն կոշիկներդ կփոշոտի ու կոշիկներով մտար առուն, հետո վախեցար, որ կոշիկներդ ջուրը կտանի, հանեցիր դրիր թևերիդ տակ, լեզու ցույց տվիր ամպին, արևին, կոշիկներիդ վրա աչք տնկած հնդուհավին... Այդ ժամանակ տեսար հավի ձուն ծննդի պահին ու ձուն ձվածեղի տեսքով անկաշկանդ կապվեց արևին, վեր նայեցիր՝ կոպերդ թրթռում էին, փեշդ քաշեցիր աչքերիդ դեմ՝ կոպերդ էլի թրթռում էին, ու չնայելը ճիշտ համարեցիր, ձուն հիշեցիր, գնացիր որ ձեռքդ առնես, մտածեցիր, թե կվառի ու նստեցիր ձվի կողքին՝ սպասես պաղի, սպասումով թիկն տվիր խոտի դեզին՝ շունչդ կտրվեց խոտի բուրմունքից ու նախանձեցիր քո հորթուկին, խոտի մի ծեղ բերանդ առար ու խղճացիր քո հորթուկին,

ճուտիկների աշխարհ գալը տեսել էիր՝ պատկերացրիր հորթուկին ձվից դուրս գալիս... Թաթիկդ զգույշ դիպցրիր ձվին՝ ձուն չվառեց ու պաղն ու տաքը կապեցիր ժամանակի հետ...

Ես ուրիշ էի, ծնվել էի ուրիշ ժամանակ, ուրիշ աստղի տակ, ուրիշ մորից։ Մեր ննջարանի պատուհանները բացվում էին Արագած լեռան, նրանը՝ ցավոտ Մասիսի վրա, մեր հարևանը բարեհոգի հարբեցող էր, նրանը՝ սթափ, Քրիստոսի երևակայած սանրվածքով, ոտից գլուխ adidas հագած ինքնակոչ աստվածաբան, մեր տան առաջ խնձորի ծառ կար, որ ծաղկում էր տարիումեջ (խնձորի տիրոջ ժիր կնիկը ծննդաբերում էր ամեն տարի), իմ հայրը չէր մասնակցել պատերազմին, իմ քեռին անհետ կորել էր... Հազար ու մի տարբերություն։ Ես ուրիշ էի, չնայած նրան կապկում էի։ Այդ կապկելն էլ հո կապիկություն չէր, կերպարանքս գտնելու ջանք էր։

Ես հեշտ եմ խոսում, իմ վրա, կարծեմ, անեծք չկա։ Բայց... սատանի ականջը խուլ։ Երաշխիք չկա։ Ամեն մեկիս էլ վրա անեծք կա. մեկիս վրա՝ մեծ, մեկելիս՝ փոքր։ Իմ վրա էլ կա։ Ես տեսածիս անուն չդնել չեմ կարողանում։ Դա անեծք է, որովհետև ուրիշներին խանգարում է հանգիստ ապրել, ինձ... մեզ պարզապես ապրել չի թողնում։ Ես հիմար չեմ։ Եթե ինձ մնար, ես անշնորհակալ, ամեն բանին թեկուզ արժանի անուն տվողի ծանր դերը վրաս չէի առնի ոչ մի գնով։ Չէի առնի թեկուզ այն պարզ պատճառով, որ նպատակիս հասած չէի լինի խեղկատակի պարզունակ դերով (նրանք, ախր, մեզ խեղկատակի տեղ են դնում)։ Իմ հիվանդագին ինքնասիրությունը այդ աստիճան զոհողություն անել չի կարող։ Բայց ես չեմ կարող ինձ տիրապետել։ Դա իմ մարմնի հատկությունն է... Հիվանդությունն է ավելի շուտ։ Ես համոզված եմ. իմ նմանները չեն կարողանում լռել, ստել, չտեսնելու տալ, որովհետև երբ նրանք այդ բանը անում են, նրանց փայծաղը արյուն մաքրելուց դադարում է, կամ հոդերում արագորեն աղ է կուտակվում, կամ մաշկը դարաղվում է ու օդ չի առնում, կամ արյունը թանձրանում է աղեստալի աստիճանի... Համարիր սա ժառանգական ախտ, հաշվիր սերմի թերաժություն, ընդունիր իբրև նախածննդյան խեղվածքի արդյունք, վերագրիր այն համաստեղությանը, որի

տակ աշխարհ ես եկել,— փասատը սա է. եթե արժանի խոսքի վրա տատանվում ես, եթե ասում ես կակազելով, եթե նույնիսկ հապաղում ես՝ նստել չի լինում, կանգնել չի լինում, պառկել չի լինում, շարժվել չի լինում, շնչել չի լինում։

Ես, իհարկե, անջատ կեցվածքս սիրում եմ։ Ինձ դուր է գալիս ուրիշներին չնմանվելը, բայց ոչ խեղկատակ լինելու գնով, իմ հպարտ հոգին վկա։ Եթե մեկին թյուրիմացաբար անվստահություն ես ներշնչել, հույս ունեցիր, որ վստահությամբ կփոխարինվի, եթե քեզ հանիրավի թերագնահատել են, վաղ թե ուշ կհատուցեն գնահատանքով, ատելությունը տեղը կզիջի սիրուն կամ վախին, ներշնչածդ վախը կարող է նույնիսկ մահվանդ պատճառ դառնալ — էլի բան է, բայց եթե դու ծիծաղելի ես, դա անփոխելի է, դա հարատև է, արժանի չէ նույնիսկ մահվանն։

Այնուամենայնիվ, նա կանգ առավ ծիծաղելի դառնալուց առաջ։ Կամ նախահամը առնելու վրա։ Նրա մոլեգին ինքնասիրությունը փրկեց նրան։ Առհասարակ, ամեն մեկին իր մեջ եղած մի բան փրկում է ինչ-որ ժամանակ։ Եթե ուրիշ բան չլինի, ձանձրույթը կա։ Արատավոր են ձանձրանալու ընդունակություն չունեցող մարդիկ։ Ձանձրանալը մարդուն փրկում է հոգնությունից, իսկ հոգնությունը թունավոր բան է։ Այդպես փրկվում են հարբեցողությունից, անառակությունից, տխմար գրքերից, շողոքորթներից, սեռուն մտքից, բթամիտ հափշտակվածությունից, ինքնազմայլանքով տապակվելուց... Չեն ձանձրանում երեխաներն ու մտադարները։ Երեխաները հոգնում՝ քնում են, նրանք հոգնում՝ զրկվում են քնից։

Իրենց վերջին հրավերքներից մեկի ժամանակ հորաքրոջս ընկերախումբը որոշեց, որ ժամանակն է մի վերջին անգամ ինձ հարցնելու (հորաքրոջ խնամատարությանը ընկերաբար փայատեր էին) թե գործերս ուր եմ տալու։ Իմ փոխարեն նա՛ պատասխանեց։ Առիթ էր, որ ձեռք դիպցներ իր հին վերքին։ Անարդարության զոհի կեցվածքը սազում էր նրան։ Համենայն դեպս, նրան ավելի ներշնչված տեսքով տեսած չեմ։ Այդ ապրումին նա անցնում էր սև շղարշը տրտմաշուք սահունությամբ ուսի վրայով գցելու նման ու ժպտում էր սպիտակ-դառը-համակերպված... Ընկերուհիները, որ քսան տա-

ին համարել էին անախորժությունը մոռանալու բավարար միջոց, անակնկալից սկսվեցին, և հորաքույրս հանդուցյալի զավակների արեշատության բաժակը խմելու նման այդ դադարը իմաստավորեց.

— Շուշանս աստղով աղջիկ է։

Հետևյալ պահին ինձ հետ ինչ-որ բան կատարվեց։ Նա, կարծես, արագընթաց մի բանի նստած հեռացավ ինձնից ու մնաց այնտեղ, բայց պատկերը չաղոտացավ։ Մի սեղան էր բաժանում մեզ, մեկնած ձեռքի տարածություն, բայց կարծես նույն դաշտի մեջ չէինք, որի վրա նույն ուժերն են ազդում։ Նրա հոտը ինձ չէր բռնում, նրա ձեռքը, զգում էի, ինձ չի հասնի։ Նրա շուրթերից ես հասկանում էի ասելիքը, բայց ձայնը խուլ էր։ Իմ ականջները ճնշված էին այս նոր հայացքից։ Գուցե թե իմ նոր հայացքը առաջին անգամ խմածս մի կում գինուց էր, գուցե նրանից, որ ես իրենից հոգնել էի... Հունվարից մինչև հունիս նա թույլ չէր տվել գրասեղանի մոտից հեռանամ, չէր թողել առանց իրեն երկու քայլ անեմ ու պարապել էր ինձ հավասար։ Իմ ընդունվելով թե նա ինչ էր ապացուցելու՝ ես նոր հասկացա։ Իմ կյանքի վրա դրած փորձից կամ իր կյանքը կրկնելու փորձից ինչ էլ դուրս գար, իր ապրած կյանքը արդարացվում էր։ Եթե ինձ մի բան հաջողվեր, նախ ապացուցվում էր մեր ցեղի ձիրքը, հետևաբար, նա մնում էր անբասիր մենակ անարդարության դեմ և իր բաժին քարթու հացը ուտում էր կամաց-համառ-խեղդելով-ցուցադրաբար... Իսկ եթե ես տապալվեի, նա բախտակից ունենալով՝ չէր մխիթարվում, այլ դառնում էր կրկնակի զարկված-չպարտված մարտիկ մի ահռելի անարդարության դեմ հանդիման, որ հնար չեղավ նույնիսկ երկու սերնդի կյանքով, երկո՛ւ կյանքով հաղթահարելու, բայց երրորդով, կամքս վկա, կհաղթահարենք, միայն թե դուք էլ տեղից շարժվեք, մի քիչ ուժ տվեք, թե չէ այսպես կմնամ մենակ անհավասար այս կռվի մեջ, ձե՛ր կռվի մեջ, գրողի տարած դասալիքներ...

Ի՞նչ երրորդ կյանքի մասին է խոսքը — չես հարցնում։ Չես հարցնում՝ դու չասացի՞ր, որ կյանքը հիմա նրա համար պահ տրված բեռ է, և նա՝ բարեխիղճ, նա՝ պարտաճանաչ, տանելու տեղ է հասցնելու ու ճանապարհի կարճն ու

երկարը մի հաշիվ է... Ես եմ ասել։ Նա իմ աչքերի առաջ էր մեռնում վերջին չորս-հինգ տարիներին, աչքերիս առաջ իրեն պատանում ու զմռսում էր մոր մահից հետո անցած երկու տարիներին, բայց գերեզմանոցի սառնությունը նրան, կարծես, ետ է բերում։ Գերեզմանոցում անցկացրած այս երկու տարին կարծես մահվան տեղ է ընդունել, հիմա անցնում է երրորդ վիճակին։ Կամ ապրելուն դաղար տալով՝ ուժ է հավաքել՝ երրորդ կյանքով ապրելու համար... Ես ուրախ եմ նրա համար, բայց սարսափում եմ հոգեդարձության այդ տեսակից։ Սարսափած եմ, որովհետև նա, միգուցե, հանդրստացել է ինքն իրենից, բայց ինքը իրեն չի մոռացել... Երբ անցած շաբաթ նրան տեսա՝ ասաց... Ինչ ասաց... Կարծես կիսատ զրույց լիներ շարունակելիս, ասաց՝ «Հանկարծ չմտածեք, որ երեխան հոգս կլինի... Շուտ ունեցեք, հորքուրատատիկը նրան կպահի... Լավ կլինի՝ աղջիկ ունենաս»... Աղջիկ եղավ՝ չեմ ծնի։ Ոչ առաջինը, ո՛չ երկրորդը, ո՛չ երրորդը։ Չի լինի, որովհետև ուզեցել եմ, որ տղա լինեի, հիմա ուզում եմ, որ տղա լինի, սրանից հետո ամեն բոպե ուզելու եմ, որ տղա լինի... Ես էս սենյակից դիվոտում եմ... Հարկավոր չէր... Անխելքություն էր... Պետք չէր երեխուն մի տուն մտցնել, ուր կյանքը մահից լավ չեն ջոկում, մի կյանքը երկու անգամ են ապրում, երրորդի համար հոգեդարձվում են առանց մեռնելու... Իսկ լուսինն էլ ամբողջ գիշեր դուրս չի գալիս սենյակի միջից... Իսկ դու քնում ես... Իսկ ես զարթնում ու քո լուսնահար դեմքը տեսնելով՝ սարսափում եմ, ու չկա մեկը, որ էս գլխակեր լույսից ծածկի... Վեր կաց, սիրելիս, վեր՝ որդուդ մորը թևիդ տակ քաշի, էս լույսից ծածկի, եղածը համարի չեղյալ, այնպես արա, որ նա ծնվի արևի լույսով, ճակատին բախտի աստղ ծնվի, մեծանա դաշտի խոտի նման՝ հոր ու աստծո աչքը վրան և մորից թող մաս չունենա — աչքերը՝ քոնը, հասակը՝ քոնը, սիրտը՝ քոնը... մեջքը՝ քոնը... շունչը՝ քոնը...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անանձրև հուլիս 3
Գառ-ախպերիկ 10
Շաբաթվա երկրորդ կիրակին 14
Եկվորի բախտը 21
Մի ճամպրուկ փող 45
Ամեն տարվա դռճին 48
Լուսնալույս 51
Շատ չհամարվի 53
Ոսկի մարդը 57
Պարտուսի գերին 61
Գեղեցիկ կնոջ կաղապարը 67
Սիրելու տարիք 71
Տղամարդիկ 76
Տղամարդու դժվար տարիք 85
Քիթը բերին 94
Մինչև որ տեսնենք 100
Հին պատմություն է 112
Կիրակի 118
Ջոր օգոստոս 127
Հերն անիծած կյանքի 135
Ծուխը մարեց 142
Կինը, շունը, տղամարդիկ 148
Կեղծ դամբարաններ 153
Կանայք 162
Բուքը, երգը, երևան 167
Ձեռքդ ետ տար ցավի վրայից 169
Մանր լույս 188